Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

№ 4

ԱՐԿ. Ա-Ն

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՅԵՐԵՔ ՏԻՊ)

Թարգմ. Ա. ԱԹԱՅԱՆ

1924

ՊՈԼԻԳՐԱՖՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Յերևան

Պատվեր № 1467

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տասնիններորդ դարն անվանում են կապիտալիզմի դար, որովհետև 18-րդ դարի վերջին և 19-րդի սկզբին մեքենաների և շոգեշարժների հնարումով կապիտալիզմն սկսում է արագ զարգանալ նախ Անգլիայում և Ֆրանսիայում, ապա նաև Եվրոպայի մյուս յերկրներում ու աշխարհիս մնացած մասերում։ Բայց 19-րդ դարը նույն չափով կարելի յե անվանել բանվորական շարժման դար, որովհետև դասակարգային-բանվորական շարժումը ծագում է առնում կապիտալիզմի ծագման հետ միասին, նրա հետ միատեղ զարգանում ու ամրանում է՝ կազմակերպելով բոլոր յերկրների բանվորներին ի մի միջազգային պրոլետարիատի հզոր բանակ՝ կապիտալիստական հասարակակարգի դեմ պայքարելու համար։

Բոլոր յերկրների բանվորական շարժման մեջ կարելի յե նկատել յերկու կողմ։ Նախ՝ բանվորները պայքարում են կապիտալիստների դեմ իրանց առօրյա կարիքների համար, աշխատանքի և աշխատավարձի պայմանները լավացնելու համար. դա բանվորական շարժման տնտեսական կողմն է։ Յերկրորդ՝ բանվորները պայքարում են բուրժուազիայի դեմ քաղաքական իշխանության համար՝ ձգտելով տիրանալ այդ իշխանությանը և պրոլետարիատի դիկտատուրա հաստատել, վորպեսզի վոչնչացնեն բուրժուազա-կապիտալիստական հասարակակարգը և պատրաստեն անցումը դեպի սոցիալիզմը։ Դա բանվորական շարժման քաղաքական կողմն է։

Իրանց տնտեսական կարիքները պաշտպանելու համար բանվորները միանում կազմում են արհեստակցական միություններ, ստեղծում են կոոպերատիվներ, քաղաքական պայքարի համար կազմակերպում են քաղաքական կուսակցություններ։ Բանվոր դասակարգի արհեստակցական, կոոպերատիվ և քաղաքական շարժումը բանվորական միասնական մեծ շարժման յերեք ճյուղերն են։

Բայց յեթե լավ նայելու լինենք բանվորական շարժմանը զանազան յերկրներում, կտեսնենք, վոր դրանցից յուրաքանչյուրում այդ շարժումն իր առանձնահատկություններն ունի։

Այսպես, անգլիական բանվորական շարժման մեջ առօրյա տն-

տեսական կարիքների համար արհեստակցական միությունների մղած պայքարը (տրեյդ-յունիոնիզմ) գերիշխում է քաղաքական պայքարին, որին յերկրորդական տեղ է հատկացրված։ Ֆրանսիական բանվորական շարժման մեջ, ընդհակառակն, ամբողջ 19-րդ դարի ընթացքում գերիշխել է քաղաքական պայքարը (գլխավորապես հեղափոխականը) և միայն վերջին ժամանակներս է զարգացել արհեստակցական շարժումն անիշխանական գունավորումով (սինդիկալիզմ)։ Գերմանական բանվորական շարժման մեջ, որում քաղաքական կողմը (պարլամենտական պայքարի ձևով) յերկար ժամանակ գերիշխում էր տնտեսականին, այժմ յերկու կողմերը համապատասխան ձևով համաձայնեցրված են և զարգանում են հավասարապես։

Բուրժուական միքանի գրողներ ձգտում են նշված յերկրներից ամեն մեկի բանվորական շարժման առանձնահատկությունները բացատրել ժողովրդի բնավորության առանձնահատկություններով։ Այսպես, նրանց կարծիքով, հավասարակշռված, պաղարյուն անգլիացիները, գործնական խառնվածքով հայտնի, ձգտում են պակասագույն զոհերի միջոցով հասնել առավելագույն օգուտների ներկայի համար՝ չտարվելով հեռավոր ապագայի համար ցնորքներով։ Նրանք, ըստ առածի, գերադասում են կանխիկ կոպեկն ապառիկ հազարներից։ Ընդհակառակն, վառվռուն, գրավվող, անհամբեր ֆրանսիացիները, յերկար սպասելու անընդունակ, ձգտում են միանգամից, մի հարվածով բանը վերջացնել տիրող հասարակակարգի հետ։ Վերջապես, մեթոդիք, խոհեմ գերմանացիները, որոնք սովոր են հիմնավորապես և փիլիսոփայորեն մտածելու, սիստեմատիքաբար աշխատելու և անշեղ, թեյեվ դանդաղորեն դիմելու դեպի նպատակը, ստեղծել են մի բանվորական շարժում, որի մեջ համապատասխան ձևով շաղկապված և ներդաշնակված են բոլոր կողմերը,—և մի թեորիա, որում այդ շարժումի բոլոր արտահայտությունները պատշաճորեն ուսումնասիրված և բացատրված են։

Չի կարելի ժխտել, որ ամեն մի ժողովուրդ ունի բնավորության առանձնահատկություններ, որոնք կախված են այն պատմական և բնական պայմաններից, որոնց մեջ կազմակերպվել է նրա կյանքը, և որ այդ առանձնահատկությունները հայտնի չափով ազդում են ժողովրդական կյանքի բոլոր արտահայտությունների վրա։ Սակայն, ի վերջո դրանով չէ, որ կարելի յէ բացա-

տրել բանվորական շարժման առանձնահատկությունները։ Ի վերջո, ինչպես կտեսնենք, այդ առանձնահատկությունները կախված են բանվոր դասակարգի պայքարի քաղաքական և տնտեսական պայմաններից, այսինքն այն բանից, թե վորքան արագ և աջող կերպով է զարգանում կապիտալիզմը յերկրում, գոյություն ունեցել է արդյոք նրանում քաղաքական ազատություն, թե հարկ է յեղել նրա համար մաքառել, ինչպիսի յեն յեղել խոշոր արդյունաբերության և մանրի հարաբերությունները, արդյունաբերության և հողագործության, քաղաքի ու գյուղի հարաբերությունները, այսինքն ինչպիսի յեն յեղել հասարակական դասակարգերի հարաբերությունները յեվայլն։

Տալով Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի բանվորական շարժման պատմությունը՝ մենք կաշխատենք լուսաբանել այն պատճառները, վորոնց շնորհիվ այդ շարժումը նշված յերկրներից յուրաքանչյուրում ընդունել է այս կամ այն բնույթը։ Փաստերի ուշադիր քննությունը ցույց կտա, վոր չնայելով բոլոր առանձնահատկություններին՝ այդ յերեք յերկրների ել բանվորական շարժումն առաջնորդվում է դեպի մի միակ մեծ նպատակ—սոցիալիզմի տիրապետությունը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՆԳԼԻԱ

I.

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԾԱԳՈՒՄԸ

— Դեռ սրանից մոտ 200 տարի առաջ (մոտավորապես մինչև 18-րդ դարի սկիզբը) Անգլիան նշանավոր չափով յերկրագործական յերկիր եր։ Արդյունաբերությունը կրում եր առավելապես տնայնագործական բնույթ, այսինքն հողագործը հում նյութից արդյունքներ եր պատրաստում տանը ձեռքով դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ, իսկ բանվոր-մասնագետները (վարպետները), ինչպես՝ մանողները, գործողները (ջուլհակները), մետաղագործներն, զբաղմունքից ազատ ժամերին մի-մի փոքր կտոր հող եյին մշակում, վոր լինում եր իրանց սեփականը կամ վարձու։

Մեքենաներ հնարելուց գործերի դրությունն արմատականապես փոխվեց։ 1767 թվին Հերգրեյվզը հնարեց «Ջեննի» մեքենայական ճախարակը. նույն տարին Արկրայտը հնարեց «ջրային» (ուժորի) մեքենան, վորը բամբակի համար ավելի ամուր հիմք պատրաստեց. 1775 թվին Քրոմպտոնը հնարեց «մյուլ-մեքենան»՝ միացնելով մանելու և ուստրային մեքենաները. 1785 թվին Կարտրայտը հնարեց գործելու մեքենայական դազգահը, վորը դուրս մղեց գործվածների՝ ձեռքով կատարվող արտադրությունը։ Բայց ամենազորեղ գյուտն եր շոգեմեքենան, վոր շինեց Ջեյմզ Ուոտը 1782 թ. և ժամանակի ընթացքում հարմարեցրվեց բոլոր արտադրություններին։— Դրա հետ միաժամանակ տեխնիկական խոշոր կատարելագործություններ տեղի ունեցան արդյունագործության մյուս ճյուղերում, յերկաթ և ածուխ ստանալու և մշակելու մեջ։— Վերջապես հաղորդակցության ճանապարհները յենթարկվեցին արմատական հեղաշրջումի՝ շնորհիվ յերկաթուղու և շոգենավի գյու-

տին, խճուղու խիտ ցանց և միքանի խոշոր ջրանցքներ անցկացնելուն։

Այդ բոլոր կատարելագործություններն այն հետևանքն ունեցան, որ շատ կարճ ժամանակում Անգլիայում շինվեցին բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ. դրանցում պատրաստվող արտադրությունները շատ ավելի աժան էին այն արտադրություններից, որ տնայնագործներն ու արհեստավորներն էին պատրաստում ձեռքով։ Հետևանքն այն եղավ, որ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունն սկսեց աստիճանաբար դուրս մղել արհեստային արտադրությունն ու մանուֆակտուրան՝ իրար հետևից խլելով նրանից ամբողջ ճյուղեր։

Մեքենաներ հնարելու և ֆաբրիկաներ ու գործարաններ հիմնվելու հետ միասին տնայնագործներն ու արհեստավորները վերջնականապես կտրվեցին հողագործությունից։ Նրանց մանրիկ հողամասերը կենտրոնացան խոշոր կապալառուների ձեռքերում։ Բրդի անազին պահանջը դեռ 16-րդ դարի սկզբից խիստ ձեռնտու դարձրեց ոչխարաբուծությունը, որի պատճառով հողային սեփականատերերը (լենդլորդերն) սկսեցին «ղորուղ» անել (ցանկապատել) արոտադաշտերը, որոնցից մինչև այդ ժամանակ օգտվում էր ընդհանուր հասարակությունը, այդպիսով քանդելով ու ոչնչացնելով մանր երկրագործությունը. իսկ 18-րդ դարի միջերքից, երբ բնակչության շատանալու շնորհիվ ձեռնտու դարձավ հացի արտադրությունը, սեփականատերերն՝ իրանց ձեռքում որքան կարելի է շատ հող կենտրոնացնելու համար՝ մանր կապալառուներին դուրս արին իրանց հաստատված տեղերից, ակար հողատերերի հողամասերը գնեցին։ Հետագայում բարելավումներ տեղի ունեցան երկրագործական տեխնիկայի մեջ՝ շնորհիվ քիմիական գյուտերը և ավելի ուշ—երկրագործական մեքենաները հողագործության մեջ կիրառելուն, որի շնորհիվ խոշոր հողագործությունը մանրից ավելի արդասաբեր ու շահավետ դարձավ։ Այս բոլորի հետևանքը եղավ հողային սեփականության կենտրոնացումը, այսինքն խոշոր հողամասերի կենտրոնանալը սակավաթիվ տերերի ձեռքում, և այն, որ հողազուրկ գյուղացիների զանգվածները դիմեցին քաղաքներն աշխատանք որոնելու՝ վարձու բանվորների առանց այն էլ լայն կադրերը խոշորացնելով. դա էլ իր հերթին նպաստեց ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության ընդարձակմանը։

Արդյունագործության և հողագործության հեղաշրջումն այդպիսով հասցրեց հետևյալ յերկու հետևանքներին. Նախ՝ հիմնվեցին բազմաթիվ խոշոր քաղաքներ, ուր կենտրոնացավ յերկրի արդյունաբերական կյանքը, յերկրորդ՝ գոյացավ պրոլետարիատի մի խոշոր դասակարգ, այսինքն բանվորների դասակարգ, վորը զուրկ եր արտադրության գործիքներից, կտրված եր հողից և ապրում եր միայն իր աշխատանքը վաճառելով։

Իրանց յերկասիրություններում անգլիական բանվորների կյանքը շոշափող բոլոր գրողները միահամուռ կերպով համաձայնում են, վոր արդյունաբերական և հողային հեղաշրջումից անմիջապես հետո Անգլիայի աշխատավոր դասակարգերի դրությունը սաստիկ փոխվեց դեպի վատը։ Նախ քան արդյունաբերական հեղաշրջումն անգլիացի աշխատավորը—կիսայերկրագործ - կիսաբանվորն ապրում եր վոչ միայն առանց նեղություն քաշելու, այլեվ բավական բարեկեցիկ, գյուղի առողջ պայմաններում, իր արհեստով զբաղվելուց անցնելով իր փոքրիկ հողամասում տնտեսական աշխատանքներ կատարելուն, միշտ իր ընտանեկան շրջանում, ընտանիքը շուրջը հավաքած։

Մեքենաների գյուտից հետո առաջին տարիներն արդյունագործության արտասովոր արագ աճման շնորհիվ բանվորական ձեռքերի պահանջը խիստ մեծացավ, ուստի աշխատավարձը միառժամանակ բավական բարձր մակարդակի վրա յեր կանգնած։ Բայց դա շատ կարճ տևվեց, և հանգամանքները շուտով սաստիկ փոխվեցին։ Իրանց հողամասերից քշված մանր հողատերերը և հենց բանվոր դասակարգը կազմող ազգաբնակչության սկսված աճումը սաստիկ ընդարձակեցին պրոլետարիատի կարգերը, և աշխատավարձն սկսեց ընկնել։ Դրան միացավ Նապոլեոնի դեմ վարած յերկարամյա պատերազմի առաջացրած՝ գործերի խանգարումը, այլեվ ապրանքների գերարտադրության շնորհիվ անգործությունը։ Թ. Րօջըրզի ասելով 19-րդ դարի առաջին քառամյակը բանվոր դասակարգի պատմության ամենաչարաբաստիկ դարաշրջանն եր. ուրիշ գրողներ դրան անվանում են «Վհատության դարաշրջան»։ Աշխատավարձն այնքան ցածր եր, պատմում է Բ. Ուեբբը, վոր ստիպված եյին լինում աղքատների ոգտին հարկ հավաքել։ Վորովհետև ֆաբրիկային աշխատանքը չեր պահանջում սովորել և ֆիզիքական մեծ լարվածք, ուստի շատ արտադրություններում մեծահասակ տղամարդկանց փո-

խարխլում էին կանանցով ու երեխաներով։ Կանանց աշխատանքը կործանարար կերպով էր ազդում ընտանեկան կյանքի վրա։ Չքավորների վիճակը բարվոքելու համար հոգացող հոգաբարձուները չքավոր բանվորների երեխաներին բռնացի կերպով ծախում էին ֆաբրիկաներին, ուր այդ մանուկները վեց տարեկան հասակից սկսած աշխատում էին որական 12—14 ժամ և ավելի՝ ֆիզիքական ու բարոյական ամենազարշելի պայմաններում, ծեծ ուտելով։ Ասենք մեծահասակ բանվորներն էլ էին աշխատում այնպիսի պայմաններում, վոր ստրկությունից մի քիչ էր լավ։

Չնչին վարձ ստանալով՝ բանվորներն ապրում էին խոշոր քաղաքների ծայրերի ամենավատ թաղերում խռնված, այսպես կոչված բանվորական կամ «անպիտան» թաղամասերում, ուր ապաստանում էին հասարակության տականքները—գրպանահատները, պոռնիկները, գողերը, գարշահոտ անձուկ բնակարաններում, զզվելի և անբավարար սնունդը լրացնելով ալքոհոլի անհամաչափ գործածությամբ։ Առողջապահական վոչ ավելի լավ պայմաններում էին հարկադրված աշխատելու ֆաբրիկաներում, վորովհետև ֆաբրիկանտներին չէր պատժում որենքը՝ չցանկանալով խառնվել գործատվի և գործավորի հարաբերության մեջ։ Այդպիսի պարագաներում բանվորները զոհ էին գնում վաղաժամ ուժասպառման, տարափոխիկ հիվանդությունների, երեխաները մեռնում էին մանուկ հասակում կամ քնքույշ պատանեկան տարիքում հալից քցող աշխատանքներից, կանայք փչանում էին պոռնկությունից։

Այդ բոլոր թշվառությունների և զրկումների միանգամայն բնական պատասխանն էր բանվորների կողմից ատելությունն ու վրդովմունքը,—ատելություն դեպի ստրկացնողներն ու շահագործողները, վրդովմունք դեպի այն հասարակակարգը, վորը վոչ միայն պաշտպան չէր դուրս գալիս հարստահարվող բանվորներին, այլև ամբողջովին կեղեքիչ-ֆաբրիկանտների կողմն էր։ Իր հարստահարողների դեմ բանվոր դասակարգի պայքարը, վոր սկզբում անջատ-անջատ էր և անկազմակերպ, հետզհետե փոխվեց բանվորական հզոր շարժումի այն առանձնահատկություններով, վոր կնկարագրենք ստորև։

Անգլիական բանվորական շարժումը կարելի յե բաժանել յերեք ժամանակաշրջանի։ Առաջին շրջանը, 19-րդ դարի սկզբից մինչև 1848 թվականը, կարելի յե անվանել հեղափոխական շրջան,

Թեյեվ ամենից սկզբում գործադրվող պայքարելու այնպիսի միջոցներն, ինչպիսին ֆաբրիկաներն այրելն ու մեքենաները կոտրատելն եյին, հետաշրջական (ռեակցիոն) նշանակություն ունեյին։ Դա որենքից չճանաչված «քաղցած» գործադուլների կազմակերպությունների շրջանն է, առանձին անհատների սոցիալական փորձերի և սոցիալիստական քարոզչության շրջանը, վերջապես սոցիալ-քաղաքական շարժման (վոր հայտնի յե չարտիզմ անունով) շրջանը, յերբ բանվոր դասակարգը գործում եր արմատական մանր բուրժուազիայի հետ միասին՝ ձգտելով կործանել կապիտալի և խոշոր հողատերերի իշխանությունը։ Յերկրորդ շրջանը, 1848 թվից մինչեվ 1880 թվականը—պրոլետարա-արհեստակցական շրջանն է կամ զուտ տրեյդ-յունիոնիզմի շրջանը։ Այդ շրջանում բանվորական շարժումն ընդունում է զուտ պրոլետարական բնույթ, վորովհետեվ վոչ միայն կազմակերպություններն են բաղկացած միմիայն բանվորներից, այլեվ շարժման պարագլուխներ են հանդիսանում զտարյուն պրոլետարները․ դրա հետ միասին այդ շրջանում բանվորական շարժումը ցուցահանում է միակողմանի թեքում դեպի արհեստակցա-տնտեսական կողմը, այսինքն բանվորի դրության մեջ մասնակի բարվոքումներ մտցնելու համար և վոչ թե գոյություն ունեցող ամբողջ կարգը փոխելու համար պայքարելու կողմը—այն միակողմանի թեքումը, վոր ամբողջական առմամբ անգլիական բանվորական շարժման հատկանիշն է համարվում։ Վերջապես վերջին շրջանը, 1880 թվից, կարող է կոչվել նոր տրեյդ-յունիոնիզմի յեվ սոցիալիստական ձգտումների շրջան այն պատճառով, վոր անգլիական բանվորական շարժումն այդ ժամանակից սկսած ավելի ու ավելի յե համակվում այն սոցիալիստական բնույթով, վորով համակված է յեվրոպական բոլոր մնացած յերկրների բանվորական շարժումը։

ՊԱՅՔԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԴԵՄ ՅԵՎ ՁԳՏՈՒՄ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԴԵՊԻ ՀԻՆԸ

Արդյունաբերական հեղաշրջումն սկսվեց մեքենաների մուտք գործելովը։ Մեքենան նվաճում եր արտադրության մի ճյուղը մյուսի հետեվից, և ամենուրեք, ուր վոր մուտք եր գործում այն, ձեռքով աշխատող նախկին բանվորներն ստիպված եյին լինում դառնալ ֆաբրիկային բանվորներ կամ մնալ առանց աշխատավարձի՝ հնար չունենալով մրցելու մեքենայական ձեվով արտա-

դրվող ապրանքների արժանության հետ։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ինքնուրույն տեր-տնայնագործի՝ ֆաբրիկային բանվորի փոխարկվելը չեր կարող տեղի ունենալ միանգամից և անցավ։ Արտադրության բոլոր ճյուղերում, ուր վոր մուտք եր գործում մեքենան, սովորաբար բանն սկսվում եր նրանից, վոր տնայնագործը հետզհետե ձեռքից տալիս եր գործն, աղքատանում, սովածություն քաշում։ Այն ժամանակ ստիպված եր լինում ֆաբրիկա գնալ ինքը, իսկ յերբեմն ընտանիքի բոլոր անդամները։ Բնության ծոցում ընտանեկան սովորական պայմաններում կատարվող ինքնուրույն աշխատանքից ֆաբրիկային հարկադրական աշխատանքի բթացնող, մեռցնող պայմաններին անցնելը չափազանց խիստ ու ծանր եր, վորպեսզի կարողանային ֆաբրիկային բանվորների առաջին սերունդներն անտարբերությամբ տանել այն։

Բայց կապիտալիզմի առաջին զոհերի բարկությունն ուղղվում եր վոչ թե իրանց հարստահարվելու պատճառ յեղողների—շահագործող-ֆաբրիկանտների դեմ, վոչ թե այն քաղաքական և սոցիալական իրավակարգի դեմ, վոր որինականացնում եր այդ հարստահարություններն ու շահագործումները, այլ մեքենայի դեմ, վոր ինքնին հանդիսանում եր մի ոգտակար, բարերար գյուտ՝ թեթեվացնելով բանվորի աշխատանքը, դարձնելով այդ աշխատանքը շատ ավելի արդյունավետ։

Մեքենաների դեմ հուզմունքներն Անգլիայում սկսվեցին դեռ 17-րդ դարում։ 17-րդ դարի առաջին յերրորդի վերջում, ինչպես կարդում ենք Մարկսի «Կապիտալի» առաջին հատորում, Լոնդոնի մոտ մի հոլլանդացու շինած քամու սղոցարանն ամբոխի ապստամբության զոհ դարձավ։ Դեռ 18-րդ դարի սկզբում սղոցող մեքենաները, վորոնք ջրով եյին բանում, միայն դժվարությամբ եյին հաղթահարում Անգլիայում ժողովրդի ընդիմությանը։ Արկրայտի գզող մեքենաների դեմ 50.000 բանվոր, վորոնք մինչեվ այդ ժամանակ բուրդ գզելով եյին ապրում, մի խնդրագրով դիմեցին պարլամենտին։ 19-րդ դարի առաջին 15 տարիների ընթացքում անգլիական մանուֆակտուրային շրջաններում մեքենաների մասսայական խորտակումը, վոր ուղղված եր նամանավանդ մանելու շոգեշարժ դազգահի դեմ և հայտնի յե լուդդիստների շարժում անունով,—անգլիական կառավարության համար առիթ ծառայեց ամենահետադեմ բռնի միջոցների դիմելու։ Յերբ 1811-12 թվականներին, ինչպես

պատմում է Թ. Ռոջըրսը, Նոտտինգեմի գլխավոր մանուֆակտուրաներում գուլպայի և ժանյակի մեքենաներ մտցրին, վրդովված բանվորները վախեցած իրանց աշխատավարձի համար՝ խուժում եյին տները և վոչնչացնում մեքենաները։ Դրանից հետո պարլամենտը մի որենք դրավ, վորով մեքենաները չարամտաբար վոչնչացնելու համար մահվան պատիժ եր սահմանվում։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մեքենաների վոչնչացումն աշխատանքի պայքարի աննպատակահարմար ձև եր կապիտալի դեմ։ Նա չեր կարող բանվորների համար վորևե ոգտակար հետևանքների հասցնել. ընդհակառակն, բանվորների վրա եյին իջնում ծանր պատուհասներ, իսկ մեքենաները շարունակում եյին հաղթականորեն հաղթահարել նրանց հարուցած բոլոր արգելքները։ Ասենք հենց բանվորներն ել շուտով դադարեցին մեքենաների կործանման վրա նայել վորպես իրական միջոցի վրա, վորով կարելի յեր իրանց դրությունը բարվոքել, այսինքն վերադառնալ արտադրության նախկին ձևերին։ Մեքենաների կործանումը դարձել եր նրանց համար վրեժի գործողություն, դարձել եր բարկության և ատելության արտահայտություն։ Ահա թե ինչու մեքենաների խորտակումը, գործարանների հրդեհումներն ու պայթեցումները շարունակվում են ուղիղ մինչև 19-րդ դարի կեսը, տակավին յերկար ժամանակ այն բանից հետո, մինչ բանվորներն անցել եյին կապիտալիստների դեմ պայքարելու ավելի կանոնավոր միջոցների, և այդ բաները տեղի եյին ունենում սովորաբար վրեժխնդրությունից յերկարատև գործադուլների ժամանակ, յերբ տանջված բանվորների սրտի դառնությունն ու կատաղությունը հասնում եր ծայրահեղության։ Այդ տեսակ միքանի դեպքերի մասին դեռ 40-ական թվականներին պատմում է Ֆ. Ենգելսը «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքում։

Արտադրության նախկին յեղանակներին վերադառնալու ձգտումը դեռ յերկար մնում եր արդյունագործության այն ճյուղերում, վորոնք պահպանում եյին իրանց կիսարհեստային բնույթը, վորովհետև այդ ճյուղերի բանվորներն ինքնուրույն վարպետներ և գործատերեր դառնալու հույսը չեյին կորցնում։ Արդյունագործության այդ ճյուղերի բանվորները, վորոնք ավելի լավ եյին վարձատրվում և ավելի լավ եյին կազմակերպված, կառավարությանը խնդիրք խնդրքի ետևից եյին տալիս պահպանելու նախկին համքարա-

յին օրենքները, վորոնցով սահմանափակվում եր աշակերտների թիվը արհեստագիտական հիմնարկություններում, յերկարացնվում եր բանվորական օրը և մեծացնվում աշխատավարձը։ 19-րդ դարի սկզբում յեղել են դեպքեր, վոր կառավարությունը բավարարել է նրանց խնդիրքը. օրինակ, միքանի անգամ նա հաստատել է 1756 թվականի օրենքը հաշտարար դատավորների աշխատավարձը կարգի բերելու իրավունքի մասին։ Բայց մեքենայական արտադրությունը քանի զարգանում եր, այնքան կապիտալիստներին պաշտպանող կառավարությունը դադարեց վոչ միայն նման խնդիրքները բավարարելուց, այլև սկսեց նրանց վրա նայել վորպես «ապստամբական գործողությունների» վրա։

«ՔԱՂՑԱԾ» ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ

Սակայն ֆաբրիկային բանվորները շուտով անցան պայքարի զուտ պրոլետարական յեղանակին—գործադուլների միջոցով պայքարելուն։

19-րդ դարի սկզբի անգլիական բանվորական շարժման պատմությունը գործադուլների պատմություն է, վորպիսի գործադուլներն անգլիացի բանվորները գլուխ են բերել զարմանալի արիությամբ և համառությամբ։ Այդ գործադուլները հայտնի յեն «քաղցած» անունով, վորովհետև բանվորները գործադուլ հայտարարելով իրանց և իրանց ընտանիքներին յենթարկում եյին քաղցի և աղքատության՝ չունենալով հարկավոր պաշտպանություն, պայքարի մեջ մտնելով անհամեմատ զորեղ թշնամու հետ, վորի կողմն եր միացած ամբողջ հասարակությունը, կառավարությունն ու օրենքը։

Կապիտալիստներն ու կառավարությունը գործադուլը բեկանելու համար այնքան միջոցներ ունեյին, վոր հարկավոր է զարմանալ վոչ թե նրա վրա, վոր գործադուլներն այնպես հաճախ անհաջողությամբ եյին վերջանում, այլ նրա վրա, վոր բանվորներն այդպիսի պայմաններում սիրտ եյին անում կռվելու։ Գործադուլ կազմակերպելով բանվորները սովորաբար գործարանից պիկետներ (պահապաններ) եյին դնում յերկու-յերեք հոգուց բաղկացած, վոր իրանց տեղ վարձված բանվորներին նախազգուշացնեն տեղի ունեցող գործադուլի մասին, վորպեսզի ներգործեն նրանց վրա համոզելով, յերբեմն ել սպառնալիքով։ Բայց դա համարվում եր հակաօրինական, և գործադուլավորները «վախացնելու» համար յենթարկվում եյին դաժան պատիժների։ Իսկ յերբ ձեռնարկուներն և

իշխանություններին չէր աջողվում այդ միջոցին դիմելու, այն ժամանակ բանվոր-գործադուլավորները պատասխանատվության էին կանչվում «համախմբումով» գործելու համար կամ «հակահասարակական դավադրությունների մասին» օրենքի համաձայն։ Այդպիսի դավադրություն համարվեց և լոնդոնյան կազմարարների 1786 թվի գործադուլը բանվորական օրից մի ժամ կրճատելու համար, «Թայմզ» թերթի գրաշարներինը 1810 թվին և մանչեստրյան դալամքարների (չիթ տպողների) գործադուլը 1819 թ., վորոնք բողոքում էին խիստ բազմաթիվ աշակերտներ ընդունելու դեմ. իսկ դրանց պատիժը յեղավ մինչև 2—3 տարի բանտարկություն։

1812 թ. տեղի ունեցավ 19-րդ դարի սկզբի անգլիական գործադուլների պատմության մեջ նշանավոր 40 հազար ջուլհակների գործադուլը։ Այդ գործադուլին առիթ յեղավ հետևյալ հանգամանքը։ Դրանից մի տարի առաջ միքանի բամբակ մանողներ (կտոր գործողներ) մեղադրվեցին միություն կազմելու համար և բանտարկության մատնվեցին. այդ ժամանակ դատավորները մատնանշում էին, թե օրենքը բավականաչափ պաշտպանություն է ցույց տալիս բանվորներին, վորովհետև դատավորներին է պատկանում աշխատավարձի չափը սահմանելու և տերերի ու բանվորների միջև վեճերը լուծելու իրավունքն ու իշխանությունը։ Բայց մի տարի անց ֆաբրիկանտները հրաժարվեցին յենթարկվել դատավորների սահմանած աշխատավարձի չափին, և ջուլհակները գործադուլ արին։ Գործադուլը տևեց մոտ յերեք շաբաթ, ֆաբրիկանտներն արդեն պատրաստ էին բանվորների հետ բանակցության մեջ մտնելու, բայց հանկարծ կառավարության կարգադրությամբ կալանավորվեց գործադուլը ղեկավարող հինգ հոգուց բաղկացած կենտրոնական կոմիտեն։ Կոմիտեի անդամները դատապարտվեցին չորսից մինչև տասնութ ամիս բանտարկության. գործադուլը վերջացավ անաջողությամբ։

«Աչքի անցկացնելով 1800—1827 թվականների լրագիրները,— նկատում են այդ առիթով Ս. և Բ. Ուեբբներն իրանց «Անգլիայի բանվորական շարժման պատմության» մեջ,— մենք այնտեղ կգտնենք դատավորական անիրավության և բարբարոսության բազմաթիվ վկայություններ... այնպես վոր հասկանալի յե դառնում բանվորների կատաղությունն այդ անիրավացի օրենքների դեմ։» Կատարելապես հասկանալի յե, կավելացնենք մենք, վոր այդպիսի ա-

նիրավ, ուղղակի նողկալի վերաբերմունքը ձեռնարկուների, կառավարության և դատավորների կողմից դեպի աշխատավորները, վորոնք ձգտում եյին գոնե մի փոքր թեթևացնել իրանց դրությունը, բանվոր դասակարգի մեջ ատելություն և կատաղություն եր հարուցանում. դա մղում եր բանվորներին վրիժառության և տերրորի ծայրահեղ միջոցների դիմելու, վորոնք արտահայտվում եյին ֆաբրիկանտների կամ շտրեյկբրեխերների (գործադուլը դավաճանող բանվորների) սպանությամբ, արհեստանոցներն ու ֆաբրիկաներն այրելով ու պայթեցնելով։

Սակայն չնայած վոր գործադուլները վերջանում եյին մեծավ մասամբ անաջող, չի կարելի ասել, վոր նրանք աչքի ընկնող ոգուտ չեյին տալիս աշխատավարձը բարձրացնելու և բանվորական օրվա յերկարությունը պակասեցնելու համար մղվող պայքարի գործին։ Բանը նրանում ե, վոր գործադուլները, մինչև իսկ բանվորների համար անաջող վերջացողները, ֆաբրիկանտներին հաճախ մեծ վնաս եյին տալիս, մանավանդ յերբ տեղի եյին ունենում այն ժամանակ, յերբ շուկայում խիստ մեծ պահանջ եր լինում. գործադուլների շնորհիվ ֆաբրիկանտները չեյին կարողանում ժամանակին հասցնել ընդունած պատվերները. գործադուլները քայքայում եյին արտադրությունը՝ հաճախ ֆաբրիկաները փակել տալով։ Տեսնելով այն տաքգլուխ վճռականությունը և արտասովոր արիությունը, վորով բանվորները դիմում եյին պայքարի, ֆաբրիկանտները շատ հաճախ տեղի եյին տալիս բանվորների պահանջներին՝ բանը գործադուլի չհասցնելով։

Շուտով բանվորները համոզվեցին, վոր գործադուլային ավելի աջող պայքարը հնարավոր ե միայն այն դեպքում, յեթե գործադուլավորներն աջակցություն ստանան բանվորական միություններից, վորոնք Անգլիայում սկսել եյին ծագել կապիտալիստական արդյունագործության սկզբնավորության առաջին մոմենտներից։

ԿԻՍԱՕՐԻՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

18-րդ դարի վերջին և 19-րդի սկզբին բանվորական առաջին միությունները ծնունդ առան տարբեր կերպով։ Դրանց մի մասն սկիզբ առավ քարգահների միությունների ձևով, վորոնք գոյություն ունեյին դեռ 16-րդ և 17-րդ դարերում «Նպաստամատույց ընկերություններ» կամ «բարեկամական ընկերություններ» անվան տակ, վո-

րանց նպատակն եր օժանդակություն ցույց տալ միևնույն համքարության պատկանող արհեստավորներին կարիքի, հիվանդության, մահվան (թաղման գանձարկղներ) դեպքում։ Միությունների մի մասն ել կազմվում եր սովորաբար գործադուլների ժամանակ։

Գործադուլի ժամանակ բանվորները սովորություն ունեյին հավաքվելու մոտիկ մի տրակտիրում և ընտրելու գործադուլային կոմիտե գործադուլը ղեկավարելու, ֆաբրիկանտների հետ բանակցելու, նպաստներ հավաքելու համար։ Յեթե գործադուլը հաղթությամբ եր վերջանում, միությունն աճում, մեծանում եր. նրան միանում եյին արտադրության նույն ճյուղի կամ կից ճյուղերի ուրիշ բանվորներ, յերբեմն ել աջողվում եր ժամանակավորապես միացնել ամբողջ յերկրի արտադրության միևնույն ճյուղի բոլոր բանվորներին (ազգային միություններ)։ Անաջողության դեպքում միությունն արագ քայքայվում եր. բայց ժամանակավորապես միացումն ել անհետ չեր անցնում բանվորական շարժման գործնականի համար, վորովհետև ստեղծվում եր մի սովորություն, վորն ավելի և ավելի արմատանալով վերջիվերջո հասցնում եր հաստատուն յերկարատև միություններ կազմակերպելուն։ Վերջապես քիչ միություններ չեն կազմվել բանվորների գիտակցելուց, վոր առանց միության բանվոր դասակարգի աջող պայքարն անհնարին բան ե։

1799 թվին հրատարակվեց արդյունաբերության մեջ միություններն արգելող մի որենք։ Այդ որենքով արգելվում եյին թե բանվորների, թե ֆաբրիկանտների միությունները։ Սակայն իրապես ֆաբրիկանտները կարող եյին կազմակերպվել անարգել։ Ինչ վերաբերում ե բանվորական միություններին, կառավարությունը վերաբերվել ե նրանց տարբեր ձևով՝ նայած միությունների բնույթին և գործելակերպին։ Կիսարհեստային բնույթ պահպանած արտադրություններում տերերի և բանվորների հարաբերությունները կարգավորվում եյին աշակերտության աշխատավարձը դատավորների կողմից սահմանվելու և այլ բաների մասին յեղած հին որենքներով։ Արտադրության այդ ճյուղերի բանվորները կազմակերպում եյին միություններ, վորոնք իրանց անվանում եյին «որենքին իրական ուժ տալու համար կազմված միություններ». այդ միությունները դիմում եյին դատարանի պաշտպանությանը կամ պարլամենտին խնդիրքներ (պետիցիաներ) տալուն։ Ուստի սկզբում կառավարությունը տանելի կերպով եր վերաբերվում դեպի նրանց։

A III/3004
147798

Բոլորովին ուրիշ էր մանվածային և ջուլհակային (գործվածային) արդյունաբերության ֆաբրիկային բանվորների դրությունը, վորոնց կողմնակից չեր վոչ մի որենք և վորոնք ամբողջովին թողնված եյին ձեռնարկուների քմահաճույքին։ Ահա թե ինչու 19-րդ դարի առաջին քառորդում մենք հանդիպում ենք բավական ուժեղ միությունների՝ դերձակների, ատաղձագործների, տակառագործների, տպագրիչների, խողանակագործների, կարասիագործների, գլխարկակարների, ղալամքարների մեջ, մինչդեռ ջուլհակների մեջ միությունները կրում են ժամանակավոր բնույթ և արագ քայքայվում են։

Սակայն հենց վոր արդյունաբերության մեքենայական յեղանակն ավելի ու ավելի խորն է թափանցում կիսարհեստային արտադրությունների մեջ, դրանք էլ են կորցնում իրանց առանձնաշնորհումները. որինակ՝ 1814 թվին վոչնչացվում է յելիսաբեթյան որենքն աշակերտության մասին. Նույն ժամանակներում վոչնչանում է նույնպես հաշտարար դատավորների միջոցով աշխատավարձը կանոնավորելու մասին որենքը, և շուտով նրանք էլ սկսում են հալածանքների յենթարկվել ֆաբրիկային բանվորների միությունների հետ միասին։ Իսկ թե ինչ եյին այդ հալածանքները, կարելի յեր դատել միությունների ազատության համար մարտնչողներից մեկի—Ֆրենսիս Պլեյսի խոսքերից, վոր անցած դարի 30-ական թվականներին գրում եր. «Յեթե կարելի լիներ ճշգրիտ տեղեկագիր ներկայացնել բանվորների դատական գործերի մասին (19-րդ դարի առաջին քառորդում), չնայած վոր այն ժամանակից շատ չի անցել, վոչվոք չեր հավատալ, վոր հնարավոր են յեղել այնպիսի կոպիտ անարդարություն, այնպիսի խայտառակ վիրավորանքներ և այնքան ծանր պատիժներ»։

Այդպիսի պարագաներում բանվորական շատ միություններ գերադասում եյին գաղտնիանալ։ Այդ գաղտնի ընկերությունների մասին պահպանվել են բերանացի և գրավոր ավանդություններ։ Ընկերությունների մեջ մտնելը, ճիշտ այնպես, ինչպես և նրանց նիստերը, կատարվում եյին խորհրդավոր արարողություններով ու ծիսակատարություններով, վորոնք անհրաժեշտություն եյին համարում զոհել իրանց անձը հանրային բարիքի համար. Նիստերը տեղի եյին ունենում սովորաբար խորունկ գիշերները, հաճախ անտառում ջահերի լույսով, թղթերը պահվում եյին մի ար-

կղում, վոր թաղում եյին հողի տակ։ Ամեն մի նոր անդամ հանդիսավոր և զարհուրելի պարագաներով շրջապատված յերդվում եր լինել հավատարիմ և անձնանվեր։

Ավելի հետո (յերեսնական թվականներին) շատ խոշոր միություններ, ինչպես շինարարների, մահուդագործների, գզողների միությունները, կազմակերպվեցին մասոնական ժողովարանների ձևով «պարզամիտների» հին ընկերություններից առած արարողություններով, վորոնք հետագա շրջանն եյին անցել միությունների գոյության առաջին տարիներից, յերբ նրանք անխնա հալածանքի եյին յենթարկվում։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր գաղտնի միությունների շրջանը չեր կարող նպաստել վոչ կազմակերպվածության զարգացմանը բանվորների մեջ, վոչ վերջիններիս ինքնագիտակցության զարգացմանը։ Հալածանքի վախը խրտնեցնում եր բանվորների մեծամասնությանը. կոնսպիրացիայի (գաղտնիքի) անհրաժեշտությունը միության բոլոր գործը կենտրոնացնում եր միքանի պարագլուխների ձեռքում, վորոնց առանց խոսելու յենթարկվում եյին միության մնացած անդամները։ Ահա թե ինչու շատ բանվորներ և նրանց բարեկամները հասկացան, վոր անհրաժեշտ ե պայքարել բանվորական միություններն արգելող որենքները վոչնչացնել տալու համար։

Միությունների ազատության համար վարած պայքարի գլխավոր ղեկավարներից մեկն եր Լոնդոնի կենտրոնական փողոցներից մեկում բավական խոշոր դերձականոցի տեր Ֆրենսիս Պլեյսը։ Նախ քան ինքնուրույն գործատեր դառնալը նա քարգահ եր և կազմակերպում եր իր և ուրիշ արհեստների մեջ բանվորական ընկերություններ։ 1818 թվականից հետո նա արհեստանոցի ղեկավարությունը հանձնեց իր վորդուն, իսկ ինքը նվիրվեց ընկերությունների հակառակ որենքները փոխել տալու պայքարին, ապա ընտրական իրավունքի բարենորոգման համար մղվող պայքարին։ Սկզբներում բանվորները Պլեյսին համարյա վոչ մի աջակցություն չեյին ցույց տալիս։ Ավելի գիտակիցները, վորոնք իրանց վրա փորձել եյին դատական հալածանքները, չեյին հավատում, վոր պարլամենտը, վորտեղ իշխում եյին ամբողջովին կապիտալիստներն ու խոշոր հողատերերը, ընդունակ կլինի վորեվե բան անելու բանվորների ոգտին։ Ուրիշ բանվորներ ել կասկածով եյին վերաբերվում

մի մարդու միջամտությանը, վորը հենց ինքը ձեռնարկում եր։ Բացի այդ՝ պայքարը դժվարացած եր նրանով, վոր կառավարությունը 1819 թ. հրատարակել եր վեց որենք, վորոնք արգելում եյին միտինգները և վոստիկանության իրավունք եյին տալիս խուզարկելու և լրագիրներին ու ժուռնալներին հետամտելու։ Չնայած այդ բոլորին, Պլեյսին աջողվեց վերացնել բանվորների անվստահությունը, ապա թերթերում և պարլամենտի անդամների մեջ ագիտացիա մղելով նա իր կողմը թեքեց համայնքների պալատի պատգամավորներից Ջ. Հյումին (փիլիսոփայա-արմատական ուղղության առաջնորդներից մեկին) և հետագայում նշանավոր տնտեսագետ Մա՛կ-Կելլոկին. պարլամենտական հանձնաժողով կազմվեց հարցը հետազոտելու համար, և վերջիվերջո Պլեյսին ու նրա համախոհներին աջողվեց 1825 թ. ընդունել տալ մի որենք, վորն ամեն մի հետապնդումից ազատում եր աշխատավարձը կամ բանվորական ժամանակը կանոնավորելու համար կազմված միությունները։

Այդ որենքով միությունների վերջնական ազատություն չեր մուծվում դեռ յեվս, վորովհետև դեռ ուժի մեջ եյին մնում «վախեցնելու», «հակահասարակական դավադրությունների», «տերերի և ծառաների» մասին որենքները։ Բայց և այնպես նոր որենքը հնարավորություն եր տալիս շատ միությունների լեգալ դառնալու (այսինքն օրինական հողի վրա կանգնելու) և իր գործունեյությունը ծավալելու։ Ինչպես հետո կտեսնենք, դեռ յերկարատեվ պայքար եր սպասում բանվորներին, մինչեվ վոր ճանաչվեր նրանց միությունների ազատությունն առանց վորյեվե սահմանափակումների։

ՌՈԲԸՐՏ ՈՈՒԸՆԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ։

Անգլիացի բանվորների թշվառություններն այնքան մեծ եյին, վոր նրանք կարեկցության եյին արժանանում յերբեմն մյուս դասակարգերի ներկայացուցիչների կողմից, վորոնք ձգտում եյին վորյեվե կերպ թեթեվացնել նրանց դրությունը։ Այդպիսի սակավաթիվ մարդկանց մեջ ամենանշանավորն եր Ռոբըրտ Ոուընը (1771-1858), կոմմունիզմի քարոզիչ և կոմմունիստական համայնքների հիմնադիրը, վոր խոշոր ազդեցություն ունեցավ Անգլիայի բանվորական շարժման վրա նրա առաջին շրջանում և վորը համարվում ե Անգլիայի կոոպերատիվ շարժման նախահայրը։

Ասենք Ռոբըրտ Ոուընն ինքը ծագում եր աշխատավոր դասակարգից։ Նրա հայրն ու յեղբայրը թամբագործ եյին։ Ինքը գյուղա-

կան դպրոցը վերջացնելուց ծառայում էր յեղբոր մոտ իբրև գործակատար, ապա մահուդի առևտրի մեջ։ Տասնինը տարեկան հասակում Ռ. Օուենը մտածեց բախտը փորձել ֆաբրիկային ձեռնարկվի ասպարիզում. բախտը բանեց, և քսանյոթ տարեկան դառնալուց նա բավական խոշոր բամբակի մանարանի տիրոջ ընկեր դարձավ։

Վաղ պատանեկան հասակից Ռ. Օուենը շատ էր կարդում, մտածում բանվոր դասակարգի թշվառ դրության և նրան շրջապատող սոցիալական իրավակարգի անարդարությունների վրա, և նրա մեջ մշակվեց սեփական հայացք այն բանի վրա, թե ինչումն է այդ թշվառությունների և անարդարությունների պատճառը և ինչպես վերափոխել ժամանակակից հասարակությունը, վորպեսզի ամենքը յերջանիկ լինեն։ Համառոտակի պատկերացնենք նրա հայացքները։

Հասարակական բոլոր թշվառությունների հիմքը Ռ. Օուենը համարում էր մասնավոր սեփականությունը, վոր տանում է դեպի գույքային և քաղաքական անհավասարություն։ Ուստի նա մասնավոր սեփականության հակառակորդ էր և պահանջում էր, վոր ամեն մի գույք և մարդկային աշխատանքի բոլոր արդյունքներն ընդհանուրի սեփականություն դառնան. նշանակում է՝ նա կոմմունիստ էր։ Նա քարոզում էր, թե պետք է այնպես վերակազմել հասարակությունը, վոր վոչ մի անհավասարություն չլինի— վոչ գույքային, վոչ քաղաքական։ Նա վոչ միայն կոմմունիստ էր, այլև անարխիստ։ Նա անթույլատրելի յեր համարում ինչ կառավարություն ուզում է լինի, նույնիսկ ընտրված, վորովհետև իշխանությունը, վոր ժողովուրդն է ընտրում, ելի հենց իշխանություն է, իսկ ամեն մի իշխանություն բռնություն է։ Բայց վորպեսզի իշխանությունն ավելորդ դարձնենք, նրա կարծիքով անհրաժեշտ է ժամանակակից պետությունը բաժանել բազմահազար համայնքների, վորոնց անդամները սեփական ուժերով կազմակերպեն արտադրությունը և իրանք վարեն իրանց գործերը։

Ռ. Օուենի կարծիքով այդպիսի հասարակակարգը համապատասխանում է հասարակության բոլոր դասակարգերի, բոլոր մարդկանց շահերին։ Այդպիսի իրավակարգի միակ թշնամին է հանդիսանում մարդկային տգիտությունը։ Պետք է մարդկանց բացատրել նոր հասարակակարգի օգուտները, և նրանք կդառնան նրա կողմնա-

կիցները։ Թագավորներն ու մինիստրները վախենում են կոմմունիզմից այն պատճառով միայն, որ նրանց չեն ծանոթացրել նոր ուսմունքի էությանը։

Այն, որ մարդիկ իրանց սեփական շահերն ուղիղ չեն հասկանում, նա համարում էր սխալ դաստիարակության հետևանք և ձգտում էր վերադաստիարակել մարդկանց, որպեսզի «Նոր բարոյական աշխարհ» հաստատի։

Ռ. Օուընն այդպիսով կարծում էր, թե թագավորները, մինիստրներն ու հարուստներն ընդունակ են տոգորվելու իր վարդապետությամբ և օգնելու նրան ընդհանուր յերջանկության և բարության «բարոյական նոր աշխարհ» հաստատելու։ Նա, նշանակում է, ուտոպիստ *) էր ֆրանսիացի մտավորականներ Սեն-Սիմոնի և Ֆուրյեյի նման։ Բայց դրանով հանդերձ նա շատ բան արավ, որպեսզի գործնականում իրականացնի կոմմունիստական համայնքի իր գաղափարը, դրա համար զոհեց իր կարողության աչքի ընկնող մասը և դեպի այդ գրավեց բավականաչափ կողմնակիցներ, բարեկամներ և նվիրատուներ։

Նախ և առաջ նա ձեռնամուխ յեղավ վերակազմելու իր ծրագրի համաձայն Նյու-Լանարկի բամբակամանարանները, որ ձեռք էր բերել նա յերկու ընկերների հետ միասին։ Նա տեսավ Նյու-լանարկյան ֆաբրիկային բնակչությունն — ինչպես ինքն է պատմում — «խրված ծուլության, աղքատության, ամեն տեսակ արատների մեջ, որի հետևանքներն էյին պարտքերը, հիվանդությունները և սոսկալի չքավորությունը»։ Կարճ ժամանակում նրան այնպես աջողվեց կերպարանափոխել Նյու-լանարկը, որ նրան նայելու յեկած Լիդս քաղաքի պատգամավորները «հիացած մնացին նրա բնակիչների արտաքին տեսքից և կենցաղավարությունից, նրանց բնակարանների մաքրությունից, նրանց զգեստի հստակությունից, նրանց զգաստությունից, ուրախությունից և խաղաղությունից»։ Սակայն և այնպես Օուընին չաջողվեց մինչև վերջը հասցնել իր ծրագիրը. ընկերների հետ ունեցած անհամաձայնության պատճառով Նյու-լանարկյան ձեռնարկությունը քայքայվեց։

Միևնույն ժամանակ Ռոբերտ Օուընը և հարուստ դասակարգերից նրան հետևողները կոմմունիստական գաղութներ հիմնեցին — մեկն Ամերիկայում — Նյու-Ջըրմընի («Նոր Գերմանիա») և յեր-

*) Ուտոպիստ — գլուխ չգալու բանի մասին յերազող, ցնորամիտ։

կու ուրիշներն Անգլիայում—Օրբիստըն և Ռըլեհայն։ Բայց ներքին անհամաձայնությունների շնորհիվ նրանք յեվս յերկար չպահեցին իրանց գոյությունը։

Բայց Ռոբերտ Օուենը հետևողներ ուներ վոչ միայն հարուստ դասակարգերի ներկայացուցիչների մեջ, այլեվ ավելի շատ աշխատավոր դասակարգերի—բանվորների ու արհեստավորների մեջ։ Այս վերջինները տեսնում եյին, վոր հարուստների վրա չի կարելի հույս դնել և վոր իրանք պետք ե աշխատեն իրագործել ուսուցչի գաղափարները։ Բայց դրա համար միջոցներ եյին պետք։ Այդ միջոցները ձեռք բերելու համար բանվորներն ու արհեստավորներն սկսեցին «կոոպերատիվ» ընկերություններ հիմնել՝ իրար վրա վաճառելով իրանց աշխատանքի արդյունքը և գործածության ուրիշ իրեղեններ, վոր գնում եյին արժան, և ոգտի վորոշ տոկոս հատկացնելով անձեռնմխելի ֆոնդին։ Այդպես սկսեցին ծագում առնել առաջին սպառողական և արտադրողական ընկերությունները, հում նյութերի ընկերությունները և կոոպերատիվների միքանի ուրիշ տիպեր։ Անցած դարի 30-ական թվականներին նրանց թիվը արդեն 500-ի մոտ եր։ 1884 թվին սպառողական կոոպերացիան կատարելագործվեց ռոչդելյան պիոներների *) ձեռքով։ Դրանք Ռոչդելի ջուլհակներ եյին, վորոնք հիմնեցին սպառողական մի փոքրիկ խանութ՝ վորոշելով անդամների վրա կանխիկ վաճառել ապրանքները շուկայի գներով, ոգուտը տարվա վերջը բաժանելով գնած ապրանքների արժեքի համեմատ, ոգտի վորոշ տոկոս ամեն տարի հատկացնելով կրթական գործի։ Այդ «ռոչդելյան» սկզբունքները՝ մի քիչ կատարելագործված՝ վերջում ամբողջ Յեվրոպայի սպառողական կոոպերատիվ շարժման հիմունքը դարձան։

Ռ. Օուենը միայն կոմմունիստական համայնքներ հիմնելով չեր զբաղվում, վորոնք ինչպես նշեցինք, յերկարակյաց չեյին և շուտ քայքայվում եյին։ Նա շատ յեռանդ եր գործադրում նայեվ սոցիալիզմի և կոմմունիզմի իր գաղափարները բանվորների շրջանում քարոզելու վրա, այլեվ բանվոր դասակարգը կազմակերպելու վրա։ 1834 թվին նրա նախաձեռնությամբ կազմվեց «Ազգային մեծ տրեյդ-յունիոնը», վորի մեջ մտան հարյուր հազարավոր բանվորներ։ Հենց այդպես ել նրա աջակցությամբ կազմակերպվեց «Ազգային նորոգման ընկերությունը», վորն առաջինն եր վոր պահանջ-

*) Պիոներ—սկսող, ռահվիրա, նախաձեռնող։

ջեց բանվորական ութժամյա օր մտցնել. այդ ընկերության ագիտացիայի շնորհիվ 1847 թ. մի քանի արտադրությունների մեջ մտցրվեց 10-ժամյա բանվորական օր։ Ռոբերտ Օուենի կոմմունիստական և կոոպերատիվ գաղափարները, այլեվ նրա՝ «նվազագույն բանվորական օրվա և առավելագույն աշխատավարձի» համար մղած պայքարի քարոզն անջնջելի հետքեր են թողել անգլիական բանվորական շարժման մեջ և նրա մահից յետո դեռ յերկար ժամանակ շարունակում եյին վոգևորել թե առանձին մարդկանց և թե աշխատավոր դասակարգերի բազմաթիվ շրջանների։

ՉԱՐՏԻԶՄ Անգլիան ի սկզբանե անտի համարում են քաղաքական ազատության և ժողովրդական ներկայացուցչության յերկիր։ Դա այնքան ել ճիշտ չե։ Անգլիայում 19-րդ դարի սկզբում կային քաղաքական ազատության նշույլներ, և նրան կարելի յեր ազատ անվանել համեմատած Յեվրոպայի մյուս յերկրների հետ, ուր, բացի Ֆրանսիայից, տիրում եր խորին անիրավություն ու ստրկություն։ Անգլիայում այդ ժամանակներն արդեն պարլամենտ կար, ուր նստում եյին ընտրովի պատգամավորներ, կար նայեվ խոսքի ու ժողովների ազատություն, թեյեվ շատ սահմանափակումներով։ Բայց պետական ամբողջ մեքենան գտնվում եր տոհմական ազնվականների և հարուստ-կապիտալիստների մի փոքրիկ խմբակի ձեռքում։ Պարլամենտի համար ներկայացուցիչ ընտրելու իրավունքը պատկանում եր ազնվականների և հարուստների այդ փոքրիկ խմբակին։ Այդ ժամանակի գրողների հաշիվների համաձայն պալատի մեծամասնությունն ընտրվում եր տասնուհինգ հազար հոգու ձեռքով, վորոնք կազմում եյին բնակչության մի յերկուհարյուրերորդ մասը, յենթադրելով վոր Անգլիայի հասակավոր արական ազգաբնակչության թիվն այդ դարաշրջանում 3 միլիոնի յեր հավասար։ Այդ փոքրիկ խմբակի տեսակետով բանվորները վոչ միայն քաղաքացիներ չեյին համարվում, այլեվ մարդ անգամ չեյին համարվում։ Հենց իրանք բանվորներն ել այնքան եյին ընկճված կարիքից ու առորյա գոությունը պահպանելու պայքարից, վոր շատ քիչ եյին հետաքրքրվում քաղաքական հարցերով։ Նրանք չեյին հասկանում, վոր պարլամենտում ներկայացուցիչներ ունենալով կարող եյին իրանց համար ավելի լավ որենքներ հորինել տալ և ազդել պետական ամբողջ կառավարչության վրա։

Մինչ այդ մանր ու միջին բուրժուազիայի ներկայացուցիչները

դեռ 18-րդ դարի վերջին պայքար եյին սկսել կառավարության դեմ ընտրողական իրավունքն ընդարձակելու համար. բայց պայքարը շարունակվեց միքանի տասնյակ տարի, մինչեվ վոր նրանց առաջնորդներին աջողվեց իրանց կողմը գրավել ժողովրդի լայն շրջաններ, մանավանդ մեծ քաղաքներում, վորից հետո «բարեփոխություն, ապա թե վոչ հեղափոխություն» լոզունգով դուրս յեկած ժողովրդի ճնշման տակ կառավարությունը հարկադրվեց զիջում անել։ Հրատարակվեց (1832 թվին) ընտրողական իրավունքն ընդարձակելու մասին որենքը. այդ որենքը միայն միջին և մասամբ մանր բուրժուազիայի ոգտին եր, իսկ բանվորները վոչինչ չստացան։ Բայց ժողովրդի լայն շրջանները մի անգամ քաղաքական պայքարի ուղին վոտք դնելով այդտեղ կանգ չառան, և հետեվյալ դարաշրջանում հաջորդ դեպքերի ազդեցության տակ այդ պայքարն ընդունեց ավելի փառահեղ կերպարանք։

Ընկերությունների դեմ որենքները վերացնելուց (1824 թ.) հետո բանվորների մեջ կազմակերպչական ուժեղ գործունեյություն սկսվեց. կազմակերպվեցին ջուլհակները, նավաշինարարները, հանքափորները։ Սակայն շուտով բանվորներին վիճակված եր հիասթափվել՝ տեսնելով վոր անկարելի յե սոսկ արհեստակցական միությունների ոգնությամբ իրանց դրությունը փոխել դեպի ավելի լավը։ Սկսվեց առևտրի կանգառումը (ճգնաժամը), վոր ընդհատումներով շարունակվեց շուրջ 6 տարի. բանվորական վարձը բավականաչափ իջեցրվեց. ձեռնարկվող գործադուլները հասցրին այն բանին, վոր շատ ֆաբրիկանտներ փակեցին իրանց ֆաբրիկաները. ահագին թվով բանվորներ մնացին դուրսն անգործ։ Միայն այդ ժամանակ եր, վոր արմատականների և պրոլետարիատի պարագլուխներն սկսեցին բացատրել բանվորներին, վոր նրանց անհրաժեշտ ե պայքար մղել վոչ թե առանձին ֆաբրիկանտների դեմ, այլ տիրող ամբողջ հասարակակարգի դեմ, և ամենից առաջ քանդել այն քաղաքական պատը, վորով շրջապատել ե իրան բուրժուազիան, վորպեսզի իշխի յերկրին։ Սկսված կիսահեղափոխական շարժումը, վոր տեվեց 1835 թ. մինչև 1848 թ., պատմության մեջ հայտնի յե Չարտիզմ անունով, վորովհետեվ բանվորների պահանջները, վոր արել են կառավարությունից, նկարագրվել են Ժողովրդական Քարտիայում (անգլիերեն «պըբլիք չյորտըր»)։ Այն վեց կետերը, վորոնցից բաղկացած ե քարտիան, պահանջում եյին դեմոկրատացնել պետական ի-

բավակարգը. բանվորները պահանջում էին մտցնել ընդհանուր, հավասար և գաղտնի ընտրական իրավունք, պատգամավորների ամենամյա ընտրություն՝ յոթը տարին մի անգամ ընտրելու փոխարեն, պատգամավորների վարձատրություն։

Թեյեվ այդ պահանջները զուտ քաղաքական բնույթ ունեյին և չեյին վերաբերում աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությանը, բայց գիտակից բանվորները հասկանում եյին, վոր այդ իրավունքների նվաճումը նրանց կարելիություն կտա ազդելու որենսդրության վրա, այլեվ զուգե ամբողջովին տիրելու պետական մեքենային և այդպիսով իրանց պայմանները թելադրելու կապիտալիստներին։ Չարտիստական շարժման պարագլուխներից մեկն այսպես եր բացատրում, թե ինչ ե նշանակում նրա կարծիքով ընտրական իրավունքը. «Յեթե մեկն ինձ հարցներ, թե ինչ ասել ե ընդհանուր ձայնատվություն, յես նրան կպատասխանեյի. դա նշանակում ե, թե ամեն մի բանվորի հագին կլինի լավ հագուստ և գլխին լավ գլխարկ, նրա ընտանիքի համար լավ հարկ (բնակարան), սեղանին լավ ճաշ, մի աշխատանք, վորից չի տուժիլ նրա առողջությունը, և այնպիսի վարձատրություն այդ աշխատանքի համար, վորը կապահովի նրան կատարյալ լիություն և կյանքի բոլոր բարիքներից ոգտվել այնքան, վորքան կարող ե ցանկանալ խելքը գլխին մարդը։ Ա՛յ թե ինչե նշանակում ընդհանուր ձայնատվությունը»։

Շարժումը ղեկավարելու համար տեղի ունեցավ յերկրի շատ բանվորական միությունների միացումն և լիազորների ընտրություն, վորոնք Լոնդոն հավաքվելով կազմեցին ազգային կոնվենտ (ժողովրդական ժողով, «նեշընըլ կընվենշըն»)։ Ազգային կոնվենտում բանվորների առաջորդների մեջ համերաշխություն չկար այն հարցի վերաբերմամբ, թե ինչպես գործել, ինչպես հասնել իրանց նպատակներին (տակտիկայի հարցերի վերաբերմամբ)։ Բանվորների մի մասը նախկին բանվոր Լը՛վետտի գլխավորությամբ կողմնակից եր խաղաղ միջոցներով պայքարին. դրանք արտադրության այն ճյուղերի բանվորներն եյին, վորոնք դեռ կիսարհեստային բնույթ եյին կրում և ուր աշխատանքի վարձատրությունը բավական բարձր եր։ Լըվետտը և ուրիշ առաջնորդներ առաջարկում եյին պայքարի այսպես կոչվող «սահմանադրական միջոցներ», այսինքն այնպիսի միջոցներ, վորոնք որենքի թույլատրած սահմաններից դուրս չեյին գալիս։ Այն ժամանակ այդպիսի միջոցներն եյին

կազմում—միտինգներում, Թերթերում ագիտացիա անելը և պարլամենտին ժողովրդական լայն զանգվածների կողմից պետիցիաներ (խնդիրքներ) տալը։ Բանվորների մյուս մասը — վորը պատկանում էր արտադրության զուտ ֆաբրիկային ճյուղերին, վորոնք վատ եյին վարձատրվում և թույլ եյին կազմակերպված, գլխավորապես ջուլհակներն ու մանողները,— իրան անվանում էր ֆիզիքական ուժի կուսակցություն և հեղափոխական միջոցների կիրառումն էր պահանջում։ Նրանց գլուխ եյին կանգնած իռլանդացի Ո՛ Կոննորը և Ո՛ Բրիյենը, այլև բանվորական գործին բուռն կերպով նվիրված, բուրժուազիային խորապես ատող նախկին քահանա Ստեփընսը, վորն իր ճառն սկսում և վերջացնում էր զենքի դիմելու կոչով։

«Յես կողմնակից եմ կրակով հեղափոխությանը, — հայտարարում էր նա, — արյունով հեղափոխությանը, մինչև դանակ, մինչև մահ... Յուրաքանչյուր տղամարդ պետք է հետն ունենա իր հրացանը, սուսերը, մի զույգ ատրճանակ կամ նիզակ, իսկ յուրաքանչյուր կին մի զույգ մկրատ, յուրաքանչյուր յերեխա — գնդասեղներ ու ասեղներ»... «Յեթե նրանք (կառավարողները) կամովին չեն փոխիլ տիրող կարգը, — ասում էր նա մի ուրիշ միտինգում, — յեթե նրանք այս բոլորն արմատից չեն վոչնչացնիլ, այն ժամանակ նրանք կտեսնեն այն հեղափոխությունը, վորից այնքան վախենում են... Մենք կկործանենք անիրավության այն ամրոցը, վոր նրանք կառուցել են աստվածային և մարդկային բոլոր օրենքները վոտնահարելու համար... Մենք կփոխարկենք ամբողջ յերկիրն, սկսած արևելքից ու արևմուտքից, հյուսիսից ու հարավից, մի զարհուրեցուցիչ խարույկի, վորը վոչ մի բան կարող չի լինիլ հանգցնել, մենք կոչնչացնենք բամբակամանվածային բռնակալների բոլոր գործարանները և նրանց տները, վորոնք շինել են այդ տները կողոպուտով ու սպանությամբ՝ միլլիոնավոր մարդկանց տունը քանդելով, մարդկանց, վորոնք ստեղծել են համահավասար յերջանկության համար»։

1839 թվին չարտիստները պարլամենտին մատուցին մի ահագին պետիցիա՝ 1,200,000 ստորագրությամբ ծածկված, սակայն ազնվական-հողատերերը և հարուստ-ֆաբրիկանտները պատասխանի անգամ չարժանացրին բանվորներին։ Այդ միյեվնույն ժամանակ Անգլիայի զանազան անկյուններում ապստամբություն կազմակերպ-

վեց, բայց դավաճանության շնորհիվ բացվեց կառավարության կողմից և խորտակվեց։ Առաջնորդներից միքանիսը կալանավորվեցին և բանտը նետվեցին. դրանց թվում եյին Լըվետոն ու Ո՛ Կոննորը, վորոնց ազատությունը շուտով աջողվեց ձեռք բերել։

Նորից միացնելով իրանց ուժերը՝ չարտիստները կազմեցին Մեծբրիտանական Ազգային Քարտիայի Միություն։ Բազմաթիվ միտինգներից հետո և նոր ընտրված կոնվենտի աջակցությամբ պարլամենտին ներկայացնելու յերկրորդ պետիցիա կազմվեց, ել ավելի փառահեղ, քան առաջին անգամ. նրա տակ հավաքված եր 3.315.752 ստորագրություն առավելապես բանվոր դասակարգի միջից։ 1842 թվի մայիսի 2-ին բանվորների ահագին թափորի ուղեկցությամբ այդ պետիցիան տարվեց պարլամենտի շենքը։ Սակայն դա յեվս յենթարկվեց այնպիսի վիճակի, ինչպես և՛ առաջինը։ Չարտիստների ձախ թեվը ել վորոշեց պարլամենտի այդորինակ գործողությանը պատասխանել մասսայական գործադուլներով։ Չափավորագույն չարտիստներն արմատականորեն տրամադրված բուրժուազիայի հետ միացած առաջարկեցին զիջումներ անել և քարտիայից դուրս քցել ծայրահեղ պահանջները. բայց Ո՛կոննորն ու նրա համախոհները չհամաձայնեցին։ Սկսվեցին մասսայական գործադուլներ, յերկրում անկարգություններ բռնկվեցին. շատ տեղեր խորտակվեցին մեքենաները, ֆաբրիկաներն այրվեցին. մերթ այստեղ, մերթ այնտեղ ընդհարում տեղի ունեցավ վոստիկանության և զորքերի հետ. յերկու կողմերից ել զոհեր յեղան։ Բայց վերջիվերջո կառավարությունը հաղթանակեց։ Բազմաթիվ ձերբակալություններ տեղի ունեցան։ Չարտիզմի ձախ թեվի առաջնորդները նորից բանտ ընկան։

Դրանից հետո չարտիստական շարժումն սկսեց հետզհետե նվազել և նորից կենդանացավ միայն 1848 թ., յերբ Ֆրանսիայում բռնկվեց հեղափոխությունը և նորից զարթնեցրեց չարտիստների հույսերն իրանց գործի աջողության համար։ Նրանք Լոնդոնում ելի պատգամավորների կոնվենտ հրավիրեցին և պատրաստեցին մի յերրորդ փառահեղ պետիցիա. կայացված միտինգում նրանք վորոշեցին հսկայական ցույցով շարժվել դեպի պարլամենտ և ջանալ կառավարող խմբակի համառությունը կոտրել։

Կառավարությունը վախեց, Լոնդոնը հայտարարեց պաշարողական դրության մեջ և բուրժուազիային կոչ արավ, որ ինքը դուրս

դա «սեփականությունն ու կարգը» «խռովարարներից» պաշտպանելու։ Յեվ ահա հենց այն բուրժուազիան, վորը դեռ նոր եր իր ձեռքին խաղացնում բանվորներին և նրանց մղում դեպի հեղափոխական արշավանք, այժմ նետվեց ռեակցիոն (հետադեմ) կառավարության գիրկը և արձագանք տվավ նրա կոչին՝ իր շարքերից դուրս բերելով 170,000 միլիցիոներ-կամավոր։ Ուժն այս անգամ ել կառավարության կողմը դուրս յեկավ։ Չարտիզմը կրեց վերջին պարտությունը, վորից նա այլևս չապաքինվեց։

Չարտիզմը քաղաքական յեվ սոցիալական հեղափոխության միակ փորձն եր Անգլիայի բանվոր դասակարգի կողմից։ Դրանից հետո բանվորական շարժումն Անգլիայում մտնում ե քաղաքականությունից մեկուսացած արհեստակցական միությունների խաղաղ պայքարի շրջանը։ Այդ շրջանը, վոր այնքան հատկանշական ե անգլիական բանվորական շարժման համար, չնչին խոտորումներով շարունակվում ե մինչեվ այս վերջին ժամանակները, յերբ նրանում նորից են կենդանանում սոցիալիստական գաղափարները և բանվոր դասակարգի քաղաքական ինքնուրույն պայքարի անհրաժեշտության գիտակցությունը։

II.

ԶՈՒՏ ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆԻԶՄԻ ՇՐՋԱՆ

(Հին տրեյդ-յունիոնիզմ)

ՏՐԵՅԴ-ՅՈՒՆՅՈՆԻԶՄԻ ԾԱԳԵԼՈՒՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

19-րդ դարի միջերքում արդյունաբերությունն ու առևտուրն Անգլիայում հասան այնպիսի զարգացման, վոր Եվրոպայի վոչ մի պետություն չեր կարողանում մրցել նրա հետ։ Դրան մեծապես նպաստեցին—տեխնիկայի նորանոր կատարելագործումները և խոշոր արդյունագործության հետագա զարգացումը, գաղութային ընդարձակ շուկաների և հում նյութ ձեռք բերելու տեղերի նվաճումը, ամբողջ յերկրագունդն արագ և աժան ապրանքներ տանող առևտրական նավատորմի մեծացումն ու կատարելագործումը։

Իրերի այդպիսի դրության մեջ յերկրի հարստությունը, ամենից առաջ՝ իհարկե՝ բուրժուազիայի հարստությունն, անընդհատ ավելանում եր, ավելանում եյին նույնպես և՛ բանվորների վաստակները։ Կանգառումներն ու ճգնաժամերը, վորոնք առաջ համարյա թե ամեն հինգ տարին մի անգամ պատահում եյին, այժմ ավելի հազվադեպ դարձան, վորի հետևանքով բանվորների դրությունն ավելի կայուն ու ամուր դարձավ։ Բանվորները սակավ եյին նեղվում մասսայական անգործությունից և մասսայական քաղցածությունից։ Հասարակության հաշվին պահվող աղքատների թիվը, վոր քառասնական թվականներին հասնում եր մինչեվ $1^{1}/_{2}$ միլիոնի, վաթսունական թվականներին կիսով չափ իջավ։

Բանվորների դրության բարվոքումն անդրադարձավ և՛ արհեստակցական միությունների զարգացման վրա։ Նրանք ընդարձակվեցին, անդամավճարներն ավելի կանոնավոր եյին ստացվում և միություններն ավելի հարստացան։ Գործադուլային պայքարը ժամանակ առ ժամ մեղմանում եր, վորի հետեվանքով արհեստակցական կազմակերպություններն ամրապնդվում եյին և ավե-

լանում էր բանվոր դասակարգի վստահությունը, որ նրան կաջողվի պահպանել և բարվոքել իր դրությունն արհեստակցական միաձուլման միջոցով։

Մյուս կողմից՝ չարտիստական դեռ նոր վերջացած շարժման անաջողությունները բոլորի հիշողության մեջ թարմ էյին տակավին և բանվորների ճնշող մեծամասնությանը խրտնեցնում էյին քաղաքական կռվից։ Ե՛լ ավելի, արհեստակցական շատ միություններում կանոնագրով պահանջվում էր քաղաքական հարցեր չշոշափել։ Դա էլ էր նպաստում բանվորական շարժման զուտ արհեստակցական շրջանակներում մնալուն։

Այդ տեսակետից փոքր դեր չէր խաղում նույնպես Անգլիայի քաղաքական կյանքի բնույթը։ Անգլիական պարլամենտում վաղուց ի վեր պայքարում էյին յերկու կուսակցություններ — տօրի — պահպանողականները և ուիգ — ազատամիտները. առաջինները պաշտպանում էյին խոշոր հողատերերի շահերը, յերկրորդները — խոշոր արդյունագործների շահերը։ Ցանկանալով իրանց կողմը գրավել բանվորների ու արհեստավորների շրջանից ընտրողներ՝ այդ կուսակցություններից ամեն մեկն իշխանության գլուխ լինելուց աշխատավոր դասակարգերին զիջումներ էր անում։ Այդպիսով բանվորներն այն գաղափարն էյին կազմել, որ առանց սեփական քաղաքական կուսակցության էլ իրանք կարող են յոլա գնալ, բավական է որ լավ հուպ տան այս կամ այն կուսակցությանը, որպեսզի հասնեն հօգուտ իրանց այս կամ այն բարենորոգման, և որ իրանց ամբողջ ուշադրությունը նրանք պետք է կենտրոնացնեն արհեստակցական միությունների ընդարձակելու և ամրապնդելու վրա, որպիսի միությունները սկսում են 19-րդ դարի միջերքից զարգանալ նոր հիմունքներով։

ՅԵՐԵՔ ԱՍՏԻՃԱՆ՝ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Նախ քան նոր միությունների և նրանց հիմունք ծառայող սկզբունքների քննությանն անցնելը մի թռուցիկ հայացք նետենք դեպի հետ։

Առաջին բանվորական միությունները, ինչպես ասացինք, սկիզբ են առնում 18-րդ դարի վերջում և 19-ի սկզբում այն արտադրությունների մեջ, որոնք կիսարհեստային բնույթ են կրում, կամ այն արհեստների մեջ, ուր բանվորից պահանջվում է բավականաչափ պատրաստություն՝ միքանի տարի

աշակերտություն անելով (այստեղից է «վարպետ» բանվոր կոչումը)։ Այդ բանվորները շատ ավելի յեն վաստակում, քան դուրս ֆաբրիկային արտադրությունների բանվորները, աշխատում են ավելի քիչ, ապրում են ավելի լավ. Նրանց կազմակերպությունները կայուն են, չնայած վոր նրանք ստիպված են անընդհատ պայքար մղել տերերի դեմ։ Դրանք մի տեսակ աշխատանքի «արիստոկրատներ» են. Նրանք ամուր են կառչում իրանց տեղական ինքնուրույնությանը և դժկամակությամբ են միաձուլվում ուրիշ քաղաքների կազմակերպությունների հետ, թերևս ընդհանուր թշնամու դեմ պայքարելիս միայն։ Այդ միությունների ձգտումները շատ համեստ են. աշխատավարձի ավելացում, աշակերտների մատչելիության սահմանափակում, վորպեսզի կրճատվի մրցակիցների թիվը։ Նրանք գերադասում են պայքարի խաղաղ միջոցները—դատարան դիմելը, պարլամենտին պետիցիա տալը, ծայրահեղ դեպքերում գործադուլի յեն դիմում։

Բանն արմատականապես փոխվում է չարտիզմի դարաշրջանում։ Քաղաքական ագիտացիայի ազդեցության տակ կազմակերպվում են վոչ միայն կիսարհեստային արտադրությունների բանվորները, այլև ջուլհակները, մանողները, հանքափորները, կազմակերպվում են մինչև անգամ յերկրագործական բանվորները (ռանչբարները)։ Ընդհանուր թշնամու—կապիտալիստական կարգի—դեմ պայքարելու համար միանում են վոչ միայն յերկրի զանազան վայրերի միևնույն ճյուղի միությունները, այլ բոլոր միություններն են միաձուլվում կազմում «ազգային (համաժողովրդական) միություններ» կամ աշխատանքի համընդհանուր միություններ։ Նրանց աչքի առաջ ունեցած նպատակներն առօրյա պայքարի նեղ, մանրիկ նպատակները չեն, այլ կապիտալի շահագործման վոչնչացման, բանվոր դասակարգի ազատագրման, համընդհանուր յերջանկություն հաստատելու մեծ նպատակները։ Իրանց առաջ այդպիսի վեհ նպատակ ունենալով՝ նրանք կանգ չեն առնում վոչ մի միջոցի առաջ—խաղաղ, թե հեղափոխական։ Չարտիզմի պարտությունը հասցնում է այն բանին, վոր «համընդհանուր» միությունները բաժանվում են նախասկզբնական տեղական միությունների, վորոնցից շատերը բոլորովին չքանում են, մյուսներն աննկատելի գոյության շրջանն են անցնում. բանվոր դասակարգի մեջ թագավորում է հիասթափություն և վհատություն։

Հենց այդ ժամանակվանից է, 19-րդ դարի միջերքից, որ սկսվում է արհեստակցական միությունների կյանքում յերրորդ շըրջանը, որը կասես թե առաջնի կրկնությունն է կազմում։ Իրանց կազմակերպությունները վերականգնում և ամրացնում են ամենից առաջ այն զբաղմունքների բանվորները, որտեղ պահանջվում է նախապատրաստություն, այսպես կոչված «վարպետ» բանվորները. Նրանք ունենում են համեստ նպատակներ—պայքար առօրյա կարիքների համար—և ձգտում են հասնել նրանց միայն խաղաղ միջոցներով, ըստ կարելույն խուսափելով գործադուլներից։ Սակայն այս միությունների և առաջին շրջանի միությունների միջեվ էյական տարբերություն կա։ Արտադրության միեվնույն ճյուղի տեղական կազմակերպությունները իրարից բաժանված չեն մնում, այլ կազմում են մի ձույլ «ամալ՛գամված» (սնդիկով զոդված) կազմակերպություն, որ ընդգրկում է ամբողջ յերկրում արտադրության տվյալ ճյուղի բանվորներին։ Տեղական բջիջները մնում են որոշ չափով ինքնուրույն (ավտոնոմ), բայց բոլորը միասին առած կառավարվում են մի ընտրովի կենտրոնական կոմիտեյի կամ բյուրոյի ձեռքով, որ գտնվում է այն խոշոր քաղաքում, ուր ամենից շատ է զարգացած տվյալ արտադրությունը, կամ մայրաքաղաքում—Լոնդոնում։ Բյուրոյի գործերն այժմ վարում են ոչ թե պատահական կամավոր-բանվորներ, այլ մշտական ծառայության համար վարձվող **քարտուղարները**, սովորաբար պրոլետարիատի ամենի ինտելլիգենտ անդամներից, ամբողջովին նվիրված իրանց դասակարգի շահերին. մշակվում է ռեգիստրացիայի (ցուցակագրության), դրամական հաշվետվության և կոնտրոլի նպատակահարմար սիստեմ։ Անդամավճարներն ավելանում են։ Միությունները կուտակում են մեծ գումարներ, որպեսզի ինչպես հարկն է պաշտպանեն իրանց սա- պարեգ գալը, որ առաջվա պես արագորեն չեն փճանում անել, բայց որոշելուց՝ աշխատում են բանը մինչեվ վերջը հասցնել։

ՄԵՔԵՆԱՅԱԳՈՐԾՆԵՐԻ ՅԵՎ ԱՏԱՂՁԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻԱՁՈՒԼՎԱԾ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳԵԼԸ

Նոր հիմքերի վրա ծագում առած առաջին տրեյդ-յունիոնների թվին է պատկանում «մեքենայագործների միաձուլված (ամալ՛գամված) ընկերությունը»։ Նա կազմվեց մեքենայագետների բարեկամական ընկերությունից, որ ձեվել էր առել 1826 թ.։ Այդ ընկերությունն այդքան յերկար պահպանել

եր իր գոյությունն այն պատճառով, վոր իրան հեռու յեր պահում քաղաքական շարժումներից և կիտել եր խոշոր գումարներ (270.000 ռուբլու չափ) իր անդամներից մեծ վճարներ առնելու միջոցով։ Լանկշիրըրի միությունների պարագլուխներ Նյուտոնի և Ալլանի ագիտացիայի շնորհիվ աջողվեց այդ ընկերության շուրջը համախմբել (1851 թ.) յոթը մեքենայագործական միություններ 11 հազար անդամով, վորոնցից յուրաքանչյուրը շաբթական մի-մի շիլլինգ (60 կոպեկ) եր մուծում։

Շուտով նոր միությունը փճակվեց իր ուժերը փորձելու ձեռնարկուների հետ ունեցած պայքարում։ Պայքարն սկսվեց այն հարցից, վոր յերկար ժամանակ վիճաբանության առարկա յեր կազմում աշխատանքի այդ ճյուղի մեջ, այն է—արտաժամյա աշխատանքի և պայմանավարձի (сдельная плата) հարցից։ Բանվորների պահանջներին ձեռնարկուները պատասխանեցին անբարտավան հայտարարությամբ, վոր յեթե վորյեվե գործարանում գործադուլ ծագի, մի շաբթից հետո կարձակվեն ամբողջ գործարաններում մեքենայագործական արտադրության բոլոր բանվորները (локаут)։ Բանվորները միջնորդ դատարան առաջարկեցին, սակայն ձեռնարկուները նրանց մինչև իսկ պատասխանի չարժանացրին։ Բանվորները գործադուլ արին։ Իրանց սպառնալիքը կատարելով ձեռնարկուները 10 օրից հետո փակեցին ամբողջ խոշոր գործարանները Լանկշիրըրում և Լոնդոնում։

Հետագա յեռամյա պայքարը գրավեց հասարակության լայն շրջանների ուշադրությունը. բուրժուական բոլոր թերթերում նկարագրվում եյին գործի մանրամասնությունները, քննադատվում եյին ձեռնարկուների գործողությունները և բանվորների տակտիկան։ Բանվորներն անսպասելիորեն աջակցության գտան ինտելլիգենցիայի մի խմբի կողմից, վոր հայտնի յեր «քրիստոնյա սոցիալիստներ» անունով։ Միության գրամարկղն սկսեցին թափվել նվերներ—համակիր հասարակությունից 40.000 ռուբլի, ուրիշ միություններից 50.000 ռուբլի։ Բայց և այնպես մարտի միջերքում պարզվեց, վոր պայքարը շարունակելու ել ուժ չկա, և բանվորներն ստիպված եյին զիջել ու հրաժարվել իրանց պահանջներից։

Սակայն այդ անաջողությունը չկոտրեց միությանը։ Փառավոր և տոկունությամբ տարված պայքարը նրան հռչակ պարգևեց։ Նրա

անդամների թիվը խոշորացավ, նա նորից ամրապնդվեց. և 1852 թ. մինչև 1889 թ. մեքենայագործների միացյալ ընկերությունն օրինակ ծառայեց բոլոր նոր ծագող ազգային միությունների համար, իսկ հին միությունները հետզհետե յուրացրին նրա կազմակերպության հիմնական գծերը։

Մեքենայագործների միությունը, ինչպես յերևում էր նրա կանոնագրի ներածությունից, իրան նպատակ էր դրել չսովորած բանվորների վոտնձգություններից պաշտպանելու աշակերտության օրինական թվով տարիներ անցկացրած մեքենայագործության մասնագետների շահերը։ Այդ կողմից նա հիշեցնում է 19-րդ դարի սկզբի կիսարհեստային արտադրությունների միությունները և հակապատկեր է կազմում չարտիստական շրջանի «համընդհանուր» միություններին, վորոնք միացնում էյին բոլոր բանվորներին և «արտադրողական դասակարգերի» բոլոր ներկայացուցիչներին անխտիր։ Աշխատանքի «արիստոկրատներին» միացնելու այդ ձգտումը հատուկ է 1852—1889 թվականների շրջանում ծնունդ առած շատ միությունների. դա առանձին կնիք է դրել անգլիական տրեյդ-յունիոնիզմի բնույթի վրա՝ արհեստակցական միություններին հաղորդելով այն «բուրժուական» գծերը, վոր նրանք ցուցադրում են մինչև այժմ էլ։

Միացնելով միայն սովորած բանվորներին՝ միությունն իրան հետևյալ յերկու նպատակն էր դրել. նախ՝ նպաստներ տալ իր անդամներին հիվանդության, դժբախտության, մահվան, աշխատունակությունը կորցնելու և այլ դեպքում, այսինքն ապահովագրելու նպատակներ. յերկրորդ՝ պաշտպանել իր անդամների աշխատանքային շահերը ձեռնարկուների հետ ընդհարումներ ունենալու դեպքում։

Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էյին նշանավոր գումարներ, ուստի և անդամների վրա բավական բարձր վճարներ էյին դրվում։ Այդ մուծումներից կուտակված գումարները հնարավորություն էյին տալիս վոչ միայն վճարելու բոլոր տեսակի նպաստները, այլև ունենալու դեռ բավական նշանավոր մնացորդ կապիտալ այն դեպքի համար, յերբ հարկ լինի գործադուլ հայտարարելու և գործադուլավորներին ու անգործներին աջակցություն ցույց տալու։

Միության կազմակերպությունը հիմնված էր նրա բաժինների ինքնուրույնության (ավտոնոմիայի) վրա, վորոնք ունեյին պար-

տավոր էյին խիստ հաշիվ ներկայացնել կենտրոնական բյուրոյին։ Ուստի նպաստներ տալը կախված էր բաժնի վարչությունից, բայց խիստ ստուգվում էր կենտրոնական բյուրոյի կողմից։ Հենց այդպես էլ կանոնադրում կատարվող փոփոխությունները կարող էյին ընդունվել՝ առաջարկվող փոփոխությունները բաժիններում համապատասխան քննության ենթարկվելուց հետո միայն։ Բայց գործադուլ հայտարարելու հարցի վերաբերմամբ վերջին խոսքը պատկանում էր կենտրոնական բյուրոյին և բաժինները պարտավոր էյին ենթարկվելու նրա վորոշումներին։

Նախընթաց շրջանի վոչ փոքր հակապատկեր էր ներկայացնում հրապարակայնությունը, վոր միություններն աշխատում էյին մտցնել իրանց գործերի մեջ։ Նախորդ շրջանների միություններն իրանց գործողությունները շրջապատում էյին խորհրդավորությամբ, հասարակությունից թագցնում էյին այն ամենն, ինչ վոր կատարվում էր իրանց մոտ, վորով վոչ միայն խրտնեցնում էյին բուրժուազիային, այլև իրանց ընկեր բանվորներին։ Մեքենայագործների միությունն ընդհակառակն ճշտապահությամբ տալիս էր թերթերին ամսական և տարեկան հաշիվներ. Նրա անդամներն ու ղեկավարները զեկուցումների և դասախոսությունների միջոցով աշխատում էյին հասարակությանը ծանոթացնել իրանց միության բնույթին ու նպատակներին։

Կազմակերպության այդ նոր տիպը («նոր մոդելը» —new model) մեծ ազդեցություն արավ բոլոր մյուս միությունների վրա, վորոնցից շատերը մոտիկ տասը տարվա ընթացքում աշխատում էյին վերափոխել իրանց կազմակերպությունները «մեքենայագործների միացյալ ընկերության» ձևով։ Մեքենայագործների հետևից ծագած խոշոր ընկերություններից աչքի ընկնող է «ատաղձագործների միացյալ ընկերությունը» (1860 թ.)։

Նրա ծագման դրդապատճառն էր կազմում նույնպես ձեռնարկուների հետ ունեցած ընդհարումը, ներկայ դեպքում բանվորական օրվա երկարության համար։ Այդ առիթով ծագած գործադուլը, վորի հետևանքը յեղավ 24 հազար շինարար բանվորների լոկաուտը, ինչպես և մեքենայագործների գործադուլի դեպքում, իր վրա հրավիրեց հասարակության ուշադրությունը և բազմաթիվ նվերներ (230.000 ռուբլու չափ) ստացավ թե մասնավոր անձերից, թե բանվորական միություններից։ Գործադուլն այս անգամ էլ վերջա-

ցավ անաջողությամբ, բայց համառ և արի պայքարի հետևանքը յեղավ շինարարների ավելի սերտ միացումը և «տաղձագործների միացյալ ընկերության» նոր ձևով կազմակերպվելը։ Այդ գործադուլի անուղղակի հետևանքն էր **Տրեյդ-յունիոնների Լոնդոնյան Խորհրդի** կազմվելը (1861 թ.), որ ծագում առավ գործադուլը ղեկավարելու համար կազմակերպված ժամանակավոր կոմիտեյից։ Խորհուրդն իրան նպատակ դրավ միացնելու և համաձայնեցնելու բոլոր միությունների գործողությունները և դրանց ուղղելու ամբողջ բանվոր դասակարգի օգտին։

ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ (ՋԸ՛ՆՏԱ ԿԱՄ ՋԸ՛ՆՏՈ)։

Մեր նկարագրած ժամանակ տրեյդ-յունիոնական շարժման գլուխ եյին կանգնած մարդիկ, վորոնք շատ բան եյին արել, վորպեսզի ի մի կազմակերպեն այդ շարժումը և պահպանեն նրան տիրող դասակարգերի հարձակումից։ Ուստի անհրաժեշտ է միքանի խոսք ասել այդ մարդկանց մասին, նրանց գործունեյության ու հայացքների մասին։

Նրանց մեջ առաջին տեղը պատկանում է Ուիլյամ Ալլենին և Ռոբերտ Էպլգարթին։

Ուիլյամ Ալլենը «մեքենայագործների միացյալ միության» հիմնադիրներից մեկն էր և նրա գլխավոր գործիչը. ընտրվելով ընդհանուր քարտուղարի պաշտոնում՝ նա այդ պաշտոնում մնում էր անփոփոխ 20 տարվա ընթացքում, մինչեվ իր մահը։ Նրա անխոնջ գործունեյությանն է պարտական միությունն իր գարմանալի կազմակերպության, ֆինանսական կոնտրոլի և հաշվետվության հիմնավոր սիստեմի համար։

Ռոբերտ Էպլգարթը, «տաղձագործների միացյալ միության» քարտուղարը, ավելի լայն հայացքների տեր մարդ էր. նա այն կարծիքն ուներ, որ բացի արհեստակցական պայքարից բանվոր դասակարգը պետք է պայքար մղի քաղաքական և սոցիալական բարենորոգումների համար։ Նա ականավոր գործիչներից մեկն էր «Բանվորների միջազգային ընկերության (Ինտերնացիոնալի)», վորն իրան նպատակ էր դրել սոցիալիզմի տիրապետությունը բոլոր յերկրների բանվորների փոխադարձ աջակցությամբ։

Ջորջ Օջերը կոշկակարների փոքրիկ միության քարտուղարն էր և նույնպես Ինտերնացիոնալի յերեվելի գործիչ, **Դանիել Հայլը** յերկաթաձուլիչների ազգային միության ընդհանուր քարտուղարն

էր, Էդուին Կոուլսոնը աղյուսագործների լոնդոնյան միության ընդհանուր քարտուղարը։ Այդ հինգը միասին կազմում էին այսպես կոչված «Ջընտան» (կամ «Ջընտո»—բառացի՝ «շայկա» կամ դավադրություն, գաղտնի համախմբում), որ «Տրեդ-յունիոնների Լոնդոնյան Խորհրդի» գլուխ էր կանգնած։

Այդ գործիչները նշանավոր են նրանով, որ նրանք ամենքն էլ բանվոր դասակարգից են դուրս եկել և իրանք սկզբում հասարակ բանվորներ են եղել, իսկ Օջըրը մինչև կյանքի վերջը չթողեց կոշկակարի արհեստը։ Մինչ բանվորական շարժման առաջին շրջանում բանվորների պարագլուխներ էին բուրժուական շրջանի մարդիկ, ինչպես Ռ. Օուըն, Պլեյս, Օ՛կոննոր, Օ՛բրիյեն և ուրիշները, մեր նկարագրած շրջանում պրոլետարիատի պարագլուխներ էին հենց իրանից դուրս եկած մարդիկ։

Սակայն լինելով դուրս եկած բանվոր դասակարգից, բանվորների առաջորդներ և նույնիսկ Ինտերնացիոնալի ականավոր գործիչներ, այդ մարդիկ անընդունակ էին կանգնելու պրոլետարական ամուր և ուղիղ տեսակետի վրա անգլիական բանվորական շարժման հիմունքի և նպատակների հարցում։

Նրանք հարում էին Ինտերնացիոնալին, բայց միևնույն ժամանակ անգլիական բանվորական շարժման ասպարեզում ունեցած իրանց գործունեության մեջ նրանք ելնում էին ոչ թե տիրող հասարակակարգի դեմ պայքարելու և նրա տեղ սոցիալիստական հասարակակարգ հաստատելու անհրաժեշտությունից, այլ այն տեսակետից, որ բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում կարելի է բարվոքել տիրող հասարակակարգի սահմաններում։ Ուստի պրոլետարիատի համար նրանք պահանջում էին այն, ինչ որ արդեն ուներ բուրժուազիան (այսինքն պալատի համար պատգամավոր ընտրելու իրավունք, միությունների կատարյալ ազատություն և այլն), և տնտեսական զարգացումի էության վրա նույն հայացքն ունեին, ինչ որ բուրժուազիան։

Հայտնի է, որ անգլիական բուրժուազիան կանգնած էր այն ժամանակ (հենց հիմա էլ շարունակում է կանգնել) բանվորի և ձեռնարկվի պայմանավորվելու «ազատության» և աշխատանքի ու կապիտալի հարաբերություններում պետության «չխառնվելու» (մանչեստըրության) տեսակետի վրա։ Բանվորների դասակարգի հիշյալ պարագլուխները կապիտալիստների հետ միասին կրկնում էին,

վոր իրանք էլ են կանգնած «ազատության» և «չմիջամտության» տեսակետի վրա, ուստի նրանք պահանջում եյին, վոր բանվորներին թույլատրվի պայմանավորվել ձեռնարկուների հետ՝ ինչպես վոր կուզեն, մեկ-մեկ կամ խմբովին—միություններով, վորպեսզի նրանց թույլատրվի գործը թողնել առանձին-առանձին և միասին գործադուլի ձևով, և հայտարարում եյին, թե պետությունը չպետք է խառնվի դրա մեջ։ Յեթե ձեռնարկուներն իրավունք ունեն միություններ կազմելու և լոկաուտներ սարքելու, ապա թող բանվորներին էլ թույլատրվի կազմել տրեյդ-յունիոններ և սարքել գործադուլներ։

Այս տեսակետն արմատականորեն սխալ է։ Բանվոր դասակարգի աջողակ պայքարը հնարավոր է վոչ թե պայմանավորվելու «ազատության» և պետության «չմիջամտության» դեպքում, այլ ընդհակառակն՝ սահմանափակելով կապիտալիստների «ազատությունը» բանվորներին շահագործելու և կառավարության խառնվելով՝ շահագործումի ազատությունը սահմանափակող որենքներ հրատարակելով։ Այդպիսի հանգամանքներում է միայն հնարավոր ֆաբրիկային հաստատուն որենսդրությունը, այնպես վոր ձեռնարկուները պատասխանատու լինեն դժբախտ դեպքերի համար, բանվորներին ապահովագրեն յեվայլն։ Հակառակ դեպքում տնտեսական վերելքի ժամանակ արհեստակցական միությունների ձեռք բերած նվաճումները ձեռքից կգնան արդյունաբերական կանգառումի ժամանակ, յերբ հոգեմաշ անգործությունն ու քաղցածությունը բանվորներին ստիպում են համաձայնել ձեռնարկուների բոլոր պայմաններին։

Բայց մեր նկարագրած ժամանակ բանվորները միությունների ու գործադուլների ազատություն եյին ձեռք բերում և բանվորների պարագլուխները ձգտում եյին իրանց կողմը թեքել հասարակական կարծիքն ու պարլամենտը՝ բուրժուազիայի դեմ ուղղելով նրա սեփական գործիքը, այսինքն պայմանավորվելու «ազատություն» և պետության «չմիջամտություն» պահանջելը։

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐ

Վերը հիշեցինք բանվորական շարժման մեջ բուրժուական դասակարգերի ներկայացուցիչների միջամտելու մասին։

Այդպիսիների թվին են պատկանում այսպես կոչված քրիստոնեյա (քրիստոնեյական) սոցիալիստները։ Դա ֆիլանտրոպների (բա-

ռացի՝ «մարդասերների») և գիտնականների մի խմբակ էր, վոր ձգտում էր բանվորներին կասեցնել հեղափոխական ուղուց՝ խլելով տիրող բուրժուազիայից մի քանի զիջումներ բանվորների ոգտին, բանվորական շարժումն ուղղելով խաղաղ միջոցներով պայքարելու կողմը։

Դրանց մեջ ամենից աչքի ընկնողներն էին պաստոր Մորիսը, պարլամենտի անդամ Ցուզը, փաստաբաններ Հյուզը և Ուենսիտտարտ Հիլը, հասարակական գործիչ Լեդլոուն։ Նրանք իրանց սոցիալիստ էին անվանում այն պատճառով, վոր բուրժուազիայի վրա էին հարձակվում կապիտալիստական սեփականության ու պայմանավորվելու ազատության սկզբունքներն ի չարը գործադրելու և կառավարության չմիջամտելու համար, նրանք կողմնակիցներ էին ֆաբրիկային որենսդրության ընդարձակման, հաշտեցուցիչ պաշտոնատներ հիմնելու, միջնորդ դատարանների. քրիստոնյա էին անվանում իրանց այն պատճառով, վոր աշխատում էին անգլիական շահագործողների քար սրտերը փափկացնել քրիստոնեյական սիրո քարոզով։ Բայց այդ ուղղությամբ նրանց աջողությունները չնչին էին։

Ավելի կարեվոր է նրանց գործունեյությունն արտադրողական ընկերություններ*) կազմակերպելու ասպարեզում, վորոնց հետ Լեդլոուն ծանոթացել էր 1848 թվին Պարիզում յեղած ժամանակ։ Քրիստոնյա սոցիալիստներն այդ ընկերությունների գլուխ գալուն աջակցում էին՝ արհեստավորներին ու բանվորներին դրամ տալով։ Այդպիսով արտադրողական ընկերություններն իրանց գոյությունը նշանավոր չափով պարտական են քրիստոնյա սոցիալիստներին։ Հենց այդպես էլ մասամբ նրանց ագիտացիայի շնորհիվ հրատարակվեցին (1852 և 1862 թվականներին) սպառողական և արտադրողական ընկերությունների կանոնադրությունների ու սեփականությունը պաշտպանող որենքները, վոր բավական նպաստեցին կոոպերատիվ շարժման ամրապնդվելուն։ Այդ ձևով քրիստոնյա սոցիալիստները հանդիսանում էին Ռ. Ոուենի հետևողների գործի շարունակողներ։ Հենց այդ-

*) Աշխատավորների միացում ինքնուրույնաբար (առանց գործատիրոջ) միատեղ վորյեվե ապրանքներ ընդհանուր հաշվի արտադրելու համար և ձեռնարկության ռիսկն ու ոգուտը մասնակիցների մեջ բաժանելով։

պես էլ քրիստոնյա սոցիալիստներն ուշադրություն էյին դարձնում բանվորական զանգվածների լուսավորության վրա իրանց ցանկացած վոգով։ Այս նպատակով նրանք ի միջի այլոց հիմնեցին ժողովրդական համալսարան (1854 թ.)։ Նրանք շատ նմանողներ ունեցան, վորոնք 70-ական և 80-ական թվականներին զբաղվում էյին ժողովրդական համալսարաններ հիմնելով։

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյա սոցիալիստները միջամտում էյին խոշոր գործադուլներին՝ աշխատելով ֆաբրիկանտներին ու բանվորներին փոխադարձ զիջումներ անել տալ։

Չնայած այն բանին, վոր 1825 թվականի որենքը ձեվականապես ընդունում էր բանվորների՝ միություններ կազմելու իրավունքը, ձեռնարկուները չէյին ուզում հաշտվել միությունների գոյության իրողության հետ, վորոնք խանգարում էյին նրանց շահագործել բանվորներին ըստ իրանց հայեցողության, իսկ կառավարությունը մշտապես օգնության էր գալիս կապիտալիստներին՝ բանվորներին պատասխանատվության յենթարկելով հնացած որենքների հիման վրա։

Ձեռնարկուներին մանավանդ դուր չէյին գալիս նոր տիպի միությունները հարուստ գանձարկղներով, վորոնք պայքարը մղում էյին մտածված ու զգույշ։ Ձեռնարկուներն այդ միությունների դեմ լոկաուտ էյին սարքում։ Մանավանդ վայրագություններ արին 1866 թ. ածխահանքերի, յերկաթագործական և նավագործական գործարանների տերերը։ Հուսահատված և սովահար մասսաները դրան պատասխանեցին ֆաբրիկաները հրդեհելով, մեքենաները խորտակելով։ Ֆաբրիկանտները վայնասուն բարձրացրին «դավադիրների և հասարակության թշնամիների» դեմ։ Վախկոտ բնակիչները պարլամենտի օգնությունը հայցեցին։ Թերթերն ուռցնում էյին վտանգը։ Ի պատասխան դրան կառավարությունը նշանակեց մի քննիչ հանձնաժողով հետազոտելու բանվորական միությունների վերջին տասը տարում կատարած բռնի գործողությունները։

Բանվորական միությունների առաջնորդները վճռեցին պատշաճորեն դիմավորել իրանց մշտնջենական թշնամիների հարձակումը։ Անմիջապես հրավիրվեց ամալգամացած միությունների կոնֆերենցիա, վոր աշխատեց 1867 թվականից մինչև 1871-ը։ Գոր-

ծի հրավիրվեցին բանվորների բարեկամները բուրժուական բանակից. ինչպես և 1852 թվականին, դրանք նախ և առաջ «քրիստոնյա սոցիալիստներն» էին, ապա բանվորական գործի փորձված պաշտպան պրոֆեսորներ Բիզլին և Ֆրեդըրիկ Հա՛րիսընը, պատգամավորներ Յուզը և Մունդելլան։

Տքնաջան և հմուտ պաշտպանության շնորհիվ նրանց աջողվեց հանձնաժողովի առաջ պարզել մեղադրանքների ամբողջ անհեթեթությունը։ Դրանից հետո Հա՛րիսընը կազմեց միությունների և գործադուլների մասին մի օրենսգիծ, իսկ Յուզն ու Մունդելլան մտցրին այն պարլամենտը։ Բայց իշխանության գլուխ լիբերալ (ազատամիտ) մինիստրությունը ծալեց գորգի տակ դրավ այդ օրենսգիծը։ Բանվորական աշխարհում հուզմունք բարձրացավ։ Երկրի բոլոր մասերում միտինգներ էին կազմակերպվում, սպառնալիքներ էին հընչվում լիբերալների հասցեյին։ Այն ժամանակ լիբերալ մինիստրությունը հետեվյալ հնարքին դիմեց. նա ընդունեց միությունների և գործադուլների ազատության օրենքն այն ձևով, ինչպես պահանջում էին բանվորները (1871 թ.), բայց նրան ավելացրեց մի հոդված, որ նախատեսնում էր խիստ պատիժ ամեն մի բռնության կամ սպառնալիքի համար, «որի նպատակը կլինի ճնշում գործ դնել ձեռնարկվի կամ նրա մոտ պաշտոնավարող անձերի վրա»։ Այդ հոդվածն այդպիսով օրինականացնում էր այն ապօրինությունը, որ գործադրվում էր գործադուլավորների վերաբերմամբ համարյա թե 3/4 դարի ընթացքում։ Թե որքան խստությամբ էր գործադրվում այդ հոդվածը, կարելի յե դատել այն փաստի հիման վրա, որ Ուելզում յոթը կին բանտ նստեցրին նրա համար, որ մի շտրեյկբրեխերի (գործադուլը խանգարողի) պատահած ժամանակ ասել էին «բա՜»։

Զայրույթի փոթորիկ անցավ ամբողջ բանվորական աշխարհով։ Ագիտացիա սկսվեց «տաժանակրային» օրենքի դեմ։ Բանվորների ներկայացուցիչները զուր էին մաշում մինիստրական շեմքերը։ Լիբերալների հռչակավոր առաջնորդ Գլա՛դստոնը պատասխանեց, թե քանի որ ինքն իշխանության գլխին է, զուր կլինի մտքով անցկացնել օրենքի քննությունը։

Մինչ այդ՝ վրա հասան պարլամենտական նոր ընտրությունները, և բանվոր դասակարգի պարագլուխներն սկսեցին կոչ անել բանվորներին մասնակցելու ընտրություններին։ Ճիշտ է, բանվորների շրջանից ընտրողական իրավունքով քչերն էին օգտվում, սա-

կայի և այնպես բանվորների գործոն մասնակցությունն այն հետևանքն ունեցավ, վոր շատ ընտրական շրջաններում լիբերալները պարտվեցին։ Բանվորները գերադասեցին «վախեցնելու» մասին յեղած որենքը վերացնել խոստացող պահպանողականներին լիբերալներից, վորոնք պարծենում եյին ազատության և մարդկային իրավունքների մասին բարձրաձայն ֆրազներով, բայց երբ բանվորներին հարստահարում եյին իրանց «տաժանակրային» որենքներով։ Վերջապես այդ ընտրություններին առաջին անգամ համայնքների պալատ ընկան բանվորների իսկական ներկայացուցիչներ, հանքագործների ազգային միության յերկու ղեկավարներ Ալեքսանդր Մա՛կդոնալդը և Թոմաս Բըրթը։

Նոր պահպանողական մինիստրությունն իր խոստումը կատարելուց խուսափելու մտադրություն եր ուզում յերևան հանել, սակայն բանվորական պատգամավորների ստիպումով այդ մինիստրությունն շտապ կարգով վերացրեց «վախեցնելու» մասին որենքը (1875 թ.)։

Դրա հետ միասին վերացվեցին «տերերի և ծառաների» մասին որենքի մնացորդները։ Այդ որենքը շատ բնորոշ ե այն յերկրի համար, վորն ինչ-վոր թյուրիմացությամբ յերկար ժամանակ Յեվրոպայում համարվում եր մի յերկիր, ուր սրբությամբ հարգվում են մարդկային իրավունքները։ Այդ որենքի համաձայն, յեթե ձեռնարկուն խախտում եր բանվորի հետ կապած պայմանը, թեկուզ հենց առանց վորևե հիմքի, նա դատապարտվում եր միայն վճարելու հասանելիք դրամը, իսկ յեթե բանվորն եր խախտում պայմանը՝ որինակ՝ բանի չգալով կամ գործը թողնելով, նա յենթարկվում եր քրեյական դատի և յեռամսյա բանտարկության։ Ընդ սմին, վոր ավելի ուշագրավ ե, տիրոջ ցուցումները բանվորի դեմ համարվում եյին արժանահավատ, իսկ բանվորի ցուցումները տիրոջ դեմ արժանահավատ չեյին համարվում։ Այնպես վոր բանվորին հաճախ պատժի եյին յենթարկում տիրոջ ցուցումների վրա հիմնվելով։ Այդ որենքը լայն չափերով կիրառվում եր Անգլիայում մինչև 1867 թ., յերբ վերացվեցին նրա այն անարդարությունները, վորոնք ավելի կոպիտ եյին, իսկ 1875 թ. դա «վախեցնելու» մասին որենքի հետ միասին վերջնականապես վերացվեց և նրան փոխարինեց «ձեռնարկուների և բանվորների» մասին որենքը։ Այդ ժամանակվանից վարձողն ու վարձվողը բանվորական պայմանագրի իրավահավասար կողմեր դարձան։

Այսպես վաթսունամյա համառ պայքարից հետո անգլիացի բանվորները վերջապես հասան միությունների և գործադուլների ազատության։ Սակայն, ինչպես կտեսնենք առաջիկայում, ձեռնարկուները դեռ շատ փորձեր արին—և վոչ անաջող—կորզելու տրեյդ-յունիոններից նրանց հաղթության պտուղը։

ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։

Այժմ, յերբ մենք պարզաբանել ենք զուտ տրեյդ-յունիոնիզմի շրջանի հիմնական գծերը, մնում է մի քանի խոսք էլ ասել նրա հետագա զարգացման և նվաճումների մասին։

Վաթսունական թվականներին կազմվում են ելի յերկու հզոր նոր տիպի կազմակերպություններ—**հանքափորների դաշնակցություն** յեվ **բամբակագործ բանվորների դաշնակցություն**։ Այդ յերկու կազմակերպությունները կազմվելուց տրեյդ-յունիոնիզմի ծանրության կենտրոնը Լոնդոնից փոխադրվում է գավառ։

Հանքափորների կազմակերպիչն եր Ալեքսանդր Մակդոնալդը, մի հանքափորի վորդի, վոր ինքն էլ ութ տարեկան հասակից աշխատում եր հանքերում. հետագայում նա ինքնակրթությամբ պատրաստվեց մտավ համալսարան, վորը վերջացնելուց ուսուցիչ դարձավ հանքափորային շրջանում և հանքափորների մեջ ագիտացիայով զբաղվեց։ Նա հանքափորներին միակամեց յերկու պահանջի շուրջ—8-ժամյա բանվորական որ և մանկական աշխատանքի սահմանափակում։ Բայց հանքափորների կազմակերպման գործում ավելի գործնական նշանակություն ունեցավ **ուղիղ կշռելու** պահանջը։ Բանը նրանում է, վոր հանքափորների աշխատավարձը վորոշվում եր նրա հանած հանքի քաշի հիման վրա։ Ձեռնարկուներն իրանց բանվորներին սովորաբար խաբում եյին քաշի մեջ։ Պահանջ դրվեց, վոր բանվորների ներկայացուցչին թողնեն կշռելիս ներկա լինել։ Յերկար պայքարից հետո այդ պահանջը բավարարվեց։ Ամեն մի հանք պետք է կշեռքի մոտ իր ներկայացուցիչն ունենար, վորին վարձատրում եյին բոլոր բանվորներից ստացած հարկով։ Այդ տուրքերի անհրաժեշտությունն ուժեղ խթան դարձավ հանքափորների կազմակերպվելուն, վորոնք 1870 թ. արդեն 20.000 կազմակերպված բանվոր ունեյին։

Յեթե հանքափորների աշխատավարձը կախված եր ուղիղ կշռելուց, բամբակագործների, վորոնք պայմանավարձով եյին աշխատում,

վաստակն էլ կախված էր գնահատական ադյուստակը հաշվելու ճշտությունից, և ընդհանուրի հաշվին պահվող հմուտ գնահատու (оценщик) ունենալու անհրաժեշտությունը նրանց ստիպում է ամենուրեք կազմակերպվել։ Կազմակերպվելուն սույս խթան ծառայեց «ավելի կարճ բանվորական օրվա» համար պայքարը։ Բամբակագործներն ինննժամյա բանվորական օրվա պահանջ դրին, և 1875 թ. նրանց աջողվեց հասնել յեթե վոչ իրանց պահանջի բավարարմանը, գոնե բանվորական շաբաթը $56^{1}/_{2}$ ժամի հասցնելուն։

Ընդհանրապես 70-ական թվականների սկիզբը նշանավոր էր բանվորական օրը կարճելու պայքարով. դրա համար կազմակերպվել էր ինննժամյա բանվորական օրվա լիգա (դաշնակցություն)։ Ամենից առաջ իրանց նպատակին հասան մեքենայագործները 1871 թ., նրանցից հետո նավագործ բանվորների մի մասը ձեռնարկուներից բանվորական օրվա էլ ավելի մեծ կրճատում ձեռք բերավ—շաբաթը մինչեվ 51 ժամ։ Բայց շինարար բանվորները, չնայած համառ գործադուլին և նրանց զրկանքներին, վոչինչ ձեռք չբերին։ «Ավելի կարճ բանվորական օրվա» համար մղվող այդ յերկարատեվ ու ծանր պայքարը, վոր համեմատաբար խղճուկ ու անկայուն հետեվանքներ տվավ, մի անգամ յեվս բանվորներին համոզեց, վոր անհրաժեշտ է ինքնուրույն քաղաքական պայքար մղել օրենսդրական ճանապարհով ութժամյա բանվորական օր ձեռք բերելու համար։

Այդ ժամանակաշրջանում տրեյդ-յունիոնիստների պարագլուխներն աշխատավարձի բարձրությունը վորոշելու նոր սկզբունք են առաջարկում—այսպես կոչված շարժական ֆոնդի (կամ ադյուստակի) վրա հիմնված։ Այդ սկզբունքը հիմնված է այն կանոնի վրա, վորի համաձայն շուկայում գործերը լավանալուց և հետեվապես կապիտալիստի վաստակը մեծանալուց պետք է բարձրանա նայեվ բանվորների աշխատավարձը, և ընդհակառակն, կապիտալիստի վաստակն իջնելուց պետք է իջնի նայեվ բանվորների վարձը։ Բանվորների ներկայացուցիչները հետեվում են գների շարժմանը շուկայում, դրա հիման վրա էլ կազմում են գնահատումների «շարժական» ադյուստակ։

Այդ հայեցակետը կատարելապես համաձայն է այժման շրջանի բանվորական դասակարգի առաջնորդների հայեցակետին։ Ինչպես վերը նշեցինք, այն դարաշրջանի բանվոր դասակարգի պարագլուխների անտեսական հայացքները զուգադիպվում էին բուրժու-

ավիայի հայացքների հետ։ Այդ հայացքների համաձայն՝ կապիտալիստների և բանվորների շահերի միջև գոյություն ունի փոխադարձ համաձայնեցում (կամ ինչպես ուրիշ կերպ ասում են՝ «շահերի ներդաշնակություն»), և կապիտալիստների գործերը լավանալուց բանվորների գործերն էլ էին լավանում։ Այդ տեսակետը, որ իր հիմքում սխալ է, ներկա դեպքում խիստ վնասակար հետևանքների հասցրեց։ Բանվորները հրաժարվեցին նվազագույն աշխատավարձի պահանջից, որը չի կարելի իջեցնել՝ չնայած կապիտալիստների գործերի՝ ինչպես էլ որ լիներ՝ վատանալուն, և 70-ական թվականների վերջին շարժական աղյուսակը մտցվեց արտադրությունների մեծամասնության մեջ։

Միությունների մասին 1871 թվի օրենքը հրատարակելուց հետո տրեյդ-յունիոններին աջողվում է ձեռնարկուներից իրավունք ձեռք բերել, որ նրանց բոլոր վիճելի գործերը հանձնվեն հաշտեցուցիչ խառն խորհուրդների (այլապես՝ հաշտեցուցիչ պալատների) և միջնորդ դատարանների քննությանը, որոնց մեջ բանվորական միությունների ներկայացուցիչները մասնակցում են տերերի ներկայացուցիչների հետ հավասար իրավունքներով։ Դա խոշոր հաղթություն էր, յեթե հիշենք, թե ինչ համառությամբ էին պաշտպանում տերերը բանվորների հետ ծագող բոլոր վեճերը լուծելու իրանց իրավունքն՝ իրանց միակողմանի բարեհայեցողության վրա հիմնված։

ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍՍՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

1868 թվականից զանազան տրեյդ-յունիոնների ներկայացուցիչներ սկսում են հավաքվել ամենամյա կոնգրեսների (համաժողով)։ Այդ կոնգրեսներում վեճերից ու հերձվածներից խուսափելու համար յերկար ժամանակ այնպիսի հարցեր են քննվում, որոնց մասին կոնգրեսի անդամների մեջ գոյություն ունի միաբան կարծիք։ Ահա թե ինչու այդ կոնգրեսները մինչև 80-ական թվականների վերջը շատ քիչ են ազդում բանվորական շարժման ընթացքի վրա։

Կոնգրեսները 1871 թվականից ամեն տարի ընտրում էին 10 հոգուց բաղկացած պարլամենտական կոմիտե և քարտուղար։ Սովորաբար ընտրվում էին խոշորագույն միությունների ներկայացուցիչները և տարեցտարի հենց նույն անձերը (գործնական

Բրոդհըրստը, Բըրնետը, Գրայըրը, Շիպտընը)։ Պարլամենտական կոմիտեյի նպատակն էր լինում ճնշում գործ դնել համայնքների պալատի և կառավարության վրա բանվորների համար շահավետ օրենքներ հորինելու համար։ Տակտիկան նույնն էր լինում, ինչ որ «Ջունտայի» տակտիկան, այն է՝ ստորացուցիչ մուրացկանություն համայնքների պալատի միջանցքներում և մինիստրական նախասենյակների շեմքերը մաշելը։ Պարլամենտական կոմիտեյի ծրագիրը նույնպես առանձին ընդարձակությամբ աչքի չէր ընկնում․ նա, ինչպես Գրայըրն է ասում, հիմնվում էր այն բանի վրա, որ «պետք է վերացվեն այն բոլոր հատուկ օրենքները, որոնք ուղղված են բանվորների դեմ, և որ նրանց էլ պետք է տրվեն կետ-առ-կետ նույն իրավունքները, ինչպես մյուս բոլոր հասարակական դասակարգերին»։ Այսպես էր մաքսիմում-ծրագիրը․ բայց գործնականում պարլամենտական կոմիտեն պատրաստ էր շնորհակալություն անել ամեն մի մանր զիջումի համար։

III

ՆՈՐ ՏՐԵՅԴ-ՅՈՒ՛ՆԻՈ՛ՆԻԶՄԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԳՏՈՒՄ՛ՆԵՐԻ ՇՐՋԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ ՅԵՎ ՉՍՈՎՈՐԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Անցյալ դարի 80-ական թվականներից սկսվում է անգլիական բանվորական շարժման պատմության մեջ նոր շրջան, վորի սկիզբը բնորոշվում է սոցիալիստական պրոպագանդայի զարգացմամբ և տրեյդ-յունիոնների ծագումով «չսովորած» (հասարակ) բանվորների շրջանում։ Ս. Վեբբի ասելով՝ 80-ական թվականների սկզբում աշխատավոր դասակարգերի մեջ սոցիալիստական հայացքներ տարածելու վրա մեծ ազդեցություն է ունեցել մասնավոր հողային սեփականությունը վոչնչացնել քարոզող Հենրի Ջորջի «Առաջադիմություն և աղքատություն» գիրքը։ Մանր հողատիրոջ, կապալառուի և գյուղական բանվորի շահագործումը վերացնելու համար Հենրի Ջորջը *խորհուրդ էր տալիս հողը պետական սեփականություն դարձնել* (հողի ազգայնացում). *դրա համար նա առաջարկում էր հողի վրա այնպիսի տուրք (այսպես կոչված «միասնական տուրք») դնել, վորը նրա ամբողջ հասույթը կլանի, վոր հողի տիրոջը զրկի տալ նրան պետությանն ի սեփականություն, իսկ պետությունն էլ բաժան-բաժան անի աշխատավորների մեջ։ Հենրի Ջորջի հետեվողները հիմնեցին մի ընկերություն* «Հողի վրա իրավունքները վերականգնելու լիգա» *անունով։*

Բանվորական շարժման հետագա զարգացման վրա շատ ավելի մեծ ազդեցություն ունեցավ Մարքսի վարդապետությանը հետեվող Հա՛յնդմա՛նի, Բը՛րոզի, Չեմպյընի, Տ. Մենի, Ուիլյամսի և ուրիշների սոցիալիստական պրոպագանդան, վորոնք իրանց հետեվողների հետ միասին կազմել էին «սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիա» *(1883 թ.)։*

Մի ամբողջ շարք դասախոսությունների ու բրոշյուրների մեջ,

փողոցային միտինգներում և ժողովներում սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի առաջնորդներն անգլիացի բանվորներին պարզաբանում էին արտադրության կապիտալիստական պրոցեսի (գործընթացքի) էությունը, որը նրանց համար մութն էր, չնայած որ նա այնպիսի սուր և աչքառու կերպով էր ընթանում նրանց աչքի առաջ։ Նրանք պարզում էին բանվորներին, թե ինչու ժամանակի հասարակակարգը տանում է դեպի խոշոր արդյունաբերության աճումը և հարստությունները միքանի ձեռքում կենտրոնանալը (կոնցենտրացիա) և դրա հետ միասին դեպի մանր ձեռնարկությունների անկումն ու չքացումը, որից արդյունաբերական կենդանության շրջաններից հետո վրա յեն հասնում կանգառումները և ճգնաժամերը, և ինչպես է լինում, որ ապրանքների ու մթերքների առատությունը դրանց արտադրող աշխատավոր դասակարգերի աղքատության պատճառ է դառնում։ Բանվորներին նրանք բացատրում էին մարդկության ամբողջ պատմության միջով անցնող դասակարգային պայքարի էությունը և նրանց կոչ էին անում պայքարելու ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հողի վրա՝ իշխանությունը տիրապետելու և սոցիալիստական իրավակարգ հաստատելու համար, ուր չի լինիլ արտադրության գործիքների ու հողի մասնավոր սեփականություն և ուր չի լինիլ մարդը մարդուն շահագործելը։

80-ական թվականների միջերքից սկսած արդյունաբերական ճգնաժամերն ու կանգառումները հաստատում էին սոցիալիստների բոլոր ասածները և նպաստում նրանց պրոպագանդային՝ քաղցած ու հուսահատված մասսայի ռազմական տրամադրությունը պահպանելով։ Շոգեկաթսա շինողների 1886 թվականի տարեկան հաշվետվության մեջ ասվում է. «Նավաշինարարական բոլոր նավահանգիստներում պարապմունք չունեցող հազարավոր մարդիկ դուր են ադնիվ աշխատանք որոնում։ Զարհուրելի յե նայել այն գրկանքներին, որ կրում են նրանց կանայք ու մանուկները։ Հիվանդությունները հասել են սոսկալի չափերի, իսկ հարյուրավոր մաշված, քաղցած մարդիկ այնպիսի տառապանքների ու գրկանքների մասին են պատմում, որ նրանց պաճուճել ու թաքցնել չի կարող ոչ մի ոպտիմիզմ... Բայց կույր չէ բանվորը... Նա նման չէ այն բարեպաշտ հովվին, որը գոհանում է նախախնամությանը, որ նա չի զրկել նրան իր գետնախնձորը համեմելու աղից։ Նա

տեսնում է հարստությունների այն դեղխ վատնումը, վորոնցից բաժին ունենալուց զուրկ է նա։ Նա տեսնում է ժառանգած հարստության մեջ լվվող մարդկանց բազմաթիվ, ավելի ու ավելի աճող դասակարգը... Նա չի կարող չզգալ այն յեզրակացության, վոր այդ հասարակակարգում մի ինչ-վոր տգեղ բան կա, մի հասարակակարգ, վոր հասցնում է նրա աշխատանքով ստեղծված հարստությունների այնքան անհամաչափ բաշխվելուն։

Սոցիալիստներին առանձին հափշտակությամբ եյին լսում գործադուլները, վորոնք Հայդ-Պարկում և Լոնդոնի Տրաֆալգար-սքուայրում (սկվեր) կազմակերպում եյին անգործների հսկայական միտինգներ, վորոնք սարսափ եյին տարածում բուրժուազիայի մեջ։ Վոստիկանությունն արգելեց բացօթյա միտինգները, մանավանդ կենտրոնական հրապարակներում։ Այն ժամանակ սկսվեցին անգործների հսկայական ցույցեր խոսքի և ժողովների ազատությունը խախտելու փորձի դեմ, վորի հետեվանքով ընդհարում առաջացավ զորքերի ու վոստիկանության հետ, և սոցիալիստների պարագլուխները բանտարկվեցին։ Բայց այդ մեծացրեց միայն սոցիալիզմի կողմնակիցների թիվը բանվորների մեջ։

Սոցիալիստներն իրանց քննադատությունն ու հարձակումները տրեյդ-յունիոնների դեմ յեվս ուղղեցին։ Մեքենայագործների ամալ՛գամված (միաձուլված) ընկերության անդամ Ջոն-Բըրնզը տրեյդ-յունիոններին պախարակում եր նրա համար, վոր նրանք իրանց վրա յեն առել այնպիսի պարտականություններ, վորոնք պետության գործն են (ինչպես օրինակ՝ ապահովագրության բոլոր տեսակները), և չեն ուզում անել այն, ինչ վոր պետք է անեն բանվոր դասակարգի կազմակերպությունները, այն է՝ պայքարել կապիտալիստական հասարակակարգի դեմ. Նա հանդիմանում եր նրանց «արիստոկրատիզմի» համար, դեպի վոչ-վարպետ բանվորներն ունեցած անտարբեր և նույնիսկ թշնամական վերաբերմունքի համար։

Բըրնզի ընկեր Թ. Մենը տրեյդ-յունիոնների քաղաքականությունն անվանում եր փոքրոգի, քարացած, վորովհետև նրանում չկար կյանք, տիրող կարգերի դեմ հարձակողական շարժում։

Այսպես 80-ական թվականների վերջին սկիզբ է առնում «նոր-յունիոնական» կուսակցությունը, վոր իր կողմն է գրավում վոչ միայն չաշակերտած բանվորներին Լոնդոնում և մեծ քաղաքներում,

ալով հին տրեյդ-յունիոններից բազմաթիվ յերիտասարդ ու յե-ռանդուն բանվորների։

Այդ շրջանի սոցիալիզմի տարածման մասին խոսելիս պետք է հիշել Ֆաբիյանների մասին։ Դա գիտնականների ու գրողների մի ընկե-րություն էր, վորոնք նպատակադրվել եյին սոցիալիստական չա-փավոր հայացքներ տարածել թե բանվորների և թե բուրժուա-զիայի շրջանում և մանր բարենորոգումների միջոցով նպաստել սոցիալիստական հասարակակարգի աստիճանաբար հաստատվելուն։ Այդ ընկերությունը հիմնեց 1883 թ. Թոմըս Դեյվիդսընը. նա ըն-կերությանն անվանեց «ֆաբիյական»՝ հռոմեյական նշանավոր Ֆա-բիոս Դանդաղկոտի անունով, վոր յերեվելի յեր դանդաղ, համբերող տակտիկայով (գործելակերպով)։ Ֆաբիյաններն առանձին ուշա-դրություն են դարձնում այսպես կոչված մունիցիպալ *) սոցիա-լիզմի վրա՝ ձգտելով այնպես անել, վոր քաղաքներն ու կոմունա-թյունները (գավառական զեմստվոների նման բան) իրանց ձեռքն առնեն բնակչության հիմնական կարիքներին լրացում տալը (ելեկ-տրականություն, գազ, ջրանցքներ, տրամվայներ, հացատներ)։ Այդ ընկերության գլուխ եյին կանգնած Անգլիայի յերեվելի գրողներ և տնտեսագետներ Բեռնար Շո, Սիդնի և Բեատրիս Ուեբբ, Գրա՛հա՛մ Ուեյլզ և ուրիշները։ Կոմունությունների խորհուրդների հիմնարկու-թյունը 1888 թ. և ծխական խորհուրդներինը (մեր գավառականին զեմստվոների նման բան) 1894 թ. սաստիկ նպաստեցին ֆաբի-յանների մունիցիպալ գործունեյությանը։

Սոցիալ դեմոկրատները քարոզում եյին առավելապես չսովո-րած բանվորներին—շինարական գործի հասարակ բանվորներին (փա՛հլա՛ներին), երկաթուղայնականներին, գազային բանվորներին և նավահանգստային բեռնակիրներին։

1889 թ. Բըրնսը և Մենը կազմակերպեցին գազային բան-վորների միություն, իսկ շուտով գազային բանվորները գործադուլ հայտարարեցին՝ պահանջելով 8-ժամյա բանվորական օր և ի դար-մանս ամենքի՝ գործը տարան։ Գազային բանվորների աջողու-թյունը քաջալերեց չսովորած կատեգորիայի ուրիշ բանվորների և քիչ չնպաստեց նավահանգստային մշակների բանակի կազմա-

*) Քաղաքային և զեմստվային ինքնավարության վերաբեր-վող։

կերպմանը, վորոնք շուտով գործադուլ արին։ Նավաբարձների ընդհարումը տերերի հետ սկսվեց նրանից, վոր «Թեյապահեստների բանվորների» միությունն աշխատավարձի բարձրացում պահանջեց։ Մերժումն առաջ բերավ Լոնդոնի բոլոր նավահանգստային բանվորների գործադուլ։ Գործադուլավորներին Բըրնզի փառավոր ղեկավարելը նավահանգստային բանվորների վրա հրավիրեց մյուս միությունների և լայն հասարակության համակրությունը։ Առատ նվերներ հավաքվեցին (մոտ կես միլլիոն ռուբլի)։ Մինչև իսկ ավստրալիական միություններն արձագանք տվին՝ ուղարկելով 300.000 ռուբլի խոշոր նվիրատվություն։

Նավահանգստային բանվորների հաղթության հետևանքն էր չսովորած բանվորների մեջ բազմաթիվ միություններ ծագելը. Նավաբարձների հաղթությունից հետո մի տարվա ընթացքում կազմակերպված բանվորների շարքերն ավելացան 200.000 հոգով։ Նոր տրեյդ-յունիոնների նպատակն էր վոչ թե բանվորների ապահովագրությունն ու փոխոգնությունը, այլ գործադուլային պայքարը բոլոր կապիտալիստական կարգերի դեմ. ուստի նրանք մասնակիցներից խոշոր մուծումներ չէին պահանջում և ձգտում էին բանվորների մեջ ռազմական վոգի մտցնել։

Հին տրեյդ-յունիոնիստների մեջ սոցիալիստական հայացքներ տարածելու գործում վոչ-աննշան դեր խաղացին 19-րդ դարավերջի յերկու խոշորագույն գործադուլներ—մեքենայագործներինը 1897 թ. և հանքափորներինը 1898 թ.։ Յերկու գործադուլն էլ կազմակերպել էին սոցիալիստները և նրանց առաջադրած պահանջները վերցրված էին սոցիալիստների ծրագրից. առաջին գործադուլին բանվորական ութժամյա որն էր, յերկրորդին՝ աշխատավարձի քանոն-աղյուսակը վերացնելը։ Չնայած վոր առաջին գործադուլը շարունակվեց վեց ամիս, իսկ յերկրորդը հինգ (մասնակիցների թիվն էլ թե մեկում և թե մյուսում 100.000-ական մարդ էր), յերկու գործադուլներն էլ տանուլ տրվեցին, վորովհետև միացած տերերը հսկայական կապիտալի տեր լինելով՝ կարողացան հեշտությամբ տանել միլլիոնների վնասներ, իմանալով վոր հետո տեղը կըհանեն դեռ մի բան էլ ավելիով։

Բայց թեյև գործադուլներն անաջող վերջացան, այնուամենայնիվ սոցիալիստների ազդեցությունը միությունների վրա չպակասեց, այլ ավելացավ։

Այն մոմենտից, յերբ նոր միությունների ներկայացուցիչները—սոցիալիստները—յերեվացին տրեյդ-յունիոնների համաժողովներում, համաժողովների քաղաքականության մեջ աչքի ընկնող դարձ առաջացավ, և նրանց դուրս բերած բանաձեվերը սոցիալիստական բնույթ ստացան։

Դեռ 1890 թվականի համաժողովն արտահայտվեց հօգուտ 8 ժամյա բանվորական օր մտցնելուն, իսկ Նորվիչի համաժողովը *1894 թ. բանաձեվ դուրս բերավ հողն ազգայնացնելու (վոր մի անգամ արդեն ընդունվել եր 1888 թ.), վորպես նայեվ արտադրության գործիքներն ազգայնացնելու մասին։*

Բըրմինգհամի համաժողովում *1897 թ. նորից դուրս բերվեց բանաձեվ հողի, հանքերի, յերկաթուղիների յեվայլն ազգայնացման մասին։ Նայեվ վորոշվեց գլուխ բերել բոլոր միությունների միավորումը։* Մանչեստրյան համաժողովում *1899 թ. այդ բանաձեվը ի կատար ածվեց և հիմք դրվեց «Տրեյդ-յունիոնների ընդհանուր միությանը» վերջինիս մեջ մտած բոլոր միությունների գործողության միատեսակություն սահմանելու համար։*

ՏԱՖՖ-ՎԱ՛ԼԻԻ ԳՈՐԾԸ։

19-րդ և 20-րդ դարերի սահմանագծումի վրա անգլիական բանվորական շարժումը ռեակցիոն մի դարձ յերեվան հանեց գլխավորապես բուրերի հետ ունեցած պատերազմի ազդեցության տակ։ Բանվորական միություններն անցան անգլիական կապիտալիստների իմպերիալիզմի կողմը՝ ազատության համար մարտնչող բուրերի դեմ։ 1901 թ.Սուանսիի համաժողովում հարավ-աֆրիկյան պատերազմը դատափետող սոցիալիստների բանաձեվը մերժվեց 742.000 բանվորների ներկայացուցիչների ձայնով 333.000-ի դեմ, իսկ արտադրության բոլոր միջոցների ազգայնացումի մասին բանաձեվը մերժվեց 685.000 ձայնով 264.000-ի դեմ։

Սակայն շուտով բռնկված Տաֆֆ-վա՛լիի (Տաֆֆ հովտի) գործն արթնացրեց բանվորներին. նա ցույց տվավ, վոր նրանց սպառնում ե բուրժուազիայի հետ յեղբայրանալու քաղաքականությունը։ Այդ գործը հետեվյալն ե։—

1900 թ. յերկաթուղային բանվորների միությունը գործադուլ հայտարարեց Տաֆֆ գետի հովտի յերկաթուղու վրա։ Գործադուլն անաջող վերջացավ։ Բայց դա չգոհացրեց ուղետերերին. Նրանք

դատի յենթարկեցին միությունը՝ նրան մեղադրելով այնպիսի օրենքներով, վորոնք վերացված եյին համարվում, այն ե՝ «պիկետ դնելու» կամ «վախեցնելու» (շտրեյկբրեխերներին գործի չթողնելու համար պահապաններ դնելու) և «հակահասարակական դավադրության» մասին օրենքներով. բացի դրանից՝ նրանք միությունից պահանջում եյին նրանց պատճառած վնասները։ Առաջին ատյանում դատավորը գործը վճռեց յերկաթուղու օգտին. յերկրորդ ատյանի դատավորը փոխեց այդ վճիռը։ Այն ժամանակ յերկաթուղին գործը բցեց վերջին ատյանը—լորդերի պալատը (վերին պալատը, վոր բաղկացած է միապաղաղ անգլիական ամենահարուստ արիստոկրատիայից)։ Լորդերի պալատը գործը նորից վճռեց յերկաթուղու օգտին՝ վորոշում կայացնելով միությունից առնել յերկաթուղու օգտին 230.000 ռուբլի վնաս։ Այսպիսով այդ վորոշումն ի չիք դարձրեց բանվորների նվաճումները միությունների և գործադուլների ազատության ասպարեզում։ Այժմ ամեն մի ձեռնարկու կարող եր միություններին դատական պատասխանատվության կանչել գործադուլների համար և նրանցից խլել նրանց վերջին հոգեպահուստը։ Յեվ իրոք, մինչեվ 1905 թ. տրեյդ-յունիոնները դատական վճիռներով մոտ 2.300.000 ր. վճարեցին։

Տաֆֆ-վա՛լյան գործը բանվորներին ցույց տվավ—նախ, թե անգլիական կառավարիչներն ու բուրժուազիան վորքան հեռու յեն բանվորների անկապտելի իրավունքները ճանաչելուց. յերկրորդ, վոր հաստատուն բանվորական և սոցիալական օրենսդրությունը հնարավոր է միայն պարլամենտում քաղաքական ինքնուրույն բանվորական կուսակցություն ունենալուց և անգլիական պետական կարգը դեմոկրատացնելուց։ Մի խոսքով՝ այդ գործի ազդեցության տակ անգլիացի բանվորներն այն համոզմունքին յեկան, վոր բավական չե զբաղվել միայն տնտեսական պայքարով։

Տրեյդ-յունիոնների Լոնդոնյան համաժողովը (1902 թ.), ուր հավաքվել եյին 1.700.000 կազմակերպված բանվորների պատգամավորներ, միաձայն բողոքեց լորդերի պալատի և զանազան դատարանների՝ բանվորների վերաբերմամբ թշնամական վճիռների դեմ և վորոշեց պահանջել նոր օրենքներ, վորոնք ամենավորոշակիորեն ապահովեյին բանվորների իրավունքները։ Հենց այդ համաժողովում ձայների ահագին մեծամասնությամբ դուրս բերվեց մի բանաձև, վոր դատապարտում եր պատերազմը բուր-

ների դեմ, և այդ պատերազմը համարվեց ամենաանարդարներից մեկը: Վերջապես, որ ամենից կարևորն է, միաձայն անհրաժեշտ համարվեց բանվորական ինքնուրույն կուսակցություն հաստատել պարլամենտում՝ ազատվելու նպատակով թե՛ լիբերալների և թե՛ պահպանողականների հետ միություն կազմելուց:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յեվ հիրավի, շուտով ծնունդ առավ ինքնուրույն բանվորական կուսակցություն (Labaur party—Լեյբըր պարտի): Անգլիական բանվորական կուսակցությունը չունի այն միատարր կազմը, ինչպես օրինակ գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցությունը կամ յեվրոպական մյուս յերկրների սոցիալիստական կուսակցությունները: Իր ծրագրում նա իրան անվանում է ֆեդերացիա (միություն), վորի կազմի մեջ են մտնում տրեյդ-յունիոնները, սոցիալիստական ընկերությունները, տեղական բանվորական միությունները և կարող են մտնել կոոպերատիվները: Նրա նպատակն, ինչպես ասվում է ծրագրում, կայանում է նրանում, վոր կազմակերպի և պահի պարլամենտում իր սեփական առաջնորդներն ու առանձին քաղաքականությունն ունեցող կուսակություն: Կուսակցության տված բոլոր թեկնածուները պարտավորվում են պարլամենտում պաշտպանելու կուսակցության ծրագիրը և յենթարկվելու կուսակցության վճիռներին: Կուսակցության գլուխն է կանգնած 13 անդամից բաղկացած գործադիր կոմիտեն, վորոնցից 9-ը տրեյդ-յունիոնների, 3-ը սոցիալիստական ընկերությունների և 1-ը բանվորական խորհուրդների ներկայացուցիչներ են: Ընտրություններ կազմակերպելու և պատգամավորներին թոշակ տալու համար վորոշվել եր ամեն մի անդամից տարեկան 4պեննս(8կոպեկ) տուրք առնել:

Բանվորական կուսակցությունն ընտրություններին առաջին անգամ հանդես յեկավ 1906 թ. և 29 պատգամավոր մտցրեց պարլամենտ. պարլամենտում նրանց հետ միացան 22 բանվոր-արմատականներ. այնպես վոր 50 հոգուց բաղկացած մի պատկառելի ուժ ստացվեց: Հետագա ընտրություններին բանվորական պատգամավորների թիվը մնաց մոտավորապես նույնը: 50 հոգու մեջ մոտ 20 սոցիալիստ կար, մնացածները սոցիալիստ չեյին: Կուսակցության գլուխ եյին կանգնած Քեր-Հարդին(վախճ. 1915 թ.) և Ջ. Ռա՛մզեյ Մա՛կդոնալդը *): Նշանակալից է, վոր անգլիական բանվոր-

*) Անգլիական կառավարության այժմյան գլուխը:

Թ.

ների պատգամավորները հասարակ բանվորներ են լինում (պարլամենտի անդամների մեջ կան միքանի հանքափորներ, փորձագիրներ, ջուլհակներ, նավատաղձագործներ, ձուլիչներ յեվայլն), մինչդեռ գերմանական սոցիալ-դեմոկրատների պատգամավորների մեջ գերակշռում են բժիշկները, փաստաբանները, ժուռնալիստները և ընդհանրապես ինտելլիգենցիայի ներկայացուցիչներ։

Բանվորական ինքնուրույն կուսակցություն կազմելու հետևանքները շատ շուտով յերևացին։ Հենց նույն 1906 թ. բանվորները ձեռք բերին մի օրենք, վորը վոչնչացրեց տաֆֆ-վա՛լյան նշանավոր դատական վորոշումը և վերականգնեց միությունների ու գործադուլների իրավունքը նախկին ձևով. հետաքրքիր է նկատել, վոր հաստատված օրենսգիծն ընդունվեց համարյա ամբողջովին այն ձևով, ինչպես վոր առաջարկել եր բանվորական կուսակցության անդամ Հեդսընը (այստեղից է նրա անունը—Հեդսընի օրենքը)։ Դա մի հաղթություն եր, վոր չեր տեսնված անգլիական բանվորական շարժման պատմության մեջ։ Տիրող դասակարգերն սկսեցին բանի տեղ դնել բանվորական կուսակցությանը վորպես քաղաքական խոշոր ուժի և յերկու գլխավոր կուսակցությունները մեծ ցանկություն ցույց տվին քաշելու նրան յուրաքանչյուրն իր կողմը։ Սակայն անգլիական բանվորական կուսակցությունը չկարողացավ օգտագործել իր բարենպաստ դրությունը և մինչև այժմ կատարելապես անկախ դիրք չբռնեց։ Դա բացատրվում է կուսակցության խառն կազմով և տրեյդ-յունիոններում դեռ պինդ նստած բուրժուական մնացորդներով, վորոնք խանգարում են նրան գերմանական սոցիալ-դեմոկրատների և նույնիսկ ֆրանսիական սոցիալիստական կուսակցության նման բռնելու պրոլետարական քաղաքականության ուղին։

Ո՛ՍԲԸՐՆԻ ԳՈՐԾԸ Բանվորական կուսակցության մեջ ծավալվող թշնամական ուժ տեսնելով՝ տիրող դասակարգերը մի կողմից ձգտում են իրանց կողմը քաշել նրան, իսկ մյուս կողմից տակահան փորձեր են անում կտրել նրան։ Այդ տեսակետից բնորոշ է Ոսբըրնի գործը։

1908 թ. յերկաթուղային տրեյդ-յունիոնի մի անդամ Ոսբըրն ազգանունով դատարանին գանգատ տվավ, վորով նա պահանջում եր վերադարձնել այն մուծումները, վոր նրանից առացել եր միու-

թյունը բանվորական կուսակցության օգտին, և միջնորդում եր, վոր արգելեն հետագայում նման տեսակի տուրքերը՝ վորպես ապօրինի։ Առաջին ատյանի դատավորը մերժեց Ոսբըրնի գանգատը, բայց յերկրորդ ատյանում և լորդերի պալատում գործը վճռեցին հօգուտ նրան։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Ոսբըրնի համար տարեկան 8 կոպեկը վոչ մի դեր չեր խաղում. բայց այդ բանը սարքել եր մի խմբակ (շայկա), վոր տիրող դասակարգերն եյին կազմակերպել։

Այդ խմբակն իրան անվանում եր «տրեյդ-յունիոնների պաշտպանության լիգա», ուզենալով դրանով ասել, թե նա պաշտպանում ե տրեյդ-յունիոններին բանվորական կուսակցության «վնասակար» քաղաքականությունից։ Դրանից ամիջապես հետո ամեն մի տրեյդ-յունիոնում ճարվեցին Ոսբըրնին հետևվող բանվորներ, վորոնք պահանջում եյին վերադարձնել իրանց տված տուրքերը և արգելել այնուհետև տուրք հավաքելը։

Այդպես՝ վտանգի մեջ դրվեց պարլամենտական կուսակցության ֆոնդը և միևնույն ժամանակ հարձակման փորձ կատարվեց բանվորական ներկայացուցչության վրա։ Բանվորները զայրացան։ Տրեյդ-յունիոնների Շեֆֆիլդյան համաժողովը (1910 թ.) մի բանաձև դուրս բերավ, վորով կոչ եր անում բանի տեղ չդնել Ոսբըրնի գործի վերաբերյալ վորոշումը և ժողովել տուրքերը, յեթե դրա համար նույնիսկ բանտարկության սպառնալիք տան։

Ցանկանալով բանվորներին մի փոքր բավարարություն տալ՝ լիբերալ մինիստրությունը 1911 թ. բանվորական կուսակցության ճնշման տակ մի օրենք դուրս բերավ՝ համայնքների պալատի անդամներին տարեկան 4.000 ռուբլի ռոճիկ տալու մասին. այդպիսով կուսակցության համար հավաքվող տուրքերը մասամբ ավելորդ դարձան։ Ստորին պալատի անդամներին ռոճիկ հաստատելու եր ձգտում անգլիական դեմոկրատիան դեռ չարտիզմի ժամանակից։

ՏՐԵՅԴ ՅՈՒՆԻՅՈՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Տաֆֆ-վա՛լյան գործը և Ոսբըրնի գործը տրեյդ-յունիոնների համար պարզորոշ դասեր եյին և քիչ չնպաստեցին անգլիացի բանվորների մեջ բարձրացնելու ռազմական վոգին և փոխելու տրեյդ-յունիոնների քաղաքականությունը։

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև վերջին ժամանակները տրեյդ-յունիոնիստները յենթադրում եյին, թե բանվորների համար կենսական նշանակություն ունեցող բոլոր հարցերը կարելի յե լուծել միայն ինքնօգնության ճանապարհով—միությունների և գործադուլների միջոցով։

Բայց հիմա բանվորները համոզվեցին, վոր այդ միջոցները բավական չեն, վոր ելի մի ճանապարհ կա, վորն անհրաժեշտ ե օգտագործել — որենսդրական ճանապարհը, վորի համար անհրաժեշտ ե տրեյդ-յունիոնների հետ միասին ունենալ նայև բանվորական ինքնուրույն կուսակցություն։ Տրեյդ-յունիոնիստներն ավելի պարզ հասկացան պետության պարտականությունը բանվոր դասակարգի վերաբերմամբ և յեկան այն յեզրակացության, վեր բանվոր դասակարգի բարորության համար շատ ավելի օգտակար կլինի պետության վզին դնել այն պարտականությունները, վոր մինչև այդ ժամանակ բանվորական միությունները իրանց վրա եյին վերցնում։ Տրեյդ-յունիոնների ստեղծած կուսակցությունն սկսեց կառավարությունից պահանջել անգործների գրությունը թեթևացնելու մասին որենքներ, ծերացած բանվորներին կենսաթոշակ յեվայլն։ Ձեռնարկուների դեմ պայքար մղելում տրեյդ-յունիոնները թողեցին կապիտալիստների և բանվորների «շահերի ներդաշնակության» իրանց նախկին տեսակետը և ձեռք քաշեցին շարժական աղյուսակից՝ պահանջելով աշխատավարձի մինիմումի հաստատում և այն ել այնպիսի, վոր վոչ միայն բավարարի անհրաժեշտ կարիքներին, այլև հնարավորություն տա բանվորին ապրելու մի կյանքով, վոր արժանի յե ժամանակակից մարդուն իր բազմատեսակ ֆիզիքական և հոգեվոր պահանջներով։

Տրեյդ-յունիոնների բարգավաճումը շարունակվում ե անընդհատ։ 20-րդ դարի սկզբում մոտ 2 միլլիոն միացյալ բանվոր կար. 1910 թվին Անգլիայում կար 1154 տրեյդ-յունիոն $2^1/_2$ միլլիոն անդամով և համարյա 50 միլլիոն ռուբլի (մինչպատերազմյան կուրսով հաշված) ֆոնդով, 1916 թ. միջերքում տրեյդ-յունիոններն ունեյին մոտ 4 միլլիոն անդամ։

Վերջում միքանի խոսք ել ասենք անգլիական տրեյդ-յունիոնների կազմակերպության բացասական կողմերի մասին, այն ե՝ նրանց բաժանվածության և մասնավորականության (պարտիկու-

լարիզմի) մասին, այսինքն զատ-զատ կազմակերպությունների մասնավոր շահերը բանվոր դասակարգի ընդհանուր շահերից գերադասելու մասին։

Յեթե մենք նայելու լինենք վերը հիշած թվերին, այն ժամանակ կտեսնենք, վոր 1910 թ. մի տրեյդ-յունիոնին գալիս եր միջին թվով 2170 անդամ, մինչդեռ Գերմանիայում մոտավորապես նույն ժամանակ յուրաքանչյուր միությանը գալիս եր 50,000 անդամ։

«Մանավանդ պարզերեվ աչքի յե ընկնում բրիտանական արհեստակցական շարժման հատվածականությունը,—ասում ե Վ. Մայկլին («Գերմանական արհեստակցական շարժման աշխարհում»),—յերբ նայում ենք միությունների՝ արտադրության առանձին ճյուղերի շուրջը համախմբվելուն։ Այդտեղ յերեվում ե, վոր միմիայն լեռնային (հանքային) գործում 81 ինքնուրույն արհեստակցական կազմակերպություն կա Մեծ-Բրիտանիայում, մետաղային արդյունաբերության մեջ—182, իսկ մանվածային արդյունաբերության մեջ—274»։

Անգլիական տրեյդ-յունիոնների հատվածականության պատճառն այն ե, վոր Անգլիայում արհեստակցական շարժումը (վորպես և հասարակական ու քաղաքական կյանքի բոլոր տարրերը) պատմականորեն դասավորվել ե ժամանակավոր ու տեղական պայմաններից կախված լինելով։ Տրեյդ-յունիոնների այդպիսի դրությունը պատճառ ե դառնում անոգուտ տեղն ուժ ու յեռանդ կորցնելու և չափազանց խանգարում ե բանվոր դասակարգի համերաշխ ու միահամուռ պայքարին։

«Ճիշտ ե,—ասում ե վերը հիշած հեղինակը,—վերջին տարիներս Անգլիայում ավելի ու ավելի յե տարածվում արդյունաբերության միյեվնույն ճյուղի միությունների ֆեդերատիվ միաձուլման սիստեմը—ինչպես են ածխափորների, մանվածային բանվորների և այլ ֆեդերացիաները։ Դա միքիչ թուլացնում ե բաժանվածության վնասակար հետեվանքները, բայց ի վիճակի չե իսպառ վերացնելու նրանց»։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Բանվորներին իրանց կողմը քաշելու հույսը չկտրելով՝ անգլիացի քաղաքագետներն ու իշխողները, թե ազատամիտ (լիբերալ), թե պահպանողական (կոնսերվատոր), իրանց ծրագրի մեջ են

մացրել մի շարք սոցիալական և դեմոկրատական բարենորոգումներ, ճիշտ է՝ խիստ համեստ։ Դրանցից միքանիսը բանվորական կուսակցության ճնշման տակ արդեն իրականացված են։

1908 թ. ընդունված է 70 տարեկան դարձած և տարեկան 31 ֆունտ 10 շիլլինգ (մոտ 300 ռ.) հասույթից պակաս ստացող յերկու սեռի ծերերի համար պետական կենսաթոշակի մասին օրենքը։ Ամսական նվազագույն կենսաթոշակը հավասարվում է 10 ռուբլու։

Նույն թվին ընդունված է ագրարային (հողատիրական) օրենքը, վորի շնորհիվ կոմսությունների և ծխերի խորհուրդներն իրավունք են ձեռք բերել փոխառություններ բաց թողնելու հարկադրաբար գնելու համար մասնավոր հողեր, վորոնցից պետք է կազմվեն մանր ագարակներ և տրվեն հողագուրկներին։

1912 թ. գործադրության մեջ մտավ գործազրկությունից ապահովագրվելու մասին օրենքը և 1913-14 թ. յելմտացույցում (բյուջետում) նախատեսնվել եր ապահովագրության նպատակով պետության բաժին մոտ 7 միլլիոն ռուբլի՝ ունենալով պարտադիր ապահովագրման յենթակա 2.400.000 բանվոր։

Նույն թվին ընդունված է ձեռնարկուների ու բանվորների խառն կոմիտեների միջոցով ածխահանքերում աշխատավարձի մինիմում սահմանելու մասին օրենքը։

Բարենորոգումների մասին խոսելիս՝ հարկ է հիշել լորդերի պալատի 1911 թ. բարենորոգման մասին։ Լորդերի պալատը (վերին պալատը), վոր բաղկացած է անգլիական արիստոկրատիայի ժառանգական ներկայացուցիչներից, անգլիական պետական ամբողջ մեխանիզմի մեջ կազմում է ամենառեակցիոն հաստատությունը։ Վերևը տեսանք, թե ինչպես լորդերի պալատը սովորաբար ընդիմանում եր բանվորների օգտին յեղող ամեն մի բարենորոգման և ինչպես եր նա իբրև դատական ատյան իր վճիռներով ձգտում քանդել բանվորական կազմակերպությունները։

Մինչև 1911 թ. լորդերի պալատը կարող եր մերժել ստորին պալատի հաստատած ամեն մի օրենք։ 1911 թ. լիբերալները բանվորական կուսակցության վրա հենվելով՝ ընդունեցին մի օրենք, վորի զորությամբ յուրաքանչյուր բիլլ (օրինագիծ), վոր ստորին պալատը յերեք անգամ հաստատում է յերեք հաջորդաբար կայացած նիստերում, լորդերի պալատի հավանության կարիք չունի,

իսկ ֆինանսական օրենքներն ամենեվին կարիք չունեն լորդերի պալատի հավանությանը։ Բայց դա՝ իհարկե՝ մի մասն է միայն այն բարենորոգման, վոր պետք է մտցնել. վերին պալատը հարկավոր է վոչնչացնել իբրեվ հնության մնացորդ։ Ասենք՝ անգլիական պետական կարգը կարիք ունի վոչ թե բարենորոգման, այլ հեղափոխության։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Վերջում միքանի խոսք ասենք կոոպերատիվ շարժման մասին, վոր Անգլիայում սկսվեց մոտ 80 տարի սրանից առաջ Ռ. Ոուենի ազդեցության տակ։ Ինչպես հայտնի յե, ինքը Ոուենը կոոպերատիվ շարժումը կոմմունիստական համայնքներ հիմնելու իր մեծ ծրագրի մասը չեր համարում. բայց այդ շարժումը ծնունդ առավ և զարգացավ բանվոր դասակարգի մեջ ամենից առաջ սպառողական կոոպերացիայի ձեվով, վորովհետեվ այդպես եր համապատասխանում այդ դասակարգի կարիքներին։

Բանվորը ցածր աշխատավարձ ստանալով, այն խնայողությունը, վոր սպառողական խանութում մասնակցություն ունենալն եր տալիս, նրա համար վորոշ նշանակություն ուներ՝ կողմնակի կերպով աշխատավարձն ավելացնելով յերբեմն 10 և ավելի տոկոսով։

Վոչ պակաս նշանակություն ունի սպառողական ընկերությունների մատակարարած ապրանքների ավելի լավ վորակը։ Հայտնի ե, թե ինչ հատկություն ունեցող մթերքներ են ձեռք բերում բանվորները ֆաբրիկային խանութում, այն ել ապառիկ։ Անգլիայում այդ կողմից ավելի լավ չեր բանը, քան ուրիշ յերկրներում։ Այն ել կար, վոր այնտեղ յերկար ժամանակ գոյություն ուներ մթերքներով ռոճիկ տալը (այսպես կոչվող «Թրըկ» — truck — սիստեմը)։ Սպառողական ընկերությունների ապրանքները մեծաքանակ և տեղնուտեղը գնելով՝ կարող եյին անհամեմատ ավելի լավ վորակի մթերքներ տալ բանվորին, քան նա գնում եր մանր առեվտրականներից։ Ասենք սպառողական ընկերություններն Անգլիայում արդեն վաղուց են անցել սեփական արտադրության և ունեն հսկայական ֆաբրիկաներ, գործարաններ, հացատներ, ագարակներ, թեյատնկարաններ, շոգենավեր։ Դա ել ավելի յե արժանացնում ապրանքները և մեծացնում կոոպերատիվ ընկերությունների անդամների շահը։

Վերջապես ռոչդելյան սկզբունքների համաձայն՝ կոոպերատիվներն ուշադրություն են դարձնում կրթական նպատակների վրա և շատ են նպաստում ժողովրդական համալսարաններ, հասակավորների համար դպրոցներ, գրադարաններ յեվայլն հիմնելուն։

Վերջին ժամանակներս ավելի ու ավելի յե ուժեղանում կոոպերացիայի և տրեյդ-յունիոնների միջի կապը։ Վորքան վոր պետությունն իր վրա յե վերցնում այն պարտականությունների մի մասը, վորոնք մինչեվ այժմ ամբողջովին ընկած են յեղել տրեյդ-յունիոնների վրա(անգործության,անաշխատունակության դեպքերից ապահովագրվելը, կենսաթոշակները յեվայլն), այնքան տրեյդ-յունիոնները նշանավոր կապիտալներ են հետ քցում, վոր մեծ հոժարությամբ մտցնում են կոոպերատիվ ձեռնարկությունների մեջ։

Անգլիական կոոպերատիվ վիճակագրությունից միքանի տվյալներ բերենք։

1913 Թվականը մոտենելիս Անգլիայում կար ընդամենը 2.500 կոոպերատիվ 2.750.000 անդամով։ Դրանցից սպառողական ընկերություններ եյին 2.000-ից ավելի 2.650.000-ից ավելի անդամով, վոր ասել ե թե 1.325 անդամ եր գալիս մի ընկերությանը, միջին թվով մի միլիարդ ռուբլուց ավելի յեր տարեկան շրջանառությունը, վորից ստացվում եր տարեկան 120 միլիոն ռուբլուց ավելի օգուտ։

IV.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԸ

*Անգլիական բանվորական շարժման բոլոր առանձնահատուկ գծերը կարելի յե վերածել մի հիմնականի—*տրեյդ-յունիոնիզմին։

Տրեյդ-յունիոնիզմը նշանակում ե նախյեվառաջ պայքարի տըն-տեսական կերպի գերադասություն քաղաքականից։ Նրա հիմունքն ե արհեստակցական միությունը, նպատակն ե բանվոր դասակարգի դրության մասնակի և աստիճանական բարվոքումը, միջոցներն են—միությունը, ինքնատուրքագրումը, փոխօգնության գանձարկղը և վերջապես գործադուլը։

Տրեյդ-յունիոնիզմը հետեվապես պայքար ե վոչ թե կապիտա-լիստական հասարակակարգի դեմ, այլ կապիտալիստների դեմ, կապի-տալի ուժ վեր բերելու (засилие) *դեմ. Նա ձգտում ե վոչ թե այն բանին, վոր ընդհանրապես անկարելի դարձնի կապիտալիստական շահագործումը, այլ այն բանին, վոր նրան թուլացնի, վերադարձնի բանվորներին իրանցից թալանած աշխատավարձի մի մասը. տրեյդ-յունիոնիզմը հետեվապես նշանակում ե դեպի սոցիալիզմը ձգտելու բացակայություն։ Դրանով ե տրեյդ-յունիոնիզմը տարբերվում սին-դիկալիզմից, վորը նույնպես գերադասում ե տնտեսական պայքարը քաղաքականից, բայց ձգտում ե՝ միայն տնտեսական հողի վրա պայքարելով կապիտալիզմի դեմ՝ ընդմիշտ խորտակել այն, վորպես-զի նրա տեղ սոցիալիստական հասարակակարգ հաստատի։*

Տրեյդ-յունիոնիզմն ուստի նշանակում ե հեղափոխականության բացակայություն։ Նա խոտորում ե քաղաքական հեղափոխությու-նից և չի ձգտում սոցիալական հեղափոխությանն ել. Նա ցանկա-նում ե պայքարել խաղաղ, բայց ստույգ միջոցներով, վորոնց նպա-տակահարմարությունն արդեն փորձված ե և վորոնք անաջողու-թյան դեպքում չեն հասցնի ռեակցիայի ծանր հետեվանքներին—հիասթափության ու քայքայման։ Նա չի խուսափում պարլամենտի միջանցքներում և մինիստրի նախասենյակում վողորմություն խնդ-րելուց իր նպատակներին հասնելու համար։

Տրեյդ-յունիոնիզմը բուրժուական գաղափարախոսությունից պրոլետարական կազմակերպության վարակվելն է, ինչպես սինդիկալիզմն անարխիստական գաղափարախոսությունից այդ կազմակերպության վարակվելն է։ Ահա թե ինչու յենք այսպիսի հակասական յերեվույթ տեսնում.—տրեյդ-յունիոնիզմի առաջնորդները—Եպպլհարզը, Օջըրը և ուրիշները մի վոտով կանգնած են Ինտերնացիոնալում, իսկ մյուսով համայնքների պալատի միջանցքներում՝ միջնորդելով վոսկու քսակի վողորմած ներկայացուցիչների առաջ, վոր նրանց կլիենտ-բանվորների վրա տարածվեն իրավական շնորհներ, վորոնք բղխում են «պայմանագրի ազատության» և «պետության չմիջամտության» սկզբունքից։

Բացի այդ բացասական գծերից՝ տրեյդ-յունիոնիզմում կա նայեվ մի յուրատեսակ դրական գիծ, վոր անհրաժեշտ է նկատել. դա ինքնօգնությունն է (self-help) անգլիական վոգով, ինքնուրույնությունը, դասակարգային միավորումը։ Ահա թե ինչու այդ շարժման մեջ մենք տեսնում ենք, վոր վոչ միայն ամբողջ բանակն է բաղկացած պրոլետարներից, այլեվ նրա առաջնորդներն ու պարլամենտի ներկայացուցիչները զտարյուն պրոլետարներն են. նույնիսկ տրեյդ-յունիոնների կազմակերպության առանձնահատկություններից մենք կարող ենք համոզվել, որ դա պրոլետարների դանդաղորեն ինքնահատուկ ձեվով հարմարվելու պտուղն է, պրոլետարների, վորոնք հասել են դրան հետզհետե իրանց խելքով։

Անգլիական տրեյդ-յունիոնիզմը կարելի յե բացատրել Անգլիայի զարգացման քաղաքական և տնտեսական առանձնահատկություններով։

Քաղաքական ազատությունն Անգլիայում զարգացել է աստիճանաբար. նա սաղմնային դրության մեջ յեղել է դեռ այն ժամանակ, յերբ մյուս յերկրները հեծելիս են յեղել միահեծանության լծի տակ։ Յերբ անգլիական խոշոր (կամ մանր) բուրժուազիան կամ պրոլետարիատն իր զարգացման համար բարենորոգումների կարիք զգալով՝ գրոհում եր քաղաքական հասարակակարգի վրա, իշխանության գլուխ կանգնած տիրող դասակարգը չեր թողնում վոր բանը հասնի հեղափոխության, ժամանակին զիջումներ եր անում։ Խոշոր կապիտալի և խոշոր հողատիրության միջեվ լինելիք հեղափոխական պայքարից յեվս խուսափում եյին նրանով, վոր նրանց շահերը պաշտպանող կուսակցությունները (ուիգ—ազատամիտները և տոր-

պահպանողականները) հերթով կառավարության գլուխ եյին կանգնում։ Բայց վորովհետև նրանցից վոչ մեկը չեր կարողանում առանց լայն մասսաների վրա հենվելու յերկիրը կառավարել, ուստի նրանցից ամեն մեկը զիջում եր անում մերթ մանր բուրժուազիային, մերթ բանվորներին, մերթ գյուղացի-ֆերմերներին (ագարակապաններին), վորպեսզի ընտրությունների ժամանակ նրանց ձայնն իր կողմը լինի։ Այսպիսով կառավարող դասակարգերը կանխում եյին հեղափոխական բռնկումները. ուստի քաղաքական հեղափոխականությունն Անգլիայում պատշաճավոր հող և սննդատու հյութեր չունեցավ։

Հեղափոխական սոցիալիզմի բացակայությունն Անգլիայում բացատրվում է և՛ նրա տնտեսական բարգավաճումով։ 19-րդ դարի սկզբից մինչև վերջին ժամանակներս Անգլիան իր արդյունաբերությամբ և առևտրով առաջին տեղն է գրավել համաշխարհային շուկայում։ Մինչև 90-ական թվականների սկիզբն անգլիական արդյունաբերության ծաղկումը վոչ միայն անընդհատ է կատարվել, այլև այդ ասպարեզում Անգլիան վոչ մի մրցակցի չի հանդիպել։ Դա ներշնչել է մարդկանց այնպիսի հավատ, թե անգլիական բուրժուազիան արդյունաբերական արտասովոր ընդունակություններով է ոժտված, ուղիղ և ոգտակար են Անգլիայի համար նրա տնտեսական հայացքները, վորոնց հիմունքն են յեղել արդյունաբերության ու աշխատանքի ազատությունը և պետության չմիջամտելը։ Այդ հայացքներով վարակված են եղել և՛ անգլիական պրոլետարիատի առաջնորդները, վորոնք ձգտում եյին վոչ թե վոտնատակ տալ այդ բուրժուազիային, այլ բանվոր դասակարգի համար պոկել այն վոսկու մի մասը, վոր թափվում եր անգլիացի արդյունագործների գրպանները։

Վերջին տասնամյակներում, յերբ Անգլիան սկսեց հետզհետե կորցնել իր առաջնակարգ դիրքը համաշխարհային շուկայում և ստիպված յեղավ պայքարի դուրս գալ մյուս արդյունաբերական պետությունների (Գերմանիայի, Միացյալ Նահանգների, Ջապոնիայի) հետ, անգլիական բուրժուազիայի մի մասի, ապա և՛ անգլիական պրոլետարիատի սիրտը կասկած ընկավ անգլիական կապիտալիստների տնտեսական հայացքների անսխալականության վրա։ Անգլիացի բանվորը տեսավ իրան միյեվնույն դրության մեջ, ինչ վոր մյուս յերկրների բանվորներն են, և միջազգային կոնգրեսներում սկսեց միանալ համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական լոզունգներին։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՖՐԱՆՍԻԱ

I.

ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ 1830 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մոտ 130 տարի սրանից առաջ տեղի ունեցած ֆրանսիական մեծ հեղափոխությունն այնպիսի խոր փոփոխություններ առաջացրեց Ֆրանսիայի կյանքում, վոր այդ յերկրի ամբողջ նոր պատմությունը կարծես յերկու մասի բաժանվեց—«հին կարգ», վոր գոյություն ուներ մինչեվ հեղափոխությունը, և «նոր կարգ», վոր սկսվեց հեղափոխությունից հետո։

Մինչև հեղափոխությունը յերկիրը կառավարում եր ինքնակալ թագավորը, և յերկրի բոլոր կարգերը կախված եյին նրա վողորմածությունից ու նրա աստիճանավորների քմահաճույքներից։ Բնակչությունը բաժանվում եր դասերի, վորոնցից վոմանք համարվում եյին բարձրագույն, վոմանք ստորին։ Բարձր (արտոնյալ) դասի թվին եյին պատկանում ազնվականությունն ու հոգևորականությունը։ Պետական համարյա վոչ մի տուրք չտալով այդ դասերին պատկանող անձերը ֆրանսիական հողերի մի յերրորդի տերըն եյին, պետական ամենապատվավոր ու արդյունավետ պաշտոնները դրանց ձեռքին եյին, գոռոզությամբ եյին վերաբերվում յերրորդ դասակարգին—քաղաքացիներին (արդյունագործներին, վաճառականներին, արհեստավորներին ու բանվորներին) և կեղեքում եյին գյուղացիներին, վորոնց իսկի մարդ էլ չեյին համարում։

Մինչդեռ հարկերի ամբողջ բեռն ընկնում եր քաղաքացիների վրա, նամանավանդ գյուղացիների։ Բացի արքայի օգտին բազմաթիվ ծանր հարկերից՝ գյուղացիները տասանորդ (իրանց հասույթի մի տասներորդ մասն) եյին վճարում հոգևորականությանը և խըճճված եյին ֆեոդալ-հողատերերի օգտին տրվող տուրքի մի ամբողջ

ցանցով. բացի դրանից՝ դեռ շատ ուրիշ բնատուրքեր էլ էյին տալիս և յերկարամյա զինվորական ծառայություն էյին կատարում։

Այդ ժամանակներում Ֆրանսիայում արդյունաբերությունն արդեն նշանավոր չափով զարգացած էր. նա կրում էր առավելապես մանրարհեստային բնույթ, թեյեվ քիչ չէյին նայեվ խոշոր մանուֆակտուրաները—մահուդի, մետաքսի, քաթանի։ Բոլոր արդյունագործներն ու արհեստավորները միացած կազմում էյին կորպորացիաներ կամ համքարություններ։ Միյեվնույն համքարությանը պատկանող բոլոր բանվորները բաժանվում էյին վարպետների, քարգաների և աշակերտների, և ճշտությամբ սահմանված էր աշակերտ ու քարգան մնալու և վարպետի կոչում ստանալու ժամկետը։ Կառավարությունը հրատարակում էր մանրամասն կանոններ, թե ինչպես պետք է արտադրել մթերքները, ինչպես առեվտուր անել նրանցով, մտնելով բոլոր մանր-մունր բաների մեջ, սահմանելով գործվածքների չափերը, նրանց վորակությունը։ Մի համքարությունից մյուսն անցնելն արգելված էր։ Վարպետներին լայնարձակ իշխանություն էր տրված քարգաների և աշակերտների վրա։ Բայց վորովհետեվ ամեն մի քարգան ժամանակի ընթացքում կարող էր վարպետ դառնալ և սեփական արհեստանոց հիմնել, ուստի տերերի ու բանվորների մեջ շահերի այնպիսի հակադրություններ չկային, ինչպես հիմա կապիտալիստների ու բանվորների մեջ։

Քաղաքացիները (կամ բուրժուազիան), վորոնց շարքերում շատ հարուստ ու կրթված մարդիկ կային, չէյին կարողանում հաշտվել թագավորների և նրանց աստիճանավորների կամայականություններին, հոգեվորականության և ազնվականության անբարտավանությանն ու հարստահարությանը։ Յեվ մանավանդ տիրող կարգը ճընշիչ եր առեվտրի յեվ արդյունաբերության համար, վորոնց զարգացումը պահանջում էր ազատություն և այնպիսի պետական կարգ, վոր իշխանությունը հենց բուրժուազիայի ձեռքում լինի։ Ահա թե ինչու բուրժուազիան կամ յերրորդ դասակարգն ապստամբեց իր կեղեքիչների դեմ՝ իր հետ տանելով նայեվ բանվորներին ու գյուղացիներին։ Նա հայտարարեց ժողովրդին, թե կռվում է բոլոր անարդարությունների դեմ, աստիճանավորների, ազնվականների, տերտերների արտոնությունների դեմ և իր նպատակն է ժողովուրդն ստրկության շղթաներից ազատելը, նա իր դրոշակի վրա գրել

եր—ազատություն, հավասարություն, յեղբայրություն։

Յեվ իրավ, հեղափոխությունը ջնջեց թագավորին ու նրա ստրճանավորներին, խլեց ազնվական-կալվածատերերից հողը և վաճառեց գյուղացիներին, վոչնչացրեց արդյունաբերության ու առևտրի մեջ տիրող նախկին համքարական կարգերը և հաստատեց քաղաքացիների քաղաքական ազատություն յեվ օրենքի առաջ հավասարություն։

Սակայն ազնվականների ու տերտերների իշխանությունը տապալելով բուրժուազիան ինքը բռնեց նրանց տեղը, իր ձեռքն առնելով յերկրի ամբողջ կառավարությունը։ Թեպետ նա ազդարարել եր բոլոր քաղաքացիների հավասարություն, անկախ նրանց ծագումից ու դրությունից, բայց իրոք օրենսդրական պալատի ընտրությունների համար սահմանել եր ցենզ՝ ընտրողական իրավունքը վերապահելով նրանց միայն, ովքեր վորոշ տուրք եյին տալիս։ Բուրժուազիայի ներկայացուցիչները խլել եյին քաղաքային խորհուրդները, բարձրագույն պաշտոնները, մի խոսքով ամբողջ քաղաքական իշխանությունը։ Այդպիսով ազնվականության ու հոգեվորականության տիրապետության փոխարեն յեկավ բուրժուազիայի տիրապետությունը, վորը հայտարարեց սեփականությունը վորպես հասարակության սրբազան ու անձեռնմխելի հիմք։

Բայց հենց բուրժուազիան էլ չկարողացավ իր ձեռքում պահել իր ձեռք բերած հեղափոխական բոլոր նվաճումները։ Մի կողմից բուրժուական զանազան կուսակցությունների մեջ պառակտումներ ու փոխադարձ վոչնչացումներ սկսվեցին։ Մյուս կողմից Յեվրոպայի բոլոր թագավորները միացան Ֆրանսիայի դեմ, վորը գլխատել եր իր թագավորին և տապալել ազնվականության ու հոգեվորականության իշխանությունը։ Յեվրոպական թագավորների հետ ունեցած յերկարատեվ կռիվների մեջ Ֆրանսիայում անուն հանեց Նապոլեոնը, վոր իշխանությունը հափշտակելով կայսր դարձավ։ Բազմաթիվ հաղթություններից և օտար յերկրներ տիրելուց հետո նա վերջապես 1814 թվին պարտվեց, գահավիժվեց և Ֆրանսիայում նորից վերականգնեց արքայական իշխանությունը։

Ճիշտ է, թագավորն այլևս չկարողացավ վերադառնալ հին կարգերին, սակայն և այնպես հոգեվորականությունն ու ազնվականությունը նորից առաջին նշանակություն ձեռք բերին բուրժուազիայի հարուստ մասի հետ միասին։ Օրենսդրական պալատի

պատգամավորներ եյին ընտրվում քաղաքացիների այդ աննշան խմբակից միայն։ Ժողովրդի մնացած մասը—գյուղացիները, մանր ու միջին բուրժուազիան—զուրկ եր ընտրողական իրավունքներից։

Իրերի այդպիսի դրությունը շատ անձեռնտու դուրս յեկավ միջին բուրժուազիայի, արհեստավորների և քաղաքացի բանվորների համար (գյուղացիները յերկար ժամանակ բավարարվում եյին նրանով, վոր ստացել եյին կալվածատերերի հողերը)։ Ահա թե ինչու 1830 թվին ազատամիտ բուրժուազիան քաղաքացիներին նորից բարձրացրեց թագավորի դեմ. Կրկին հեղափոխություն առաջացավ։ Փողոցային կռիվներում (պատվարների վրա) կառավարական զորքերի դեմ մարտնչում եյին գլխավորապես ուսանողներն ու բանվորները։ Շարլ V-րդ թագավորը հրաժարվեց գահից, վորի վրա բազմեց Լուի-Ֆիլիպը։ Ազնվական հողատերերը նորից հետ մղվեցին յերկիրը կառավարելուց և իշխանությունը վերջնականապես ընկավ բուրժուազիայի ձեռքը։ Բանվորներն այս անգամ ել վոչինչ չստացան հեղափոխությունից, վորի հաղթանակի համար նրանք արյունն եյին թափել։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԾԱԳՈՒՄԸ

Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ազատեց ֆրանսիական արդյունաբերությունը նախկին ճնշումներից, վորոնց տակ եր գտնվում կորպորատիվ (ընկերական) և համքարային կազմակերպության և այն բազմակողմանի խնամակալության շնորհիվ, վորի մեջ եր պահում նրան մինչհեղափոխության շրջանի ինքնակալ կառավարությունը. Իսկ 1830 թվի հեղափոխությունը վերջնականապես կապիտալիստների ձեռքը քցեց քաղաքական իշխանությունը։ Կապանքներից ազատվելով արդյունաբերությունն սկսեց արագորեն զարգանալ։ Դրան նպաստեցին Անգլիայից փոխադրված շոգեմեքենայի գյուտը և արտադրության մեջ տեխնիքական ուրիշ կատարելագործումները, քիմիայի մեջ կատարված նոր գյուտերը, յերկաթուղու և նավարկության գյուտը։ Թե ինչպես եր կատարվում արդյունաբերության զարգացումը, մանավանդ յերկաթ, թուջ, քարածուխ ձեռք բերելում և մեքենաներ տարածելում, յերևում է հետևյալ թվերից. 1789 թվին Ֆրանսիայում ստացվում եր 61.000 տոնն *) թուջ,

*) 1 տոննը— է 61 փութ և կես ֆունտ։

իսկ 1811 թ.—99,000 տոնն. 1798 թ. Ֆրանսիայում ստացվում էր 250.000 տոնն քարածուխ, իսկ 1812 թ.—929.000 տոնն։ Շոգեմեքենան առաջին անգամ բանի յե քցվել Ֆրանսիայում 1815 թ., իսկ 1839 թ. շոգեմեքենաների թիվը արդեն հասնում էր 625-ի։

Ճշմարիտ է՝ արդյունաբերությունն այստեղ այնպիսի արագությամբ չէր զարգանում, ինչպես Անգլիայում, և, որ գլխավորն է, նա այստեղ այնպիսի խոշոր-ֆաբրիկային բնույթ չստացավ, ինչպես Անգլիայում. բայց և այդ զարգացումն առաջ բերավ պրոլետարիատ, այսինքն բանվորների դասակարգ՝ խոշոր քաղաքներում կենտրոնացած, զուրկ արտադրության գործիքներից և աշխատանքը ծախելով ապրող։ Յեվ, ինչպես նայեվ Անգլիայում, քաղաքային բանվորների դրությունը 1789 և 1830 թվականների հեղափոխություններից հետո խոշոր արդյունաբերության զարգացման հետ միասին ավելի վատացավ համեմատած այն ժամանակաշրջանի հետ, յերբ արդյունաբերությունը զուտ արհեստային բնույթ էր կրում։ Սովը ու գործազրկությունը սովորական յերևույթներ դարձան բանվոր դասակարգի կյանքում։ Ուստի Ֆրանսիայում յեվս բանվորներն սկսում են հերոսական համառ պայքար կապիտալի դեմ իրանց դրությունը լավացնելու համար, բուրժուական տիրող հասարակակարգը վոչնչացնելու և սոցիալիզմ հաստատելու համար։ Սակայն Ֆրանսիայում, ինչպես մենք հետո կտեսնենք, բանվորական շարժումը միանգամայն այլ բնույթ է կրում, քան Անգլիայում։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես և յեվրոպական բոլոր յերկրներում, մինչհեղափոխական շրջանում ֆրանսիական քաղաքների մեջ սովորություն կար միանալու՝ ոգնություն ցույց տալու համար այն ընկերներին, վորոնք քաղաքից քաղաք եյին թափառում գործ ճարելու նպատակով։ Այդպիսի միությունները կոմպանյաժ անունն եյին կրում։ Հեղափոխությունից հետո խոշոր արդյունաբերությունը զարգանալու հետ միասին կոմպանյաժն սկսում է փոխվել ոգնության ընկերությունների, վորոնց գլխավոր նպատակն է լինում ոգնել իրանց անդամներին հիվանդության դեպքում, պահպանել ծերերին և անաշխատունակներին։ 19-րդ դարի առաջին յերկու տասնամյակներում այդպիսի ընկերություններ հանդիպում են

գրենոբլյան ձեռնոցագործների, մահուդագործների մեջ։ 1823 թ. միայն Պարիզում այդպիսի ընկերությունների թիվը հասնում էր 160-ի, վորոնցից 132-ը 11.143 անդամով բաղկացած եյին միյեվնույն արհեստի տեր բանվորներից, այսինքն արհեստակցական միություններ եյին։

Ժամանակի ընթացքում այդ ընկերությունները կերպարանափոխվում են։ Փոխօգնության նպատակներին միանում են այնպիսի նպատակներ, ինչպես գործադուլներին ու գործադուլավորներին օժանդակություն ցույց տալն է, ծագում են առնում այսպես կոչվող գործադուլային գանձարկղերի յեվ դիմադրության ընկերություններ, վորոնք նպատակադրվում են կապիտալի դեմ հարձակողական պայքար մղել։

1830 թվականի հեղափոխությունը խաբեց պատվարների վրա արյուն թափած բանվոր դասակարգի հույսերը։ Բանվորների դրությունը վոչ միայն չլավացավ, այլեվ ավելի վատացավ արդյունաբերության ճգնաժամի և անշարժության շնորհիվ։ Հազարավոր բանվորներ փողոց նետվեցին։ «Անգործներն, — ասում է Լուի Բլանը, — խմբերով չափչփում եյին քաղաքային հրապարակները՝ ցնցոտիներով ծածկված, իրանց ձեռքից գործը խլող մեքենաներն անիծելով»։ Գործարանային կենտրոններում ծագում եյին բանվորական խռովություններ, ապստամբություններ։ Զայրացած բանվորները կոտրտում եյին մեքենաներն, այրում եյին գործարանները՝ նրանց համարելով իրանց թշվառությունների պատճառ։

Հատկապես նշանավոր է Լիոնի ջուլհակների ապստամբությունը 1831 թվին։ Արդյունաբերական այդ խոշոր կենտրոնում շատ զարգացած էր մետաքսի արդյունաբերությունը, վորի մեջ այդ ժամանակներում գործում էր 40 հազարի չափ բանվոր։ Այդ արտադրությունը խոշոր շահ էր բերում գործարաններին։ Բայց 1830 թվականի հեղափոխության հետեվանք արդյունաբերական ճգնաժամից հետո գործարանատերերը սաստիկ կրճատեցին արտադրությունը և բանվորների աշխատավարձը միջանիտակ իջեցրին։ Բանն այնտեղ հասավ, վոր սկսեցին տասնութժամյա բանվորական որվա համար վճարել մի ֆրանկ (38 կոպեկ), դրանից էլ դեռ պակաս։

Բանվորների գլուխն անցան ջուլհակները, վորոնք «Ջուլհակների փոխօգնության ընկերություն» եյին կազմած. Նրանք բաղա-

քային խորհրդից ու պրեֆեկտից (քաղաքապետից) իրավունք ձեռք բերին կազմելու մի հատուկ խորհուրդ՝ բանվորների և ֆաբրիկանտների հավասար թվով ներկայացուցիչներից բաղկացած, վորպեսզի այդ խորհուրդն աշխատավարձի նվազագույն սակ (տակսա) մշակի։ Բայց ֆաբրիկանտների մեծամասնությունը չուզեց յենթարկվել առանձին խորհրդի վորոշումին. նրանք սկսեցին բանվորներին արձակել (լոկաուտ) և կառավարությանը գանգատվեցին պրեֆեկտի վրա, վոր պաշտպանում եր բանվորների շահերը։ Կառավարությունը ֆաբրիկանտների կողմը բռնեց և պրեֆեկտին հանդիմանեց։ Բանվորները վրդովվեցին։ 30.000 ջուլհակներ շարեշար շարժվեցին քաղաքածայրերից դրոշակներով, վորոնց վրա գրված եր. «ապրել աշխատելով կամ մեռնել մարտնչելով»։

Բանվորների դեմ շարժվեց ազգային գվարդիան, վոր բաղկացած եր ունեվոր բուրժուաներից, այլև կառավարական զորքերը. բայց վերջիններիս մի մասն անցավ բանվորների կողմը, վորոնք հաղթական դուրս յեկան ընդհարումից և քաղաքային խորհուրդը գրավելով ամբողջ տասն որ քաղաքի տերերը մնացին։ Վախեցած կառավարությունը Պարիզից Լիոն ուղարկեց 20.000 հոգուց բաղկացած ընտիր զորք, ապստամբված բանվորները հաղթվեցին։ Ապստամբությունը ճնշելուց հետո օրենսդրական պալատը, վոր բաղկացած եր ամբողջովին բուրժուական ներկայացուցիչներից, թագավորին փառաբանական գրություն ներկայացրեց նրա համար, վոր նա պաշտպան եր կանգնել սեփականության սրբազան իրավունքի, վորը «խախտվել եր հիմնովին, և արդյունաբերության ազատության, վորին վոչնչացում եր սպառնում»։

Լիոնի ապստամբությունը բանվորների առաջին ապստամբությունն եր՝ իրանց սեփական շահերի, կապիտալից աշխատանքի շահերը պաշտպանելու համար։ Թեյեվ լիոնյան ջուլհակներն անհավասար պայքարից հետո պարտություն կրեցին, բայց դրա հետ միասին նրանք համոզվեցին, վոր բանվոր դասակարգը կազմակերպվելով ու միանալով ընդունակ ե վերջիվերջո հաղթելու։

ԲԱԲՈՖ, ՍԵՆ-ՍԻՄՈՆ, ՖՈՒՐՅԵ

Կապիտալի դեմ աշխատանքի մղած մեծ պայքարում ֆրանսիացի բանվորը մենակ չմնաց։ Այդ պայքարի դեռ առաջին աստիճաններում նա անձնվեր բարեկամներ ճարեց մյուս դասա-

կարգերի անշահասեր ներկայացուցիչների մեջ, առավելապես մանր-բուրժուական ինտելիգենցիայի և գիտնականների մեջ։

Դեռ մեծ հեղափոխության ժամանակ բանվորների բարեկամ Բաբո՛ֆն իր ճառերում ու հեղինակություններում ապացուցում եր, որ հերիք չե մարդկանց քաղաքական իրավունքները հավասարեցնելը, պետք ե նրանց մեջ գույքային հավասարություն ել քցել. այն ժամանակ միայն մարդիկ յերջանիկ կլինեն։ Նա նույնիսկ հիմնեց (1795 թ.) «Հավասարություն» գաղտնի ընկերությունը՝ կառավարությունը տապալելու և այն սոցիալիստական հասարակակարգը հաստատելու նպատակով, որպիսի հասարակակարգը նա արդարացի յեր համարում։ Սակայն դավադրությունը բացվեց և Բաբո՛ֆն ու իր ընկերները գլխատվեցին։

Կապիտալիստական հասարակակարգի վրա շատ խիստ եր հարձակվում Սեն-Սիմոնը (1760—1825 թ.թ.)։ Հնում,—ասում եր նա,—գոյություն ուներ ստրկությունը. ապա աշխատավորներին պահում եյին ճորտության մեջ, հիմա ել նրանց շահագործում են վարձու աշխատանքի միջոցով։ Դա նրանից ե ծագում, որ արտադրության գործիքները գավթել ե մի դասակարգ, իսկ մյուս դասակարգին հարկադրում ե աշխատելու։ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը բոլորին յերջանկություն եր խոստացել, բայց իրոք ոչինչ չտվավ աշխատավորներին։ Նա միայն փոփոխեց քաղաքական ձևերը, մինչդեռ անհրաժեշտ եր վերափոխել տնտեսական հարաբերությունները։ Տնտեսական հարաբերությունները վերափոխելու համար Սեն-Սիմոնն առաջարկում ե հասարակության գլուխ դնել արդյունաբերողներին և գիտուններին։ Բայց թե ինչպես վերակազմել տնտեսական հարաբերությունները և ինչպես կազմակերպել արտադրությունը, որ սոցիալական յերջանկություն հաստատվի, Սեն-Սիմոնը հաստատապես ոչինչ չի ցույց տալիս։

Այս հարցով գլխավորապես զբաղվել ե Շարլ Ֆուրյեն (1772—1837 թ.թ.)։ Նա ել Սեն-Սիմոնի նման դատափետում եր տնտեսական կարգերը, որոնք հաստատվել եյին հեղափոխությունից հետո, ապացուցելով, որ նրանք բարվոքել են շահագործող-կապիտալիստների դրությունը և վատթարացրել վարձու բանվորներինը։ Պատճառն այն ե, որ բանվորները բաժան-բաժան են յեղած և իրար հետ մրցում են։ Անհրաժեշտ ե ստեղծել այնպիսի կարգ, որի մեջ մարդիկ աշխատեյին որոշ ծրագրով, միմիանց փոխա-

դարձաբար օժանդակելով։ Նա խորհուրդ էր տալիս կազմել բան-
վորների այնպիսի կազմակերպություններ, վորոնց մեջ յուրաքան-
չյուրը կարողանար իր հակումների և ընդունակությունների համե-
մեմատ աշխատանք ճարել։ Այդ կազմակերպությունները, վորոն-
ցից ամեն մեկում մեկուկեսից մինչև յերկու հազար հոգի պիտի
լինեյին, նա անվանում էր Ֆալանգներ, իսկ մի կազմակերպու-
թյան պատկանելիք հողամասն ու շենքերը — Ֆալանստեր։ Նրան-
ցում յուրաքանչյուրն իր աշխատանքի կիրառումը կգտնի, ամեն
վոք կաշխատի ազատ, անհարկադիր, վորովհետև յուրաքանչյուրը
կանի այն, ինչ վոր ամենից ավելի յէ դուր գալիս։ Առանձին ֆա-
լանստերները հարկավոր դեպքում իրար հետ համայնականություն
կկազմեն և կկառավարեն այն յերկրամասը, վորտեղ իրանք են
գտնվում. այսպիսով պետական իշխանությունն ավելորդ կդառնա
և կոչնչանա, իսկ պետական իշխանության հետ միասին կչքանա
ամեն մի հարկադրանք։

Ֆուրյեն սոցիալիստ չէր բառի ժամանակակից մտքով։ Նա կա-
պիտալիստների ձեռքից կապիտալը չէր խլում և նրանց հրավիրում
էր իբրև աշխատակիցներ իր ֆալանստերներն՝ այնտեղ արտադր-
ված մթերքները բաժանելով «կապիտալի, աշխատանքի և տաղան-
դի» համեմատ։ Այդպիսով նա չէր պայքարում կապիտալի դեմ, այլ
միայն ավելի պակաս վնասակար էր դարձնում այն՝ պակասեցնե-
լով նրա շահագործումը. Նա չէր վերացնում վարձու աշխատանքը,
այլ միայն իր նպատակն էր համարում, վոր ամեն մի բանվոր միշտ
գործ և բավականաչափ վաստակ ունենա։ Նա ձգտում էր իր ֆա-
լանստերները գրավել բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին՝
ապացուցելով, թե ինչ շահեր են սպասում ամենքին նոր հասարա-
կակարգում։ Նա դիմում էր հարուստներին ու թագավորներին՝
խնդրելով, վոր միջոցներ տան հիմնելու առաջին ֆալանստերը, հա-
վատացնելով, վոր նոր կարգերում նրա անդամների յերջանիկ կյանքն
որինակ կդառնա և բազմաթիվ նմանողություններ առաջ կբերի։
Բայց Ֆուրյեյի հրավերին վոչ վոք չարձագանքեց, և նա մեռավ աղ-
քատության մեջ՝ իր ծրագիրների իրագործմանը չհասած։

Սեն-Սիմոնի և Ֆուրյեյի *) նշանակությունը Ֆրանսիայի (այլ-
և Յեվրոպայի մյուս յերկրների) բանվորական շարժման համար

*) Նրանք յերկուսն էլ ուտոպիստ (անիրագործելի մտքերով տարված մարդիկ) էյին։

նրանում ե կայանում, որ նրանք անգլիացի Ռ. Ոուենի հետ միասին առաջինը մերկացրին կապիտալիստական հասարակակարգի հիմնական թերությունները։ Աշխատավորների դրության բարելավման համար նրանց ջերմ քարոզը բազմաթիվ հետևորդներ ունեցավ ուսանողների, մասամբ արհեստավորների ու բանվորների մեջ։

Ծնունդ առան միքանի գաղտնի ընկերություններ *), որոնց անդամները ձգտում եյին զանազան նպատակների։ Նրանցից ոմանք ցանկանում եյին վերակազմել տնտեսական հասարակակարգը՝ բռնագրավելով բոլոր սեփականությունները և շատուքիչ հավասար կերպով բաժանելով բոլոր աշխատավորների մեջ։ Մյուսները յենթադրում եյին, թե բավական ե տապալել—քաղաքական տիրող հասարակակարգը և հասարակապետություն հաստատել, այն ժամանակ դեպի լավը կփոխվեն աշխատավոր դասակարգերի տնտեսական հարաբերականություններն ու դրությունը։ 1830 և 1840 թվականների ժամանակաշրջանում այդ ընկերությունները միքանի անգամ փորձեցին ապստամբություն բարձրացնել և տապալել կառավարությունը, բայց նրանց փորձերն ամեն անգամ անհաջողությամբ վերջացան։ Այդ ապստամբությունների յերևելի գործիչներից մեկն եր Բլանկին։

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱԼԱԾԵԼԸ

Բանվորական շարժման աճումը, հաճախակի գործադուլները, գաղտնի ընկերությունների ապստամբությունները Լուի-Ֆիլիպի կառավարությանն ստիպեցին հրատարակել մի շարք որենքներ, որոնք ուղղված եյին միությունների և մամուլի ազատության դեմ և ծանրացնում եյին քաղաքական հանցանքների համար տրվող պատիժները։

Միությունների մասին 1834 թվի որենքի համաձայն՝ միություններ կազմելու համար պահանջվում եր կառավարության թույլտվությունը, այն ել ա՛յն դեպքում միայն, յեթե անդամների թիվը քսանից չեր անցնում **). դրա հետ միասին՝ չթույլատրված

*) Այսպես որինակ՝ «Ժողովրդի բարեկամների», «Մարդու իրավունքների», «Տարվա յեղանակների», «Ընտանիքների» ընկերությունները։

**) Մինչև այդ ժամանակ թույլտվություն եր պահանջվում միայն այն դեպքում, յերբ, անդամների թիվը քսանից անցնում եր։

միության մասնակցելու համար պատիժ սահմանում էր։

Բայց հենց վոր այդ որենքն ընդունվեց, Լիոնում հսկայական գործադուլ բռնկվեց։ Գործադուլավորներին պատասխանատվության հրավիրեցին հակաօրինական խմբավորումի մեջ մասնակցելու համար։ Լիոնյան պրոլետարիատը դրան պատասխանեց զինված ապստամբությամբ, վոր միքանի օր տևեց և համառ ընդդիմադրությունից հետո ճնշվեց։ Յերբ լիոնյան այդ յերկրորդ ապստամբության լուրը Պարիզ հասավ, այնտեղ էլ ապստամբվեցին բանվորները՝ մոտ 4.000 հոգի, բայց այդ ապստամբությունն էլ անհաջող վերջացավ։

Նոր որենքները հրատարակելուց հետո բանվորներին և բուրժուական դասակարգերից դուրս յեկած նրանց բարեկամներին հալածելը խիստ սաստկացավ։ Այսպես 1825 թվից մինչև 1847 թիվը ըստ պաշտոնական տվյալների 1250-ից ավելի դատական գործ էր յեղել այդ որենքները խախտելու համար, մեղադրվողների թիվը՝ հասել էր 7.000-ի։ Բայց չնայած այդ բոլոր հալածանքներին՝ բանվորական ընկերությունների թիվը մեծանում էր։

Գաղտնի ընկերությունները, բանվորական միությունները, ապստամբությունները, գործադուլները—այդ բոլորը պատրաստում էր նոր հեղափոխություն, վորը պիտի տաներ դեպի արքայական իշխանության անկումը և հասարակապետություն հաստատելը։ Բայց նախքան այդ մասին ավելի մանրամասն պատմելը՝ անհրաժեշտ է միքանի խոսք ասել յերկու գրողների և հասարակական գործիչների մասին, վորոնք ահագին ազդեցություն ունեցան բանվոր դասակարգի և բռնկվող հեղափոխության բնույթի վրա։

ԼՈՒԻ-ԲԼԱՆ, ՊՐՈՒԴՈՆ

Ֆուրյեյի նման Լուի Բլանն էլ (1811—1882 թ.թ.) խիստ դատապարտում էր կապիտալիստական հասարակակարգը, վորը հիմնված էր փոխադարձ պայքարի և մրցության վրա թե կապիտալիստների և թե բանվորների մեջ։ Յեվ Ֆուրյեյի նման նա ձգտում էր միացնելու արտադրիչներին, հաստատելու մի իրավակարգ, վորը նա անվանում էր սոցիալիստական։ Բայց Ֆուրյեյի հակառակ նա յենթադրում էր, թե այդ տեսակի կարգ կարելի յե հաստատել պետական իշխանությունը գրավելով միայն։ «Տիրեցեք իշխանությունը, յեթե չեք ուզում վոր նա ձեզ ճնշի. վերցրեք այն վորպես գործիք, յեթե չեք ուզում հանդիպել նրան իբրև խոչընդոտի»,— ասում էր նա։

Բայց իշխանությունը բռնագրավելը, վորպես Լուի Բլանն էր սովորեցնում, պրոլետարիատի դիկտատուրա չէր ժամանակակից մտքով։ Նրա կարծիքով՝ այդ բռնագրավումը պետք է նրանում կայանա, վոր յերկիրը կառավարելն անցնի «ազգի ամենալավ, դասակարգային շահերից բարձր կանգնած մարդկանց» ձեռքը։ Նոր կառավարությունն իր ձեռքը կառնի յերկաթուղիների, հանքերի, դրամատների կառավարությունը. Նա կկանգնի ազգային արտադրության գլուխ՝ հատուկ հասարակական *արհեստանոցներ հիմնելով, ուր ամեն մի ցանկացող աշխատելու հնարավորություն կունենա. այսպիսով բոլոր աշխատավորների* աշխատելու իրավունքը *կապահովվի։ Հողագործներն ու բանվորները կարող են կազմել անկախ* արտադրական ընկերություններ *և այն ժամանակ նրանք պետությունից կստանան անհրաժեշտ դրամագլուխ արտոնյալ պայմաններով։ Այդպիսի ընկերությունների անդամ կարող են լինել նայև կապիտալիստները, վորոնք վորոշ տոկոս կստանան իրանց վեր յեկած դրամագլխի համար։*

Ընդհանրապես Լուի Բլանը հավատում էր, վոր բուրժուազիայի և պրոլետարիատի միջեվ միություն ստեղծել հնարավոր է։ Լուի Բլանի կարծիքով՝ կապիտալիստական հասարակակարգն սպանում է վոչ միայն բանվորներին, այլեվ կապիտալիստներին և վոչնչացնում՝ նրանց ստիպելով իրար դեմ անխնա կոնկուրենցիա (մրցում) մղել, վորից հաղթական են դուրս գալիս միայն ամենահարուստները։ Հեռու չէ այն ժամանակը,—ասում էր նա,—յերբ ամբողջ Ֆրանսիայում կմնան մի տասնյակի չափ սեփականատերեր, իսկ մյուսները բոլորը նրանց մշակները կդառնան։ Ուստի նա բուրժուազիային ել էր հրավիրում մասնակից լինել սոցիալական հեղաշրջմանը և արտադրությունը նոր հիմքերի վրա վերակառուցել պետական իշխանության աջակցությամբ։

Այսպիսով Լուի Բլանը հավատում էր, վոր պրոլետարիատն ու բուրժուազիան կարող են համագործակցել, և տիրող հասարակակարգը վերափոխելու բոլոր հույսերը դնում էր պետական իշխանության վրա։

Միանգամայն ուրիշ հայացքների տեր էր Պյեր-Ժոզեֆ Պրուդոնը *(1809-1865 թ. թ.), վորն ապացուցում էր, թե բուրժուազիայի և պրոլետարիատի շահերն ուղղակի հակադիր են, ուստի և*

դրանց միջև միության մասին վոչ մի խոսք չի կարող լինել։ Նույնպես և նա պրոլետարիատին կոչ եր անում վոչ մի հույս չդնել կառավարության վրա, այլ ձգտել ազատագրվելու սեփական ուժերով։

Բոլոր թշվառությունների աղբյուրը նա համարում եր մասնավոր սեփականությունը՝ անվանելով այն գողություն։ Սեփականատեր դառնալով՝ կապիտալիստները խլում են բանվորներից նրանց վաստակի նշանավոր մասը, նրանց թողնելով այն մասը միայն, վոր անհրաժեշտ ե քաղցից չմեռնելու համար։ Ասենք Պրուդոնը սեփականության վոչ բոլոր տեսակներն եր դատապարտում, այլ միայն խոշոր սեփականությունը, վորը պետք ե ձգտել վոչնչացնել. մանր սեփականությունը, վորը պետք ե արտադրողին ծառայի իր գործի վրա դնելու համար, նա չեր դատապարտում։

Սեփականությունն անվնաս դարձնելու համար անհրաժեշտ ե վոչնչացնել փողն ու տոկոսը, իսկ դրա համար Պրուդոնը խորհուրդ եր տալիս փոխելու փոխանակության և վարկի սիստեմը հետևյալ կերպով։ Նա առաջարկում եր հիմնել փոխանակության ժողովրդական բանկ, ուր յուրաքանչյուր մանր արտադրող բերում ե իր արտադրած մթերքը, վորի տեղ նա ստանում ե հավասար արժեքով իրան հարկավոր մթերքը։ Կլիենտների բավական թիվ ունենալով՝ այդ բանկի մասնակիցները կարող են առանց դրամի յոլա գնալ, փոխանակելով մթերքն ուղղակի մթերքի հետ։ Նույն բանկն իր անդամներին կտա անտոկոս նպաստներ՝ այդպիսով պայքարելով տոկոսներ վերցնելու միջոցով կատարվող շահագործման դեմ։

Նույնպես և բանկն անտոկոս նպաստներ կտա բանվորներին, արտադրողական ընկերություններին, վոր նրանք ոգտագործելու համար ձեռք բերեն ֆաբրիկաներ, գործարաններ և աշխատանքի այլ գործիքներ, վորն առաջ կբերի հողային ռենտայի և կապիտալի շահի չքացում։

Սոցիալական կարգը վերակազմելու համար Պրուդոնը վոչ միայն վոչ մի հույս չեր դնում պետական իշխանության վրա, այլև ընդհանրապես պետական իշխանությունն ավելորդ եր համարում։ Նա հակառակ եր նույնպես պայքարի հեղափոխական ձևերին՝ յենթադրելով, վոր իր առաջարկած իրավակարգը կարելի յե հաստատել խաղաղ ճանապարհով փոխանակության բանկի և արտադրողական ընկերությունների միջոցով։ Ապագա սոցիալական կար-

գը նա իրան ներկայացնում էր իբրև արտադրողական ընկերությունների մի ամբողջություն, վորոնք իրար հետ ազատ պայման են կնքում իրանց շահերի յերկուստեք ապահովացման համար։

Ասածից պարզ է, վոր Պրուդոնը մանր արտադրողների շահերի պաշտպան էր, ուստի նրան անվանում են մանր բուրժուազիայի գաղափարախոս. Նրան անվանում են նայև անարխիստ, վորովհետև նա ժխտում էր պետական իշխանությունը։ Իսկ Պրուդոնը կարծում էր, վոր անարխիզմն իրագործելի յե միայն հեռավոր ապագայում, իսկ առայժմ նա առաջարկում էր արտադրողական ընկերությունների միություններ (ֆեդերացիա), վորոնք իրանք կկառավարեն յերկիրը։

ԳԱՂԱՓԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԵՋ

Ֆուրյեյի, Լուի Բլանի, Պրուդոնի վարդապետություններն անագին ազդեցություն ունեցան ուսանողների և բանվորների վրա, վորոնք բազմաթիվ խմբակներում խիստ քննության եյին յենթարկում իրանց ուսուցիչների հայացքները և սոցիալի ˭ տական իրավակարգ հաստատելու ձևերը։

Բայց բանվորական միտքը զարգանում էր նայև ինքնուրույն կերպով՝ բացի այդ ազդեցություններից։ 1830 թվի հեղափոխությունից հետո Պարիզում լույս են տեսնում բազմաթիվ բրոշյուրներ ու թերթեր, վորոնք խմբագրվում ու հրատարակվում են հենց բանվորների ձեռքով, ինչպես որինակ՝ «Ժողովուրդ», «Բանվորների լրագիր» շաբաթաթերթերը, «Արհեստավոր» ամենորյա լրագիրը և «Ժողովրդական փեթակ» անունով միամսյա ժողովածուն, ուր հոդվածների հեղինակներն եյին և հրավիրվում եյին լինել առավելապես բանվորները։

«Շատ հարգելի գրողներ իրանց հեղինակություններում մանրամասն քննել են բանվոր դասակարգի շարունակ աճող աղքատության հարցը»,—գրում էր տպագրիչ Բոյեն իր բրոշյուրում... «Այդ գրողները մեզ տվել են ժամանակակից կարգերի ճշգրիտ և խիստ քննադատությունը, մերկացրել և պախարակման են յենթարկել մեր ժամանակի բոլոր ախտերը... Բայց և այնպես պրոլետարներն իրանք պետք է գործի կպչեն և մի կողմ դնելով սղոցն ու մուրճը՝ գրիչ վերցնեն, վորպեսզի պատմեն մեր կարիքները, ազդարարեն մեր իրավունքները և արդարություն պահանջեն»։

Իրանց բազմաթիվ բրոշյուրներում հեղինակ-բանվորները բացատրում են իրանց մտքերը հասարակական թշվառությունների պատճառների և նրանց բժշկելու ձևերի մասին։ Ծանր դրությունից դուրս գալու միակ յելքը շատ բանվորներ տեսնում են արհեստակցական միություններ կազմակերպելու մեջ և ջերմ կերպով հրավիրում են իրանց ընկերներին միանալու։ «Արհեստանոց» լրագրի շուրջը համախմբված միքանի բանվորներ բոլոր բանվորներին կոչ եյին անում արտադրողական ընկերություններ հիմնելու, վորոնք նրանց կարծիքով պիտի բանվոր դասակարգն ազատեյին կապիտալիստների լծից։

1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (փետրվարյան հեղափոխությունը)

Այդպիսով բանվորական շարժումը և մանր բուրժուազիայի ու ինտելլիգենցիայի դժգոհությունը հետզհետե հասցրին Լուի-Ֆիլիպպի գահի անկմանը։ Բռնկված հեղափոխությունն անակնկալ եր թագավորի և նրա մինիստրների, պալատի պատգամավորների և լայն հասարակության համար, վորոնք յենթադրում եյին, թե ամեն ինչ կարգին ե։

Փետրվարյան հեղափոխությունն սկսվեց մանր բուրժուազիայի շարժումից **ընտրողական իրավունքի ընդլայնումի** ոգտին։ Հայտնի յե, վոր 1830 թվականի հեղափոխությունից հետո թագավորող Լուի-Ֆիլիպպն ընդարձակեց ընտրողական իրավունքը, սակայն և այնպես թողեց 200 ֆրանկի ցենզը՝ այդպիսով քաղաքական իշխանությունը տալով խոշոր և միջին բուրժուազիայի ձեռքը։ Մանր բուրժուազիայի, ինտելլիգենցիայի, արհեստավորների, բանվորների ներկայացուցիչներին թույլ չտրվեց մասնակցելու պետական կառավարությանը։

1848 թ. փետրվարին սկսվեցին միտինգներ ու բանկետներ, վորոնցում հռետորներն ընտրական ռեֆորմներ (բարենորոգումներ) եյին պահանջում։ Կառավարությունը պատասխանեց, վոր վոչ մի բարենորոգում չի տալ և ուժով կցրի ամեն մի ժողով ու ցույց։ Փետրվարի 22-ին ուսանողների և բանվորների ահագին ամբոխը փողոցային ցույց սարքեց։ Ցույցի դեմ զորքեր ուղարկվեցին։ Այն ժամանակ բանվորներն սկսեցին իրանց թաղերում պատվարներ կառուցել և ընտրական բարենորոգումներ պահանջելու փոխարեն

սկսեցին գոչել. «Կեցցէ հասարակապետությունը»։ Կառավարության համար անսպասելիորեն զորքի մի մասը բանվորների կողմն անցավ, և բոլոր ապստամբները շարժվեցին դեպի արքայական պալատը։ Թագավորն ուզեց գահից հրաժարվել իր թոռան օգտին, բայց արդեն ուշ եր։ Նա և իր առաջին մինիստր Գիզոն Պարիզից փախան։ Ապստամբված ժողովուրդը և նրա առաջորդները հավաքվեցին քաղաքային խորհրդի մեջ. ավելի չափավոր քաղաքացիները և պալատի պաշտպանները ժողովվեցին պարլամենտում, ուր ժամանակավոր կառավարության անդամների ցուցակ կազմվեց։ Քաղաքային խորհրդում ժողովվածները պահանջեցին ժամանակավոր կառավարության ցուցակի մեջ մտցնել դեմոկրատ Ֆլոկոնին և սոցիալիստներ Լուի Բլանին ու բանվոր-մեքենայագետ Ալ՛բեր Բուվյեյին։ Այդպիսով ժամանակավոր կառավարությունը դուրս յեկավ կոալիցիոն (համակուսակցական)՝ կազմված լինելով չափավոր բուրժուազիայի ներկայացուցիչներից, վորոնք սահմանադրական միապետություն եյին ցանկանում դեմոկրատներից (Ֆլոկոն, Լեդրյու-Ռոլեն), վորոնք պահանջում եյին դեմոկրատական հանրապետություն հաստատել, և սոցիալիստներից, վորոնք ձգտում եյին արմատապես վերակազմել ամբողջ հասարակակարգը և փոխարինել այն սոցիալիզմով։

Ժամանակավոր կառավարությունը հայտարարեց ընդհանուր ընտրողական իրավունք, ժողովների, միությունների և մամուլի ազատություն հաստատելու մասին, վերացրեց քաղաքական հանցանքների համար գործադրվող մահվան պատիժը և միքանի յերկրորդական բարենորոգումներ յեվս կատարելով սկսեց պատրաստվել Հիմնադիր Ժողովի ընտրություններին։

Ժամանակավոր կառավարությունը չեր մոռանում, վոր փետրվարյան հեղափոխությունը կատարվեց գլխավորապես բանվորների ձեռքով, վորոնք հեղափոխությունից սպասում եյին վոչ միայն քաղաքական իրավունքների մատչելիություն, այլև սոցիալական բարենորոգումներ, այսինքն բանվոր դասակարգի տնտեսական դրության բարվոքում։ Բայց այդ կառավարությունը «սոցիալիզմ» բառից վախենում եր վոչ պակաս, քան ամբողջ ֆրանսիական բուրժուազիան, ուստի և աշխատում եր զենքը տակավին վայր չդրած բանվորներից ոձիքն ազատել խոսքերով կամ փուչ խոստումներով։ Փետրվարի 27-ին նա հրատարակեց մի մանիֆեստ, վորով հանձն

տալ «ապահովել աշխատանքով յուրաքանչյուր բանվորի գոյությունը և բոլոր քաղաքացիներին գործ տալ»։ Բայց խոստումներին բանվորներն անվստահությամբ վերաբերվեցին, և փետրվարի 28-ին 12.000 հոգի դուրս յեկան Գրեվյան հրապարակը բազմաթիվ դրոշակներով, վորոնց վրա մակագրված եյին—«Աշխատանքի կազմակերպում», «Պրոգրեսի (առաջադիմության) մինիստրություն հաստատել»։ Իբրև այդ պահանջի պատասխան՝ կառավարությունը հաստատեց Աշխատանքի Հանձնաժողով, վորի ներկայացուցիչ նշանակվեց Լուի Բլանը, իսկ ոգնական՝ բանվոր Ալբերը. այդ հանձնաժողովը Լյուկսեմբուրգյան հանձնաժողով անունն ստացավ, վորովհետև իր նիստերը գումարում եր Լյուկսեմբուրգյան պալատում։ Այդ հանձնաժողովի նպատակը՝ նրա նախագահ Լուի Բլանի ասելով՝ պետք է կայանար «բանվորների վիճակի բարվոքման վերաբերյալ բոլոր հարցերի բարեխղճորեն ուսումնասիրության և որենքների զանազան նախագծեր կազմելու մեջ, վորպիսի որենքները ժամանակավոր կառավարության հավանությունից հետո պետք է ներկայացվեյին Հիմնադիր Ժողովին թույլտվության համար»։

Միևնույն ժամանակ Պարիզում և նրա շրջակայքում կառավարությունը պետական հաշվով բացավ ազգային արհեստանոցներ, վորպեսզի գործ տա բոլոր անգործներին, վորոնց թիվը որեցոր ավելանում եր։ Հիմնելով այդ արհեստանոցները՝ ժամանակավոր կառավարությունը և մանավանդ նրա ավելի աջ անդամները նպատակ ունեյին պրոլետարիատին փորձով ցույց տալու Լուի Բլանի «աշխատանքի իրավունքի», այսինքն աշխատանքի կարիք ունեցող ամեն մի բանվորին գործ տալու պետության պարտականության մասին ուսմունքի ամբողջ անգործնականությունը և այդպիսով մասսաների աչքում քցելու լուիբլանյան սոցիալիզմը. բացի այդ՝ կառավարությունն այդպիսով մտածում եր իր կողմը գրավել և հպատակության մեջ պահել բանվորական մեծ բանակը, «պրոլետարական բանակը», ինչպես Լամարտինն եր ասում, վորին կառավարությունը կարողանար իր ուզած ձևով գործադրել։ Անգործներն ուրախությամբ գնացին ազգային արհեստանոցները, ուր հունիս ամսի սկզբին հավաքվեց մինչև 150.000 մարդ. նրանք ստանում եյին յերկվական ֆրանկ (75 կոպ.) բանվորական որը և մեկական ֆրանկ վոչ-բանվորական որը։ Կառավարությունը վոչ մի աշխատանք չուներ նրանց տալու, իսկի չեր էլ ցանկանում լուրջ ու ոգ-

տակար գործ տալ, այլ նրանց ստիպում եր բահով տալ, առուներ փորել յեվայլն։

Ազգային արհեստանոցները պահելու համար խոշոր միջոցներ եյին պահանջվում, վորի համար հարկ յեղավ տուրքերն ավելացնել համարյա մեկուկես անգամ։ Գյուղացիները լսելով վոր տուրքերի ավելացումն առաջացել է ինչ-վոր սոցիալիստական մասխարայության շնորհիվ, անվստահությամբ ու թշնամությամբ լցվեցին դեպի հասարակապետությունը և նրանում թաքնված սոցիալիզմը։

Դա չեր կարող չանդրադառնալ Հիմնադիր ժողովի ընտրությունների վրա, վորի մեջ մտան բազմաթիվ մոնարխիստներ (միապետականներ) ու տերտերներ, վորոնք ընտրվեցին գյուղական շրջաններում. սոցիալիստների միայն մի փոքր խմբակ անցավ։ Պարիզում գումարվելով Հիմնադիր ժողովը հայտարարեց հասարակապետություն և ժամանակավոր կառավարության տեղ ընտրեց հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով, վորի մեջ վոչ մի սոցիալիստ չընկավ։ Նրանում ամենաձախ տեղը գրավում եր դեմոկրատ Լեդրյու-Ռոլլենը։

Հիմնադիր ժողովն իսկույն յեվ յեթ թշնամական դիրք բռնեց դեպի պարիզյան բանվորները, վորոնց վրա թափվեցին մեղադրանքներ, վոր նրանք անարխիստներ են, ծույլ են և ամեն տեսակ հանցանքների տեր. Հիմնադիր ժողովը վորոշեց վերջ տալ ժամանակավոր կառավարության «անհեթեթ մասխարայությանը»—ազգային արհեստանոցներին—և զանազան պատրվակներով սկսեց Պարիզից արտաքսել անգործներին, փակել արհեստանոցների բաժանմունքները, կալանավորել դժգոհներին ու ագիտատորներին. վերջապես հունիսի 20-ի դեկրետով հանրային աշխատանքների մինիստրը պահանջեց, վոր 17-ից մինչեվ 25 տարեկան բոլոր անգործները զինվորական ծառայության մտնեն, իսկ չցանկանալու դեպքում նրանք դուրս եյին վռնդվում արհեստանոցներից։

Նոր այդ ժամանակ բանվորների համբերության բաժակը լցվեց, և նրանք ապստամբություն բարձրացրին Հիմնադիր ժողովի և նրա ռեակցիոն կառավարության դեմ (այդ ապստամբությունը պատմության մեջ հայտնի յե հունիսյան ապստամբություն անունով)։ Հունիսի 23-ին Պարիզի զանազան տեղեր բանվորական թաղերում մեկը մյուսի հետևից սկսեցին բարրիկադներ (ուղեփակ պատվարներ) շինվել։ Կառավարությունն սպասողական դիրք բռնեց,

վորովհետեվ զինվորական մինիստր գեներալ Կավենյակի նախօրոք մշակած ծրագրի համաձայն պետք եր խուսափել բարրիկադային մանր ընդհարումներից և ապստամբների դեմ գործել խոշոր զորամասերով։ Բացի կանոնավոր զորքերից և ազգային գվարդիայից՝ կառավարության կողմն եյին նայեվ բուրժուազիայի հարուստ մասերից բազմաթիվ կամավորներ։ Այդպիսով հունիսյան կռիվը բառի բուն իմաստով կարելի եր անվանել բուրժուազիայի և պրոլետարիատի ճակատամարտ։ Կռիվը չորս օր տեվեց. բանվորները զործողության վոչ մի վորոշ ծրագիր և վոչ մի ընդհանուր առաջնորդ չունեյին։ Հունիսի 25-ին լույս տեսավ Կավենյակի և Հիմնադիր ժողովի պրոկլամացիան (հանդիսավոր ազդարարությունը), վոր ապստամբներին համոզում եր վայր դնել զենքը և ներում եր խոստանում նրանց։ Այդ պրոկլամացիան Սեն-Անտուանի արվարձանի դեռ կանգուն բանվորներին դրդեց 26-ին ցած դնել զենքը։

Ջնայած իր տված խոսքին՝ կառավարությունը դաժանորեն վարվեց ապստամբվածների հետ (հունիսյան կոտորածը)։ Մինչեվ 2—3 հազար հոգի գնդակահարվեց, ապստամբության մասնակից 12—14 հազար հոգի առանց դատի աքսորվեց Ֆրանսիական գաղութները, առաջնորդներն ու ավելի ականավոր գործիչները մահվան պատժի յենթարկվեցին։ Լուի Բլանը հարկադրվեց փախչել արտասահման. սոցիալիստական կուսակցությունը համարյա վոչընչացվեց Ֆրանսիայում։ Բանվորական օրենսդրության և քաղաքական ազատության ասպարեզում հեղափոխության նվաճումները խոշոր չափով կորսվեցին։ Այսպես օրինակ՝1848 թ. մարտի 2-ի դեկրետը բանվորական օրը սահմանափակել եր 10 ժամով, իսկ 1848 թ. սեպտեմբերի 9-ի օրենքով բանվորական օրը դարձրվեց 12 ժամ։ 1848 թ. հունիսի 22-ի օրենքով ադմինիստրացիան (պետական վարչական բաժինը) իրավունք ստացավ փակելու այն բոլոր ժողովներն ու ընկերությունները, վորոնք սպառնում են հանրային ապահովությանը։

Բանվորներին պատժելուց հետո Հիմնադիր ժողովը ձեռնարկեց սահմանադրություն մշակելու և ապա պրեզիդենտ (նախագահ) ընտրելու ընդհանուր ընտրական իրավունքի հիմունքով։ Թեկնածուները յերեք հոգի եյին—բուրժուազիայի՝ «հունիսյան մսագործ» Կավենյակը, դեմոկրատներից՝ Լեդրյու-Ռոլենը, յերրորդն եր մինչեվ այդ ժամանակ համարյա անհայտ Լուի-Նապոլեոնը, նշանավոր

Նապոլեոն I-ի յեղբոր վորդին։ Սակայն և այնպես՝ այդ մինչև այդ ժամանակ ամենքին անհայտ թեկնածուն ընտրվեց ձայների ճնշող մեծամասնությամբ։ Նրան ձայն տվին հասարակական զանազան դասակարգեր։ Մոնարխիստների և տերտերների ազդեցության տակ գտնվող գյուղացիները նրան ձայն տվին այն պատճառով, վոր նրան ընդունակ եյին համարում վերջ տալու «հարուստների հասարակապետությանը»․ բացի այդ՝ նրանք լսել եյին նրա հորեղբայր Նապոլեոն I-ի անունը, վորը մի ժամանակ փառավորել եր Ֆրանսիան իր ռազմական քաջագործություններով։ Պրոլետարիատի մի մասը նրան ձայն տվավ, վորովհետև նա իրանց ատելի Կավենյակի հակառակորդն եր․ մոնարխիստները հույս ունեյին նրա օգնությամբ վերականգնելու միապետությունը։

Պրեզիդենտ ընտրվելով Նապոլեոնը մտադրվեց պետական հեղաշրջում առաջ բերել, վորպեսզի կայսր դառնա, և սկսեց քիչ-քիչ պատրաստվել այդ բանի համար։ Հենվելով հոգևորականության ու բուրժուազիայի մի մասի համակրության և գյուղացիների անտարբերության վրա՝ նա այդ հեղաշրջումն առաջ բերավ 1851 թվականի դեկտեմբերի 2-ին՝ նոր սահմանադրություն հրատարակելով, վորով նա պրեզիդենտ ընտրվեց տասը տարով, իսկ մի տարուց հետո իրան կայսր հրատարակեց Նապոլեոն III անունով։

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ (ԱՐՏԵԼՆԵՐ)

«Ֆրանսիական վոգու իսկական արտահայտությունը — ասում է Ժորժ Վեյլը («Սոցիալական շարժման պատմությունը Ֆրանսիայում»)—կազմում է արտադրողական ասոցիացիան (արտելը)»։

Հիրավի, արտադրողական ասոցիացիայի գաղափարը ֆրանսիական բանվորական շարժման մեջ աչքի ընկնող տեղ է բռնում, բայց հենց միայն գաղափարը և վոչ թե նրա գործնական կիրառումը։

Արտադրողական ասոցիացիայի գաղափարը կարմիր թելի պես անցնում է Ֆուրյեյի, Լուի Բլանի, Պրուդոնի սիստեմների միջով, նա վոգևորում է 48 թվականի գործիչներին, նա ջերմաջերմ հանձնարարվում է Ինտերնացիոնալի «Ներածական կոչի» և նրա մը-

նեվյան համաժողովի *) բանաձևի մեջ, նա վերջապես գործնական ոժանդակություն է ստանում պետությունից դրամական նպաստներով և բարեգործներից նվիրատվություններով։ Այդ գաղափարը փորձում են իրականացնել բանվորների շատ սերունդներ՝ ժամանակ առ ժամանակ վերադառնալով արտադրողական ասոցիացիաներին վորպես կապիտալիզմի ճնշման դեմ մի միջոցի։ Բայց այդ շարժման գործնական հետևանքները չնչին են, և ներկայումս արտադրողական ասոցիացիայի, վորպես տիրող կարգերի թշվառություններից ազատվելու արմատական միջոցի, գաղափարը Ֆրանսիայում, վորպես նայև ամենուրեք, բանվորական կուսակցությունների ծրագրերից դուրս է քցված։

Ֆրանսիայում արտադրողական ասոցիացիաներ հիմնելու փորձերն սկիզբ են առնում Սեն-Սիմոնի և Ֆուրյեի աշակերտ Բյուշեյից։ Բյուշեն իրան համարում եր սենսիմոնական, բայց իրոք նա ավելի մոտ է Ֆուրյեյին։ Վերջինիս նման և Սեն-Սիմոնի (իսկ հետո Լուի Բլանի, այլև Գերմանիայում Լասսալի) հակառակ՝ Բյուշեն կողմնակից չեր պետության ոգնությամբ արտադրողական ասոցիացիաներ հիմնելուն, նա ամբողջ հույսը դնում եր մասնավոր ձեռներեցության վրա (Շուլ՛ցե-Դելիչի նման)։

Բյուշեն ջերմ կերպով հանձնարարում է միյեվնույն արհեստի տեր բանվորներին կազմակերպել արտելային ձեռնարկություններ՝ ընդհանուր հաշվով մթերքներ արտադրելու համար. այդպիսի ձեռնարկություններում կապիտալիստ-տեր չկա, այլ յուրաքանչյուր մասնակից հանդիսանում է միաժամանակ և՛ տեր, և՛ բանվոր։ Յուրաքանչյուրն ստանում է տարվա ընթացքում սովորական աշխատավարձ. իսկ ձեռնարկության ամբողջ զուտ արդյունքը, վոր մնում է բոլոր ծախսերը (վորոնց մեջ է մտնում նայև աշխատավարձը) ծածկելուց հետո, հետևյալ ձևով է բաժանվում. մի հինգերորդը գործադրվում է ասոցիացիայի «անբաժանելի» դրամագլուխ կազմելու վրա, մնացածը բաժանվում է մասամբ ասոցիա-

*) Ինտերնացիոնալի ներածական կոչի մեջ արտադրողական ասոցիացիայի մասին ասվում է. այդ սոցիալական եքսպերիմենտի (փորձի) բարձր արժեքը չի կարող չափազանցված համարվել։ Ժընեվյան համաժողովի բանաձևը բանվորներին խորհուրդ է տալիս ավելի մեծ ուշադրություն դարձնել կոոպերատիվ արտադրության, քան կոոպերատիվ խանութների վրա։

ցիայի անդամների մեջ նրանց աշխատանքի համեմատ, մասամբ էլ գործադրվում է փոխօգնության նպատակով։

Բյուշեն այդ բանը պատկերացնում է այսպես, թե սկզբում իրարից անկախ ասոցիացիաներ կկազմվեն զանազան արտադրություններում, հետզհետե նրանց թիվը կաճի. նրանք տնտեսական տիրապետող ձեվ կդառնան և դուրս կմղեն կապիտալիստական ձեռնարկությունները։ Իսկ այն հարցի վերաբերմամբ, թե վորտեղից դրամագլուխ ճարեն գործն սկսելու համար, Բյուշեն հանձնարարում եր դիմել մասնավոր մարդկանց, բայց դեմ էլ չեր պետությունից սկզբնական օգնություն ստանալուն, չնայած իր դեպի պետությունն ունեցած ատելությանը։

Բյուշեյի ծրագրով առաջ-յեկած առաջին ասոցիացիաներն եյին յերկու փոքրիկ ասոցիացիաներ—մեկը կահագործական, մյուսը ակնագործական։ Բանը շատ արագ թափով գնաց, յերբ Ազգային (Հիմնադիր) ժողովը 1848 թվականին բանվորական մասսաների ճնշումին տեղի տալով՝ արտադրողական ասոցիացիաներ կազմակերպելու համար բաց թողեց յերեք միլլիոն ֆրանկ (մոտ 12.000.000 *) ռուբլի)։ Պետական նպաստ ստանալու ախորժակով 1848—1851 թ.թ. շրջանում 300—400 ասոցիացիաներ կազմվեցին. միքանի տարուց հետո նրանցից հազիվ մի 2—3 տասնյակ մնաց, իսկ 20-երորդ դարին հասան ընդամենը յերեքը։ Արտելային շարժման յերկրորդ բռնկումը տեղի ունեցավ 80-ական թվականներին հարուստ բարեգործ Ռամպալի նվիրած 1.400.000 ֆրանկի շնորհիվ. բայց այդ նվերն էլ չտվավ ցանկալի հետեվանքներ արտադրողական ասոցիացիաների ամրապնդման վերաբերմամբ։

Փաստերը ցույց են տալիս, վոր արտադրողական ասոցիացիաները բանը վատ գնալու դեպքում քայքայվում են, իսկ ծաղկած ժամանակ դառնում են սովորական կապիտալիստական ձեռնարկություններ՝ սովորաբար բաժնետիրական ընկերությունների ձեվով **)։ «1900 թվին Ֆրանսիայում մոտ 250 արտադրողական

*) Հավանորեն տպագրական սխալ է, վոր պիտի լինի 1.200.000 ռ.։
Ա. Ա.

**) Արտադրողական ասոցիացիաների անկենսունակության պատճառներն արդյունաբերության մեջ՝ հիմնավորապես մեկնաբանված են Ա. Նիկոլայեվի «Կոոպերատիվ շարժման տեսականն ու գործնականը» հեղինակության մեջ, 28—78 եջերում։

ասոցիացիա կար, 1910 թվին 510. բայց դրանցից—ինչպես ասում է Ա. Նիկոլայեվը—շատերը կեղծ եյին (այսինքն նույնպես կապիտալիստական ձեռնարկություններ եյին), իսկ բոլորն ընդհանրապես այնքան թույլ եյին կիրառում աշխատանքային և դեմոկրատական սկզբունքը, վոր 20-երորդ դարի սկզբի 250 ասոցիացիայում մոտ 5.000 վարձու բանվոր կար։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 2-ՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

Հեղաշրջումից հետո Նապոլեոն III-ը կասկածանքով վերաբերվելով բանվորական միություններին, վորոնց մեջ նրան թվում եր թե սոցիալիզմի վոգի կա, սկսեց նրանց հալածել։ Շատ միություններ փակվեցին։ Միությունների և ժողովների ազատությունը 1852 թ. մարտի 25-ի որենքով վերջնականապես վոչնչացվեց։

Բայց վորքան նոր կայսրն ավելի յեր ամրանում գահի վրա, այնքան նրա կառավարության ճնշումը թուլանում եր։ Իրան «դեմոկրատական» կայսր, ընդհանուր ձայնատվությամբ գահակալելու ընտրված համարելով Լուի Նապոլեոնն իր գործակալների միջոցով աշխատում է բանվորներին ներշնչել, վոր նրանք իրանց դրության բարելավման կարող են հասնել կայսերական իշխանության հետ միաբանվելով։ Ուստի նրանց թույլատրվում է կոոպերատիվներ և փոխադարձ վարկի ընկերություններ հիմնել։ Սակայն բանվորները գերադասում են վերադառնալ իրանց միության նախկին ձևերին, այն է՝ դիմադրության ընկերակցություններ կազմելուն, վորոնց նպատակն եր անմիջական կռիվ մղելը կապիտալի դեմ։ Կառավարությունը հալածում է այդ ընկերակցությունները և 1853 թվից մինչև 1862 թիվը պատասխանատվության է յենթարկում 749 միություններում մասնակցող 3.909 բանվորի։

Տեխնիկայի առաջադիմության հետ ծանոթանալու համար արդյունաբերական ցուցահանդեսները ներկայացուցիչ-բանվոր ուղարկելու սովորությունն սկսվել է 1849 թվականին։ Ահա թե ինչու, յերբ 1862 թվականին Լոնդոնում համաշխարհային ցուցահանդես կազմակերպվեց, հանրապետական կուսակցության դեմ պայքարելու համար բանվորների մեջ ժողովրդականություն փնտրող Նապոլեոնը բանվորներին առաջարկեց պատգամավորներ ընտրել ցուցահանդես ուղարկելու համար՝ գնալ-գալու ծախսերը պե-

ության հաշվին կատարելով։ Բանվորներն ընտրեցին 200 պատգամավոր, վորոնք ուղարկվեցին Լոնդոն։ Այնտեղ նրանք խանդավառությամբ ընդունվեցին անգլիացի բանվորների կողմից վորոնք նրանց ծանոթացրին անգլիական բանվորական այն ժամանակվա շարժմանը, վոր կենտրոնացած եր տրեյդ-յունիոններում։

Հայրենիք վերադառնալով պատգամավորները բանվորական միությունների մեջ զեկուցումներ տվին իրանց գնալ-գալու մասին։ Շատ զեկույցներում կարմիր թելի պես անցնում ե այն միտքը, թե անգլիացի բանվորների բարձր աշխատավարձն արդյունք ե տերերի դեմ արհեստակցական միությունների միջոցով բանվորների մղած պայքարի, ուստի ֆրանսիացի բանվորներն ել պետք ե իրանց համար ձեռք բերեն միությունների և ժողովների ազատություն։

Սակայն այնպիսի պատգամավորներ ել կային (վոր այնքան ել քիչ չեյին), վորոնք բանվորական դասակարգի ազատության գլխավոր միջոցն եյին համարում արտադրողական ընկերությունները և իրանց հույսերը դնում եյին պետության ոգնության վրա։

Վերջապես ուրիշներն ել անհրաժեշտ եյին համարում բանվոր դասակարգի ինքնուրույն պայքար։ 1863 թվականին պալատի ընտրությունների ժամանակ այդ տեսակետով ղեկավարվող բանվորները ձայն տվին հանրապետականներին. բայց յեղան բանվորների այնպիսի պարագլուխներ յեվս, վորոնք բանվորական սեփական թեկնածություններ դնելու կողմն եյին։ Լրացուցիչ ընտրությունների ժամանակ զանազան արհեստների պատկանող վաթսուն հոգուց բաղկացած բանվորների մի խմբակ բաց թողեց այդ վոգով մի կոչ (վաթսունի մանիֆեստը)։ Ի պատասխան դրան մի ուրիշ թերթում տպագրվեց «ութսունի մանիֆեստը», վոր դեմ եր դուրս գալիս բանվորական ինքնուրույն թեկնածություններին։ Այդ յերկու մանիֆեստն ել բանվորական խմբակներում թունդ քննադատությունների առարկա դարձան. վերջիվերջո բանվորական թեկնածությունների հակառակորդները հաղթանակեցին, մի բան, վոր ցույց եր տալիս այն ժամանակվա ֆրանսիական բանվորների մեծամասնության դասակարգային գիտակցության տակավին անբավարար լինելը։ Այդ վեճերի ազդեցության տակ Պրուդոնը լույս ընծայեց իր վերջին հեղինակությունը «Բանվոր դասակարգերի քաղաքական իրավունակության մասին», վորի մեջ նա կոչ եր անում ֆրանսիացի պրոլետարիատին գիտակցել ինքն իրան վորպես դասակարգ և

մյուս դասակարգերի հետ իր մղած պայքարում գործել ինքնուրույնաբար՝ չդիմելով ուրիշ դասակարգերի հետ միություններ կազմելուն և կառավարության օգնությանը։

Այդ գաղափարների ազդեցության տակ բանվորների մեջ շարժում է սկսվում արհեստակցական միություններ (սինդիկատներ) կազմելու օգտին և պայքար—միությունների լիակատար ազատության համար։ Բանվորների կողմնակցությունը թանկը գնահատելով՝ կառավարությունը հրատարակում է 1864 թվականի մայիսի 25-ի օրենքը, որ ճանաչում էր սինդիկատներ կազմելը, բայց բանտ և տուգանք էր սպառնում նրանց, ովքեր բռնության, խաբեբայության կամ սպառնալիքների միջոցով «կփորձեն կանգնեցնել աշխատանքի ազատ ընթացքն աշխատավարձը բարձրացնելու կամ իջեցնելու նպատակով»։ Դա բանվորների առաջին հաղթությունն էր միությունների ազատության համար վարած պայքարի գործում, և այդ մոմենտից նրանք իրենց ճիգերն ուղղում են դեպի ժողովների ու միությունների լիակատար ազատություն ձեռք բերելը։

1867 թվի Փարիզյան համաշխարհային ցուցահանդեսը Նապոլեոն III-ի կառավարությանն առիթ տվավ հրավիրելու բանվորների ներկայացուցիչներին իրենց դրությունը քննելու համար. Լուի Նապոլեոնը դեռ հույսը չէր կտրել բանվորական շարժումն իր ազդեցությանը յենթարկելուց։ Փարիզյան հարյուր տասնուչորս պրոֆեսիաներն ընտրեցին 315 պատգամավոր, որոնք կազմեցին «Աշխատանքի Հանձնաժողով»։ Այդ հանձնաժողովը թեյև գտնվում էր կառավարական ազդեցության տակ, ուրիշ բարենորոգումների հետ միասին անհրաժեշտ համարեց միությունների և ժողովների լիակատար ազատություն հաստատելը, որի համար զեկուցում ներկայացրեց մինիստրին։ Լուի Նապոլեոնի կառավարությունն այնքան համարձակություն չուներ, որ բանվորների պահանջներին դեմ գնար, ուստի և նա տեղի տվավ 1868 թ. մարտի 30-ին հայտարարելով, որ «ադմինիստրացիան չի հալածիլ սինդիկալ՝ պալատներ (արհեստակցական միություններ) կազմակերպելը, քանի նրանք առևտրի ազատության դեմ դուրս գալու փորձ չեն անիլ կամ քաղաքական նպատակների չեն հետապնդիլ». սինդիկալ՝ պալատները պետք է ներկայացնեն ադմինիստրացիային իրենց կանոնագրքերն իրենց անդամների ազգանունների ու հասցեների հետ միասին։ 1868 թվի հունիսին հրատարակվեց ժողովների մասին օրենքը, որով

հրապարակական ժողովները կարող էին բացվել առանց ադմինիստրացիայի նախնական թույլտվության, այլ յոթն հոգու ձեռքով ստորագրած խնդրքով, բայց արգելվում էր այդ ժողովներում քաղաքական և կրոնական բնույթ կրող հարցերով զբաղվելը։

Նոր օրենքի շնորհիվ արհեստակցական միությունների արագ զարգացում է սկսվում։ Շարժումն այն աստիճան է աճում, որ 1869 թվի մարտին ծագում է պարիզյան բոլոր կազմակերպված բանվորներին միացնող Ընդհանուր Դաշնակցային Պալատ հիմնելու գաղափարը։

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՅԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Համաշխարհային կապիտալի դեմ պայքարելու համար բոլոր յերկրների բանվորներին միանալու անհրաժեշտության միտքն առաջին անգամ հայտնել են Մարքսն ու Էնգելսը 1847 թվին «Կոմմունիստական մանիֆեստում», որը վերջանում է հրամայողական և հզոր կոչով. «Բոլոր յերկրների պրոլետարներ, միացեք»։

Բանվորների համաշխարհային միավորման սկիզբը դրել են ֆրանսիացի և անգլիացի բանվորները 1864 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում։ Նոր ընկերությունը կոչվել էր բանվորների Միջազգային Ընկերություն կամ Ինտերնացիոնալ և նրա նպատակն էր, ինչպես կանոնագիրքն էր ասում, զատ-զատ յերկրների պրոլետարների ցրված ջանքերը հավաքել դարձնել մի շարժում, որը պետք է ուղղված լիներ բոլոր աշխատավորների տնտեսական ազատագրության մեծ նպատակին։

Այդ ընկերությանը շուտով միացան բելգիացի, գերմանացի, զվեցարացի բանվորները, և Ինտերնացիոնալի բաժանմունքներ կամ սեկցիաներ առաջ յեկան Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրներում։ Ինտերնացիոնալի գլուխ էր կանգնած զանազան յերկրների բանվորների ներկայացուցիչներից կազմված ընդհանուր խորհուրդը։ Խորհրդի բնակավայրն էր Լոնդոնը. խորհուրդը ղեկավարում էր Ինտերնացիոնալի բոլոր գործողությունները ու առանձին յերկրների բանվորների հանդես գալը (выступления)՝ դրամական օգնություն անելով, Ինտերնացիոնալի անդամներին հրավիրելով ամենամյա համաժողովների, ուր քննության էին առնվում բանվորական շարժման ամենակարևոր հարցերը։

Որովհետև Եվրոպայի զանազան յերկրները գտնվում եյին տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր աստիճաններում, ուստի համաժողովներում շուտով յերևան յեկան զանազան ուղղություններ, վորոնց ներկայացուցիչներ եյին հանդիսանում զանազան յերկրների բանվորներ։

Ֆրանսիական բանվորներն ու նրանց համախոհները գլխավորապես Պրուդոնի տեսակետների վրա եյին կանգնած. նրանց անվանում եյին մուտուալիստներ, վորովհետև նրանք կողմնակից եյին փոխադարձ վարկի (փոխանակության բանկի) կազմակերպությանը և արտադրողական ընկերություններ հիմնելուն. նրանք քաղաքական պայքարի հակառակորդներ եյին՝ ասելով, թե բանվորական հարցը պետք է լուծվի և կարող է լուծվել միայն տնտեսական հողի վրա։ Նրանք կողմնակից եյին նայև այն բանին, վոր Ինտերնացիոնալի անդամ ընդունվեն միայն բանվորները։

Նրանց գլխավոր հակառակորդներն եյին մարքսիստները կամ ցենտրալիստները (կենտրոնացման կողմնակիցները), վորոց թվին եյին պատկանում գերմանական և մասամբ անգլիական բանվորները։ Դասակարգային պայքարի տեսակետի վրա կանգնած լինելով՝ մարքսիստներն ընդունում եյին, վոր տնտեսական և քաղաքական հարցերը սերտ կապված են իրար հետ և վոր բանվոր դասակարգի դրության քիչ թե շատ նկատելի բարվոքումն անկարելի յե առանց քաղաքական իրավունքներ նվաճելու։ Ուստի մարքսիստներն անհրաժեշտ եյին համարում միաժամանակ վարել թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական պայքար. իսկ վերջինի համար պետք եր կազմակերպել բոլոր յերկրներում ինքնուրույն քաղաքական բանվորական կուսակցություններ։ Մարքսիստներին ցենտրալիստներ ել եյին անվանում այն պատճառով, վոր նրանք անհրաժեշտ եյին համարում, վոր Ինտերնացիոնալը ղեկավարվի մի կենտրոնի ձեռքով՝ առանձին սեկցիաների ինքնուրույնությունը սահմանափակելով։

Բացի պրուդոնիստներից (մուտուալիստներից) և մարքսիստներից՝ կային կոլեկտիվիստներ (առավելապես բելգիացի բանվորները), վորոնք իրանց հայացքներով հարում եյին մարքսիստներին, բայց քաղաքական պայքարից քաշվում եյին մի կողմ. վերջապես բակունիստներ կամ անարխիստներ (գլխավորապես իտալացիներն ու սպանացիները) տնտեսական ու քաղաքական դանդաղ պայքարի հակառակորդներ եյին. նրանք ձգտում եյին ընդ-

վգումների և ապստամբությունների միջոցով ժողովրդական մասսաների մեջ վառել զայրույթի ոգին և առաջացնել համաշխարհային ապստամբություն, որը կհասցնի սոցիալական հեղափոխության։

Ինտերնացիոնալի և նրա կողմնակիցների ազդեցության տակ Ֆրանսիայում կայսրության վերջին տարիները կազմակերպվում են բազմաթիվ բանվորական միություններ և ծավալվում է խոշոր ստաչկային *) շարժում։

Ավելի նշանավոր ստաչկաները հետևյալներն են։ Բրոնզագործներինը (անագապղնձագործներինը), որ 1864 թվից կազմել էյին փոխօգնության ընկերություն. ստաչկան պահանջում էր աշխատավարձի հավելում։ Ինտերնացիոնալի դրամական և բարոյական օգնության շնորհիվ աջողվեց սոխելու տերերին, որ զիջեն։ Հենց այդպես էլ Ինտերնացիոնալի աջակցությամբ 1868 թ. Պարիզում հաղթություն տարավ մարմարահղկիչների ստաչկան։ 1867 թ. գործադուլ արին Րուբի ջուլհակա-մանածային արդյունաբերության 25 հազար բանվորներ։ Տերերի համառության շնորհիվ ստաչկան փոխվեց խռովության։ Միքանի ֆաբրիկաներ կործանվեցին ու այրվեցին, մեքենաները փշացրվեցին ու կոտրվեցին։ Ստաչկան զըսպվեց զինված ուժով։ 1869 թ. գործադուլ սկսվեց Լուար և Ռոնի գետերի ավազանի ածխահանքերում։ Վոստիկանության և զորքերի միջամտությունը հասցրեց արյունահեղ ընդհարումների, ուր բազմաթիվ սպանվածներ և վիրավորներ տվին բանվորները։ Կրեզոյի ստաչկայի հետևանքը բազմաթիվ կալանավորումներն ու խիստ դատավճիռներն էյին։

Այսպես էր Լուի Նապոլեոնի կառավարության գործելակերպը բանվորների վերաբերմամբ 1870 թվականի հեղափոխության նախօրեկին։ Հասկանալի յէ, որ մի այդպիսի գործելակերպ չէր կարող Ֆրանսիայի բանվորներին լավ տրամադրել դեպի կայսրն ու կայսրությունը, թեյեվ բանվորների բարեկամությունը վաստակելու համար, ինչպես վերն ասացինք, կայսրը շատ էր աշխատում։

1870 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ։ ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Մանր-բուժուազիայի և բանվորների մեջ ընդդիմադրական և հեղափոխական վրդուաճումը Լուի Նապոլեոնին սոխեց 1870 թ. օգոստոսին թեթևամտաբար պատերազմ

*) Стачка—իրար խոսք տալը՝ միացյալ ուժերով մի գործ գլուխ բերելու համար, գործադուլ։ Ա. Ա.

սկսել Գերմանիայի դեմ. Նա հույս ուներ, վոր հաղթությունը կըվերադարձնի նրան ժողովրդականությունը և կամրացնի նրա գահը։

Բայց հաղթությունների փոխարեն իրար հաջորդեց չլսված պարտությունների մի շարք. պատերազմն սկսելուց ընդամենը միյերկու ամիս անց՝ ֆրանսիական բանակի գլխավոր մասը կայսրին իր գլուխ ունենալով՝ ստիպված յեղավ գերի ընկնել Սեդանում։

Դրա լուրը յերբ Պարիզ հասավ, ժողովուրդն ապստամբվեց, կայսրությունն ընկած հայտարարեց և ազդարարեց հանրապետություն։ Ընտրվեց ժամանակավոր կառավարություն — «Ազգային Պաշտպանության Կառավարություն»։

Այն ինչ՝ գերմանացիները մոտեցան Պարիզին և ամեն կողմից շրջապատեցին։ Պարիզի պրոլետարիատը վճռեց պաշտպանել մայրաքաղաքը. ժամանակավոր կառավարությունը Պարիզի պաշտպանությունն անհնարին եր համարում, բայց հաշվի առնելով ժողովրդի կամքը՝ վճռեց ձեռնարկել քաղաքի հերոսական պաշտպանության կամ, ինչպես կառավարությունից դրա համար նշանակված գեներալ Տրոշյուն եր ասում, «հերոսական տխմարության»։

Պարիզը պաշտպանելու և պատերազմը շարունակելու հարցը պարիզյան պրոլետարիատի և ժամանակավոր կառավարության միջև թյուրիմացությունների գլխավոր առիթը դարձավ։ Թեպետ և ազգային պաշտպանության կառավարությունը խոստանում եր պատերազմը վարել «մինչև վերջին հաղթություն», սակայն պարիզյան պրոլետարիատը, վոր նույնպես վորոշել եր պաշտպանել հայրենիքի պատիվը, բուրժուական մինիստրների կողմից մի ինչ-վոր նենգություն եր սպասում։ Յեվ իրոք 1871 թվի հունվարի 31-ին ժամանակավոր կառավարությունը համառ ջանքերից հետո Պարիզը հանձնեց գերմանացիներին։ Պարիզյան պրոլետարիատը և ժողովրդական լայն մասսաները տեսան, վոր այդ բանը ժողովրդական գործի դավաճանություն ե, և սրտներում թաքցրին կատաղությունը դեպի բուրժուազիան։

Այնինչ՝ Հիմնադիր ժողով գումարվեց, վորի մեջ մտան շատ ռեակցիոներներ և մոնարխիստներ, վորոնց ընտրել եյին գյուղացիները։ Վերջիններս պատերազմից սաստիկ հոգնած՝ ձայն տվին հանրապետականների ու սոցիալիստների հակառակ, վորոնց համարում եյին նրանք պատերազմի կողմնակիցներ։

Հիմնադիր ժողովի կառավարությունը, վորի գլուխ եր ընտրվել

Տյերը, ավելի ռեակցիոն դուրս յեկավ, քան ժամանակավոր կառավարությունը։ Նա իրան սկսեց պահել խիստ գրգռիչ կերպով մանր բուրժուազիայի և պրոլետարիատի վերաբերմամբ։ Պարիզի պաշարման ժամանակ դադարեցրվել եր բնակարանների և բոլոր շենքերի վարձադրամի, այլև առևտրամուրհակների վճարումը. գործերը դեռ կարգի չբերելու պատճառով այդ հետաձգումը յերկարացնելու խնդրքին Հիմնադիր ժողովը մերժումով պատասխանեց, և չորս որվա ընթացքում բողոքարկվեցին 150.000 մուրհակներ։ Դա մանր բուրժուազիային սաստիկ գրգռեց Հիմնադիր ժողովի կառավարության դեմ։ Ապա պարիզյան բանվորների մեծամասնությունը գործ չճարելով՝ ապրում եր բացառապես այն 1½ ֆրանկով, վոր ստանում եյին այդ բանվորներն իբրև ազգային գվարդիականներ։ Ժողովը վերացրեց այդ ռոճիկը՝ թողնելով միայն չքավորների համար, վորոնք դրա համար պետք ե հատուկ վկայական ներկայացնեյին։ Վերջապես կառավարությունն զգալով, վոր պարիզյան պրոլետարիատը պատրաստ ե այսոր կամ վաղը ապստամբվելու, վաղ առավոտյան (1871 թվի մարտի 18-ին) հետևակ զորք ուղարկեց, վոր գաղտնի դուրս տանի ազգային գվարդիայից այն բոլոր թնդանոթները, վորոնք գնված եյին Պարիզի բնակիչներից հանգանակված դրամներով։ Կառավարության այդ արարքը վերջին կաթիլն եր, վոր լցրեց ժողովրդական ցասմունքի բաժակը։ Ուղարկված զորքի մի մասն անցավ ժողովրդի կողմը։ Զինվորներն ու բանվորները բռնագրավեցին քաղաքային խորհուրդը, և նույն որն ազդարարվեց Կոմմունա։ Ապստամբության առաջին լուրը հասնելուց կառավարությունը փախավ Վերսալ՝։ Պարիզն ամբողջապես ապստամբների ձեռքում մնաց։

Ժամանակավորապես շարժման գլուխ անցավ Կենտրոնական Կոմիտեն, վոր կազմվել եր դեռ ժամանակավոր կառավարության որով ժողովրդի շահերը պաշտպանելու համար։ Նա մանիֆեստ հրատարակեց, վորի մեջ հայտարարեց, թե «բոլոր պարտություններից ու տիրող դասակարգերի դավաճանությունից հետո Պարիզի պրոլետարները հասկացել են, վոր հասել ե վերջապես ժամը, յերբ պետք ե նրանք փրկեն հայրենիքը՝ իրանց ձեռքն առնելով հասարակական գործերի կառավարությունը։ Իրանց հերթին եվ Ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիայի անդամները և պարիզյան բանվորական ընկերությունների ֆեդերալ՝ (միացյալ) պալատի ներկայացուցիչները

միացյալ նիստում պրոկլամացիա կազմեցին, վորի մեջ ազդարարում եյին, թե «կառավարությունն անզոր է կարգը վերականգնելու, ուստի և բանվորները պետք է իրանք համերաշխության հիմունքներով նոր հասարակակարգ հաստատեն»։

Մարտի 26-ին պարիզյան նոր կառավարության—Կոմմունայի Խորհրդի ընտրությունները կայացան, վորի համար ընտրվեց 89 հոգի, վորոնցից 25-ը բանվորներ, իսկ մեծամասնությունը կազմում եյին մանր բուրժուազիայի ներկայացուցիչները—բժիշկներ, փաստաբաններ, ժուռնալիստներ, ծառայողներ։

Ապստամբվածները նպատակադրվեցին վերակազմելու հասարակությունը՝ հիմքում դնելով ազատ ինքնավար համայնքները (կոմմունաները)՝ իրար հետ միացած ֆեդերատիվ սկզբունքներով։ Համայնքներում տնտեսական հարաբերությունների վերակազմությունը պետք է բերեր հասցներ դասակարգային հակասությունների վոչնչանալուն և գույքային հավասարության հաստատելուն։

Յեթե սակայն Պարիզյան Կոմմունային չաջողվեց վորյեվե եյական բան անել, դա բացատրվում է նախ՝ հենց Կոմմունայում յեղած յերկպառակություններով և հայացքների միանմանության բացակայությամբ, և յերկրորդ՝ նրանով, վոր Հիմնադիր ժողովի կառավարությունը զորքն իր կողմն ունենալով՝ շուտով վերցրեց Պարիզը և չարաչար պատժեց ապստամբվածներին։

Կոմմունայի խորհրդի անդամների մեջ կային ֆեդերալիստներ, վորոնք ձգտում եյին ամենից առաջ վոչնչացնել կենտրոնականացած քաղաքական կազմը և Ֆրանսիան համայնքների ֆեդերացիա դարձնել. կային պրուդոնիստներ, վորոնք Պրուդոնի վոգով սոցիալական ռեֆորմներ եյին պահանջում, այսինքն պահանջում եյին իրականացնել փոխանակության բանկը և անդարձ վարկը. կային և բլանկիստներ կամ ժակոբեններ, վորոնք ձգտում եյին ժողովրդի անունից դիկտատուրայի (անսահմանափակ իշխանության), վորպեսզի կործանեն ամբողջ հասարակակարգը և հաստատեն նորը. կային և անարխիստ-կոմմունիստներ, վորոնք ձգտում եյին կատարելապես վոչնչացնել քաղաքական ու սոցիալական տիրող կարգերը և փոխարինել անարխիստական կոմմունիզմով։ Բայց քիչ չեյին և հանրապետական-կոնսերվատորներ, վորոնք ցանկանում եյին միայն հանրապետության հաստատում և սոցիալական տիրող կարգի պահպանում։

Հայացքների այդպիսի տարբերությամբ Կոմմունայի առաջնորդների գործունեությունը չէր կարող առանձնապես արդյունավետ լինել, մանավանդ վոր ստիպված էին ամբողջ ջանքը ուղղել վերսալյան կառավարության դեմ պայքարելուն, վորը դերությունից վերադարձած զորքով ուժեղանալով վճռականապես ձեռնարկեց ճնշելու ապստամբությունը։

Պարիզյան Կոմմունան զուր էր դիմում ամբողջ Ֆրանսիային՝ ոգնություն հայցելով ժողովրդական սրբազան գործում, վորի համար նա մաքառում էր։ Գավառը խուլ մնաց նրա կոչերի առաջ։ Գյուղացիները կոմմունարներին նույնիսկ համարում էին հասարակ խռովարարներ և պետությունը կործանողներ. միջին և մանր բուրժուազիայի մի նշանավոր մասը նրանց համարում էր հանրապետության թշնամի. խոշոր բուրժուազիայի, հոգեվորականության, կալվածատերի թշնամական վերաբերմունքի մասին խոսելու հարկ չկա։

Մայիսի 21-ին վերսալյան զորքերը թափանցեցին Պարիզ և նրա փողոցներում անագորույն կռիվ սկսվեց, այնպես վոր կոմմունարները վճռեցին ավելի շուտ մեռնել, քան անձնատուր լինել։ Փողոցներում կռիվը շարունակվեց մի ամբողջ շաբաթ. սակայն վողջ աշխարհից կտրված, բազմաթիվ զորքերով շրջապատված՝ կոմմունարները պարտվեցին։

Նոր այդ ժամանակ սկսվեց բուրժուական կառավարության դատաստանը, վայրագ սպանությունների մի շարք, վորի նմանը չի յեղել մարդկության նորագույն պատմության մեջ։ Բուրժուազիայի սարքած՝ իր անգթությամբ անորինակ այդ կոտորածին զոհ գնաց 25.000 հոգի, վորոնք սպանվեցին ճակատամարտերի ժամանակ, 3.500 հոգի մեռավ վերքերից ու հիվանդություններից, 13.700 հոգի թիապարտության յենթարկվեց. բացի այդ՝ 70.000 կին, մանուկ ու ծեր զրկվեցին իրանց կերակրողներից։ Այդպես վրեժխնդիր յեղավ ֆրանսիական բուրժուազիան պրոլետարիատից՝ արդարության և յեղբայրության նոր կարգ հաստատելու նրա փորձի համար։

II.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄԸ *)

ա) ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ՏԱՊԱԼՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Կոմմունայի տապալումից հետո Ֆրանսիայում սկսվեց անսանձ ռեակցիա, վորը չեր կարող չանդրադառնալ բանվորական շարժման վրա։ Ինտերնացիոնալի սեկցիաների դեմ հրատարակվեց հատուկ որենք։ Բոլոր ժողովներն ու միությունները խստորեն արգելվում եյին։ Ասենք՝ միությունները համարյա թե չկային և չկային բանվորներ ել, վորոնք հանձն առնեյին վերակազմել նրանց։ Բանվորական դասակարգի լավագույն անդամներն սպանվել եյին կամ աքսորվել։

Այդ անաջողությունից բանվորական շարժումը վախվխելով ու աստիճանաբար միայն սկսեց ուղղվել։ 1872 թվին վերականգնում են իրանց արհեստակցական միությունները մարմարագործները, վիմագրողները, անագապղնձագործները, ակնագործները, իսկ 1863 թվին ծնունդ են առնում մեքենայագործների, կոշկակարների, ջուլհակների միությունները։

Արհեստակցական շարժման աճելուն նպաստեց մանավանդ համաշխարհային ցուցահանդեսներին պատգամավորներ ուղարկելը՝ Վիեննա 1873 թվին և Ֆիլադելֆիա 1876 թվին։ Վորովհետև պատգամավորներին ընտրում եյին արհեստակցական միությունները, ուստի շատ արհեստներ շտապեցին այդպիսի միություններ կազմել։ Ցուցահանդեսներից վերադարձած պատգամավորներն իրանց զեկուցումների մեջ առաջվա պես շարունակում եյին պաշտպանել արտադրական ընկերություններ կազմակերպելու անհրաժեշտությունը, վորոնց մեջ տեսնում եյին բանվոր դասակարգը կապիտալի լծից

---

*) Խմբագրություն. Ա. Աթայանին այլ շտապ գործի թարգմանության հանձնելու պատճառով՝ այս գլխից թարգմանությունը շարունակել է Լ. Դանիելյանը։

ազատագրվելու արմատական միջոցը։ Արհեստակցական միությունների (սինդիկատների) միջոցով կռիվ մղելու մասին քչերն եյին արտահայտվում։ Այնուամենայնիվ արհեստակցական շարժումը շարունակում ե զարգանալ։

1876 թվին Պարիզում գումարվեց արհեստակցական միությունների ու կոոպերացիայի համաժողով, որին ներկա եյին մինչև 360 պատգամավոր-բանվորներ իբրև 92 բանվորական ընկերությունների ներկայացուցիչներ։ Համաժողովի բանաձևերը շատ չափավոր եյին, որով գրգռեցին Լոնդոնում ապրող՝ Կոմմունայի աքսորականների զայրույթը, և վերաբերում եյին գլխավորապես գործարանական օրենսդրության ու կոոպերացիայի խնդիրներին. համաժողովը սոցիալիստական գաղափարները համարում եր «բուրժուական ցնորք»։ 1878 թվին համաժողովը տեղի ունեցավ Լիոնում. Նրա բանաձևերը նույնքան չափավոր եյին, ինչքան պարիզյան համաժողովի բանաձևերը։ Բայց այստեղ առաջին անգամ լսվեցին սոցիալիստների ձայները, որոնք կոչ եյին անում կազմակերպել ինքնուրույն «բանվորական» քաղաքական կուսակցություն։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ֆրանսիան սոցիալիզմի հայրենիքն ե։ Այստեղ սոցիալիստական պրոպագանդան սկսել ե համարյա թե անցյալ դարի 20-ական թվականներից։ Յեթե, չնայելով դրան, սոցիալիստական բանվորական կուսակցությունը կազմակերպվեց 80-ական թվականներին միայն և այն էլ բանվորական շարժման պարագլուխների համառ ջանքերից հետո, դա բացատրվում ե հետևյալ պատճառներով։ Ինչպես վերը մատնանշեցինք, ֆրանսիական արդյունաբերությունը չնայած իր ընդարձակ զարգացմանը, չընդունեց այն խոշոր կապիտալիստական ուղղությունը, ինչպես Անգլիայումն եր, այլ շատ ճյուղերում կրում եր մանրարհեստային բնույթ։

Մանր արհեստավորները, իբրև մանր բուրժուազիայի մի մասը, կամ տրամադիր են նրա հետ միասին քարշ գալու խոշոր բուրժուազիայի պոչից, կամ իբրև ապագա չունեցող մի դասակարգ, հակումն ունեն դեպի անիշխանությունը և ամեն տեսակ քաղաքականության ժխտելը։ Ուստի ֆրանսիական բանվորական շարժումը յերկար ժամանակ գտնվում եր Պրուդոնի գաղափարների ազդեցու-

թյան տակ, որը ժխտում էր քաղաքական կռվի նշանակությունը բանվոր դասակարգը կապիտալի լծից ազատելու համար, և դրա գլխավոր միջոցը տեսնում էր արտադրական ընկերություններ ու լումայափոխ բանկեր կազմակերպելու մեջ։

1877 թ. Պարիզ վերադարձավ բանվորական շարժման ականավոր գործիչներից մեկը՝ Ժյուլ-Գեդը, որ հիմնել էր «Հավասարություն» թերթը, որի շուրջը համախմբվել էին գերմանական սոցիալիստների ազդեցության տակ գտնվող կոլեկտիվիզմի կուսակիցները, որոնք դեռևս 1869 թ. հիմնել էին բավականին ուժեղ քաղաքական բանվորական կուսակցություն։ 1878 թ. Պարիզում սկսեց լույս տեսնել «Պրոլետար» անունով սոցիալիստական լրագիրը, որի շուրջը խմբվել էին առավելապես սոցիալիստ-բանվորները, որոնք մի խոշոր ուղղության չէին պատկանում։ Հրատարակվում էր մի յերրորդ սոցիալիստական լրագիր ել «Պրոլետարիատի հուշիկներ» անունով։

Սոցիալիստների ազդեցությունն ունեցավ այն հետևանքը, որ 1879 թվի Մարսելյան համաժողովին թույլ տվին մասնակցելու բացի բանվորներից նույնպես զանազան սոցիալիստական խմբակների ներկայացուցիչ ինտելլիգենտների, և իբրև հակակշիռ նախկին համաժողովներում ընդունված չափավոր բանաձևերի՝ ընդունեցին զուտ սոցիալիստական բանաձևեր, որոնք հայտարարում էին, թե բանվորական շարժման վերջնական նպատակն է հողի ու արտադրության գործիքների համայնացումը, թե բանվոր դասակարգի լիակատար ազատագրումը հնարավոր է միայն սոցիալիստական հեղափոխության միջոցով, որը կկատարի ինքը պրոլետարիատը. դրա համար բանվոր դասակարգը պետք է կազմակերպվի ու դառնա մի ինքնուրույն քաղաքական կուսակցություն։ Այդպիսով, Մարսելյան համաժողովում առաջին անգամ ընդունվեց վորոշում սոցիալիստական բանվորական կուսակցություն կազմելու մասին։

Մարսելյան համաժողովից հետո, նոր կուսակցությունը կազմակերպողները՝ Գեդը, Լաֆարգը և Լոմբարը, ձեռնարկեցին մշակելու կուսակցության այսպես կոչված նվազագույն ծրագիրը, որը խմբագրել էին գիտական սոցիալիզմի ստեղծողները՝ Մարկսն ու Էնգելսը։ Այդ ծրագիրը, որ պահանջում էր հաստատել անսահմանափակ քաղաքական ազատություն, պետական կարգի ու

հարկային սիստեմը հաջորդաբար ու վերջնականապես ռամկավարացնել, բարելավել աշխատանքի պայմանները (8-ժամյա բանվորական օր, բանվորների ապահովագրում և այլն), նմանապես շատ ուրիշ բարենորոգումներ հօգուտ բանվորական դասակարգի, ընդունվեց Հավրի կուսակցական համաժողովում 1880 թվին։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ։ ԳԵԴԱԿԱՆՆԵՐԸ, ՊՈՍՍԻԲԻԼԻՍՏՆԵՐԸ, ԱԼԼԵՄԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Կուսակցությունը հազիվ էր կազմակերպվել, երբ նրա մեջ նկատվեց երկու հոսանք, որոնք պառակտման պատճառ դարձան։ Շարժառիթը 1881 թվի պառլամենտական ընտրություններին կրած անհաջողությունն էր։ Պոլ Բրուսը, Ժոֆրենը և Մալոնը՝ դրա պատճառը տեսան ծրագրի միապաղաղության ու ծայրահեղության մեջ։ Նրանք պնդում էին, որ յուրաքանչյուր ընտրողական շրջան կարող է կերպափոխել ծրագիրը, հարմարացնելով նրան տեղական պայմաններին. Նրանց հաջողվեց այդ պահանջն անցկացնել Ռեյմսյան համաժողովում 1881 թ. և վերահաստատել այն Սենտ-Էտյենի համաժողովում 1882 թվին։ Գեդի կուսակիցները հեռացան այդ համաժողովից և գումարեցին առանձին համաժողով Ռուանում։ Այդպիսով, միասնական բանվորական կուսակցությունը բաժանվեց երկու ֆրակցիաների. գեդական կամ սոցիալ-դեմոկրատական, և բրուսական, որին գեդիստներն անվանեցին «պոսսիբիլիստական», որ նշանակում է աստիճանաբարականներ ու հարմարվողներ։ Դրանից ավելի ուշ 1890 թվին բրուսականներից անջատվեցին ալլեմանականները, իրանց պարագլուխ Ալլեմանի ղեկավարությամբ։ Այդ երեք կազմակերպություններից բացի, Ֆրանսիայում վաղուց ի վեր գոյություն ուներ բլանկիստների սոցիալիստական խմբակը, որը այդպես էր կոչվում իրանց առաջնորդ Բլանկիի անունով։ Վերջապես այն բոլոր սոցիալիստները, որոնք իրանց աշխարհհայացքներով բաժանվում էին վերոհիշյալ բոլոր ուղղություններին, կազմեցին «անկախների ֆեդերացիան»։

Արդ՝ որն է այդ բոլոր սոցիալիստական կուսակցությունների կամ ֆրակցիաների մեջ եղած զանազանությունը։

Գեդականները կամ սոցիալ-դեմոկրատները Կարլ Մարկսի հետևողներ լինելով՝ կանգնած են տնտեսական մատերիալիզմի տե-

տակետի վրա, վորը հասարակության պատմական զարգացումը մեկնաբանում է նրա տնտեսական կազմությամբ (ստրուկտուրայով) և սոցիալիզմը համարում է կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետևանքը։ Այդ զարգացումը պիտի ավարտվի պրոլետարիատի հաղթանակով ընդեմ կապիտալիզմի, շահագործողների սեփականացումով (էկսպրոպրիացիա)։ Սակայն այդ էկսպրոպրիացիայի նախապայմանն է քաղաքական իշխանության տիրապետումը, պրոլետարիատի դիկտատուրան։ Այդ տիրապետումը կարող է տեղի ունենալ ընդհանուր ընտրողական իրավունքի հիման վրա քաղաքական պայքար մղելով։ «Մեր բանակը,—ասում էր Գեդը 1896 թվին իր պարլամենտական ճառերից մեկում,—որեցոր աճում է. ռամկավարական ռեժիմի զարգացումն ինքնըստինքյան մեծացնում է նրան, և վորովհետև դուք նրա ձեռքն եք տվել ընդհանուր ընտրողական իրավունքի զենքը ու այլևս անկարող եք խլել նրանից... ուստի հենց միայն այդ օրինական զենքի ուժով ճակատագրորեն նրա ձեռքն ել պիտի ընկնի իշխանությունը, ու այդ բանը կիրականանա շուտով»։ Իր ձեռքը ձգելով քաղաքական իշխանությունը, պրոլետարիատը կկատարի սոցիալական հեղափոխություն, վորին հասարակությունը, իր կապիտալիստական զարգացման շնորհիվ, նախապատրաստված կլինի։ Այդպիսով, գեդականները, ինչպես նայեվ բոլոր սոցիալ-դեմոկրատները, քաղաքական կռվին տալիս են առաջնակարգ տեղ, արհեստակցական ու կոոպերատիվ շարժումները, նրանց կարծիքով, կոչված են ոժանդակող դեր խաղալու, ոգնելով բանվորական դասակարգի նյութական դրությունը բարելավելուն և կազմակերպչորեն ամրապնդելով նրան լավագույն ապագայի համար մղվող պայքարի անցողական շրջանում։ Կազմակերպչական տեսակետից կուսակցության հիմունքն է դրված կենտրոնացումը։ Նրա գլխին կանգնած է ազգային կամ կենտրոնական կոմիտեն, վորին յենթարկվում են բոլոր տեղական կոմիտեները, բոլոր հարաբերությունները կուսակցության անդամների ու մարմինների միջեվ կառուցված են խիստ կարգապահության վրա։

Բրուսսիստներ կամ պոսսիբիլիստներ *թեյեվ ընդունում ել են Մարքսի կապիտալիզմն ու մատերիալիզմը, այնուամենայնիվ նրանք խոշոր չափով նույնպես Պրուդոնի գաղափարակիցներն են։ Այդ պատճառով նրանց կուսակցական վերաբերմունքը կառուցված է ապա-*

կենտրոնացման ու ֆեդերալիզմի սկզբունքի վրա։ Իրանց ծրագրում նրանք առաջադրեցին համայնքների ինքնավարության պահանջը հակառակ գեդականների, վորոնք ձգտում էյին իրանց ձեռքը ձգել պետական կենտրոնական իշխանությունը, նրանք իրանց նշանաբանը դարձրին «քաղաքային ինքնավարությունների նվաճումը», վորպեսզի, բանվորական դասակարգի նյութական յեվ բարոյական մակարդակը բարձրացնելու ընդունակ՝ բարենորոգումներ անցկացնեն։ «Պոսսիբիլիստները, ասում է Բրուսը, նյութապաշտներ են և գործնական մարդիկ, ամեն ժամանակ պատրաստ ոգտվելու իրանց տրամադրության տակ յեղած՝ կռվի բոլոր զենքերով, նայելով թե վորն է հարկավոր։ Նրանք աշխատում են ձեռք բերել բանվորների համար իրական արդյունքը՝ քաղաքական կամ տնտեսական»։

Ալլեմանականները, վոր անջատվել էյին բրուսականներից 1890 թվին Շատելլրոյի համաժողովում, կշտամբում էյին վերջիններիս, վոր նրանք, գեդականների նման, շատ են ընկնում ընտրողական հաջողությունների հետեվից, մոռացության տալով բանվորների մեջ տեսական պրոպագանդ մղելու և տնտեսական հողի պայքարելու գործը։ Նրանք անջատվելով կազմեցին սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, վոր իր գլխավոր ուշադրությունն սկսեց դարձնել սինդիկատների կազմակերպման վրա, քարոզելով ընդհանուր ստաչկայի գաղափարը։ Իրանց կուսակցության մեջ նրանք ընդունում էյին միայն բանվորներին, իսկ ինտելլիգենտներին չէյին թույլատրում մտնել։

Բլանկիստները ապրում էյին 48 և 71 թվականների ավանդներով ու իրանց ուսուցչի՝ հին դավադիր Բլանկիի գաղափարներով, վորը, Էնգելսի ասելով, համոզված էր՝ թե մի լավ կազմակերպված դավադիրների խմբակ, վորը փորձ է անում համապատասխան մոմենտին հեղաշրջում կատարել, միքանի հաջողություններից հետո, կարող է հարկադրել ժողովրդական մասսաներին հետեվելու իրան և այդպիսով ստեղծել «հաղթական հեղափոխություն»։ Դա սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունն էր (կամ ավելի ճիշտ դավադիրների) այդ բառի իսկական իմաստով։ Միքանի ժամանակից հետո դավադիր տարրերն անհետացան այդ կուսակցությունից (վորի պարագլուխը դարձավ Վայյանը) և նրա անդամներն այնուհետեվ սկսեցին ձգտել կազմակերպելու բանվորների մեջ յեղած առավել ակտիվ ու ռազմասեր տարրերին, վորով բլանկիստ-

ների ու գեղականների մեջ՝ մերձեցման համար հող պատրաստվեց։

Այն բոլոր սոցիալիստական տարրերը, վորոնք չեյին մտնում հիշված ֆրակցիաների մեջ, կազմեցին «անկախների ֆեդերացիան», Ժորեսի գլխավորությամբ։ Կանգնած գաղափարական տեսակետի վրա, Ժորեսը, մի կողմից, քարոզում եր աշխատակցել բուրժուազիայի հետ և զիջող լինել՝ բանվորական դասակարգի համար օգտակար՝ բարենորոգումներ անցկացնելու նպատակով, կամ, ինչպես ինքն եր ասում, «սոցիալիզմը ֆիլտրի միջոցով կապիտալիզմի մեջ ներարկելու» համար, մյուս կողմից՝ համակրանքով եր վերաբերվում հեղափոխական սինդիկալիզմին ու նրա ծայրահեղություններին։

Բայց այնուամենայնիվ, ֆրանսիական սոցիալիզմն այդչափ ֆրակցիաների բաժանող այդ բոլոր տեսական ու գործնական զանազանակերպությունների հետ միասին, ամբողջ ֆրանսիական հեղափոխական պրոլետարիատը, ինչ ֆրակցիայի ել հարելիս լինեյին նրանց առանձին անդամները, ինչպես վոր ֆրանսիական սոցիալիզմի պատմագիր Պոլ-Լուին և ասում, ընդունում և հետևյալ սկզբունքները. 1) արտադրության միջոցների համայնացումը, 2) բանվորական դասակարգի կողմից քաղաքական իշխանության բռնագրավումը, 3) բանվորների միջազգային համաձայնությունը։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ «ՄԻԼՅԵՐԱՆՅԱՆ ՄԻՋՆԱԴԵՊԸ»

Ֆրանսիական սոցիալիզմի առաջնորդները շատ լավ հասկանում եյին, վոր բաժանբաժան լինելը և ներքին վեճերը պատճառ են դառնում նրա թուլացման, կանգնեցնում են նրա հաջողությունները բուրժուազիայի դեմ մղած պայքարում և դանդաղացնում են բանվորական շարժման զարգացումը, ուստի շատ ջանք և թափվել ֆրանսիական սոցիալիզմի բոլոր ֆրակցիաներն ի մի ձուլելու և կազմելու մի հզոր կուսակցություն, սակայն այդ ջանքերը տևական հետևանքների չեյին հասցնում։

90-ական թվականների սկզբին այդ ներհակ խմբակները, վոր միմիանց կռվում եյին ընտրությունների ժամանակ, միանալով

կազմեցին «հեղափոխական լիգա սոցիալական հասարակապետության հասնելու համար», դա բարեհաջող ներգործություն ունեցավ 1893 ամի ընտրությունների վրա և տվավ սոցիալիստներին պալատում 43 տեղ։ Բայց այն միացումը, որ ինքնըստինքյան թույլ էր ու քայքայվում էր համարյա ամենայն տարի, չդիմացավ փորձության, յերբ սոցիալիս Միլլերանը 1899 թվին ստանձնեց առևտրի մինիստրի պաշտոնը Վալ'դեկ-Ռուսսոյի կաբինետում։

Սոցիալ-դեմոկրատական տեսակետից սոցիալիստի մտնելը բուրժուական մինիստրության կազմի մեջ թույլատրելի է միայն կուսակցության լիազորությամբ, իբրև մի ժամանակավոր միջոց՝ արտակարգ հանգամանքներում։ Այդ պատճառով գեդականները և նրանց հարած բլանկիստներն առաջինը յեղան, վոր բողոքեցին այդ «գիջումներով ու կոմպրոմիսներով լի կարծեցյալ սոցիալիզմի դեմ»։

Կարճ ժամանակից հետո ֆրանսիական բոլոր սոցիալիստները բաժանվեցին յերկու բանակի. «մինիստրականներ» (կամ «մինիստրական» սոցիալիստներ) և հեղափոխականներ—բուրժուազիայի հետ վորևէ կոմպրոմիսներ անելու հակառակորդներ։ Սոցիալիստական ժողովներում ու լրագրներում սկսեց քննվել այն հարցը՝ թե թույլատրելի յե, արդյոք, սոցիալիստական կուսակցության անդամներին առհասարակ մասնակցել իշխանությանը գոյություն ունեցող սոցիալական ու քաղաքական հասարակակարգում։ Ավելի աջակողմյան սոցիալիստները, վորոնք տրամադիր եյին համաձայնությունների (կոմպրոմիսների), գտնում եյին, վոր սոցիալիստի ներկայությունը մինիստրության մեջ՝ շատ օգտավետ է, վորովհետև կհեշտացնի բանվորական դասակարգի համար օգտակար բարենորոգումներ անցկացնելը։ Բացի դրանից, ասում եյին նրանք, սոցիալիստի մտնելը մինիստրության մեջ մի քայլ է հասնելու սոցիալիզմի գլխավոր ձգտումին, քաղաքական իշխանության տիրանալուն։ Այդ հայացքի գլխավոր պաշտպանը Ժորեսն էր։ Դրա հակառակորդներն, ընդհակառակն, գտնում եյին, վոր այդպիսի գործելակերպը կլիներ կործանարար սոցիալիզմի ամբողջ ապագայի համար։ Բուրժուազիայի հետ աշխատակցելը, ժխտելով դասակարգային պայքարը, կհասցնի սոցիալիզմը խեղաթյուրումների, կմատնի տիրող դասակարգերի նվաճմանը։ Մասնակցելով բուրժուական մինիստրության հակապրոլետարական բոլոր գործողություններին, սոցիալիստ-մինիստրը կքողարկի նրանց իր անունով, վորը առաջ կբերի շփոթության

մտքերում և անվստահություն ու հիասթափություն դեպի սոցիալիզմը։ Դա արդեն չի լինիլ իշխանության նվաճում, այլ, ընդհակառակն, գերի ընկնել այն իշխանության ձեռքը, վորի ձգտում ե սոցիալիզմը դարձնել ձեռնասուն։ Այդ հայացքն առանձին ուժգնությամբ պաշտպանում եր Գեդը։

Հարցն անցավ սոցիալիստական համաժողովների քննությանը։ 1899 թվի համաժողովը թերիմաստ բանաձև հանեց, մի կողմից նա ընդունեց, վոր անթույլատրելի չե սոցիալիստի մասնակցությունը բուրժուական մինիստրության մեջ, բայց մյուս կողմից, նա միաժամանակ վորոշեց, վոր հատուկ հանգամանքներում կուսակցությունը յուրաքանչյուր տվյալ դեպքի համար իրավունք ունի քննել այդ հարցը և լուծում տալ նրան համաձայն հանգամանքների։ Լիոնի համաժողովում 1901 թ. «հեղափոխականները» առաջարկ արին դուրս ձգել Միլյերանին կուսակցությունից, բայց նրանց այդ առաջարկը չընդունվեց, դրանից ել առաջացավ պառակտումը։ Գեդականներն ու բլանկիստները կազմեցին «Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը» և վերջնականապես ամրապնդեցին այդ միությունը Իեմյան համաժողովում 1902թ.։ Նրանց հակառակորդները Տուրի համաժողովում 1902 թվին միացան ու կազմեցին «Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը»։ Վորոշ ժամանակից հետո այդ յերկու կուսակցության մեջ յեղած յերկպառակությունները միքիչ դադարեցին և 1905 թվին չափավոր սոցիալիստների համաժողովը Ռուանում ընդունեց բանաձև միությունը վերականգնելու անհրաժեշտության մասին։ Մի ամսից հետո Ռուանում գումարված համաժողովը միացրեց ժորեսականներին, գեդականներին, ալեմանականներին ու «ինքնավարականների» աննշան խմբակը «սոցիալիստական կուսակցության, բանվորական ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիա» ընդհանուր անվան տակ։ Սակայն կարճ ժամանակից հետո ժորեսականների մի փոքրիկ խումբ (Բրիանը, Վիվիանին, Ոգանյերը յեվայլն), առանց ժորեսի մասնակցության, այդ միացյալ կուսակցության ուղղությունը գտնելով չափազանց հեղափոխական, բաժանվեց նրանից ու սկսեց անվանվել «անկախ սոցիալիստներ»։

Վերջացնելով ֆրանսիական սոցիալիստական կուսակցության զարգացման տեսությունը՝ ցույց տանք այժմ նրա ներկայացուցիչների հաջորդական ուժեղացումը պալատում. դրա համար առաջ

կրերենք վերջին յերեք ընտրությունների թվերը։ 1906 թվին պալատ անցան 54 միացյալ սոցիալիստներ ու 20 անկախներ, 1910 թ.— 74 միավորված սոցիալիստներ և 29 անկախներ, և 1914 թ. 102 միացյալ սոցիալիստներ ու 30 անկախներ։

Ինչպես տեսնում եք, ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների թիվը պալատում բավականին խոշոր է, բայց այն հաջողությունը, վորին հասել է ֆրանսիական բանվորական շարժումը բանվորական որենսդրության շրջանում, այնքան էլ մեծ չէ։ Այդ կողմից Ֆրանսիան հետ է մնացել Անգլիայից ու Գերմանիայից, վորը խոշոր չափով բացատրվում է սոցիալիստական կուսակցությունների մեջ տիրող ներքին յերկպառակություններով, ֆրանսիական սոցիալիզմի և արհեստակցական շարժման միջև յեղած թշնամության ու արհեստակցական շարժման իրա բնույթով (վորի մասին խոսք կլինի հետագայում)։

Թվենք բանվորական որենսդրության շրջանում կատարված գլխավոր բարենորոգումները՝ սկսած 1892 թվից։

1892 հրատարակվեց մանկահասակների ու կանանց աշխատանքի պաշտպանության վերաբերյալ որենքը. համաձայն այդ որենքի բանվորական որվա տեվողությունը սահմանվում եր՝ 16 տարեկանից վոքր հասակ ունեցողների համար 10 ժամ, 16-18 տ. անչափահասների համար 11 ժամ, 18 տարեկանից վեր հասակի աղջկանց ու կանանց համար՝ 11 ժամ։ Միյեվնույն տարին հրատարակվեց որենք հաշտարար ատյանների մասին բանվորների ու ձեռնարկուների միջև ծագող վեճերը լուծելու համար։

1894 թվին կիրառվեց հանքերում աշխատող բանվորների պարտադիր ապահովագրումը, 1898 թվին՝ ձեռնարկուների պատասխանատվության որենքը բանվորների հետ պատահած դժբախտ դեպքերի համար, յեթե այդ դժբախտությունն առաջացել է բանվորի իրա մեղքից։ 1899 թվի որենքը (հրատ. Միլյերանի մինիստրության) կանոնավորում է պետության համար աշխատող ձեռնարկուների կողմից վարձված բանվորների աշխատանքը, որենքը սահմանում է նվազագույն աշխատավարձը, շաբաթական հանգիստը յեվայլն։ Ութժամյա բանվորական որվա համար պայքարը վաղուց ի վեր մղում եյին սոցիալ. կուսակցություններն ու արհեստակցական միությունները։ Այդ պայքարի հետեվանքը յեղավ այն, վոր 1900 թ. որենքով բանվորական որվա տեվողությունը սահմանվեց

11 ժամ այն պայմանով, որ 1902 թվին հասցնվի $10^{1}/_{2}$-ի, իսկ 1904 թ. մինչև 10 ժամի։ Միևնույն ժամանակ բանվորների միքանի կատեգորիաների համար, որոնք աշխատում են պետության կամ տեղական ինքնավարության ենթակա ձեռնարկությունների մեջ (պոստ-հեռագրական և հեռախոսային տեսչ. մեջ դրոշմանիշներ պատրաստող գործարաններում, քաղաքային էլեկտրական գործարանում) բանվորական օրվա տևողությունը սահմանվում էր 8 ժամ։ 1911 թվին, վերջապես երկար չարչարանքներից հետո ընդունվեց բանվորական ու գյուղացիական կենսաթոշակների օրենքը։ Այդ օրենքը ապահովում է ծերունիներին, սկսած 65 տարեկանից վեր, որոնց տարեկան աշխատավարձը 3000 ֆրանկից չի անցնում։ Այդ ապահովագրության համար միջոցները կազմվում են բանվորների և տերերի վրա հավասարաչափ վճարումներից ու պետության տված լրացումներից։ Ֆրանսիական բանվորները, դժգոհ այդ օրենքից, անվանեցին նրան «օրենք հանգուցյալների համար»։

Եզրափակելով ասենք, որ բանվորական դասակարգի օգտին առաջադրված բոլոր բարենորոգումները ձգձգվում էին ու կրճատման ենթարկվում ֆրանսիական պարլամենտի վերին պալատի՝ սենատի կողմից, որը, գլխավորապես, բաղկացած էր ֆրանսիական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներից։

Բ) ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 90-ԱԿԱՆ Թ. ՍԿԻԶԲԸ

Ֆրանսիական բանվորական շարժման գլխավոր առանձնահատկություններից մեկն այն անմիաբանությունն է, որ կա սոցիալիստական բանվորական կուսակցության ու բանվոր դասակարգի արհեստակցական շարժման մեջ, այսինքն բանվորական շարժման քաղաքական ու տնտեսական կողմերի միջև եղած անմիաբանությունը։

Այն ժամանակ, երբ Գերմանիայում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն իր ազդեցությանը ենթարկեց բանվորական արհեստակցական շարժումը, իսկ Անգլիայում բանվորական կուսակցությունը դուրս եկավ տրեյդ-յունիոնների միջից,—Ֆրանսիայում բանվոր դասակարգի քաղաքական և արհեստակցական շարժման միջև չկայացավ ամուր միություն, և արհեստակցական շարժումը

սինդիկալիստական շարժման (սինդիկալիզմի) անվան տակ կազմակերպում է այնտեղ բանվորական շարժման ինքնուրույն մի ճյուղ։

Ինչպես տեսանք վերը, ֆրանսիական արհեստավորների ու բանվորների մեջ արհեստակցական միություններ կազմելու ձգտումն սկսվել էր դեռ անցյալ դարի 30-ական թվականներից, բայց ավելի արդյունավետ պետք է դառնար այդ ձգտումը խոշոր արդյունաբերության զարգացման համընթաց, այսինքն անցյալ դարի յերկրորդ կեսից։ Արհեստակցական միությունների զարգացումը ճզմվում էր նույնպես այն սահմանափակումների ու հալածանքների պայքարով, վորոնց նրանք յենթակա եյին հուլիսյան միապետության և յերկրորդ կայսրության շրջանում։ 1884 թվին հրատարակվեց 4 սինդիկատների (արհեստակցական միությունների)*) վերաբերյալ օրենքը, թեյեվ այդ օրենքը հաստատում էր միայն այն, ինչ վոր փաստորեն գոյություն ուներ, այնուամենայնիվ թեթևացրեց միություններ կազմելու գործը, դնելով նրանց օրինական հողի վրա։

1884 թ. օրենքը հրատարակելուց հետո սկսվում է սինդիկատների արագ զարգացումը, վորոնք կարճ ժամանակում տարածվում են արդյունաբերական Ֆրանսիայի բոլոր մասերում։ Սինդիկատների ներկայացուցիչներն սկսում են համաժողովներ գումարել։ 1886 թվին Լիոնի համաժողովում ընդունվում է բանաձև, վորն ասում է՝ թե սինդիկատները պետք է ձգտեն վոչ միայն մասնակի բարելավումներ մտցնելու բանվոր դասակարգի դրության մեջ, այլև հասնելու սոցիալիստական հասարակակարգի։ Միևնույն ժամանակ, վորոշում է կայացվում կազմելու Սինդիկատների ազգային միություն սինդիկատների Ֆեդերացիա անունով։

Գեդականները, վոր շատ անդամներ ունեյին սինդիկատներում, աշխատեցին անցկացնել պատգամավորների մեծամասնություն հաջորդ համաժողովին, վոր կայացավ Մոնլյուսոնում, նրանց հաջողվեց փոխել ֆեդերացիայի կանոնադրությունը՝ սոցիալիստական կուսակցության և սինդիկատների ֆեդերացիայի սկզբունքներն ու գործողությունները համաձայնեցնելու իմաստով։

Հաջորդ համաժողովին, Բորդոյում (1888 թ.), սինդիկատները

*) Միությունների ազատությունն ընդարձակված է 1901 թվի օրենքով, վորն ուղղված է կրոնական միությունների դեմ։

կուսակցությունից անկախ թողնելու կողմնակիցներին հաջողվեց անցկացնել ընդհանուր ստաչկայի վերաբերյալ բանաձեվը, որի համաձայն բոլոր բանվորների միաժամանակ ընդհանուր ձեվով հրաժարվելը աշխատանքից կարող է ազատագրել բանվոր դասակարգը կապիտալիզմի լծից։

Ընդհանուր ստաչկայի գաղափարը հակառակ էր մարքսիստների տակտիկային, սինդիկատների կողմից դրա յուրացումը նշան էր արդեն, որ բանվորական սինդիկատների մեջ առաջ է գալիս ինքնուրույն տակտիկա։ Գեդականներն իրանց կուսակցական համաժողովում, Լիլ քաղաքում (1890 թ.) քննության յենթարկեցին ընդհանուր ստաչկայի հարցը և ընդունեցին Կարլ Մարքսի աղջկա՝ Էլեոնորա Մարքս-Էվելինգի առաջարկած բանաձեվը։ Այդ բանաձեվը, չժխտելով ընդհանուր ստաչկայի նշանակությունը, իբրեվ բանվոր դասակարգի պայքարի մի զենքի, մատնանշում էր, որ «պայքարի. այդ միջոցն իր նպատակին հասնելու համար յենթադրում ու պահանջում է այնպիսի սոցիալիստական ոգի ու կազմակերպություն, որպիսի աստիճանին դեռյեվս չի հասել պրոլետարիատը», և որ այդ պատճառով էլ վաղաժամ է խոսել ընդհանուր ստաչկայի մասին։ Միքանի օրից հետո, սինդիկատների ֆեդերացիայի համաժողովում գեդիստներին հաջողվեց անցկացնել իրանց բանաձեվը, ինչպես նայեվ իրանց կուսակցական համագումարի ընդունած միքանի այլ որոշումները։

Այդպիսով, 90-ական թվականների սկզբներում բանվոր դասակարգի քաղաքական ու տնտեսական շարժումն սկսեց ձուլվել մի ամբողջություն կազմել։ Այդ միաձուլմանը խանգարեցին աշխատանքի բորսաների ղեկավարները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՍԱՆԵՐԸ

Բանվորական աշխատանքի պահանջն ու առաջարկը կանոնավորող հիմնարկությունների կարիքը հետզհետե ավելի յեր զգալի դառնում, որքան որ զարգանում էր արդյունաբերությունը։

Այդպիսի հիմնարկություններ էին աշխատանքի բորսաները։ Առաջին բորսան հիմնեց Պարիզի քաղաքային դուման, 1887 թվին, ուր հետզհետե մտան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները։ Դրանից հետո բորսաներ սկսեցին հիմնվել բոլոր խոշոր, իսկ հետո նայեվ փոքր քաղաքներում։ Հետզհետե բորսաներն իրանց

հիմնական նպատակին՝ աշխատանքի առաջարկն ու պահանջը կանոնավորելուն, սկսեցին միացնել փոխադարձ օգնությունը, հետո բանվորական շարժման գաղափարների պրոպագանդան, ապա արտադրական ու սպառողական ընկերությունների, ինչպես և սինդիկատների, կազմակերպումը։ Վերջապես նրանք սկսեցին համախմբել միևնույն քաղաքի ու շրջանի սինդիկատները միասին պայքարելու համար։ Աշխատանքի բորսաների զարգացումից միտք հղացավ աշխատանքի բորսաների ֆեդերացիա կազմել, վորը իրագործվեց 1892 թվին Ս.-Էտյենի համաժողովում։

Այսպես կազմվեցին ֆրանսիական բանվորների յերկու կենտրոնական արհեստակցական կազմակերպությունները. սինդիկատների ֆեդերացիան, վորը սոցիալիստական կուսակցությունների հետ միություն եր կազմել, և ինքնուրույնության ձգտող բորսաների ֆեդերացիան։

Ինքնուրույն արհեստակցական շարժման գաղափարի վերածընումից՝ բանվորական շարժմանն սպառնացող վտանգը տեսնելով, գեդականները վճռեցին Մարսելյան համաժողովում 1892 թ. ընդմիշտ վերջ տալ ընդհանուր գործադուլի հարցին, վորը շեղում է բանվորների ուշադրությունը քաղաքական պայքարից և խեղաթյուրում բանվորական շարժման տակտիկան։ Բայց, հակառակ գեդիստների մղած ագիտացիայի, վորոնք ուղարկել եյին այդ կոնգրեսին իրանց լավագույն ուժերը, ընդհանուր գործադուլի մասին առաջադրված բանաձևն ընդունվեց ու հաստատվեց Նանտում կայացած բորսաների ու սինդիկատների ֆեդերացիաների համաժողովում 1894 թվին, վորի պատճառով գեդականները հեռացան համաժողովից։ Այդ վայրկյանից սոցիալիստների ու սինդիկալիստների միջև յեղած տարաձայնությունը քանի գնաց խորացավ և վերջնականապես մեկուսացրեց սինդիկալիստական շարժումը։

Վորովհետև գեդականները շարունակում եյին մի վորոշ արժեք ունենալ սինդիկատների ֆեդերացիայում, ուստի սինդիկալիստները վճռեցին վերակազմել սինդիկատների միությունը և 1895 թ. Լիմոժի համաժողովում կազմեցին աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան, վորն ամեն տեսակի կուսակցություններից դուրս տնտեսական հողի վրա համախմբում եր իր մեջ ամբողջ Ֆրանսիայի ու նրա գաղութների սինդիկատներին։ Այդպիսով, դարձյալ ստացվեց յերկու կենտրոնական արհեստակցական կազմակերպություն։

Սակայն, կարճ ժամանակից հետո, այդ յերկու կազմակերպություններն ել ընդունեցին, վոր սինդիկատների յերկու կենտրոնական կազմակերպությունների գոյությունն անհանդուրժելի յե բանվորական դասակարգի ամբողջականության տեսակետից և ստեղծում է անտագոնիզմ սինդիկատների մեջ։ Այդ հարցի առիթով սկսված ագիտացիան այն հետևանքն ունեցավ, վոր Մոնպելյեյի համաժողովում, 1905 թ., յերկու կազմակերպությունները միացան աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա անվան տակ։

Այդ միացումից հետո սոցիալիստական կուսակցությունը նորից է փորձում տիրել սոցիալիստական շարժմանը և համաձայնեցնել նրա գործունեությունը կուսակցության սկզբունքներին։ Կոնֆեդերացիայի և կուսակցության փոխհարաբերությունների հարցը հարուցվում է Ամյենի համաժողովում 1906 թ., ուր հավաքվել եյին 300 պատգամավորներ 1.038 սինդիկալ կազմակերպությունների կողմից։ Բայց սինդիկալիստների ազդեցությունը կոնֆեդերացիայում չափազանց մեծ եր, ուստի սոցիալիստներն այս անգամ ել պարտություն կրեցին։

Այդ ժամանակներում սինդիկալիզմի ազդեցությունն այնքան եր ուժեղացել, վոր միքանի հասարակությունների ծառայողներն ու պաշտոնյաները, իսկ հետո նայև ուսուցիչներն սկսում են կազմել սինդիկատներ՝ ընդհանուր կոֆեդերացիային միանալու համար։ Պաշտոնեյության և ուսուցչական սինդիկալիզմն ուժեղ դիմադրության է հանդիպում կառավարության կողմից և մինչև անգամ նախկին սոցիալիստ մինիստրների կողմից, ինչպիսին եր Բրիանը, վորը Մասելյան համաժողովում 1892 թվին պաշտպանում եր ընդհանուր ստաչկայի հարցը ընդեմ գեդեականների։ Չնայելով դրան, 1909 թ. վերջին կազմվեց պաշտոնյաների ընդհանուր ֆեդերացիա, վորի կազմի մեջ մտան ուրիշ հասարակությունների մեջ ծառայողների մի շարք մասնավոր ֆեդերացիաներ իրանց պրոֆեսիոնալ շահերը պաշտպանելու համար։ Մինչև իսկ Փարիզի վոստիկանները կազմեցին արհեստակցական կազմակերպություններ։

Ներկայումս Ֆրանսիայում կան 5.000-ից ավելի սինդիկատներ, վորոնց անդամների թիվն անցնում է մի միլիոնից։

ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սինդիկալիզմի հիմնական սկզբունքները, վորքան վոր արտահայտված են նրանք սինդիկալիստական համաժողովների բանա-

ձևերի ու այդ ուղղության կողմնակիցների աշխատությունների մեջ, համառոտակի հետևյալն է.

Աշխատանքի ընդհանուր կոնֆերենցիան միացնում է իր մեջ մտնող բոլոր սինդիկալ կազմակերպությունները, անկախ ամեն տեսակի սոցիալիստական ու քաղաքական կուսակցություններից, բացառապես **տնտեսական հողի վրա պայքարելու համար**։

Ընդհանուր կոնֆերենցիան կազմում է աշխատավոր ժողովրդի կուսակցությունը, որ իր նպատակն է դնում բանվորների դասակարգային շահերի պաշտպանությունը՝ ինչպես անմիջական բարելավումների հասնելու համար (բանվորական օրվա կրճատումը, աշխատավարձի հավելում յեվայլն), այնպես և վարձու աշխատանքի ժամանակակից սիստեմը լրիվին վոչնչացնելու համար։

Այդ նպատակն իրագործելու համար սինդիկալիզմը մշակեց իր սեփական տակտիկան և պայքարի յեղանակը՝ **ուղղակի գործողությունը**։

Ուղղակի գործողությունը, ինչպես սինդիկալիստներն են ասում, բանվորների **անմիջական կռիվն** է բուրժուազիայի դեմ, առանց վորյեվե միջնորդների ձեռք հանձնելու իր ազատագրության գործը։ Ուստի սինդիկալիստները ժխտում են վոչ միայն քաղաքական կռիվը, այլև ամեն տեսակի այսպես կոչված բարենորոգումները, վորոնք պարտադիր միջնորդ դատարանների ու ստաչկաների ռեգլամենտացիաների ձևով իսկապես ձգտում են խլել ձեռներեցությունը բանվորներից, մտցնելով ծածկաբար պայքարի պարլամենտական ձևեր։

Ուղղակի գործողության գլխավոր տեսակներ են՝ գործադուլը, բոյկոտը, սաբոտաժը և բռնի գործողությունների բոլոր տեսակները, օրինակ՝ 8-ժամյա բանվորական օրվա կիրառումը բռնի միջոցով։ Սակայն առաջին տեղը բռնում է գործադուլը, և այն էլ **ընդհանուր գործադուլը**։

Գործադուլը, իբրև բանվոր դասակարգի պայքարի զենք, գոյություն ունի վաղուց ի վեր. բայց նոր ժամանակներում փոխվում է նրա բնույթը, բարդանում են նրա նպատակները։ Այժմ գործադուլները վոչ միայն կռվի զենք են բանվորի նյութական դրությունը բարելավելու համար, այլև ունեն ահագին դաստիարակչական նշանակություն։ Առաջներում բանվորները նայում էյին գործադուլի վրա իբրև մի անխուսափելի չարիքի վրա, և վճռում

էին գործադուլ անել միայն ծայրահեղ դեպքերում։ Ներկայումս բանվորներն օգտվում են գործադուլից, իբրև գրոհ կապիտալիզմի ամրոցի վրա, դրա համար էլ չեն վախենում գործադուլ առաջ բերել և ձգտում են օգնել ամեն տեսակ գործադուլների։ Այստեղից էլ ահա սկիզբ են առնում սինդիկալիստների մեջ շատ տարածված «համերաշխության գործադուլները», երբ աշխատանքի մի ճյուղի բանվորները գործադուլ են հայտարարում աշխատանքի մի ուրիշ ճյուղի գործադուլ արած բանվորներին օգնելու համար։ Միշտ ավելի հաճախակի դառնալով և ընտելացնելով բանվորներին միաբան գործողությունների, մասնավոր գործադուլները կվերջանան ընդհանուր հարձակումով ժամանակակից կապիտալիստական կարգի վրա՝ ընդհանուր գործադուլով, որը կլինի ազդանշան սոցիալական հեղափոխության կատարելու համար։

Նոր հասարակակարգ հաստատելու համար կարիք չի լինիլ նոր մարմիններ ու հիմնարկություններ ստեղծելու։ Ապագա հասարակության մեջ արտադրության և հասարակական վարչության մարմինները կլինեն միևնույն մարմինները, որոնք մինչև այդ ծառայում էին բանվոր դասակարգի համար, ապա կռվի զենք՝ սինդիկատները, աշխատանքի բորսաները, ֆեդերացիաները և կոնֆեդերացիաները։ Նոր հասարակությունը կկազմակերպվի առանց կենտրոնական քաղաքական իշխանության, սինդիկատներ-համայնքների իրավահավասար միացումների հիման վրա։

Սինդիկալիզմի մեջ կա յերկու ուղղություն. հեղափոխական, որի սկզբունքները քիչ առաջ հիշատակեցինք, և բարենորոգչական (ռեֆորմիստական), ավելի խաղաղասեր, որի նպատակն են համարում նրա կողմնակիցները՝ մասնավոր բարենորոգումներն ու բարելավումները բանվորի դրության մեջ, ինչպես օրինակ՝ բանվորական օրվա կրճատումը, ապահովագրելը անգործության ու հիվանդության դեպքերում յեվայլն։ Բարենորոգչականները ձգտում են հասնել իրանց նպատակներին խաղաղ միջոցներով և դեմ չեն պետական իշխանության մարմինների հետ աշխատակցելուն, նրանք, հեղափոխական սինդիկալիստների նման, միայն հրաժարվում են քաղաքական գործունեությունից։ Բարենորոգչականները շատ նման են անգլիական տրեյդ-յունիոնիստներին։

Սինդիկալիզմի մեջ կարելի յե նկատել զանազան ուղղությունների գծեր՝—մարքսիստական, պրուդոնական, անիշխանական։ Սինդիկա-

լիստները Մարկսի ուսմունքից փոխ են առել դասակարգային կռվի թեորիան, Պրուդոնից՝ նրա զզվանքով լի անվստահությունը դեպի քաղաքական գործունեությունը, նմանապես իր ներկա ու ապագա կազմակերպության ֆեդերալ կազմությունը. անիշխանականներից «ուղղակի գործողության» տակտիկան։

Ուղիղ են արդյոք սինդիկալիստներն իրանց աշխարհահայացքում ու տակտիկայում, այդ մասին կխոսենք քիչ հետո՝ ֆրանսիական բանվորական շարժման բնորոշ առանձնահատկությունները քննելիս։

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Գործադուլին վերաբերվելով վոչ միայն իբրև պայքարի մի միջոցի, վոր բանվորների դրության մեջ մասնակի բարելավումներ է մտցնելու, այլ իբրև դաստիարակչական միջոցի, վորն առաջնորդում է դեպի բանվորական գործի վերջնական հաղթանակը, Ընդհանուր կոնֆեդերացիան պաշտպանում է խրախուսում է գործադուլային շարժումը։

Նրա ագիտացիայի հաջողություններն այդ ասպարեզում անկասկածելի յեն։ Ֆրանսիան իր տարեկան գործադուլների քանակով մինչև համաշխարհային պատերազմը մյուս արդյունաբերական յերկրների մեջ առաջնակարգ տեղերից մեկն եր գրավում, թեյեվ բանվորների թիվը այնտեղ ավելի պակաս է, քան Անգլիայում, Գերմանիայում կամ Միացյալ Նահանգներում։

Պաշտոնական տեղեկությունների համաձայն, Ֆրանսիայում 1900 թվին յեղել է 902 գործադուլներ, վորոնց մասնակցել են 222.714 բանվորներ. դրանցից 205-ը վերջացել են հաջող, 360-ը տվել են մասնակի հաջողություն, 337-ը վերջացել են պարտությամբ։ 1904 թ. յեղել է 1.026 գործադուլ, վորոնց մասնակցել են 271.097 բանվորներ. հաջողությամբ են վերջացել 297, մասնավոր հաջողությամբ 394, անհաջող 335-ը։ 1906 թ. 1.307 գործադուլ, վորոնց մասնակցել են 438.466 բանվոր։ Հաջող են վերջացել 817-ը, անհաջող 490-ը։

Շատ շատ է այնպիսի գործադուլների թիվը, յերբ գործադուլավորներին ճնշել են հատկապես ուղարկված զորքերով։ Այդպիսին են յեղել գործադուլներն այն շրջանում, յերբ առեվտրի մինիստր եր սոցիալիստ Միլյերանը (1899—1901 թ.թ.), հանքափորների հսկայական գործադուլը 1902 թվին, ջուլհակների գործադուլը Հյուսի-

տային նահանգներում, այգեգործության բանվորական գործադուլները Հարավում 1904 թվին, էլեկտրաքարշի ծառայողների ու մարսելյան նավահանգստի բանվորների գործադուլը (1905 թ.), Ֆրանսիայի բոլոր խոշոր նավահանգիստների զինանոցային բանվորների գործադուլը յեվայլն: Չեյին ամաչում գործադրության մեջ մտցնել արյունահեղ ջարդերը և կալանավորել գործադուլավորներին նախկին յակոբական ու արմատական մինիստրները, Կլեմանսոն և նախկին սոցիալիստ ու սինդիկալիստ Բրիյանը: Այդպես օրինակ, Պարիզի շրջակայքում ավազ հավաքելու աշխատանքներով զբաղված բանվորների գործադուլի ժամանակ 1908 թ. զորքերն սպանել եյին միքանի գործադուլավորներ, կալանավորել՝ Ընդհանուր կոնֆեդերացիայի առաջնորդներից միքանիսին. փորձ յեղավ ընդհանուր գործադուլ հայտարարելու, բայց չաջողվեց: Ընդհանուր կոնֆեդերացիան կոչ բաց թողեց: Կլեմանսոյի ներքին գործոց մինիստր յեղած ժամանակ՝ բռնկվեց հանքափորների հսկայական գործադուլը աշխատավարձի պակասեցման ու մոտ հազար բանվորներ հանքահորերում սպանվելու առիթով, վորոնց տերերը ձեռք չեյին առել միջոցներ հանքափորների կյանքն անվտանգ դարձնելու համար: Ջնայելով, վոր գործադուլն ընթանում եր առանց էկցեսների, արմատական մինիստրը չամաչեց ուղարկել նրանց «ճնշելու» համար 25 հազար զինվոր: 1910 թ. աշնանը պայթեց յերկաթուղայինների հսկայական գործադուլը. Նախքան գործադուլ հայտարարելը յերկաթուղայինների ազգային սինդիկատը յերկար ժամանակ բանակցություններ եր վարում յերկաթուղային ընկերությունների ներկայացուցիչների ու մինիստր-նախագահ Բրիյանի հետ, վորպեսզի վերջինս գործ դնի իր ազդեցությունը յերկաթուղիների տերերի վրա: Բայց մինիստրն աշխատում եր վորքան կարելի և ճնշում գործ դնել վոչ թե յերկաթուղային ընկերությունների վրա, այլ բանվորների վրա: Ընկերությունները տեսնելով այդ բանը, զիջումների վոչ մի ցանկություն չեյին ցույց տալիս:

Յերբ բռնկվեց գործադուլը, մինիստրը յերկաթուղիների վրա հայտարարեց պատերազմական դրություն ու հրամայեց կալանավորել շարժման պարագլուխներին: Յերբ գործադուլավորներին միացան էլեկտրականի բանվորները, նրանց փոխարինեցին զինվորներով: Շուտով գործադուլին միացան կառուցող բանվորները յեվայլն: Սակայն շնորհիվ կառավարության խստությունների (բանվորների

մասսայական կալանավորումների) գործադուլավորներն ստիպված էյին գիշերել։

ՀԱԿԱՄԻԼԻՏԱՐԻԶՄ ՅԵՎ ՀԱԿԱՊԱՏՐԻՈՏԻԶՄ

Այդպիսով, ֆրանսիական բանվորները բազմիցս առիթ ունեցան համոզվելու, վոր հանրապետական բանակը գոյություն ունի վոչ միայն նրա համար, վորպեսզի աշխարհի բոլոր մասերում շուկաներ (գաղութներ) գրավի բուրժուազիայի համար, այլ վորպեսզի սանձահարի բանվորներին, յերբ վերջիններս փորձ են անում կռվելու այդ բուրժուազիայի ծայրահեղ շահագործման դեմ։ Այստեղից էլ բղխում է հակամիլիտարիզմի յեվ հակահայրենասիրության քարոզը, վոր սկսվել էր սինդիկատների մեջ մտած բանվորների շրջանում, ուժ ստացել աշխատանքի Ընդհանուր կոնֆեդերացիա կազմելուց հետո, այն է՝ սինդիկալ շարժումն ամրապնդվելու վարկյանից։ Սինդիկալիստները քարոզում էյին վերացնել բանակը նույնիսկ առանց նրան փոխարինելու ժողովրդական միլիցիայով. չափազանցության հասցրին Մարքսի հայտնած այն միտքը՝ թե «պրոլետարները հայրենիք չունեն»։ Ֆեդերացիայի ժողովներից մեկում (Մարսելում 1908 թ.) ընդունվեց մի բանաձեվ, վորն ասում էր, թե «բանվորները, վոր հայրենիք չունեն, պետք է պատասխանեն պատերազմի հայտարարմանն ընդհանուր հեղափոխական գործադուլով»։ Սինդիկալիստական թերթերում և լրագիրներում սինդիկալիզմի կազմակերպիչներն ու ագիտատորները հրավիրվում էյին կապ պաշպանելու զինվորների ու այն սինդիկատների միջեվ, վորոնց շարքերում էյին աշխատել մինչեվ ծառայության մտնելը, կոչ էյին անում հիմնելու «անհնազանդների կասսաներ», զինվորների մեջ «զինվորի կոպեկի կասսաններ» յեվայլն, վորպեսզի մասսայականացվեն հակամիլիտարիստական ու հակահայրենասիրական գաղափարները։

Առանձնապես հռչակվեց հակահայրենասիրական իր քարոզչությամբ Էրվեն. նրա գրքույկներից մեկը կոչվում է «Նրանց հայրենիքը», այսինքն հարուստների հայրենիքը։ Էրվեյի կարծիքով, Ֆրանսիայի նվաճումը գերմանացիների կողմից վոչնչով չէր փոխի բանվոր դասակարգի դրությունը. գերմանացիների կողմից բանվորությունը կշահագործվեր վոչ նվազ, քան թե շահագործվում է ֆրանսիացի հայրենակիցների կողմից։ Նրանց բոլորի

(այսինքն հարուստների) համար ամեն տեղ հայրենիքը միատեսակ լավ է։

«Ով որ ել հարձակվելու լինի այն յերկրի վրա, ուր մենք ենք ապրում, ավելի լավ է սկսել ապստամբություն, քան գնալ պատերազմ»։

Երվեն ստեղծեց Ֆրանսիայում հակահայրենասիրական մի ամբողջ ուղղություն, վորը հայտնի է «Երվեիզմ» անունով, և ուներ շատ հետևողներ սինդիկալիստների ու անարխիստականների շրջանում։ Ինքը Երվեն հրաժարվեց իր աշխարհահայացքներից, յերբ բռնկվեց համաշխարհային պատերազմը, և այժմ նա վոչ պակաս մոլեռանդ հայրենասեր է, քան իր նախկին հետևողներից շատերը։

Ինչ վերաբերում է սոցիալիստներին, նրանք պատերազմի ու հայրենասիրության հարցերում մի այլ տեսակետի վրա եյին կանգնած, նրանք իրանց չեյին դասում «հայրենիք չունեցողների» շարքը, բայց կողմնակից եյին միայն հարկադրված պաշտպանողական պատերազմի։ Ժորեսը, վոր ֆրանսիական հասարակության լայն խավերում համարվում եր «հակահայրենասեր» ու «հայրենիքի թշնամի», վորի համար և զոհ գնաց, ինչպես ամենեվին ել կողմնակից չեր սինդիկալիստների գաղափարներին. նա հակառակորդ եր պատերազմի, սպառազինությունների ուժեղացման, զինվորական ծառայության ժամանակամիջոցի յերկարացման, մշտական զորքի գոյության, շատ եր աշխատում յեվրոպական պատերազմի առաջն առնել, քարոզում եր՝ յեռանդուն կերպով միջազգայնորեն հանդես գալ ընդդեմ պատերազմի, բայց դրա հետ միաժամանակ նա քիչ չեր գրում ու խոսում այն մասին, թե Ֆրանսիայի վրա հարձակում լինելու դեպքում՝ ինչպես պետք է կազմակերպել այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է հաղթության համար։

Քիչ չեյին պաշտպանում հայրենիքի գաղափարը, ինչպես նաև նրա պաշտպանության զինված ուժերի գոյության անհրաժեշտությունը՝ թշնամու հարձակման դեպքում Գեդն ու Վայյանը, միայն թե վոչ մշտական զորքի ձևով, այլ ժողովրդական միլիցիայի։ Միյեֆույն ժամանակ Նանսիի համաժողովում (1907 թվին) Պոլ Լաֆարգը հայտնեց, վոր պատերազմի դեպքում պրոլետարիատը վոտքի կկանգնի պաշտպանելու յերկիրը, բայց պայման կդնի, վոր այն հասարակական հարստությունը, վորը նա պաշտպանելու է, դառնա հասարակական սեփականություն։ Իսկ Գեդը նույն

միայն արտահայտեց 1913 թվին մի փոքր այլ կերպ. «բանվորական դասակարգը կպաշտպանի իր յերկիրը, վորպեսզի հետո, ստացված նյութական ուժից ոգտվելով, այլեվս չվերադառնա իր նախկին ստորադաս վիճակին»։

Այնուամենայնիվ, յերբ վորոտաց պատերազմը, սինդիկալիստները հակառակ իրանց թեորիաների մասին հայրենիքի պաշտպանների շարքերը գերմանացիների հարձակմանը դիմադրելու համար։ Սոցիալիստներ Ժյուլ-Գեդը, Սամբան և Ալբերտ Թոման մտան պաշտպանության կոալիցիոն կամ «ազգային» մինիստրության մեջ։

III.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԼԻՆԵԼԸ. ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄԸ

Փորձենք համառոտակի թվել ու բացատրել ֆրանսիական բանվորական շարժման բնորոշ առանձնահատկությունները։

Ֆրանսիական բանվորական շարժման ամենաբնորոշ հատկանիշն ե նրա հեղափոխականությունը. *1830 թվից մինչև 1881 թ. ամբողջ ժամանակաշրջանը՝ հեղափոխությունների, դավադրությունների, ապստամբությունների մի շրջան ե, յերբ բանվոր դասակարգն ու նրա կազմակերպությունները առաջնակարգ դեր են խաղում։ Բայց նույնիսկ բանվորական շարժման համեմատաբար խաղաղ, 2-րդ շրջանում (1871 թվից մինչև մեր ժամանակները), այդ հեղափոխականությունը, թեկուզ և այլ ձևով, նրա միջից վերջնականապես չի անհետանում, շարունակում ե թաղված մնալ արհեստակցական շարժման մեջ, որը հակառակ անգլիական և գերմանական արհեստակցական շարժման, անկախ քաղաքական բանվորական շարժումից և, նրանից բաժան, փափագում ե կռվի յելնել կապիտալիզմի դեմ, և առժամանակ ի վիճակի չլինելով տալ նրան վերջնական ճակատամարտ՝ վառում ե իր յեռանդն անվերջ գործադուլներում։*

Ֆրանսիական բանվորական շարժման յերկրորդ հատկանիշ կողմըն ե նրա բաժան-բաժան լինելը *(*ֆրակցիոնիզմը*), իրար հետ ներհակող՝ բազմաթիվ ուղղությունների ու տեսությունների (թեորիաների) գոյությունը։ Դրա հետ միասին աչքի յե ընկնում այն դերը, որ խաղում են նրա մեջ առանձին* անհատները*՝ տեսաբանները, գաղափարախոսներն ու առաջնորդները։ Բանվորական շարժման առաջին շրջանում (մինչև 1871 թ.) մենք նկատում ենք*

առանձին գիտնականների ու գրողների (գաղափարախոսների ու տեսաբանների) անհատին նշանակությունը, Սեն-Սիմոնի, Ֆուրյեյի, Պրուդոնի, Լուի-Բլանի, Բուշեյի ու այլոց: Յերկրորդ շրջանում մենք հանդիպում ենք այն դերին, վորը խաղում են սոցիալիստական շարժման մեջ նրա պարագլուխները, ըստ վորում, մենք տեսնում ենք, վոր նույնիսկ ուղղությունները կոչվում են այդ անձանց անունով — պրուդոնիզմ, բլանկիզմ, գեդիզմ, բրուսսիզմ, ժորեսիզմ, եռվեյիզմ յեվայլն:

Վերջապես ֆրանսիական բանվորական շարժման վերջին տասնամյակների ամենակարեվոր առանձնահատկությունը նրա յերկու տարրերի միջեվ յեղած՝ քաղաքական ու տնտեսական զանազանությունն է, պառակտումը բանվորական քաղաքական կուսակցության յեվ սինդիկալիզմի ուղին բռնած արհեստակցական կազմակերպության միջեվ:

ԱՅԴ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Ֆրանսիական բանվորական շարժման այդ բոլոր մատնանշված առանձնահատկությունները պետք ե նախյեվառաջ բացատրել Ֆրանսիայի քաղաքական ու տնտեսական կյանքի ուրույնությամբ:

Թեյեվ Ֆրանսիայում խոշոր արդյունաբերությունն անշեղ կերպով զարգանում եր անցյալ դարի միջին կեսերից սկսած, այնուամենայնիվ նա բավականաչափ հետ եր Գերմանիայից, Անգլիայից, Միացյալ-Նահանգներից: Բավական ե մատնանիշ անել հետեվյալ թվերի վրա: 1911 թվին Ֆրանսիան իր ազգաբնակության ամեն մի շնչի համեմատությամբ՝ արտադրեց 6,8 փութ չուգուն և 5,7 փութ պողպատ: Գերմանիան նույն տարին ազգաբնակության ամեն մի շնչի համեմատությամբ արտադրեց 14,2 փ. չուգուն և 14 փ. պողպատ: Նույնպես եվ արտադրությունների կենտրոնացման խնդրում Ֆրանսիան չափազանց հետ եր մնացել հիշյալ յերկրներից: Միքանի ֆրանսիացի վիճակագրողների կարծիքով, մանր արդյունաբերական (այսինքն 1—10 բանվոր ունեցող) ձեռնարկությունների թիվը XIX-րդ դարի վերջին տասնամյակներում Ֆրանսիայում կազմում եր արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թվի 90%-ը: Այդ առաջ ե գալիս նրանից, վոր հատկապես ֆրանսիական արդյունաբերության ճյուղերի մեծագույն մասը դեռ

յեվս կրում է կիսարհեստավորական, մանր արտադրության բնույթ. Դա նախևառաջ վերաբերում է այսպես կոչված գեղարվեստական արդյունագործությանը, մետաքսեղենի արտադրությանը, Պարիզի շքեղության իրեր պատրաստող՝ անհամար արդյունաբերական հիմնարկություններին։ Ֆրանսիական արդյունաբերության մանր արհեստավորական բնույթը գերակշռող էր հանդիսանում 19-րդ դարի կեսին և մանր արդյունաբերական բուրժուազիան քաղաքային գերակշռող դասակարգ էր, վորից կազմվում էր այն ժամանակ բանվորական շարժման առաջապահ ջոկատը։ Յեվ յեթե այժմ այդ դասակարգն աստիճանաբար հեռանում է բեմից՝ զիջելով տեղն իսկական պրոլետարիատին, այնուամենայնիվ նրա քաղաքական ու սոցիալական դերը Ֆրանսիայում այնքան էլ վերջացած չէ դեռ։ Այդ բոլոր ասածներին պետք է ավելացնել և այն, վոր Ֆրանսիայում ազգաբնակության կեսից ավելին (19-րդ դարու կեսին՝ 70%, ներկայումս 55%-ից ավելին) կազմում է մանր գյուղացիությունը, վորը ամուր կերպով կապած է իր սեփականությանը։ Պարզ է, վոր մանր բուրժուազիան պետք էր դրոշմը դներ Ֆրանսիայի սոցիալական ու քաղաքական կյանքի վրա։

Մանր բուրժուազիան իր սոցիալ-տնտեսական բնույթով, ժամանակակից կապիտալիստական հասարակության յերկու բևեռներում, այն է և խոշոր բուրժուազիայի և պրոլետարիատի մեջեվ, դրավում է միջին անկայուն տեղը, դրա շնորհիվ էլ մանր բուրժուազիան ունի յերկդիմի, համարյա բոլորովին հակադիր, սոցիալ-քաղաքական ձգտումներ։ Վորչափ վոր նա անգիտակից է ու տգետ, քարշ է գալիս խոշոր բուրժուազիայի ու խոշոր հողատերերի հետեվից, ձգտելով պաշտպանել գոյություն ունեցող իրավակարգը, վորի ժամանակ նրա հատուկենտ ներկայացուցիչներին հաջողվում է բարձրանալ հասարակական սանդուխքի գագաթը։ Նրա մյուս մասը (փոքրագույնը) ինքնագիտակցության գալով, ըմբռնելով գոյություն ունեցող իրավակարգի բացասական կողմերը, սկսում է սաստիկ ատելություն տածել դեպի խոշոր կապիտալը և նրան պաշտպանող քաղաքական հիմնարկությունները։ Սակայն, այն միջոցին, յերբ պրոլետարիատը, վորպես մի դասակարգ, վորին պատկանում է ապագան, կարող է սպասել, մինչեվ վոր բավականաչափ ուժեր կհավաքի, մինչեվ վոր իր շարքերը կկազմակերպվեն, մանր բուրժուազիան վորպես մեռնող դասակարգ, շտապում է կարելույն

չափ շուտով տապալել իր ատելի թշնամուն և հաստատել նոր իրավակարգ՝ վորյեվե ուտոպիստ-գաղափարախոսի դեղատոմսի համաձայն։ Այստեղից առաջ է գալիս ծրագրերի բազմատեսակությունը, պարագլուխների շատությունը, շարժման հատվածականությունը, ուրեմն և տակտիկայի ծայրահեղ հեղափոխությունը, դավադիրների մի փոքրաթիվ խմբի ձգտումն ապստամբություն բարձրացնել, կանխելու անցքերի պատմական ընթացքը՝ գաղտնի միությունների մեջ կազմակերպված՝ հարձակման միջոցով։ Ի վերջո հարկավոր է նկատել, վոր, ինչպես ցույց է տալիս յեվրոպական փորձն, այն յերկրներում, ուր ազգաբնակության գերակշռող մասը մանր հողատիրական գյուղացիությունն է (ինչպիսին է՝ Ֆրանսիան, Իտալիան, Սպանիան, Իռլանդիան), վոչ միայն հեղափոխականությունն է հետեվողներ ունենում, այլեվ անարխիզմը։ Գյուղացիությունը, վորի քաղաքական հորիզոնը սահմանափակվում է նրա մանր ինքնավար համայնքում, լավագույն դեպքում շատ անվստահ է վերաբերվում դեպի կենտրոնական կառավարությունը, վոր ինչ վոր մի հեռու տեղ բազմած ու իրան շոշափելի ոգուտ չտվող մի հաստատություն է, վոր յուրացնում է իր յեկամտի մի խոշոր մասը տուրքերի անվան տակ, և զինվորական ծառայության տանում իր զավակներին։

Վերոհիշյալներից հետո այլեվս չպետք է զարմանալ, թե ինչու մանր բուրժուազիայի մեջ և մանավորապես գյուղացիության ծայրահեղ պահպանողականության հետ կողք-կողքի կարողանում է ապրել ծայրահեղ արմատականությունը և անարխիզմը։

Ֆրանսիայի քաղաքական պատմության և նրա ժամանակակից պետական կազմի քննելը կոգնե մեզ ըմբռնելու, թե ինչու նրա բանվորական շարժումն ունի այն գծերը, վոր վերը հիշատակեցինք։

Աշխարհիս հեղափոխական քաղաք Պարիզում և Ֆրանսիայի մյուս արդյունաբերական կենտրոններում ամենահեղափոխական պրոլետարիատի, մանր բուրժուազիայի ու ինտելլիգենցիայի հետ, վոր ապրում եյին Ֆրանսիայում կողք-կողքի, սկսած XIX-րդ դարի կեսից խոշորագույն քաղաքական դեր խաղացին յերկու հետադիմական ուժեր—հետամնաց ու տգետ գյուղացիությունը և տիրապետող դասակարգերի սպասարկու կաթոլիկ հոգեվորականությունը։ Ահա թե ինչու պրոլետարիատի, քաղաքային մանր բուրժուազիայի ու ինտելլիգենցիայի ամենափայլուն հեղափոխական նր-

վաճառումները հաճախ տապալվում էին շնորհիվ այն բանի, որ գյուղացիությունն աջակցում էր այնպիսի հետադիմական հասարակական խմբավորումների, ինչպիսին է ազնվականությունը և հոգևորականությունը։

Մի շարք քաղաքական ու սոցիալական անաջողություններ և Կոմմունայի պարտությունը, չէին կարող հիասթափություն չպատճառել բանվորական շարժման գործիչներին, մանավանդ այնպիսիներին, որոնք վարակված էին մանր բուրժուական ոգով, հիասթափություն քաղաքական գործունեության ու ընտրողական պայքարի մեջ, և ուղղել նրանց ձգտումներն ուրիշ ուղիներ որոնելու՝ տնտեսական հավասարության ցանկալի իրավակարգն ավելի շուտ հաստատելու նպատակով։ Բայց նրանց համար, ովքեր ընդունակ էին գիտակցորեն ու անաչառությամբ վերաբերվելու գործին, ակներև էր, որ ֆրանսիական քաղաքական կյանքը դեռևս լեցուն է ինքնակալական դարշարջանի շատ մնացորդներով, և որ կռիվը պետք է մղվի նախևառաջ այդ ըմբռնումներից ասպարեզը մաքրելու, այսինքն նախևառաջ կռիվը պետք է ուղղել դեպի քաղաքական կողմը։

Ժամանակակից ֆրանսիական հանրապետությունն արդյունքն էր այն կոմպրոմիսի, որը կայացավ յերկրի դեմոկրատական և հետադիմական տարրերի միջև, ուստի նա շատ է հեռու դեմոկրատական իդեալից։ Այստեղ տեղը չէ թվելու նրա բոլոր բացասական կողմերը. մատնանշենք, որ նրա սենատը (վերին պալատ) հետադիմական էր, և պետական խորհուրդը, զորքը, կենտրոնական բյուրոկրատիան, վարչական արդարադատությունը, սահմանափակ ինքնավարությունը նույնպես հետադիմական են։ Հասկանալի յէ՝ թե ինչու այդպիսի պայմաններում և հետադիմական ուժերի գոյությամբ, որոնք ուղղակի թե անուղղակի պաշտպանում են խոշոր բուրժուազիայի շահերը, Ֆրանսիայի բանվորական ու սոցիալական օրենսդրությունը դանդաղ է առաջ ընթանում, և գյուղացի-զինվորները գնդակ են արձակում իրանց յեղբայր-պրոլետարների դեմ՝ պաշտպանելով խոշոր կապիտալի անձեռնմխելիությունը։

Դա հիասթափեցնում է կապիտալիստական հասարակակարգի շուտափույթ փոփոխման ձգտող դյուրաբորբոք հեղափոխականներին, և նրանք հրաժարվում են քաղաքական կռվից։ Մինչդեռ, բոլորովին ընդհակառակը, նրանք պետք է ձգտեին մաքրելու հաս-

բակապետական կազմը հետադիմական միացորդներից և հաստատեյին իսկական ռամկավարական հասարակապետություն, վորի միջոցով միայն ամբողջ քաղաքական իշխանության փոխանցումը բանվոր դասակարգին անխուսափելի կլիներ։

Սակայն դրա համար նախևառաջ անհրաժեշտ է բանվորական շարժման հիմնական տարրերի միահամուռ և միաբան գործակցություն, անհրաժեշտ է ամենից առաջ հրաժարվել սինդիկալիզմից։

ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄԻ ԻՍԿԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Վերն արդեն մենք մատնանշել եյինք, վոր սինդիկալիզմը խառնուրդ է զանազան թեորիաների՝ պրուդոնիզմի, մարքսիզմի, անիշխանության։

Մանր բուրժուազիայի գաղափարախոս Պրուդոնը 19-րդ դարի կեսերին ահագին ազդեցություն ուներ ֆրանսիական բանվորական շարժման վրա. չնայած վոր նրանում այն ժամանակ գերակշռող եյին մանր-բուրժուական տարրերը, և տոն եյին տալիս հաճախ մանր-արհեստավորական արտադրությունների վարպետներն ու նրանց ոգնականները (հիշենք պրուդոնականների դերը Ինտերնացիոնալում, Պարիզյան Կոմմունայում, արտադրական ու արհեստակցական միությունների մեջ)։ Այդ ազդեցությունը չի անհետացել մինչև այսոր ել։ Պրուդոնից ֆրանսիական առաջին շրջանի արհեստակցական շարժումը փոխ է առել նրա բացասական վերաբերմունքը դեպի պետությունն ու քաղաքականությունը և ձգտումը՝ միանալու ֆեդերատիվ սկզբունքներով, այդպիսով նա անցել է դեպի անիշխանության ուղին։

70-ական թվականների վերջում Ֆրանսիայում սկսվեց մարքսիզմի ագիտացիան՝ Գեդի, Լաֆարգի, Լոմբարի կողմից, վորոնք գործում եյին Մարքսի ու Ենգելսի անմիջական ղեկավարությամբ։ Նրանց քարոզները ունեցան խոշոր հաջողություն, նրանց հաջողվեց արմատացնել սոցիալիզմի հոգին ֆրանսիական արհեստակցական շարժման մեջ ու այն ել մարքսիստական սոցիալիզմի։ Նրանցից եր, վոր ֆրանսիական արհեստակցական շարժումը սովորեց իր ուսմունքի հիմնական տարրերը—դասակարգային պայքարի թեորիան և իր գործելակերպի ղեկավարող սկզբունքը, վորն ասում է թե բանվորների ազատագրումը պետք է լինի բանվորների իրանց գործը։

Սակայն 90-ական թվականներին Ֆրանսիայում վերածնվեց անիշխանությունը, որը համարյա թե չքանալու վրա էր (իր նախահայր Բակունինի հետ միասին, որը իր կողմից շատ բան էր փոխ առել Պրուդոնից)։ Ժխտելով ամեն մի իշխանություն, կազմակերպություն և հպատակություն, անիշխանականները կոչ էին անում դիմելու «գործողության պրոպագանդային», որը վերջիվերջո հասցնում էր քաղաքական սպանությունների ու ռումբերի պայթյուններ առաջ բերելուն։ Վորավնեռնել գործողության այդ եղանակը ոչինչ չտվավ, բացի կառավարության հալածանքներից, անիշխանականները դիմեցին խաղաղ պրոպագանդային, ուշադրություն դարձնելով սինդիկատների վրա, որտեղ մի կողմից՝ դեռևս ուժեղ էր մանր-բուրժուական ոգին, իսկ մյուս կողմից՝ չէր անհետացել քաղաքականության վերաբերմամբ ունեցած հիասթափությունը։ Կարճ ժամանակից հետո սինդիկատներն ընկան անիշխանականների ճնշիչ ազդեցության տակ։ Նորից գերակշռեց բացասական վերաբերմունքը դեպի քաղաքականությունը։ «Ուղղակի գործողության» թեորիան ընդհանուր գործադուլների միջոցով նրանց խոստանում էր իր կոմմունիստական հասարակակարգի շուտափույթ իրականացումը։ Տեղի ունեցավ պառակտում նրանց և սոցիալիստների միջև։

Բայց բազմաթիվ փորձեր ընդհանուր գործադուլ կազմակերպելու համար անհաջող վերջացան։ Բուրժուազիան առաջվա նման իշխում է ֆրանսիական պարլամենտում և ուղղում է երկրի քաղաքականությունը դեպի իրան ցանկալի կողմը։ Ներկա պատերազմը, որին ֆրանսիական սինդիկալիստները, հակառակ իրանց հակամիլիտարիստական ու հակահայրենասիրական թեորիաների ու ձգտումների, ստիպված յեղան մասնակցել, որոշակիորեն ցույց է տալիս, որ պրոլետարիատն այսուհետև էլ կամազուրկ և խաղալիք է լինելու բուրժուազիայի ձեռքում, քանի նրա ներկայացուցիչներն իրանց դիրքերը չեն ամրապնդել պարլամենտում, որպեսզի ի վերջո տիրանան քաղաքական իշխանությանը։*)

*) Ծանոթություն.—1914 թվից մինչև մեր օրերը ֆրանսիական բանվորական շարժումը հետեվյալ ընթացքն է ունեցել։

Ինչպես բոլոր յերկրների սոցիալ-դավաճանները, նույնպես էլ ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունն ու Աշխատանքի Ընդհանուր Կոնֆեդերացիան, որ կոչված էին պրոլետարիատի ազատագրական պայ-

ջարը ղեկավարելու, անցան բուրժուազիայի կողմը, դավաճանեցին իրանց գաղափարներին։ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության կենտկոմն ու պարլամենտական ֆրակցիան, 1914 թ. դեկտեմբերի 25-ին իր հրապարակած մանիֆեստում հայտարարեց, վոր Ֆրանսիայի համար պատերազմն «ազատարար պատերազմ է», վոր Ֆրանսիայի կոչումն է լինել միշտ կռվել ազատության համար», վոր «Ֆրանսիական պրոլետարը Մեծ հեղափոխության հիմնադիր ժողովի ժառանգն է», վոր Գերմանիայից հետ պետք է խլել Էլզաս-Լոթարինգիան յևվայլն։

Վայրագ, արյունռուշտ ազգայնամոլությունն էր իշխում...

Բայց իհարկե՝ կային և հեղափոխական, ընդդիմադիր տարրեր։

1915 թվին. սոցիալիստական կուսակցության և սինդիկալիստական հոսանքի ընդդիմադիր, հեղափոխական տարրերը միանում են, կազմակերպում «Միջազգային հարաբերությունները վերականգնող կոմիտե»։ Հեղափոխական շարժումներին հետևում են կառավարության հալածանքները, բռնությունները ու ճնշումները։

1915 թվից ֆրանսիական արհշարժումը զորակոչների, ղեկավարների օպորտյունիզմի և կառավարական հալածանքների պատճառներով քայքայման շրջան է ապրում, բանվորները մասսայորեն թողնում են արհմիությունների շարքերը. սինդիկատների անդամների թիվը կիսից ավելի պակասում է։

1911 թվին սինդիկատներում հաշվվում էյին 1.029.238 անդամ, իսկ 1922 թվին արհմիություններում մնում են՝ 600.000 անդամ։

Պատերազմի ընթացքում ֆրանսիական բուրժուազիան հզորանում է, հաղթող Ֆրանսիան դառնում է դավադիր, իմպերիալիստական հակահեղափոխական մի ույժ։

Ընթերցողին ծանոթ են ֆրանսիական բուրժուազիայի վոտնձգություններն ու կռիվը Խորհրդային իշխանության դեմ, նրա քաղաքականությունը Մերձավոր Արեվելքում և Տաճկաստանում, նրա արյունոտ քաղաքականությունը դեպի Գերմանիան յևվայլն։

Չնայած տիրող ռեակցիային, չնայած արհշարժման ղեկավարների ու սոցիալ-ռեֆորմիստների դավաճանություններին, 1920 թվականից Ֆրանսիայում լայն բանվորական մասսաներն արթնացման նշաններ են ցույց տալիս։

Մի շարք մեծ գործադուլներ են լինում. կազմակերպվում են հեղափոխական արհեստակցական միությունների միավորումներ։ Կազմակերպվում է Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիան։

Վորոշ սինդիկատներում կազմակերպվում են գործարկոմներ (фабзавком), վոր հեղափոխական մեծ դեր են խաղում։

1920 թ. դեկտեմբերին հեղափոխական ուժերի ղեկավար Կոմկուսն է կազմակերպվում, վորն այնուհետև ավելի ուժեղացնում է իր պայքարը դեղին արհմիությունների դեմ։

Քանի գնում ուժեղանում և սաստկանում է հեղափոխական արհմիությունների կռիվը։

Աշխատանքի Ընդհանուր Կոնֆեդերացիայի ղեկավարությամբ դեղին արհմիությունները սկսում են հեղափոխական կոմմունիստական տարրերին հեռացնել իրանց շարքերից։

Հեղափոխական արհմիությունները պրոլետարական միասնական ճակատի լոզունգն են առաջադրում և ուժեղացնում են իրանց աշխատանքները, բոլոր ձախ հոսանքները համախմբվում են Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի ղեկավարության տակ։

Մի յերկու խոսք Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի մասին։ Նրա ղեկավարների մի մասը կոմմունիստներ են, մնացածները՝ անարխիստական և հակակոմմունիստական տարրեր։ Անարխիստները և անարխո-սինդիկալիստները հայտարարում են, վոր չեն հանդուրժիլ Կոմինտերնի ղեկավարությունն արհշարժման գործունեության մեջ, արհեստակցական շարժումը պիտի անկախ լինի քաղաքական կուսակցություններից. սկսվում է և պայքար Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի մեջ մտած հեղափոխական հոսանքների միջև։

Սենտ-Էտյենի համաժողովում Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի յերկու հոսանքների՝ ոպորտյունիստների և անարխո-սինդիկալիստների մի կողմից և մյուս կողմից հեղափոխական տարրերի ու սինդիկալիստ կոմմունիստների միջև յեղած պայքարը վերջանում է կոմմունիստների հաղթությամբ։ Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի անդամների 3/4-ը կոմմունիստների կողմն է անցնում, միայն 1/4-ը անարխիստների 1922 թվին Ա. Ու. Կոնֆեդերացիան միանում է Պրոֆինտերնին։

Այդ ժամանակից Ֆրանսիական Կոմկուսն ավելի սերտորեն է կապվում Ա. Ու. Կոնֆեդերացիայի հետ, ղեկավարում է նրա աշխատանքները։ Այդ ղեկավարությունն այնքան է խորանում, վոր 1922 թվին Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի Մարսելի կոնգրեսում ընդունվում է բանաձև, վորի մեջ ասված է. «Կոմմունիստական կուսակցությունը պրոլետարիատի ավանգարդն է», «ավանգարդն՝ և նույնպես արհեստակցական շարժման»։

Ներկայումս կոմմունիստական շարժումը քանի գնում ուժեղանում է, իր ազդեցության տակ առնում ֆրանսիական բանվորական շարժումը։

Ֆրանսիայան Կոմկուսը և կարմիր պրոֆմիությունները ներկայումս պայքար են մղում՝ Ռուրից ֆրանսիական զորքերը հանելու համար, նրանց կռիվը որ-որին թափ է առնում, նրանք հետևողական պայքար են մղում Ֆրանսիայում բանվորա-գյուղացիական, խորհրդային իշխանություն հաստատելու համար.

Հ. Գ.

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԵՐՄԱՆԻԱ

I

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

19-րդ դարի I կեսում Գերմանիան իրանից ներկայացնում եր մի շարք մանր-մունր, մոտ յերեսուն ութ, համարյա ինքնուրույն պետություններ։ Ճշմարիտ ե՝ այդ պետությունները համարվում եյին միավորված և նրանց գլուխ եյին կանգնած ընդհանուր իշխանություններ—կայսրը և միութենական սեյմը, սակայն այդ իշխանությունների նշանակությունն այնքան աննշան եր, վոր իրականապես գերմանական պետությունները նրանց չեյին յենթարկվում և նրանցից կախված չեյին համարում իրանց։

Այդ բոլոր մանր պետությունները, վորոնցից միքանիսը նույնիսկ փոքր եյին մեր նահանգի վորյեվե գավառից, կառավարվում եյին զանազան դուքսերի, իշխանների, կոմսերի յեվայլն միահեծան իշխանությամբ. ժողովրդին չեր թույլատրվում մասնակցելու պետական գործերին, վոր ամբողջապես վարում եյին կառավարական աստիճանավորները։

Գերմանական պետություններից ամենախոշորներն Ավստրիան ու Պրուսիան եյին. յերկուսն ել վիճում եյին իրար հետ գերմանական դաշնակցության մեջ առաջնությունը վայելելու համար։ 19-րդ դարի առաջին կեսում այդ առաջնությունն Ավստրիայի կողմն եր։

Քաղաքական հետամնացությունը համապատասխանում եր տնտեսական հետամնացությանը։ Մեր նկարագրած ժամանակ, յերբ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունն Անգլիայում զարգանում եր հսկայական քայլերով և Ֆրանսիայում նույնպես խոշոր առաջադիմություններ եր անում, Գերմանիան արդյունաբերական

տեսակետից մանր տնտեսի յերկիր եր այդ բառի կատարյալ իմաստով և այդպես էլ մնաց համարյա մինչեվ 19-րդ դարի կեսը։ Թե վորքան մանր եյին արհեստանոցները, կարելի յե իմանալ այն հանգամանքից, վոր դեռյեվս 19-րդ դարի կեսում Պրուսիայում յուրաքանչյուր 100 արհեստավորին ընկնում եր 83 քարգահ, իսկ 60-ական թվականների սկզբին՝ 104 քարգահ, այսինքն ամեն մի արհեստավորին մոտավորապես մի քարգահ։ Իրերի այդպիսի դրության մեջ յուրաքանչյուր քարգահ կարող եր հուսալ ժամանակին դառնալու ինքնուրույն տնօրեն-վարպետ, ուստի արհեստավորական ձեռնարկությունների մեջ տերերի ու բանվորների դասակարգային շահերի հակադրությունը շատ թույլ եր արտահայտված։

Ասենք՝ այդ ժամանակներում յեվս Գերմանիայում կապիտալիստական արդյունաբերության սաղմերն արդեն կային, արեվելքում՝ Սիլեզիայում ու Սաքսոնիայում, իսկ արեվմուտքում Հռենոս-Վեստֆալյան շրջանում։ Սիլեզիան վաղուց ի վեր հռչակված եր կտավեղենի արտադրությամբ։ Այդ արտադրությունը տնայնագործական բնույթ ուներ. սիլեզյան ջուլհակները ճորտ գյուղացիներ եյին և կալվածատիրոջը տուրք տալով՝ ձեռք եյին բերում ջուլհակությամբ զբաղվելու իրավունք։ Ժամանակի ընթացքում կապիտալիստներն սկսեցին այստեղ հիմնել մանուֆակտուրաներ, ապա և ֆաբրիկաներ, և ջուլհակները յերկար ժամանակ յենթակա եյին կրկնակի շահագործման—կալվածատերերի կողմից և կապիտալիստների կողմից։ Սաքսոնիայում զարգացած եր հանքային գործը, մասամբ էլ մահուդեղենի և բամբակեղեն գործվածքների արտադրությունը։ Բայց Գերմանիայի խոշոր արդյունաբերական անկյունը կարելի յե համարել հարավ-արեվմուտքում գտնվող Հռենոս-Վեստֆալյան շրջանը։ Այստեղ արդեն բավական վաղ եյին սկիզբ առել բամբակեղենի, բրդեղենի ու մետաքսեղենի ֆաբրիկային արտադրությունները, թուջ հալելու, մեքենաներ պատրաստելու ու զինագործական ձեռնարկություններն ու գործարանները. իսկ դրանց հետ միասին ծնունդ առավ նաև գործարանային պրոլետարիատը, վոր տառապեց կապիտալիզմի զարգացման սկզբնական աստիճաններում անզուսպ ձեռնարկուների ծայրահեղ շահագործումից։ Արդյունաբերության վաղ զարգացումը Գերմանիայի այդ անկյունը դարձրեց քաղաքականապես ավելի առաջադեմ. այստեղ ազատամիտ ու հեղափոխական գաղափարներն արդեն շուտ գտան կողմնակիցներ ու

պաշտպաններ։ Ազատության և բանվորական գործի համար պայքարողներ քիչ չեն դուրս յեկել այստեղից։

Ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էյին գյուղացիները, վորոնք 19-րդ դարի սկզբում ճորտական կախում ունեյին կալվածատերերից։ Ֆրանսիական կայսր Նապոլեոնի հետ ունեցած անհաջող պատերազմը (1807 թ.) ստիպեց թագավորին ու բյուրոկրատիային ուշադրություն դարձնել ժողովրդի վիճակի վրա։ Սկզբում, քանի դեռ Պրուսիան պարտված կողմ էր, նրա վարիչներն ավելի ազատամտորեն էյին տրամադրված, և գյուղացիների համար հրատարակվում էյին փոքրիշատե օգտակար օրենքներ։ Բայց հենց վոր Նապոլեոնը ջարդ կրեց ու գահընկեց յեղավ (1814 թ.), գերմանական կառավարությունների վերաբերմունքը դեպի գյուղացիները փոխվեց դեպի ավելի վատը, և վերջիվերջո գյուղացիների ազատագրություն Պրուսիայում կատարվեց այն ձևով, վոր գյուղացիական հողերի մեծ մասն սկսեց անցնել կալվածատերերի ձեռքը, իսկ հողազուրկ յեղած գյուղացիները մասամբ դարձան գյուղական բանվորներ, մասամբ էլ ստիպված էյին նետվել քաղաք աշխատանք վորոնելու, վորը հետագայում աննշան դեր չխաղաց արդյունաբերության զարգացման գործում, և վորին գյուղն անընդհատ էժանագին բանվորական ձեռքերի մեծ խմբեր էր ուղարկում։

Արդյունաբերության թույլ զարգացման հետևանքն այն էր, վոր բուրժուազիան սակավաթիվ էր, վոչ բավականաչափ հարուստ և չուներ իշխանություն ձեռք բերելու այն ձգտումները, վորն ունեյին Անգլիայի ու Ֆրանսիայի բուրժուաները։ Լիբերալիզմն ու սահմանադրականությունը, այսինքն թագավորների ու դուքսերի միահեծանությունից ազատագրվելու ձգտումը, պահպանվում էյին հարավային ու արևմտյան պետություններում գլխավորապես ուսանողական շարժումով և այն անբավականությամբ, վոր սերմանում էյին իրանց հեղինակություններով ու պրոպագանդաներով գրողների ու առաջադեմ ինտելիգենցիայի առանձին խմբակները։ Բուրժուազիան ավելի էր շահագրգռված Գերմանիայի արդյունաբերության զարգացումը բարձրացնելու խնդրով, վորը շատ էր տուժում նրա բաժան-բաժան լինելուց, նրանից, վոր նրան կազմող մանր պետություններն իրարից բաժանված էյին մաքսատներով, միևնույն ժամանակ այդ մանր պետություններից համարյա յու-

րաքանչյուրն ուներ իր կշիռն ու չափը, իր դրամը և պոստային տարիֆը։ Դա չափազանց խանգարում եր յերկրի առանձին մասերի առևտրական ու արդյունաբերական փոխհարաբերությունները, հնարավորություն չէր տալիս ստեղծելու միասնական ներքին շուկա գերմանական արդյունաբերության համար։ Ինչ վերաբերում է արտաքին համաշխարհային շուկային, նա ել ավելի պակաս մատչելի յեր գերմանական ապրանքների համար։ Ավելին կասենք, անգլիական և ֆրանսիական ապրանքները, վոր ահագին քանակությամբ արտադրվում եյին մեքենաների միջոցով, դուրս վանեցին շուկայից գերմանական ապրանքները մինչև անգամ հենց Գերմանիայից՝ այդպիսով մեռցնելով նրա արդյունաբերությունն իր սաղմում։ Ահա թե ինչու գերմանական բուրժուազիայի գլխավոր ձգտումներն ուղղված եյին նախ և առաջ գերմանական առանձին պետությունների միջև յեղած մաքսային և այլ խոչընդոտները վոչնչացնելուն և նրանց մեջ մաքսային դաշինք ստեղծելուն, վորին մասամբ հասան 1834 թվին, և յերկրորդ, այդ բուրժուազիան ձգտում եր պաշտպանել Գերմանիան ոտարյերկրյա ապրանքների հեղեղից ու այդպիսով հնարավորություն տալ հայրենի արդունաբերությանը զարգանալու։ Դրան կարելի է հասնել այսպես կոչված հովանավորական մաքսի օգնությամբ, այսինքն այնպիսի բարձր մաքս դնելով անգլիական ու ֆրանսիական եժանագին ապրանքների վրա, վոր նրանք այլևս չկարողանան մրցել վորակով վատթար ու թանգարժեք հայրենական ապրանքների հետ։ Գերմանիայում հայրենի արդյունաբերության զարգացման վերաբերյալ այդ տեսակետի գլխավոր արտահայտիչն եր հանդիսանում Վյուրթեմբերգի պրոֆեսոր Ֆրիդրիխ Լիստը, վորը համարվում է այդ դարաշրջանի գերմանական բուրժուազիայի շահերի գլխավոր պաշտպանը տնտեսական գիտության մեջ։

Այդպիսով 19-րդ դարի առաջին շրջանի գերմանական բուրժուազիան իբրև հակակշիռ անգլիական ու ֆրանսիական բուրժուազիայի՝ հանդես յեկավ վոչ թե առևտրի և կառավարական խնամակալության ազատության դրոշակի տակ, այլ ընդհակառակը՝ իր թուլության ու աննշանության շնորհիվ նա կոչ եր անում սահմանափակել առևտրի ազատությունն, աղերսում եր կառավարական խնամակալություն հովանավորական տուրքերի ձևով։ Ինքնըստինքյան հասկանալի է, վոր այդ տեսակ բուրժուազիայից չեր կարելի

ակնկալել քաղաքական լայն թափ և ինքնակալության դեմ քաղաքական ազատության համար պայքարելու ընդունակություն. Ինչ վերաբերում է հողատերերին, մանավորապես պրուսական ճորտատեր ազնվականներին, վորոնք ստացել եյին պրուսական յունկերներ անունը, նրանք ամբողջովին շահագրգռված եյին հին կարգերի պահպանությամբ, վորոնց ժամանակ նրանք պահում եյին գյուղացության կիսաճորտական դրության մեջ և մատակարարում եյին պետությանն իրանց շարքերից բարձրաստիճան բյուրոկրատական ու զինվորական աստիճանավորներ։ Հետեվապես նրանք ռեակցիոներներ եյին, վորպիսին մնում են մինչեվ այժմ էլ։ Վերջապես, գյուղացիները կարիքից ընկճված և կախումն ունենալով ազնվական-կալվածատերերից՝ քաղաքականապես ներկայանում եյին սակավ գիտակից ու անգործունյա զանգվածներ։

Այն ժամանակվա ամենաառաջադեմ հասարակական տարրերը, ինչպես կտեսնենք, արդյունաբերական գավառների բանվոր ազգաբնակչությունն ու արհեստավորները, եյին ավելի ուղիղն ասել՝ արհեստավոր քարգանները, վորոնք, ինչքան ավելի եր զարգանում արդյունաբերությունը, այնքան ավելի ու ավելի եյին նետվում պրոլետարիատի շարքերը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Դեռ յեվս հին ժամանակներից ի վեր գերմանական արհեստավորների մեջ սովորություն կար, վորի համաձայն քարգաններն իրանց արհեստը կատարելագործելու համար պետք է միքանի տարի թափառեյին մի քաղաքից մյուսը, բանելով և սովորելով այնտեղերի քարգանների մոտ։ Հաճախ այդ նպատակով ուղեվորվում եյին մոտակա ոտար յերկրները՝ Զվիցերիա, Ֆրանսիա, իսկ յերբեմն էլ նույնիսկ Անգլիա։ Շատերը մնում եյին ոտար յերկրում ընդմիշտ, վոմանք հայրենիք եյին վերադառնում՝ բերելով իրանց հետ նոր քաղաքական ու սոցիալական աշխարհհայացքներ, վորոնց հետ ծանոթացած եյին լինում յեվրոպական առաջադեմ յերկրներում, և տարածում ընկերների մեջ։

Արդյունաբերության զարգացման հետ՝ մրցակցության ազդեցության տակ՝ գերմանական արհեստավորներն սկսեցին թափառել հարեվան յերկները և նույնիսկ Ամերիկա, բայց արդեն վոչ թե

իրենց արհեստներում կատարելագործվելու համար, այլ աշխատանք ու վաստակ վորոնելու համար։ Վոմանք ստիպված էյին փախչել արտասահման գերմանական հետադեմ կառավարությունների հետապնդումներից ազատվելու համար։ Ֆրանսիայում, Զվիցերիայում ու Անգլիայում այդ թափառող արհեստավորները շփվում էյին քաղաքական էմիգրանտների (գաղթականների) և հեղափոխականների հետ, գլխավորապես իտալացիների, լեհերի ու գերմանացիների հետ։

Յեվրոպական հեղափոխական շարժման գլխավոր կենտրոնն այդ ժամանակ Պարիզն էր, և այստեղ 1834 թ. հիմնվեց գերմանական էմիգրանտների առաջին գաղտնի կազմակերպությունը—**տարագիրների միություն**։ Այդ միության գլուխ էյին կանգած յերկու նախկին գերմանական պրիվատ-դոցենտներ (համալսարանական կրտսեր պրոֆեսորներ) Յակոբ Վենեդեյը և Թեոդոր Շուստերը։ Առաջինն ավելի չափավոր հայացքների տեր մարդ էր, իսկ Թեոդոր Շուստերն ավելի ծայրահեղ տեսակետներ էր արտահայտում։

Միության գլխավոր միջուկը կազմում էյին վոչ միայն մշտապես Պարիզում ապրող միքանի հարյուր արհեստավորական քարդաններ, այլ և թափառողներ, վորոնք վաղ թե ուշ պետք է վերադառնային Գերմանիա. այս վերջիններիս պրոպագանդայի յենթարկելու վրա հատուկ ուշադրություն դարձրվեց, վորովհետև նրանք հայրենիք վերադառնալով՝ պետք է ստեղծեյին միության բջիջներ, վոր և կարճ ժամանակից հաջողվեց իրականացնել մի ամբողջ շարք խոշոր քաղաքներում (Բեռլինում, Լայպցիգում, Ֆրանկֆուրտում, Բրեմենում, Մյունխենում)։

Միությունը կազմակերպվել էր ֆրանսիական գաղտնի ընկերությունների նման խիստ գաղտնապահության (կոնսպիրացիայի) և գլխավոր գաղտնի կոմիտեյին անպայմանորեն հնազանդվելու հիման վրա։ Ֆրանսիական «Մարդու իրավունքների ընկերության» նման նա նախընտրել էր հասարակապետական-ռամկավարական նըպատակներ, այսինքն նախ և առաջ քաղաքական ազատությունների հաստատում Գերմանիայում, ասել է թե համաժողովրդական նպատակներ։ Բայց միության առաջնորդները, վոր իրանք էլ աղոտ էյին ըմբռնում անտեսական և սոցիալական հարցերը, յենթադրում էյին, թե քաղաքական ազատությունն իր հետ կբերի նայեվ գույքային հավասարություն, վորին կարելի կլինի հասնել հարկային

համապատասխան սիստեմ մտցնելով և կարիքավորներին պետական աջակցություն ցույց տալով։ Այդպես էյին միության այն անդամների հայացքները, վորոնք հարում էյին Վենեդեյին։ Թեոդոր Շուստերը համաձայն չեր այդ հայացքներին։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգների որինակից նա պարզ տեսնում եր, վոր քաղաքական ազատությունը և հանրապետական իրավակարգը դեռ յեվս բավական չեն սոցիալական անհավասարությունները վերացնելու համար, վոր այդ անհավասարության հիմնական պատճառը կապիտալի տիրապետությունն է, վորի բաժինն են դառնում ուրիշի աշխատանքների պտուղները, վոր չարժե տապալել թագավորական լուծը՝ փոխարենը ֆաբրիկանտներին ու խանութպաններին հնազանդվելու համար։ Ուստի,—սովորեցնում եր նա,—հարկավոր է նպատակադրվել տապալելու միապետության հետ միասին նայև տիրող դասակարգերի բոլոր արտոնությունները, իսկ ամենագլխավոր արտոնությունը հարստությունն է։ «Թող հեղափոխության կայծը տապալե այդ թշնամուն, այն ժամանակ գահը, տոհմական ազնվականությունն ու փերեզակների տիրապետությունը կփլվի դրա հետ միասին, ինչպես վոր պատն իր հիմքի հետ։ Իսկ յեթե թողնենք նրան անձեռնմխելի, այդ դեպքում բոլոր մնացածները նորից կբարձրանան նրա ուսերի վրա»։

1835 թվին Վենեդեյն արտաքսվեց Ֆրանսիայից Լուի-Ֆիլիպի բուրժուական կառավարության կարգադրությամբ, իսկ գերմանական արհեստավորները գերմանական դաշնակցության սեյմից հրաման ստացան հեռանալ Պարիզից։ Այդ ջախջախիչ հարվածն ու ներքին անհամաձայնությունները շուտով պետք է հասցնեյին և հասցրին էլ պառակտման և միության քայքայմանը։

«Տարագիրների միությունից» հեռացած ավելի ձախակողմյան անդամները Շուստերի առաջնորդությամբ 1836 թ. հիմնեցին արդարացիների միությունը։

Այդ միության մեջ վոչ միայն սովորական անդամների, այլյեվ վարչության մեջ գերակշռում էյին արհեստավորները։ Վարչության անդամների թվում նշանավոր էյին կոշկակար Հայնրիխ Բաուերը և դերձակ Վիլհելմ Վայտլինգը։ Միությունը կոմմունիստական նպատակներ ուներ, այսինքն ձգտում եր հաստատել այնպիսի պետական կարգ, վոր արտադրության գործիքներն ու բոլոր հարստությունները պատկանեյին հավաքականորեն ամենքին, ամեն-

քը հավասար ու միատեղ աշխատեյին, հավասար ու միատեղ էլ վայելեյին իրանց աշխատանքի արդյունքները։ Միությունը հարում էր ֆրանսիական «Տարվա յեղանակների միությանը» և նրա հետ մշտական կապ էր պահպանում։ «Արդարացիների միության», ինչպես նաև գերմանական գաղթականության մյուս միությունների գործունեությունը կայանում էր նրանում, որ հիմնում էին ճաշարաններ, ընթերցանության, ինքնակրթության և յերգեցողության համար ընկերություններ, որտեղ ավելի յեռանդուն անդամներն զբաղվում էին միության գաղափարները տարածելով։

1830 թվին միությունը տակն ու վրա արվեց, որովհետև մասնակցել էր ֆրանսիական «Տարվա յեղանակների ընկերության» անհաջող ապստամբությանը։ Նրա անդամներից ոմանք կալանավորվեցին, իսկ ոմանք հարկադրված յեղան փախուստ տալ։ Անդամների մի մասն անցավ Լոնդոն, ուր փոխադրվեց և միության վարչությունը։ Այստեղ Մարկսի ու Էնգելսի պրոպագանդայի ազդեցության տակ «արդարացիների միությունը» վերակազմվեց «կոմունիստների միության»։ Վայտլինգը չվեց Զվիցերիա և մնաց այնտեղ հաստատվել։ Սկզբում նա շատ ընդհարումներ ունեցավ «Յերիտասարդ Գերմանիայի» ընկերության բուրժուա-դեմոկրատական մնացորդների հետ, որոնք անդրդվելիորեն հետևվում էին իրանց ծրագրին և թշնամաբար էին վերաբերվում կոմունիզմի պրոպագանդային։ Բայց հետո շատ յեռանդուն ու տաղանդավոր կազմակերպիչ կաշվեգործ Սիմոն Շմիդտի աջակցությամբ նա վերածնունդ տվավ «արդարացիների միությանը»՝ դարձնելով նրան գաղտնի ընկերություն։ Նա այդպիսով հույս ուներ խուսափել զվիցերական կառավարության հալածանքներից և յերկրորդ՝ կենտրոնացնել ավելի անձնվեր ու յեռանդուն անդամներին մի շարք սերտ խմբերի մեջ, որտեղից նրանք կարողանային ղեկավարել հասարակական ճաշարաններն, ինքնակրթության, ընթերցանության, մարմնամարզական ընկերությունները յեվայլն։

ՎԻԼՀԵԼՄ ՎԱՅՏԼԻՆԳՆ ՈՒ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Վիլհելմ Վայտլինգը ծնվեց 1808 թվին։ Աղքատի զավակ լինելով՝ նա մեծացավ ծանր կարիքների ու զրկանքների մեջ։ Սովորելով դերձակության արհեստը՝ նա սկզբում շրջագայեց Գերմանիայում, ապա 30-ական թվականների կե-

ան յեկավ Պարիզ, վորտեղ քիչ ընդհատումներով ապրեց մինչեվ 1851 թ.։ Այստեղ նա հիմնավոր կերպով ծանոթացավ ֆրանսիական ուտոպիստների (Ս.-Սիմոնի, Ֆուրյեյի) ուսմունքի հետ, բայց լիովին չհարեց նրանց տեսակետներին՝ փոխ առնելով միայն այն, ինչ վոր նրանց հայացքներում ավելի եր առաջադիմական. Նա մերժեց ընդունել այն, ինչ վոր նրան թվում եր հետամնաց ու անիրագործելի, և հիմնեց իր սեփական սիստեմը։ Սակայն նա իր հայացքներով չհարեց նայեվ պրոլետարիատին, այլ ուտոպիզմի և պրոլետարական սոցիալիզմի միջին տեղը բռնեց։ Դա միանգամայն համապատասխանում եր այն դասակարգային դրությանը, վորի մեջ գտնվում եյին նա և նրա համախոհները։ Նա ինքը քարգած եր, ճըշմարիտ և՝ դեպի պրոլետարիատն իջած, բայց այնուամենայնիվ մանր բուրժուայի և պրոլետարի արանքում միջին տեղն եր գրավում։

Իր հայացքները նա արտահայտել է մի քանի գրքույկներում, վորոնցից ավելի նշանավոր են—«Մարդկությունը, ինչպես վոր կա և ինչպես պիտի լինի» (տպագր. 1838 թ.) և «Ներդաշնակության ու ազատության յերաշխիքները» (հրատ. 1842 թ.)։

Ոժտված չլինելով հասարակության պատմական զարգացման այնպիսի խոր ըմբռնողությամբ, ինչպես Ֆուրյեն և մանավանդ Ս.-Սիմոնը, նա այնուամենայնիվ հասկանում եր ու հավատում, վոր հասարակությունը զարգանում է միյեվնույն անփոփոխ կանոններով (որենքներով), ինչպես վոր բնությունը։ Այդ զարգացման հիմք եր ընդունում նա (Ֆուրյեյի նման) մարդկային կրքերը և նրանց համապատասխան ընդունակությունները։ Այդ կրքերը նա բաժանում եր յերեք կարգի. ձեռք բերելու, զվարճության և իմացականության կրքեր։ Հասարակության կանոնավոր զարգացման համար անհրաժեշտ է հավասարակշռություն նրա անհատների (անդամների) կրքերի և նրանց բավարարելու ընդունակությունների միջեվ։ Հասարակական բոլոր թշվառությունների պատճառն այդ հավասարակշռությունը բռնությամբ խախտելն է, հասարակության մի մասի կրքերի ճնշումը հոգուտ մյուս մասի, վորի հետեվանքն է լինում զգացողական հաճույքների հաղթանակն ընդեմ մտավորի, հասարակության մի մասի գերիշխումը մյուսի վրա առանձնավորների, որենքների ու պատիժների ոգնությամբ, գիտելիքների փոխարկվե-

լը նախապաշարման, խաբեությունն ու սուտը՝ շահամոլությունն ու զվարճությունների հետեվից ընկնելը պաշտպանելու համար։

Վայտլինգը շատ լավ հասկանում էր, թե վորքան խաբուսիկ են ուտոպիստների հույսերը, վոր դնում էին թագավորների ու միլիոներների օգնության վրա իրանց ծրագիրներն իրագործելու համար, և յեռանդով հայտարարում էր, վոր բանվոր դասակարգը յերբեք չի ազատագրվի, յեթե ինքն իրան չազատագրի։ Նա ծաղրում էր Ֆուրյեյին, վորն ուզում էր թույլ տալ իր ֆալանստերներում աշխատանքի վարձատրության շարքում նայեվ կապիտալի ու տաղանդի վարձատրություն այն հուսով, վոր այդ ճանապարհով կգրավե փողատեր մարդկանց։ Վայտլինգի կարծիքով ասոցիացիաները պետք է կազմված լինեն միմիայն աշխատավոր-պրոլետարներից։

Վայտլինգը ձգտում էր վերականգնել կրքերի և ընդունակությունների մեջ յեղած բնական հավասարակշռությունը, վոր հնարավոր է, յեթե ապահովենք դեպի գիտությունն ունեցած ձգտումները, ձեռք բերելու և զվարճության, այսինքն արտադրության և սպառումի ձգտումների կառավարումը. Նա չէր ցանկանում իր իդեալական հասարակության համար վո՛չ կառավարություն, վո՛չ որենք։ «Կատարելատիպ հասարակությունը, ասում էր նա,—չի ճանաչում վոչ մի կառավարություն, այլ միայն վարչություն, վոչ մի որենք, այլ միայն պարտականություններ, վոչ մի պատիժ, այլ միայն դարման»․ ուստի իր հեղինակության մեջ նա մի հատուկ գլուխ է նվիրում բժշկականության փիլիսոփայությանը։

Նրա ուսմունքի ուտոպիական բնույթը յերեվան է գալիս իր բոլոր ուժով, յերբ նա ուրվագծում է ապագա կոմմունիստական հասարակության ֆանտաստիկ ծրագիրը, վորի գլխին նա կանգնեցնում է յերրորդությունը կամ «յերեքի խորհուրդը»՝ բաղկացած մեծագույն փիլիսոփաներից, բժշկականության, բնագիտության ու մեքենայագիտության հանճարներից, այդպիսով գիտության ընդունակությանն արժանավայել տեղը տալով։ Նա նախազգուշացնում է ընթերցողներին սակայն, թե չպետք է առաջուց առանձին կարեվորություն տալ սոցիալական կազմի ուրվագծված ծրագրին, վորովհետեվ լուսնի տակ կատարյալ բան չկա և չի էլ կարելի հնարել մի այնպիսի հասարակակարգ, վոր պիտանի լիներ բոլոր ժամանակների համար և բոլոր հանգամանքներում։

Վայտլինգի հեղինակությունները իր ժամանակին ըստ արժանույն խոշոր հռչակ եյին վայելում։ Ֆրիդրիխ Էնգելսը Վայտլինգին անվանում ե միակ գերմանական սոցիալիստը, վորն իսկապես վորյևե բան ե արել իր դարաշրջանի համար։

Վայտլինգի հեղինակությունները շատ եյին կարդացվում և տարածվում նրա հետևորդների կողմից· գերմանական աղքատ արհեստավորները, վորոնք հազիվ հաց եյին վաստակում իրանց սուղ միջոցներն օտար յերկրում գոյություն պահպանելու համար, այդ հեղինակությունները տպագրում եյին իրանց հաշվով։ Չնայելով սահմանապահ իշխանությունների խիստ հսկողությանը և վոստիկանության հետապնդումներին՝ նրանք տարածում եյին այդ հրատարակությունները Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում։

1843 թ. Վայտլինգը գրեց «Խեղճ մեղավորների ավետարանը», վորտեղ նա աստվածաշնչից բերած ընտիր դարձվածներով ապացուցում եր, վոր դեմոկրատների ու կոմունիստների ամենածայրահեղ հայացքները լրիվին համապատասխանում են Քրիստոսի ուսմունքին։

Բայց նա իր այդ աշխատությունը հրատարակեց թե չե, շվիցերական հոգևորականությունն աղմուկ բարձրացրեց, և նա իր «Ավետարանի» համառոտ բովանդակությունը տարածելու համար պատասխանատվության յենթարկվեց աստվածահայհոյության համար ու դատապարտվեց 10 ամսվա բանտարկության։ Բանտից ազատվելուց հետո նրան հանձնեցին Գերմանիային, վորտեղից նա քիչ հետո ստիպված եր գնալ և բնակություն հաստատել Լոնդոնում։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՔԱՂՑԻ ՀԵՏԵՎԱՆՔ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԸ

Այն միջոցին, յերբ գերմանական արհեստավորական պրոլետարիատի պարագլուխները սոցիալիզմի սերմերն եյին սերմանում ժամանակավորապես գերմանական սահմանից այն կողմն ապրող իրանց հայրենակիցների շրջանում, Գերմանիայում քիչ-քիչ ամրանում եր կապիտալիզմը, ճշմարիտ ե՝ շատ դանդաղորեն ու անվճռողաբար, բայց և այնպես նա աստիճանաբար իր գործն եր անում։

Մաքսային դաշինքը, վոր շաղկապում եր գերմանական մանր պետությունները իրար հետ, յերկրի ավելի արդյունաբերական

շրջաններում արտադրվող ապրանքների համար սպառման շուկա ստեղ-ծեց։

Արդյունաբերական զարգացմանը բավականաչափ նպաստող հանդիսացավ նայեվ սկսվող յերկաթուղային շինարարությունը։

Սկսեցին կառուցել ֆաբրիկաներ ու գործարաններ, քաղաքներն ընդհարձակվում եյին, դառնում ավելի բազմամարդ ու հարուստ։ Արհեստավորական արտադրությունն սկսեց պակասել՝ իր տեղը զիջելով ֆաբրիկային, իսկ արհեստավորները չքավորության մեջ ընկնելով՝ լցվում եյին պրոլետարիատի շարքերը կամ գաղթում արտասահման։ 1846 թվին Պրուսիայում արդեն կային 78.000 ֆաբրիկաներ 551.244 բանվորներով. իհարկե՝ դրանք մեծամասամբ մանր ֆաբրիկաներ եյին, վորովհետեվ միջին թվով մի ֆաբրիկային ընկնում եր մոտավորապես 7 բանվոր։ Այնուամենայնիվ դրանք արդեն կապիտալիզմի սաղմերն եյին նրա բոլոր թշվառություն-ներով հանդերձ։

Բայց յեթե ֆաբրիկաների բանվորների դրությունը շատ վատ եր, առավել յեվս «վատթար եր մանվածային տնայնագործների ու ջուլհակների դրությունը Սիլեզիայում։ Ձեռքով աշխատող այդ բան-վորները հարկադրված եյին մրցել կատարելագործված մեքենաների միջոցով աշխատող անգլիական ջուլհակների հետ, ուստի նրանց վաս-տակը շատ աննշան եր, և հազարավոր սիլեզյան ջուլհակներ մեռ-նում եյին քաղցած տիֆից։ Իսկ յերբ գերմանական ձեռնարկու-ները շինեցին բամբակա-մանվածային և ջուլհակային ֆաբրիկաներ նորագույն մեքենաներով, բազմաթիվ բանվորներ մնացին անգործ և փողոց նետվեցին։

Ինչպես Յեվրոպայում ամենուրեք, այստեղ եվ բանվորական շարժումն ատելի մեքենաների դեմ արշավանքով սկսվեց։ Դրանք քաղցի հետեվանք ընդվզումներ եյին, վոր բռնկվում եյին առանց վորոշ ծրագրի, առանց հաղթանակի հույս ունենալու, սովի և հու-սահատության ազդեցության տակ։

Այդ քաղցի ապստամբություններից ամենամեծը պատահեց 1844 թվին Սիլեզիայում և հայտնի յե սիլեզյան ջուլհակների ա-պստամբություն անունով։ Վհատվելով քաղցած թողնող վարձագնից, վոր ֆաբրիկանտներն անողորմ կերպով շարունակում եյին իջեցնել, ջուլհակները թափվեցին իրանց կեղեքողների վրա, սկսեցին ջարդուփշուր անել ֆաբրիկաները, կոտրել մեքենաները, ավերել

ֆաբրիկանտների տները, վոչնչացնել նրանց սարքվածքը։ Ֆաբրիկանտներին օգնելու համար ուղարկված կառավարական զորքերը գնդակահարեցին շատ բանվորների, շատերը հետագայում դատի հանձնվեցին և խիստ պատիժներ կրեցին։

Այդ ապստամբությունից անմիջապես հետո անկարգություններ են տեղի ունենում Գերմանիայի զանազան մասերում—Սաքսոնիայում՝ յերկաթուղային բանվորների մեջ, Մագդեբուրգում՝ շաքարի գործարանների բանվորների մեջ, Բեռլինում կտավագործության արդյունաբերության մեջ։ 1846 թ. անկարգություններ են տեղի ունենում յերկաթուղային բանվորների մեջ Բրանդենբուրգում և Ելբինում ռոճիկներից անարդար զեղչումներ անելու և ցածր աշխատավարձ նշանակելու համար։ Նման անկարգություններ տեղի յեն ունենում շատ ուրիշ տեղերում յեվս։

40-ական թվականների յերկրորդ կեսում կյանքի թանգության պատճառով սկսվեցին հաճախակի խլրտումներ ծագել Գերմանիայի զանազան մասերում, մինչդեռ աշխատավարձը մնում եր առաջվա նման շատ ցածր։ Նրանցից մեկը, վոր հայտնի յե գետնախնձորային պատերազմ անունով, տեղի ունեցավ Բեռլինում 1847 թվին։

48 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՅԴ ՇՐՋԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1848 թվի փետրվարի հեղափոխությունը, վոր սկսվեց Պարիզում Լուի-Ֆիլիպպ թագավորի գահընկեցությամբ, մրրկի նման թավալվեց ամբողջ Յեվրոպայում։ Գերմանիայում նա սկսվեց մարտի կեսին, այդ պատճառով ել այստեղ հեղափոխությունը մարտյան անունն ստացավ։

Սկզբում, ինչպես և Ֆրանսիայում, բուրժուազիան միացավ պրոլետարիատի հետ ընդհանուր կռիվ մղելու միապետության դեմ։ Ժողովրդի միահամուռ գրոհի տակ գերմանական բոլոր իշխանավորներն ամենուրեք զիջում եյին, նշանակում եյին ազատամիտ մինիստրություններ, հրավիրում եյին ընտրովի օրենսդրական պալատներ։ Պրուսիայում հրավիրվեց Ազգային ժողով, վորը մշակեց թագավորի կողմից հաստատված համեմատաբար ազատամիտ սահմանադրություն պատասխանատու մինիստրությամբ, մամուլի, ժողովների և միությունների ազատությամբ։ Սակայն շատ շուտով

բուրժուազիան վախեցած իր սեփականության ու տիրապետության սպառնացող «կարմիր ուրվականից»՝ նետվեց ռեակցիայի գիրկը, և Թագավորի համար դժվար չեղավ խլել իր հպատակներից այն ամենը, ինչ որ նա հարկադրված էր տալ 1848 թ. մարտին։ Նախկին ազատամիտ սահմանադրությունն այլանդակության յենթարկվեց, պալատի համար ընտրողական իրավունքը վերապահվեց գլխավորապես ազգաբնակչության ունևոր դասակարգին, խոսքի և ժողովների ազատությունը խեղդվեց և սահմանադրության փոխարեն թողնվեց միայն նրա ստվերը, կետառկետ այնպես, ինչպես հետո Նիկոլայ Թագավորը վարվեց սահմանադրության հետ, որը նա ստիպված էր տալ Ռուսաստանին 1905 թվի հեղափոխությունից հետո։ Սկսված ռեակցիան շարունակվեց մինչև 50-ական թվականների վերջը։

Մարտյան հեղափոխության հետ միասին քաղաքական կյանքի համար զարթնում է գերմանական պրոլետարիատը, որ ամեն տեղ թափել էր իր արյունն ազատության կռվում։ Այստեղ միանգամից արդեն յերևաց, որ արտասահմանյան գաղտնի ընկերությունները և արտասահմանյան պրոպագանդան անհետևանք չէին անցել գերմանական բանվորների կազմակերպման և նրանց ինքնագիտակցությունը զարգացնելու համար։ Ինքնակրթության, ընթերցանության և մարմնամարզության համար կազմված առաջին ընկերությունները հիմնել էին Ֆրանսիայից ու Շվեյցարիայից յեկած թափառաշրջիկ արհեստավորները 1844 թ. Բեռլինում, 1845 թ. Համբուրգում և ապա ուրիշ շատ քաղաքներում։ Այստեղ բնագիտության, քիմիայի ու օտար լեզուների հետ միաժամանակ տարածվում էին քաղաքական և սոցիալական ազատագրության գաղափարները։

48 թվականի հեղափոխությունը տվավ բանվորներին քաղաքական իրավունքներ, որոնց ամենաարժեքավորներն էին խոսքի, ժողովների և միությունների ազատությունը։ Նրանք շտապեցին օգուտ քաղել դրանցից։ Ապրիլի սկզբում կազմակերպվեց «բանվորների գերմանական յեղբայրությունը»՝ ունենալով ճյուղավորություններ Գերմանիայի բոլոր խոշոր քաղաքներում։ Նրա ծրագրի մեջ մենք գտնում ենք հետևյալ հիմնական կետերը. նախ և առաջ՝ փոխադարձ օգնություն հիվանդանալու, աշխատանքի անընդունակության ու ծերության դեպքերում։ Յերկրորդ՝ արտադրական, վարկային, սպառողական, հում նյութերի գնման ընկերությունների,

ապրանք ծախող խանութների, անմիջական ապրանքափոխանակության խանութների հիմնում. յերրորդ՝ արհեստակցական շահերի պաշտպանություն, այն է՝ բանվորական ժամանակի (10-ժամյա բանվորական օրվա պահանջ) և վարձագնի չափի սահմանում, աշխատանքի բորսաներ, թափառաշրջիկ քարգանների ճանապարածախսի վճարում։

Իր ծրագրերի իրագործման ժամանակ «յեղբայրությունը» մեծ հույսեր եր դնում պետության աջակցության վրա, բայց չստացավ այդ աջակցությունը։ Դրա համար էլ նրա գործունեությունն այնքան էլ շատ չընդարձակվեց, այն է՝ կազմակերպվեցին մի շարք ինքնակրթության, փոխադարձ ոգնության դրամարղների և միքանի արտադրական ընկերություններ։ Բեռլինում հիմնվեց «առողջապահության ընկերություն»։ Իր հիմնադրությունից մեկուկես տարի հետո «յեղբայրությունն» ուներ արդեն մինչև 250 բաժանմունք միքանի տասնյակ հազար անդամներով։

Սակայն այդ առաջադեմ հոսանքի կողքին մենք հանդիպում ենք այն ժամանակվա արհեստավորների շրջանում զուտ հետադիմական ձգտումներ էլ, այսինքն՝ ձգտումներ վերադառնալու համքարային կազմակերպությանը՝ «բանվորներին պրոլետարիատի սոսկալի ախտից ազատելու համար», ինչպես արտայայտվում են բրեմենյան կահագործները պարլամենտական մանաժողովին ուղղած իրանց դիմումի մեջ։ Լայպցիգյան արհեստավորները ցանկանում են համքարային կարգերը վերադարձնել, վորպեսզի, ինչպես նրանք են գրում բոլոր համքարային ընկերներին ուղղած իրանց նամակում, ազատեն բանվորներին «հրեյաների ճորտությունից, վորոնք նպաստում են պրոլետարիատի ստեղծվելուն, իսկ հետո հրեյա ճառախոսների ու գրողների միջոցով գրգռում նրանց տիրապետող հասարակակարգի դեմ»։ Արհեստային վարպետները ժողովվելով Ֆրանկֆուրտի համագումարին՝ չեյին ուզում քարգաններին թույլ տալ ներկա գտնվելու վորպես իրավահավասար անդամներ։ Այն ժամանակ քարգանները կազմակերպեցին իրանց սեփական համագումարը։ Ցեվ թեպետ այդ համագումարը խոսում եր «աշխատանքի կազմակերպման մասին», ժխտում եր վարպետների խնամակալությունը, բանվորական գրքույկները և պարտադիր շրջագայումները, բայց և այնպես, ինչպես Ֆ. Մերինգն է արտահայտում, քարգանների համագումարն էլ «կարկամեց համքարային արհեստի կույր նախապաշարումների մեջ»։

Քիչ ժամանակից հետո սկսված ռեակցիան տվյալ շրջանի բանվորական համեստ շարժումը դեպի անկում տարավ, «բանվորների գերմանական յեղբայրությունն» էլ դեպի քայքայում, վորը նրա ամենախոշոր կազմակերպությունն եր։ Սկզբում, դեռևս մինչև 1848 թ. վերջը, միությունների և ժողովների ազատությունը սահմանափակվեց։ Ապա 1850 թվին քաղաքական ընկերություններին արգելվեց իրար հետ հարաբերության մեջ մտնել։ Նույն տարվանից գերմանական պետությունները մեկ-մեկի հետևից սկսեցին փակել «բանվորների գերմանական յեղբայրության» բաժանմունքները, և թեպետ այդ բաժանմունքներից միքանիսը հակում ցույց տվին իրանց ծրագրից դուրս քցելու այն բոլորն, ինչ-վոր քաղաքական կամ «կոմմունիստական» գունավորում ուներ, այնուամենայնիվ չխուսափեցին ընդհանուր վիճակից։

Գնահատելով մարտյան հեղափոխության ժամանակաշրջանի բանվորական շարժման բնույթը՝ մենք տեսնում ենք նրա մեջ մանր-բուրժուական ձգտումների գերակշռումը պրոլետարականի հանդեպ։ Յեվ արդարեվ դա պրոլետարների շարժում չեր, վորոնք այդ ժամանակ Գերմանիայում դեռ համեմատաբար քիչ եյին, այլ արհեստավորների, վորոնք արդեն զգում եյին կապիտալիզմի փոթորկի մոտենալը և բոլոր ուժերով աշխատում եյին բուրժուական հասարակության մեջ ունեցած իրանց հին դիրքերը ձեռքներից չտալ։

ՇՈՒԼՑԵ---ԴԵԼԻՉԸ, ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Մարտյան հեղափոխությունից հետո բռկված քաղաքական ռեակցիան և Գերմանիայի արդյունաբերական հետամնացությունը բարենպաստ եյին մանր-բուրժուական պրոպագանդայի զարգացման համար։ Յեվ արդարեվ մենք տեսնում ենք, վոր 50-ական և 60-ական թվականների սկզբի ժամանակաշրջանում Գերմանիայում բանվորական շարժման ղեկավարները հանդիսանում են մանր-բուրժուական գործիչները, վորոնք ձգտում եյին փրկել արհեստը կապիտալի գրոհից։ Այդ գործիչների մեջ առաջին տեղը պատկանում ե Շուլցե-Դելիչին (1808—1883)։

Գերմանիայի տնտեսական զարգացման և աշխատավոր դասակարգերի դրությունը բարելավելու միջոցների մասին իր հայացքները

նա արտահայտել է մի ամբողջ շարք բրոշյուրների մեջ։ Նրանցից մեկում—«Աշխատավոր դասակարգերը և ասոցիացիան Գերմանիայում», վորը վերաբերում է 1853 թվականին, նա գրում եր. «Ֆաբրիկան դուրս է մղում արհեստը... և անհնարին է դարձնում վորյեվե մրցություն իր դեմ։ Իրար հետեվից տիրապետելով աշխատանքի նորանոր ճյուղերին, ինչպես այդ տեսնում ենք ամեն որ, ֆաբրիկան մոտիկ ապագայում չի թողնի վոչ մի անկյուն, ուր արհեստը կարողանա պատսպարվել։ Յեվ յեթե առաջներում ինքնուրույն յեղած շատ վարպետներ այժմ արդեն գործ են վորոնում ֆաբրիկաներում, չի կարելի վախ չզգալ, վոր աստիճանաբար արհեստավորների ամբողջ բազմությունը հասնելու յե խոշոր ձեռնարկությունների հասարակ վարձու բանվորների դերին ու լցնելու չարաբաստիկ պրոլետարիատի շարքերը»։

Այդ միքանի խոսքերից էլ արդեն յերեվում է, թե ինչումն են կայանալու Շուլցե-Դելիչի սոցիալական ձգտումները. Նրանք բրեմենյան ատաղձագործների նման, վորոնց մասին վերն ասացինք, ուղղված են լինելու այն նպատակին, վորպեսզի աշխատեն փրկել արհեստավորներին և բոլոր բանվորներին «պրոլետարիատի խոցից»։ Բայց պարզամիտ ատաղձագործներից Շուլցեն տարբերվում եր նրանով, վոր հասկանում եր, թե չի կարելի վերադառնալ նախկին համքարային կազմակերպությանը, վորն արգելում եր պահել 3-4 բանվորից ավելի ունեցող ձեռնարկություններ։ Այդ տեսակ վերադարձը դեպի անցյալը կնշանակեր Գերմանիայի տնտեսական կործանումը։ Շուլցեն ընդունում է խոշոր կապիտալիստական ձեռնարկությունների զարգացման անխուսափելիությունը, բայց միջոցներ է վորոնում մեղմացնելու այդ զարգացման վնասակար հետեվանքները։ Այդ միջոցը նա գտնում է ընկերությունների մեջ։

Շուլցեն ընկերությունները բաժանում է յերկու կարգի։ Նրանցից վոմանք նախապատրաստական դեր են խաղում։ Այդպես են վարկային, հում նյութեր գնելու, միասին ապրանքներ վաճառելու ընկերությունները. Նրանք հնարավորություն են տալիս արտադրական բարձր տեսակի ընկերություններ դառնալու համար անհրաժեշտ դրամական միջոցներ հետ քցել։ Այդ ընկերություններն,—ասում է Շուլցեն,—հնարավորություն կտան իրանց անդամներին ստեղծելու խոշոր ձեռնարկություններ՝ տնտեսական նոր ձեվերի բոլոր ոգուտներով հանդերձ և այդպիսով լցնելու այն ան-

դունդը, վորն այժմ բաժանում է բանվորներին ու մանր վարպետներին խոշոր ձեռնարկուների դասակարգից։ Քիչ է այդ։ Արտադրական ընկերությունները վոչ միայն կդարձնեն իրանց անդամներին խոշոր արտադրական ձեռնարկությունների ինքնուրույն ընկերներ, նրանք կավելացնեն նայեվ այն բանվորների վարձագների չափը, վորոնք աշխատում են սովորական ձեռնարկությունների մեջ։ Հիրավի,—հավատացնում է նա,—կապիտալիստն ստիպված կլինի վճարելու բանվորներին այն վարձը, վոր նրանք կարող էյին ստանալ՝ հիմնելով արտադրական ընկերություն, վորովհետև հակառակ դեպքում բանվորները կհրաժարվեն վարձու աշխատանքից և կկազմակերպեն սեփական ընկերական ձեռնարկություններ։

Այդպես ուրեմն Շուլցեն նպատակ չի դնում դուրս մղել կապիտալիստական ձեռնարկություններն ու այդպիսով տապալել կապիտալիզմը, նա միայն մտադիր է անվնաս դարձնել կապիտալիզմը և հույս ունի այդ անել արտադրական ընկերությունների միջոցով։

Շուլցեյի ուսմունքը հերքելու կարիք չկա, քանի վոր այդ հերքել է արդեն ինքը կյանքը։ Յեղած տվյալների համաձայն՝ Գերմանիայում արտադրական ընկերությունների թիվը 1865 թ. յեղել է 26, 1890 թվին՝ 150, 1906 թ.՝ 230, 1910 թ.՝ 250։ Այդ թվերն այնքան աննշան են հարյուր հազարավոր մասնավոր ձեռնարկությունների կողքին, վոր կապիտալիզմն արտադրական ընկերությունների միջոցով անվնաս դարձնելու մասին խոսք էլ չի կարող լինել։ Հենց իրանք այդ արտադրական ընկերություններն էլ վորոշ չափով կապիտալիստական ձեռնարկություններ են, վորովհետև ամրապնդվելով՝ այլևս նոր անդամներ չեն ընդունում և ոգտվում են վարձու աշխատանքով։

Անհամեմատ ավելի կենսունակ յեղան այսպես կոչված նախապատրաստական ընկերությունները—հում նյութերի, սպառողական, նամանավանդ վարկայինները, վորովհետև նրանք արժան վարկ էյին բաց թողնում ինքնուրույն և սկսնակ արհեստավորներին, ազատելով նրանց վաշխառուների շահագործումից և նպաստավորելով նրանց, առանց վորի շատ մանր ձեռնարկություններ դատապարտված կլինեյին վոչնչանալու։ Սակայն վարկային ընկերությունների զարգացումն էլ ավելի քիչ կարելի յե անվանել բանվորական հարցի լուծում և «պրոլետարիատի ախտից» ազատագրում։ Շու-

ցելի միակ ծառայությունը կայանում ե նրանում, որ նա աշխատավոր դասակարգերին ինքնոգնության եր կոչում և խորհուրդ եր տալիս տնտեսական կռվում հույսեր չդնել պետության ոգնության վրա։ Բայց պետության վերաբերմամբ ունեցած հայացքում ել Շուլցեյի սխալը, գուցե նայեվ նրա անբարեխղճությունը, կայանում եր նրանում, որ նա համոզում եր բանվորներին, թե նրանք առհասարակ ոչ մի գործ չպետք ե ունենան պետության հետ, այսինքն՝ որ բանվորները չպետք ե զբաղվեն քաղաքականությամբ, չպետք ե ձգտեն տիրանալու պետական իշխանությանը։ Այդպիսով նա նրանց ամբողջովին դնում եր բուրժուական քաղաքագետների, այսինքն առաջադիմականների կուսակցության ազդեցության տակ։

II

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ

ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

50-ական թվականների վերջից Գերմանիայում նկատելի կերպով սկսում է զարգանալ խոշոր արդյունաբերությունը։ Այսպես օրինակ՝ մի միլլիոն արհեստավորների վրա Պրուսիայում 1863 թ. մոտերքն ընկնում էր $^3/_4$ միլլիոն ֆաբրիկային բանվոր. իսկ Պրուսիայում, Սաքսոնիայում, Բավարիայում, Վյուրթենբերգում և Բադենում, ուր բոլոր արհեստավորների թիվը մոտավորապես հաշվում էին 2 միլլիոն, ֆաբրիկային բանվորները կազմում էին $1^1/_2$ միլլիոն։ Ինչպես յերևում է այդ թվերից, արհեստը դեռ յևս քանականաչափ գերակշռող էր ֆաբրիկայի հանդեպ։ Բայց նախորդ ժամանակների տվյալների հետ համեմատելով այդ թվերը վկայում էին, որ արհեստներն անդիմադրելի կերպով ընկնում են, որի մասին գավառների կառավարիչներից շատերը գանգատվում էին իրանց պաշտոնական տեղեկագրերում։

Խոշոր արդյունաբերության զարգացման հետ միասին աճում են նույնպես բուրժուազիայի քաղաքական նշանակությունը և նրա իշխանատենչությունը։ 1858 թվին պրուսական ազատամիտները հիմնեցին «Ազգային միություն», որի նպատակն էր Գերմանիայի միացումը։ Այդ միությունը նպաստեց առաջադիմականների կուսակցության կազմվելուն (1861 թ.), որն սկսեց կռիվ մղել պրուսական միապետության դեմ քաղաքական ազատություններ ու պարլամենտական կարգեր հաստատելու համար։ Առաջադիմականները մեծամասնություն ունենալով ստորին պալատում՝ մերժում էին թագավորին դրամ հատկացնել բանակը մեծացնելու համար և հավանություն չէին տալիս պրուսական կառավարության արտաքին քաղաքականությանը, որը նպատակ էր

դրել գլխավորական ուժերի ոգնությամբ ոտարապատկան յերկրներ գրավել։ Բայց Վիլհելմ I թագավորը մինիստր նշանակեց խոշոր հողատեր-ազնվականների ներկայացուցիչ Բիսմարկին, վորն առանց պալատի թույլտվության, չնայելով վերջինիս բողոքներին, գանձում եր տուրքերը և ընդարձակում բանակը։ Ժողովրդի ներկայացուցիչների ու թագավորական կամայականության միջեվ յեղած ընդհարումն ել ավելի մեծացրեց առաջադիմականների նշանակությունը յերկրում։

Ազատամիտ կուսակցությունը (իսկ հետո ել առաջադիմականները) իր սկզբնավորության րոպեյից աշխատում եր իր կողմը քաշել արհեստավորներին ու բանվորներին և այդ կողմից նրան աջողվեց շատ բան անել։ Ազատամիտներն ու առաջադիմականներն ոգնեցին հիմնելու ինքնակրթության բանվորական ընկերություններ, ուր նրանք զբաղվում եյին իրանց ազատամիտ-ռամկավարական գաղափարները քարոզելով։ Տնտեսական հարցերում առաջադիմականներն իբրեվ կապիտալի շահերի ներկայացուցիչներ, վորն անարգել կերպով ձգտում եր շահագործել անպաշտպան բանվորներին, կանգնած եյին այն տեսակետի վրա, թե պետությունը չպետք է միջամտե աշխատանքի ու կապիտալի փոխհարաբերություններին։ Իսկ վորպեսզի բանվորներին ու արհեստավորներին իրանց դրությունը բարելավելու համար մղած պայքարից դարձնեն դեպի կապիտալիստների համար անվնաս ուղին, նրանք նպաստեցին կազմելու նրանց մեջ սպառողական, վարկային և արտադրական ընկերություններ Շուլցե-Դելիչի վոգով, համոզելով բանվորներին, վոր աշխատանքի ու կապիտալի միջեվ շահերի ներդաշնակություն կա, և վոր բանվորները պետք է ձգտեն վոչ թե հեռավոր անիրագործելի նպատակների, այլ մերձավոր գործնականին։ Արհեստավորներն ու բանվորներն այդպիսով մեծամասնությամբ հարում եյին առաջադիմականներին, աջակցում եյին նրանց ընտրությունների ժամանակ և համաձայն եյին նրանց բանվորական ծրագրին։

ԼԱՅՊՑԻԳՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ։

Սակայն աշխատավոր դասակարգերի մեջ ուսում և ազատամիտ ռամկավարական գաղափարներ տարածելով առաջադիմականները դրանով նպաստեցին ինքնուրույն բանվորական շարժման զարգա-

նալուն, վորը վաղ թե ուշ պետք է հենց իրանց դեմ դառնար։

1862 թվին բուրժուական «Ազգային Միությունն» իր հաշվով 12 բանվոր ուղարկեց Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսը։ Նրանց վերադառնալուց Բեռլինի բանվորները հավաքվեցին, վորպեսզի լսեն պատվիրակների զեկուցումն այդ ուղևորության մասին։ Այդ ժողովում միտք հղացավ համագերմանական բանվորական ժողով հրավիրել։ Բեռլինի զանազան մասերում կայացած մի շարք ժողովները համակրանքով վերաբերվեցին այդ մտքին։ Վորոշվեց համագումարը հրավիրել Լայպցիգում։ Այդ համագումարի որակարգում դրված էր ամեն տեսակ զբաղմունքներով պարապելու ազատություն, ազատ յերթևեկումներ ամբողջ Գերմանիայում, միությունների ազատություն, հաշմանդամների համար դրամարկղներ հիմնել, ցուցահանդեսից վերադարձած պատվիրակների զեկուցումը։

Համագումարի համար պատրաստությունները տեսնող կենտրոնական կոմիտեն, վոր գտնվում էր Լայպցիգում, դիմեց գերմանական բոլոր բանվորներին մի կոչով հրավիրելով նրանց ուղարկել առաջիկա համագումարին իրանց պատվիրակներին։ Միևնույն ժամանակ նա խորհուրդ էր տալիս բոլոր քաղաքներում ընտրել բանվորների միջից տեղական կոմիտեներ, վորպեսզի նրանք դասախոսություններ կազմակերպեն՝ բանվորներին համագումարի նպատակների հետ ծանոթացնելու և առաջիկա համագումարին ուղարկվող պատվիրակների ծախսերը հոգալու նպատակով բանվորների մեջ դրամական հանգանակություն անելու համար։ Դրա հետ միաժամանակ կենտրոն. կոմիտեն տարածեց առաջադիմականներին հարող դեմոկրատիկ Ռոսսմեսլերի ծրագրային գրքույկը, վորի մեջ համագումարի նպատակները լուսաբանված եյին վոչ թե պրոլետարական, այլ բուրժուա-դեմոկրատական տեսակետից, և ուր վոչ մի տարբերություն չէր դրված վարպետի ու քարգանի մեջ։

Լայպցիգի կենտրոնական կոմիտեյի այդ դիմումն ահագին աշխուժություն մտցրեց ամբողջ Գերմանիայի բանվորների մեջ։ Տեղական կոմիտեներ ընտրելու համար հավաքված բանվորական ժողովներում քննվում եյին մոմենտի ամենակարևոր հարցերը, թե ում համարել բանվոր, բանվորները պե՞տք է արդյոք ինքնուրույն քաղաքականություն վարեն, հարկավո՞ր է նրանց արդյոք ընդհանուր ընտրողական իրավունք։ Շատ դեպքերում անցնում եյին այն-

պիսի բանաձևվեր, վորոնք բարենպաստ եյին առաջադիմականների համար, վորովհետև նրանք եյին բոլոր ժողովներում գլխավոր դեկավարներն ու ճառախոսները։ Բայց կային դեպքեր էլ, ինչպես Համբուրգումն եր, յերբ առաջադրվում եյին զուտ-պրոլետարական տեսակետներ։

Մինչ բանվորների մեջ հասունանում եր առաջադիմականների դեմ անբավականություն և դեպի նրանց անվստահություն, Ինքնակրթության խմբակների ավելի ձախակողմյանները դիմեցին առաջադիմական կուսակցությանը յերկու պահանջով. 1) վորպեսզի նա հանդես գա ի պաշտպանություն ընդհանուր ընտրողական իրավունքի, 2) վորպեսզի բանվորներին անդամավճարը մուծելու արտոնությամբ դյուրություն տրվի մտնելու «Ազգային միության մեջ» իբրև անդամ։ Առաջադիմական կուսակցությունը մերժեց այդ յերկու պահանջներն էլ։ Հարկավոր է նկատել սակայն, վոր ընդհանուր ընտրողական իրավունքին այն ժամանակ բացասաբար եյին վերաբերվում վոչ միայն Շուլցեյի նման ուղղափառ առաջադիմականները, այլև Ա. Լանգեյի ու Ռոդբերտուսի նման կիսա-սոցիալիստները։ Ընդհանուր ընտրողական իրավունքի հակառակորդներին վախեցնում եր այն բանը, վոր բանվորների գիտակցության պակասության շնորհիվ ընդհանուր ընտրողական իրավունքը կարող է ազատության հարստահարության դեմ զենք դառնալ։ Այդպիսի հանգամանքներում Լայպցիգի կենտրոնական կոմիտեն չիմանալով ինչպես արտահայտվել իր յերկրորդ թռուցիկի մեջ ամենահրատապ հարցերի մասին՝ վճռեց դիմել Լասսալին խորհուրդ հարցնելու. «Աշխատավորների ծրագրի» հետ նրա անդամներն արդեն ծանոթ եյին։ Լասսալի հետ տեսնվելուց հետո կենտրոնական կոմիտեյի անդամները վորոշում կայացրին, վոր անհրաժեշտ է համագումարը հետաձգել բանվորներին լավ նախապատրաստելու նպատակով։ Միևնույն ժամանակ, կենտրոնական կոմիտեն դիմեց Լասսալին, խնդրելով հայտնել իր տեսակետը բանվորական շարժման, նրա նպատակների ու միջոցների մասին, մանավանդ թե արտադրական ու այլ ընկերությունների ինչ նշանակություն ունեն աշխատավորների միանգամայն չքավոր դասի համար։ Այդ դիմումին Լասսալը պատասխանեց «Հրապարակային պատասխան Լայպցիգի կենտրոնական կոմիտեյին» բրոշյուրով (1863 թ. մարտի 1-ին)։

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԼԱՍՍԱԼԸ, ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ֆերդինանդ Լասսալը ծնվել է 1825 թ. առևտրական ընտանիքում։ Վերջացնելով համալսարանական կրթությունը՝ նա ուղևորվեց Պարիզ, ուր զբաղվեց գիտական աշխատանքներով։ 1848 թվի հեղափոխության մեջ նա հարեց ռամկավարական կուսակցությանը և աշխատակցում էր Մարկսի հրատարակությամբ լույս տեսնող «Նոր Հռենոսյան Լրագրում»։ Տուրքերի ավելացմանը զինված դիմադրություն կազմակերպելու գործում մասնակցելու համար նա դատական պատասխանատվության յենթարկվեց, բայց յերդվյալ ատենակալներն արդարացրին նրան։ Յերկրորդ անգամ մեղադրվելով կառավարական մի պաշտոնյայի ընդդիմություն ցույց տալու համար՝ նա դատապարտվեց 6 ամսվա բանտարկության։ 1862 թվին «Գործավորի ծրագիրը» զեկուցումը տպագրելու համար նա դատապարտվեց 4 ամսվա բանտարկության, սակայն վճռաբեկ դատարանն այդ պատիժը փոխարինեց դրամական տուգանքով։ 60-ական թվականների սկզբից Լասսալն զբաղվեց ագիտացիոն գործունեյությամբ բանվորների մեջ։ 1864 թվին նա սպանվեց մենամարտում։

Հասարակության զարգացման և բանվորական շարժման մասին իր հայացքները նա արտահայտել է միքանի հեղինակությունների մեջ, վորոնցից ամենանշանավորներն են «Յուրացման իրավունքների սիստեմը» (1861 թ.), «Սահմանադրության էության մասին» (1862 թ.), «Գործավորների ծրագիրը» (1862 թ.), «Հրապարակային պատասխան Լայպցիգի կենտրոնական կոմիտեյին» (1863 թ.), «Պարոն Բաստիա-Շուլցե-Դելիչը» (1864 թ.)։

«Հրապարակային պատասխան Լայպցիգի կենտրոնական կոմիտեյին» իր գրվածքը Լասսալն սկսում է բանվոր դասին ուղղված մի կոչով կազմելու առաջադիմական կուսակցությանը հակադիր ինքնուրույն քաղաքական բանվորական կուսակցություն։ *Միայն սեփական քաղաքական կուսակցություն ունենալով բանվորները կարող են պայքարել իրանց առօրյա շահերի համար։ Այն ընկերությունները, վոր առաջարկում է Շուլցե-Դելիչը, նրա վարկային, հում նյութերի ու սպառողական ասոցիացիաները հանդիսանում են այն տեսակ միջոցներ, վորոնք կարող են բարելավել միայն անհատ բանվորների դրությունը, բայց անկարող են*

արմատապես փոխել բանվոր դասակարգի վիճակը։ Այդ փոփոխությանը հնարավոր է հասնել միմիայն աշխատավարձի օրենքը վերացնելով, վորն այժմ պահանջի և առաջարկի ազդեցությամբ գերիշխում է։

Աշխատավարձի այդ յերկաթե օրենքն ասում է. աշխատավարձի միջին չափը միշտ համապատասխանում է այն նվազագույն միջոցներին, վորն անհրաժեշտ է տվյալ ժողովրդի մեջ բանվորի կյանքը պահպանելու և բանվորների հաջորդ սերունդը դաստիարակելու համար։ Դա այն կետն է, վորի մոտ ճոճանակի նման շարունակ տարուբերվում է աշխատավարձը՝ չընկնելով նրանից այնքան էլ ցած, բայց և չբարձրանալով այնքան էլ վեր։ Այդ միջին մակերևույթից նա անկարող է յերկար ժամանակ վեր բարձրանալ, վորովհետև այն ժամանակ բանվորների դրության բարելավման շնորհիվ բանվորական միջավայրում ավելանում է ամուսնությունների թիվը, բանվորներն արագությամբ են բազմանում, իսկ բանվորների թիվը բազմանալով՝ շուկայում աճում է բանվորական ձեռքերի առաջարկը, վոր իհարկե դարձյալ քցում է աշխատավարձը նույնիսկ նախկին չափից էլ ցած։ Սակայն աշխատավարձը չի կարող շարունակ իր միջին մակարդակից շատ ցած իջնել, վորովհետև միջոցների պակասությունը բանվոր դասակարգի մեջ առաջ է բերում արտագաղթեր դեպի օտար յերկրներ, կանգնեցնում է ամուսնություններն ու բազմանալը, և վերջիվերջո բանվորական ձեռքերի թիվը պակասում է, պակասում է նրանց առաջարկը շուկայում, վորը բարձրացնում է աշխատավարձը՝ հասցնելով նրան նախկին մակարդակին։ Այդ բոլորի հետևանքը լինում է այն, վոր բանվորները շարունակ գտնվում են հասարակության ստորին խավերում և զրկվում են աշխատանքի հարաճուն արտադրությանը և քաղաքակրթության ու կուլտուրայի հաջողություններին մասնակցություն ունենալուց։

Բանվորները կարող էին այդ դժբախտ դրությունից դուրս գալ, յեթե դառնային իրանց սեփական ձեռնարկուները, այսինքն տիրանային արտադրության բոլոր գործիքներին և ազատվեյին ձեռնարկուների հարստահարություններից։ Դրան հասնելու համար Լասսալը վորպես ժամանակավոր ացողակայ միջոց առաջարկում է կազմակերպել արտադրական ընկերություններ, վորոնց իրակա-

նացմանը պետությունը պետք է օգնի՝ բանալով բանվորների համար համապատասխան վարկ։

Քննելով Լասսալի պատասխանը՝ Լայպցիգի կենտրոնական կոմիտեն ձայների մեծամասնությամբ վորոշեց հրաժարվել համագումարն անմիջապես գումարելու մտքից և հիմնել մի մեծ բանվորական միություն այն ծրագրով, վորը զարգացրել եր Լասսալը։ Այդ վորոշմանը հավանություն տվավ Լայպցիգի բանվորական ժողովը։ Այն ժամանակ առաջադիմականների կողմից սկսվեց հալածանք Լասսալի դեմ, և շատ քաղաքներում, վորոնց թվում նայեվ Բեռլինում, բանվորական ժողովներն արտահայտվեցին Լասսալի դեմ։ Լասսալն ընդունեց այդ մարտահրավերը և սակավաթիվ համախոհներով արշավանք սկսեց առաջադիմականների դեմ։ Մայիսի 17-ին Ֆրանկֆուրտում բանվորների համագումար կայացավ, վորտեղ հանդես յեկավ Լասսալը, բայց հակառակորդները թույլ չավին նրան ավարտելու իր ճառը, վորին լսարանն ունկնդրում եր լարված ուշադրությամբ։ Դրանից հետո նա դուրս յեկավ խոսելու Մայնցի բանվորների ժողովում և այլ քաղաքներում։

1863 թ. մայիսի 23-ին Լայպցիգում հիմնվեց **Ընդհանուր գերմանական բանվորների միություն**, վորի նախագահ ընտրվեց Լասսալը։ Իրան հատուկ յեռանդով նա անձնատուր յեղավ միությունն ընդարձակելու ագիտացիային։ Բայց իրականությունը նրան հուսախաբ արավ։ Լասսալը յերազում եր 100.000 անդամներից բաղկացած մի կուսակցություն կազմելու մասին, մինչդեռ հիմնելուց յերեք ամիս հետո միությունն ընդամենն ուներ 900 անդամ, գլխավորապես Գերմանիայի այն մասերում, վորտեղ կապիտալիստական հարաբերություններն ամենից ավելի եյին զարգացել, այն է՝ Հռենոսի մառերքը և Սակսոնիայում, իսկ մի տարուց հետո, Լասսալի մահվան նախորյակին, միության մեջ կար ընդամենը 4.610 բանվոր։

Լասսալը գործնական հեռանկարներ փափագելով գործի համար և ցանկանալով թուլացնել գլխավոր հակառակորդներին— առաջադիմականներին, բանակցություն սկսեց պրուսական միապետական կառավարության ղեկավարի՝ —Բիսմարկի հետ, համոզելով նրան ագգաբնակչության **ընդհանուր ընտրողական իրավունք** և արտադրական ընկերություններին պետական օժանդակություն տալ։ Բիսմարկը, վոր նույնպես միջոցներ եր վորոնում թուլացնելու առաջադիմականներին և նրանցից խլելու պալատում ունեցած մե-

ծամանությունը, ընդգրկեց ընդհանուր ընտրողական իրավունքի միտքը, որը նրա կարծիքով պետք է հաղթություն տար կառավարությանը, քանի որ գերմանական ժողովուրդը, ինչպես հավատացած էր Բիսմարկը, հավատարիմ էր միապետությանը։ Այդ միտքը նա իրագործեց արդեն Լասսալի մահից հետո 1867 թվին, երբ գերմանական բանվորներն ընդհանուր ընտրողական իրավունք ստացան Հյուսիսային-Գերմանական ռայխստագին մասնակցելու։ Իրականությունը յեկավ արդարացնելու յերկու կողմի ակնկալությունները։ Սկզբում ընդհանուր ընտրողական իրավունքն ուժեղացրեց պահպանողական կուսակցությունը, բայց քիչ ժամանակից հետո օգնեց կազմելու սոցիալ-դեմոկրատական բանվորական ուժեղ կուսակցություն։

1864 թվի գարնանը Լասսալն ագիտացիա անելու նպատակով սկսեց շրջագայել Գերմանիայի գլխավոր քաղաքները։ Բանվորներն ամեն տեղ դիմավորում էին նրան ցնծությամբ։ Նրա գործը թվում էր թե այժմ էր միայն սկսում ծաղկել։ Բայց անձնական հողի վրա ունեցած ընդհարումների շնորհիվ Լասսալն ստիպված էր մենամարտի դուրս գալ, որտեղ և նա սպանվեց 1864 թվի օգոստոսի 31-ին։

Թեպետ Լասսալի ուսմունքի հիմնական կետերը, այսինքն աշխատավարձի յերկաթե օրենքը և պետական վարկով պահպանվող արտադրական ընկերությունները մերժված են արդեն կյանքի ու թեորիայի կողմից, բայց նրա մատուցած ծառայությունները գերմանական բանվորական շարժման զարգացման համար անգին են։ Նախ և առաջ նա հասարակական լայն խավերի ուշադրությունը դարձրեց այն բանի վրա, որ կա բանվորական հարց ու անհրաժեշտ է նրան արմատական լուծում տալ։ Յերկրորդ՝ նա նպաստեց աշխատանքի ու կապիտալի փոխհարաբերության մեջ պետության կողմից միջամտելու անհրաժեշտության հարցի լուծմանը։ Յերրորդ՝ նրա աջակցությամբ բանվորներն ստացան ընտրողական ձայնի իրավունք։ Բայց, որ ամենակարևորն է, նա բանվորների գիտակցության մեջ մտցրեց ինքնուրույն քաղաքական կուսակցության անհրաժեշտության գաղափարը և իր հզոր ջանքերով նպաստեց նրա կազմվելուն։ Այդ պատճառով Լասսալին պետք է համարել գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության նախահայրը։

ԼԱՍՍԱԼՅԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՅԶԵՆԱԽՅԱՆՆԵՐԸ

Լասսալի մահից հետո նրա գործը վոչ միայն չդադարեց, այլև շարունակվեց հաջողությամբ զարգանալ, չնայելով միության ներսում սկսված վեճերին, բանվորական շարժման մեջ տիրող զանազան հոսանքների ներհակություններին և առաջադիմականների կատաղի հարձակումներին։ Սկզբում Լասսալի կտակի համաձայն միության նախագահ ընտրվեց Բեկկերը, իսկ հետո Շվայցերը, վորը պատմական ու անտեսական հարցերի ըմբռնման մեջ մասամբ գերազանցեց Լասսալին՝ հարելով Մարկսի ուսմունքին, մասամբ ել շարունակում եր մնալ գերմանական բանվորական միության հիմնադրի տեսակետի վրա։ Միության անդամների թիվն որըստորե աճում եր։ Միությունն ուներ իր տպագրական որգանը «Սոցիալ-դեմոկրատ» անունով և ժամանակ առ ժամանակ կազմակերպում եր համագումարներ ծրագրային ու տակտիքական հարցերի քննության համար։

Սակայն լասսալյան բանվորական միության կողքին և միևնույն աղբյուրից, այսինքն առաջադիմականների ստեղծած կրթված բանվորների ֆերրայններից սկսեց առաջ գալ նոր բանվորական շարժում, վորի պարագլուխներն եյին 48 թվականի հեղափոխության վետերան Ինտերնացիոնալի անդամ Լիբկնեխտը և բանվոր-խառատ, հետագայում կուսակցության ամենաականավոր պարագլուխ՝ Բեբելը։

Այդ շարժումն սկզբում բուրժուա-դեմոկրատական բնույթ եր կրում, բայց կարճ ժամանակից հետո դարձավ զուտ պրոլետարական։ Հիմնական կետը, վոր բաժանում եր նորակազմ բանվորական կուսակցության բջիջն ընդհանուր գերմանական բանվորական միությունից, ազգային հարցն եր։

Վոր Գերմանիայի միացումն անհրաժեշտ եր հետագա առաջադիմության համար և մանավորապես բանվորական շարժման հաջող զարգացման համար, դա աննշան բացառությամբ հասկանում եյին այն ժամանակաշրջանի բոլոր քաղաքական գործիչներն ու կուսակցությունների ներկայացուցիչները։ Դեռ յեվս 40-ական թվականներից, ինչպես վերև տեսանք, առաջադեմ արհեստավորներն ու բանվորներն իրանց պահանջների թվում առաջադրել եյին այնպիսիները, ինչպես ամբողջ Գերմանիայում յերթևեկելու ազատությունն և, զբաղմունքի ազատությունն և, յեվայլն, վորին հա-

նել կարելի չէր այն դեպքում միայն, յեթե բոլոր մանր պետությունները քաղաքականապես միանային իրար հետ։ Բայց այդ միության ձևի ու յեղանակների հարցի մասին համերաշխություն չկար վոչ միայն բուրժուական կուսակցությունների մեջ, այլև բանվոր դասակարգի մեջ։

Գերմանիայի միացման հարցի առիթով յեղած մի քանի ուղղությունների մեջ պետք է տարբերել մեծ-գերմանականը և փոքր-գերմանականը։ Առաջինը կողմնակից էր ամբողջ Գերմանիայի միացմանն Ավստրիայի հետ միասին, յերկրորդը՝ նույն միացմանը, բայց առանց Ավստրիայի, ըստ վորում բուրժուազիայի մի մասը ցանկանում էր այդ միացումը Պրուսիայի հեգեմոնիայի տակ։ Գերմանական ժողովրդական կուսակցությունը, վորին հարում էր նորակազմ բանվորական կուսակցության բջիջը (վորը հետո ընդունեց սաքսոնական ժողովրդական կուսակցություն անունը), միացրեց իր համախոհներին այլ տեսակետով։ Նա պահանջում էր, վորպեսզի Գերմանիան միացնողները լինեն վոչ թե խոշոր զինվորական պետությունները, ինչպես Պրուսիան և կամ Ավստրիան, վորոնք ամբողջ յերկիրը կենթարկեն իրանց սրի ուժին, այլ մանր ու միջնակարգ գերմանական պետությունները կազմեն համամիություն (կոնֆեդերացիա), վորը կհանդիսանա գերմանական միության և ազատության սաղմը։

Լասսալյանների պարագլուխ Շվայցերը կանգնած էր գործնական տեսակետի վրա։ Նա,—ինչպես ասում է Ֆ. Մերինգը,—պատմականորեն հետազոտեց, թե ինչ գործոններ կարող են առաջ գալ Գերմանիայի միացման հարցում։ Այդպիսի գործոններ նա գտնում էր միայն յերկուսը—պրուսական սվինները և գերմանական պրոլետարիատի բռունցքները. ուրիշ խոսքով ասած նա այն կարծիքին էր, վոր կամ հեղափոխությունը ցածից պետք է միացնի ամբողջ գերմանական ժողովուրդը՝ հաստատելով բազմաթիվ միահեծան բռնակալների փոխարեն մի դեմոկրատական հասարակապետություն, կամ թե Պրուսիան իբրև ամենաուժեղը գերմանական բոլոր պետություններից՝ կխժռի ամբողջ մնացյալ Գերմանիան, և այդ բանի համար էլ մեծ աջողությամբ աշխատում էր Բիսմարկը։ Այդ տեսակետի վրա կանգնած՝ Շվայցերն սպասելով ցածից հեղափոխությունն սկսվելուն, վորը սակայն անհուսալի էր, հավանությամբ էր վերաբերվում Բիսմարկի միացնող ձգտումներին,

և իր կարծիքներն այդ մասին արտահայտում եր «Սոցիալ-դեմոկրատ»-ի մեջ: Մտածելակերպի և գործողությունների այդօրինակ վերաբերմունքը Շվայցերի դեմ հանեց ինչպես բանվորական շարժման գործում նրան անհամամիտ գործիչներին, այնպես էլ միքանի բուրժուական քաղաքագետների գայրույթն ու պարսավանքները: Նրան մեղադրում եյին պրուսասիրության մեջ, դավաճանության մեջ, ասում եյին, թե նա սողում է Բիսմարկի առաջ, թե նա կաշառված է: Նրա քաղաքականությունը Մարքսն ու Ենգելսը հրապարակորեն դատապարտեցին:

Պրուսիայի և Ավստրիայի մեջ ծագած պատերազմի նախօրյակին (1866 թ.) բանվոր դասակարգի պարագլուխների մեջ կարծես թե համերաշխություն ընկավ: Ամենքն էլ ուզում եյին, վոր պատերազմ լինի, թեյեվ այդ բանը չեյին համարձակվում արտահայտել միանման անկեղծությամբ: Հույս ունեյին, վոր պատերազմը կտանի դեպի հեղափոխություն: Բայց յերբ պրուսական բանակն արագ հարվածներով ջարդեց ավստրիական զինվորական ուժերն ու գերմանական միջակ պետությունների զորքերը, վորոնք վճռական րոպեին անցել եյին Ավստրիայի կողմը, իսկ հեղափոխությունը տեղի չունեցավ,—այն ժամանակ գերմանական բանվոր դասակարգի առաջ կանգնեց հետեվյալ հարցը—ինչպե՞ս վերաբերվել Պրուսիայի հաղթությանը և դրանից առաջացող բոլոր հետեվանքներին: Այդ հարցի տարբեր լուծումը,—ասում է Ֆ. Մերինգը,—յերկար տարիներով յերկպառակություն քցեց գերմանական բանվոր դասակարգի մեջ, վորն այդպիսով վերջին անգամ տուժեց Գերմանիայի բաժան-բաժան լինելուց:

Գերմանական ընդհանուր բանվորական միությունը վճռեց, վոր պետք է հաշտվել նոր կարգերի, այսինքն Գերմանիայի միության իրողության հետ առանց Ավստրիայի, այլ Պրուսիայի գլխավորությամբ, վորովհետեվ դա առաջադիմություն է նախկին բաժան-բաժան դրության հետ համեմատելով, և վոր վոչ մի կերպ չպետք է ձգտել հետ կասեցնելու անցքերը: Այդ միտքն արծարծում եր Շվայցերը «Սոց.-դեմոկրատի» եջերում: Բայց սաքսոնական բանվորները Լիբկնեխտի, Բեբելի, Ռոսմեսլերի ղեկավարությամբ համաձայնության յեկան մի այլ ծրագրի վրա, վորը քննվեց և ընդունվեց 1866 թվի օգոստոսի 19-ին Խեմնիցում «սաքսոնական դեմոկրատիայի ժողովում»: Այդ ժողովը վճռեց մասնակցել Բիսմար-

կի կողմից հրավիրվող հյուսիսային-գերմանական պարլամենտի ընտրություններին լոկ այն նպատակով, վորպեսզի այնտեղ անհաշտ կռիվ մղեն պատերազմի շնորհիվ ստեղծված իրերի դրության հետ, պաշտպանեն մեծ-գերմանական միության ձգտումները և աշխատեն հրավիրել տալ հիմնադիր ժողով գերմանական բոլոր պետությունների ներկայացուցիչներից բաղկացած, վորոնց թվում Ավստրիայի գերմանական շրջաններից: Խեմնիցի ծրագրի մյուս կետերը*) վերաբերում եյին պետական կարգերի լիակատար ռամկավարացմանը և բանվոր դասակարգի նվազագույն պահանջների հիշատակմանը, վորոնց մեջ եյին յերթևեկումների ազատությունը, զբաղմունքի ազատությունը, կոոպերատիվ գործին և մանավանդ արտադրական ընկերություններին աջակցելը, վորպեսզի դրանով կապիտալի ու աշխատանքի մեջ տիրող ներհակությունը հարթվի: Խեմնիցում կազմված նոր կուսակցությունն իրան անվանեց սաքսոնական ժողովրդական կուսակցություն, համարելով իրան գերմանական ժողովրդական կուսակցության մի ճյուղը:

Բուրժուական և պրոլետարական տարրերի այդ տեսակ արհեստական միությունը չեր կարող հիմնավոր լինել: 1868 թվին Նյուրենբերգում կրթական ֆերրայնների բանվորների հինգերորդ համագումարում, ֆերրայնների ֆեդերացիայի ծրագրի հիմք եյին ընդունվել Ինտերնացիոնալի կանոնադրության գլխավոր հոդվածները: Իսկ այդ կրթական ֆերրայնների գլխավոր միջուկը կազմում եյին սաքսոնական ֆերրայնները: Թեպետ գերմանական ժողովրդական կուսակցությունը ցանկանալով իր ձեռքում պահել բանվորական կրթական ֆերրայնները՝ հայտնեց իր համագումարում, վոր նա հարում է Նյուրենբերգի համագումարի կողմից ընդունված ծրագրին, բայց և այնպես մի անգամ արդեն առաջացած ճեղքվածքն այլևս անհնարին յեղավ կոծկել և նկատված պառակտումը վերջիվերջո հասցրեց այն դրության, վոր պրոլետարական տարրերը բաժանվեցին ու կազմեցին ինքնուրույն կուսակցություն:

Այդպես ահա սկիզբն առավ գերմանական բանվոր դասակարգի մեջ Ընդհանուր գերման. բանվորական միության կողքին բանվորական նոր կուսակցություն: Յերկու կուսակցություններն էլ,

---

*) Խեմնիցի մանրամասն ծրագիրը տես Ֆ. Մերինգի «Գերմանական սոց.-դեմոկրատիայի պատմությունը», հատ. IV, հավելված յեղբ. Ա. և Ի. Գրանատ-ի հրատ.:

ինչպես այդ կտեսնենք հետո, ընդհանուր առմամբ իրար նման էին իրանց նպատակներով, միայն տարբերվում էին կազմակերպչական և տակտիքական մասնակի խնդիրներում: Եվ այնուամենայնիվ, այդ յերկու կուսակցությունները անընդհատ կռվում էին իրար հետ, մինչեվ վոր վերջնականապես միացան (1875 թ. Գոտայի համագումարում): Այդ յերկպառակությունները, վորոնք չափազանց դանդաղեցնում էին բանվորական շարժման կանոնավոր զարգացումը և ուրախություն պատճառում բանվոր դասակարգի թշնամիներին, ինչպես բուրժուազիայի, այնպես էլ կառավարող դասի միջից, յերբեմն փոխադարձ հայհոյանքների և սուր ընդհարումների ձեվեր էին ընդունում: Այդ անախորժությունները ամենից ավելի ուղղված էին Շվայցերի դեմ Պրուսիայի և Բիսմարկի վերաբերմամբ իր ունեցած քաղաքականության համար: Այդ փոխադարձ հայհոյանքները չափազանց զզվեցրին բանվորներին, և Լայպցիգի բանվորները վորոշում կայացրին, վորպեսզի Լիբկնեխտն ու Շվայցերը միմյանց հետ բացատրվեն իրանց ունեցած փոխադարձ մեղադրանքների մասին հրապարակական ժողովում: Շվայցերն ընդունեց այդ առաջարկը, Բեբելն ու Լիբկնեխտը հրավեր ստացան ներկայանալու Ընդհ. գերման. բանվորական միության ընդհանուր ժողովին և այնտեղ հիմնավորեն իրանց մեղադրանքները: Ժողովը տեղի ուներ Ելբերֆելդ-Բարմենում: Տրված բացատրությունն արտաքուստ կարծես թե խաղաղություն ստեղծեց. վճռվեց վերջ տալ փոխադարձ հարձակումներին, սակայն դա յերկար չտեվեց:

1869 թվի հուլիսի 17-ին այն բանվորական միությունները, վորոնք հարում էին Լիբկնեխտի ու Բեբելի ղեկավարած հոսանքին, վճռեցին գումարել համագերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական համաժողով, վորը պետք է կայանար Այզենախում ագոստոսի սկզբին: Շվայցերը վճռեց այդ համաժողովին ուղարկել նայեվ Ընդհ. գերման. բանվորական միության ներկայացուցիչներին: Առաջին աղմկահույզ նիստից հետո, վորտեղ պարզվեց, վոր անկարելի յե միասին աշխատել, յերկու ուղղություններից յուրաքանչյուրն առանձին համաժողով կայացրեց: Այստեղ պատահած վերջին պառակտումն էլ ավելի սաստկացրեց բանվորական կուսակցության յերկու մասի—լասսալյանների ու Այզենախականների բաժանվածությունը:

Այզենախականները հիմնեցին սոցիալ-դեմոկրատական բան-

փոխական կուսակցություն այն ձևով, վոր նախապատրաստել էր Բեբելը։ Նոր կուսակցության ծրագիրը միացնում էր նյուրնբերգյանը խեմնիցյանի հետ։ Այդ ծրագրի քննությունից յերևում է, վոր ըստ էության համարյա վոչ մի տարբերություն չկար այզենախականների ու լասսալականների մեջ։Ամբողջ զանազանությունը կայանում էր նրանում, վոր այզենախյանների կազմակերպությունները համեմատելով լասսալյանների կենտրոնացրած կազմակերպությունների հետ՝ ավելի եյին դեմոկրատական և վոր այզենախյանները հանձնարարում եյին իրանց համախոհներին անդամագրվել նույնպես Ինտերնացիոնալին, վորի պատճառով մասամբ այզենախյաններին համարում եյին ինտերնացիոնալ կուսակցություն, իսկ լասսալականներին ազգային կուսակցություն։Սակայն ճիշտն ասած՝ այս բանում էլ զանազանություն չկար, վորովհետև այզենախյաններից շատ քչերը կային, վոր անդամագրվել եյին Ինտերնացիոնալին։

Չնայելով այդ յերկու կուսակցությունների մեջ յեղած աննշան տարբերությանը, նրանց մեջ էլ ավելի սաստկացավ կատաղի թշնամությունը, և դա հասնում էր այն աստիճանի, վոր լասսալյաններն ռայխստագի ընտրություններին գերադասում եյին տալ իրանց ձայները մի ազատամիտ թեկնածվի, քան թե այզենախականի՝ այն պատճառաբանությամբ, վոր այզենախականները բանվոր դասակարգի թշնամիներ են։ Բայց շուտով այն ընդհանուր հալածանքը, վորին նրանք յենթարկվեցին կառավարության կողմից, ստիպեց նրանց միանալ։

Ավստրիային հաղթելուց և Հյուսիսային-Գերմանական միությունը կազմելուց հետո Բիսմարկը տոնեց առաջադիմականների դեմ տարած հաղթանակը։ Հաղթական զենքի շառաչյունը և միացած Գերմանիայի հզորության աճումը Բիսմարկի կողմը գրավեցին շնորհակալ ժողովրդին։ Նրա հակառակորդ առաջադիմականները, վորոնք անփոփոխ կերպով հաղթանակում եյին բոլոր ընտրությունների ժամանակ, հաղթական պատերազմից հետո պարտություն կրեցին։ Նրանց տեղը բռնող ազգային դեմոկրատները հավանություն տվին Բիսմարկի քաղաքականությանը և ներեցին նրա այն բոլոր մեղքերը, վորը նա գործել էր անցյալում ժողովրդական ներկայացուցչության դեմ։ Բայց էլ ավելի սաստկացավ Բիսմարկի ժողովրդականությունն ու ույժը, յերբ 1870—71 թվականներին Պրուսիան

հաղթելով Ֆրանսիային՝ աննեկսիայի յենթարկեց Ալզաս-Լոթարինգիան և ստացավ 5 միլիարդ պատերազմական տուգանք։ Իր հաշիվը մաքրելով առաջադիմականների հետ՝ Բիսմարկը վճռեց դառնալ սոցիալիստներին։

1873 թվին նա յերկու որենագիծ ներկայացրեց ռայխստագին գործադուլների և մամուլի ազատության մասին, սակայն ռայխստագը մերժեց նրանց։ Այն ժամանակ նա դիմեց իրան յենթակա պաշտոնեության ոգնությանը։ Դատախազ Տեսենդորֆը փակեց լասսալյան «բանվորական միությունը», ցրեց արհեստակցական միությունների մեծ մասը, դատի յենթարկեց մի քանի տասնյակ լասսալյանների ու այզենախականների, արգելեց բանվորական ժողովները,—և այդ ամենը 1854 թվի որենքի հիման վրա, վորն արգելում եր քաղաքական ընկերություններին հարաբերության մեջ մտնել իրար հետ։ Բայց այդ հալածանքները բոլորովին հակառակ հետևանքներ ունեցան։ Կոբուրգում կայացած համաժողովում 1874 թվին ճառախոսների մեծ մասն այն իմաստով արտահայտվեց, վոր աչքի առաջ ունենալով վոստիկանական հալածանքները՝ յերկու սոց.-դեմոկրատական ֆրակցիաները պետք ե վերջ իրանց ներքին կռիվներին և ի մի ձուլվեն։ Դա իրագործվեց Գոտի համաժողովում (1875 թվին)։ Միացումը յեվս առավել հեշտանում եր շնորհիվ այն հանգամանքի, վոր յերկու ֆրակցիաների ուժերը համարյա հավասար եյին. 1874 թ. ռայխստագի ընտրություններին լասսալյաններն ստացան 180.000 ձայն, այզենախյանները՝ 171.000։ Միաձուլումը տեղի ունեցավ «Գերմանիայի սոցիալիստական բանվորական կուսակցություն» անունով, և ծրագրի մեջ ի միջի այլոց մտցրվեցին նույնպես աշխատավարձի յերկաթե որենքն ու պետական վարկ ունեցող արտադրական ընկերությունները։

Բիսմարկի հալածանքները շարունակվում եյին, և սոց. դեմոկրատներն իրանց հաջորդ համաժողովում Գոտում (1877 թ.) ստիպված եյին հրաժարվել կուսակցական կազմակերպություններից։ Գեդելի և Նոբիլինգի ձեռքով Վիլհելմ I-ի կյանքի դեմ կատարված մահափորձից հետո հալածանքներն սկսվեցին նոր ուժով վոչ միայն կառավարության կողմից, այլև ձեռնարկուների կողմից. վերջիններիցս շատերը հայտարարում եյին, վոր գործ չեն տալու ս.-դ. բանվորներին։ Վերջապես 1878 թվին ռայխստագը Բիսմարկի առաջարկությամբ ընդունեց այսպես կոչված սոցիալիստների մա-

սին հրատարակած որենքը։ Այդ որենքով բոլոր սոցիալիստական կազմակերպությունները հայտարարվեցին որենքի դեմ և վոստիկանությունն իրավունք ստացավ արգելելու սոցիալիստական հրատարակություններն ու ցրելու սոցիալիստական ժողովները։ Միաժամանակ որենքն այնպիսի արտահայտություններով եր խմբագրված, վոր ապորինությունների մեծ հնարավորություն եր տալիս։

Ս.-Դ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԵՆՔԻ ՄԻՋՈՑԻՆ

Սոցիալիստներին վերաբերյալ որենքը հրատարակելուց հետո սկսվեց սոց.-դեմ. կուսակցության քայքայումը։ Կուսակցական 47 լրագիրներից ազատվեցին յերկուսը միայն, փակվեց արհեստակցական միությունների մեծ մասը և նրանց հրատարակությամբ լույս տեսնող 14 լրագիրները, հետո ել արգելվեցին համարյա բոլոր բանվորական կազմակերպությունները, ինքնակրթության ակումբները և զվարճության ընկերությունները։ Այդ որենքի տասնամյա գոյության ընթացքում Գերմանիայի զանազան քաղաքներից արտաքսվեցին 900 հոգի, վորոնք կասկածվել եյին կուսակցությանը պատկանելու մեջ. կուսակցության անդամներն ընդհանուր առմամբ 1000 տարի բանտ նստեցին։ Ս.-դեմ. անցան անլեգալ գործունեյության։ Ընկերների մեջ կապը պահպանվում եր՝ վարչական կարգով աքսորվածների ոգտին դրամական հանգանակություն անելով, անլեգալ գրականություն տարածելով, աշխատանքով ու զվարճություններով կապված ընկերների շրջանում ագիտացիա մղելով և արտասահմանում գաղտնի համագումարներ հրավիրելով։

Վոր սոց.-դեմոկր. ուժերը չնայելով ամեն տեսակ հալածանքների չեյին նվազում, այլ ընդհակառակն աճում եյին, դա յերևում ե այն հաջողությունից, վոր ունեցան սոց.-դեմոկրատներն ռայխստագի ընտրություններին։ 1884 թվին սոց.-դեմ. ստացան ընտրություններին $^{1}/_{2}$ միլիոնից ավելի ձայն (և 24 պատգամավոր), 1887 թ.՝ $^{3}/_{4}$ միլիոն ձայն, 1890 թ.՝ 1 $^{1}/_{2}$ միլիոն ձայն (և 35 պատգամավոր)։

Վիլհելմ I-ի մահից հետո 1888 թվին գահ բարձրացավ նրա վորդին, հիմա գահընկեց Վիլհելմ II-րդը։ 1890 թվին նա հրաժարեցրեց Բիսմարկին և տեսնելով վոր անոգուտ ե սոցիալիստների մասին յեղած որենքն ու կամենալով իր կողմը գրավել բանվորնե-

րին՝ նա նույն տարին հրամայեց մինիստր Կապրիվիին ռայխստագին առաջարկ անել սոցիալիստների վերաբերյալ օրենքը փոխելու համար։

Սոցիալիստների վերաբերյալ օրենքը փոխվելուց հետո կուսակցության առջև ծառացավ նոր կազմակերպություններ ստեղծելու և նոր ծրագիր մշակելու հարցը։ Այդ հարցը լուծվեց Հալլի (1890 թ.) ու Էրֆուրտի (1891 թ.) կուսակցական համագումարներում։ **Էրֆուրտի համագումարում** ընդունված ծրագրին Կ. Կաուտսկին կուսակցության հանձնարարությամբ կցել էր կոմմենտարիաներ (պարզաբանումներ)։ Վորովհետև այդ կոմմենտարիաներն ամբողջովին հիմնավորված եյին Կարլ Մարկսի ու Ֆրիդրիխ Էնգելսի ուսմունքի վրա, ուստի նրա մասին կխոսենք, յերբ խոսելիս կլինենք վերջիններիս ուսմունքի մասին։ *)

ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կարլ Մարկսը ծնվել է 1818 թվին. նա փաստաբանի զավակ եր։ Համալսարանում նա ուսումնասիրել եր իրավաբանական գիտությններն ու փիլիսոփայությունը։ Նա մտադիր եր համալսարանն ավարտելուց հետո պրոֆեսոր դառնալ, բայց ստիպված եր հրաժարվել այդ դիտավորությունից՝ ի նկատի ունենալով գերմանական համալսարաններում այդ ժամանակ տիրող ռեակցիան։ Հրաժարվելով նույնպես փաստաբանի յեկամտաշատ կարյերայից, վորի համար նա նախապատրաստվել եր համալսարանական կրթությամբ, նա ընտրեց վաստակի տեսակետից չափազանց խախուտ մի գրագմունք՝ ժուռնալիստիկան։

Սկզբում նա սկսեց գրել բուրժուա-դեմոկրատական «Հռենոսյան լրագրում»։ Իսկ յերբ այդ լրագիրն արգելվեց, Մարկսը, վոր այդ ժամանակ ամուսնացել եր իր մանկության ընկերուհի Ժեննի-ֆոն-Վեստֆալենի հետ, գնաց Պարիզ, վորտեղ Արնոլ՛դ Ռուգեյի հետ միասին սկսեց հրատարակել «Գերմանա-ֆրանս. տարեթերթեր» անունով թերթը։ Պարիզում Մարկսը հիմնավորապես ծանոթացավ սոցիալիստների ուսմունքի հետ։ Այստեղ էլ նա մտերմացավ Ֆրիդրիխ Էնգելսի հետ և այնուհետև աշխատեց նրա հետ միասին

---

*) Վորովհետև Մարկսի ու Էնգելսի ուսմունքը մի տեսակ ամբողջություն է ներկայացնում, ուստի մենք առանձին կանգ չենք առնիլ Էնգելսի վրա, մանավանդ վոր դրքի ծավալն այդ բանը չի թույլատրում։

մինչև իր մահվան վերջին րոպեն։ Յերբ նա սկսեց աշխատակցել «Յառաջ» թերթին, վորը լույս եր տեսնում Պարիզում գերմանական եմիգրանտների հրատարակությամբ, խստորեն հարձակվելով պրուսական կառավարության վրա, վերջինիս պահանջով նա արտաքսվեց Ֆրանսիայից և 1845 թվի սկզբին տեղափոխվեց ապրելու Բրյուսելում։ Այստեղ նա կոմմունիստների միության առաջարկով Ենգելսի հետ միասին 1847 թ. կազմեց կոմմունիստական կուսակցության մանիֆեստը, վորի մեջ զարմանալի պարզությամբ և հակիրճությամբ խմբագրված են մարկսիստական աշխարհահայացքի հիմնական սկզբունքները՝ հասարակության զարգացման պատմության, պրոլետարիատի վիճակի և սոցիալիզմի եության մասին։ Յերբ Ֆրանսիայում բռնկվեց 1848 թվի հեղափոխությունը, նա հեղափոխական ժամանակավոր կառավարության առաջարկությամբ յեկավ Պարիզ. միևնույն տարին գնաց Քյոլն, ուր հրատարակում եր «Նոր Հռենոսյան լրագիրը»։ Բայց լրագիրն արգելվեց և Մարկսին արտաքսեցին։ Յերկրորդ անգամ Պարիզ գալուց Մարկսին նորից արտաքսեցին, և նա բնակություն հաստատեց Լոնդոնում, վորտեղ և՛ մնաց մինչև մահը (1883 թ.)։

Իր հայացքները Մարկսն արտահայտել է մի ամբողջ շարք հեղինակությունների մեջ և լրագրական հոդվածներում։ Նրա հեղինակություններից ամենանշանավորներն են.

«Սրբազան ընտանիք կամ քննադատական քննադատության քննադատությունը» (1845 թ.), գրված Բրունո Բաուերի և այն սոցիալիստների դեմ, վորոնք չեյին ընդունում դասակարգային կռիվ ու պնդում եյին, վոր սոցիալիզմը կիրականանա քննադատորեն մտածող անհատների ջանքերով։

«Փիլիսոփայության աղքատությունը» (1846 թ.), վորը գրված եր Պրուդոնի «Աղքատության փիլիսոփայության դեմ։

«Կոմմունիստական մանիֆեստը» (1847 թ.), վորը գրել եր Ենգելսի հետ միասին։

«Քաղաքականության քննադատության առիթով» (1859 թվին)։

«Կապիտալ» (քաղաքատնտեսության քննադատությունը), 3 հատոր։ Առաջին հատորը լույս տեսավ 1867 թ., մնացած յերկու հատորը Մարքսի մահից հետո Ֆ. Ենգելսի խմբագրությամբ ձեռնագրերի ու նկատողությունների հիման վրա։

Պատմական աշխատություններն են. «Լուի-Բոնապարտի բրյումերի 18-ը», «Դասակարգային կռիվը Ֆրանսիայում 1848-ից մինչև 1850 թվականները», «Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում» յեվ այլն։

Մարկսի ուսմունքի վրա է հիմնված սոց.-դեմոկրատական բանվորական շարժումը վոչ միայն Գերմանիայում, այլեվ ուրիշ յերկրներից շատերում, ուստի մենք պետք է ավելի մանրամասնորեն ծանոթանանք այդ ուսմունքի հետ, քան սոցիալիզմի ուրիշ տեսաբանների ու պարագլուխների ուսմունքի հետ։

Մարկսի ուսմունքը քննության առնելիս՝ պետք է առանձնապես կանգ առնել նրա փիլիսոփայական-պատմական և սոցիալ-տնտեսական տեսակետների վրա։ Ընդհանուր առմամբ նրա աշխարհհայացքը **տնտեսական մատերյալիզմ** անունն է կրում, իսկ այդ ուսման վրա հիմնված սոցիալիզմը կոչվում է **գիտական սոցիալիզմ**։

Մարկսի փիլիսոփայա-պատմական աշխարհհայացքը կազմվել է Հեգելի, Ֆեյերբախի և ֆրանսիական մատերիալիստների փիլիսոփայության ազդեցության տակ։

Գերմանացի փիլիսոփա Հեգելն անցյալ դարի 20-ական թվականներին ուսուցանում էր, վոր այն ամենը՝ ինչ գոյություն ունի, ճիշտ այնպես է, ինչպես պետք է լինի, և այդ պատճառով էլ խելացի յե, վորովհետեվ մարդկության և առանձին ժողովուրդների պատմությունը «համաշխարհային վոգու» զարգացումն է։ Այդ պատճառով էլ մարդիկ չպետք է վրդովվեն իրանց աչքերի առջեվ կատարվող քաղաքական ու տնտեսական յերեվույթներով, վորքան էլ նրանք իրանց տեսակետից անարդար լինեն, չէ՞ վոր նրանց ղեկավարում է գերագույն բանականությունը, «համաշխարհային վոգու բանականությունը». մարդկանց մնում է միայն ուսումնասիրել այդ յերեվույթները և աշխատել ըմբռնել նրանց իմաստը։ Այդպիսով Հեգելի ուսմունքը պաշտպանողական էր և հավանություն էր տալիս նույնիսկ 20-ական թվականների պրուսական ռեակցիոն պետությանը, վորն իր գոյությամբ ապացուցանում էր, վոր ինքը խելացի յե։

Բայց Հեգելի փիլիսոփայության մեջ կար մի ուրիշ կողմ էլ։ Նա ուսուցանում էր, թե պատմության մեջ չկա անշարժություն, և համաշխարհային բանականությունն անընդհատ առաջադիմում է։

Այդ տեսակետից պետական և տնտեսական կյանքում ամեն մի ձեվ անցողական պատմական մի ձեվ ե, վորն իր զարգացման ընթացքում պետք ե փոխարինվի մի ուրիշով, նորով։ Դա Հեգելի ուսմունքի առաջադիմական կողմն եր։ Ահա թե ինչու Հեգելի հետեվորդները բաժանվում եյին աջակողմյանների և ձախակողմյանների։ Աջակողմյաններն ընդունում եյին նրա ուսմունքի առաջին մասը միայն, այսինքն, թե այն ամենը, ինչ վոր գոյություն ունի, խելացի յե։ Ձախակողմյանները նրա ուսմունքի ծանրության կենտրոնը տեսնում եյին հասարակական կյանքի ձեվերի փոփոխականության մեջ, վորն արդարացնում եր այն մարդկանց հեղափոխականությունը, վորոնք չեյին կամենում հաշտվել մեռնող դարաշրջանի հետ և նայում եյին նրա վրա իբրեվ պատմության մի անցած աստիճանի վրա։

Հեգելի ուսմունքի համաձայն՝ պատմական անընդհատ զարգացումը տեղի յե ունենում հակասությունների միջոցով (տրամաբանական զարգացում)։ Դա նշանակում ե, վոր պատմական զարգացման յուրաքանչյուր փուլը սաղմի նման պարունակում ե իր մեջ իր հակադրությունը։ Նրա այդ հակադրությունն աստիճանաբար զարգանալով ժխտում ե այն փուլը, վորի խորքում նա հասունացել եր, և տանում ե նրան դեպի անկում։ Այդպես դիալեկտիքական (տրամաբանական) յեղանակը կիրառելով կապիտալիստական հասարակակարգի ուսումնասիրության մեջ՝ Մարկսը գտնում ե հետեվյալը։ Ժամանակակից կապիտալիստական հասարակակարգի ներսում հասունանում են իբրեվ նրա հակադրություն սոցիալիզմի նախադրյալները, վորոնք այդ հասարակակարգի զարգացման վորոշ աստիճանի վրա անհրաժեշտ պայման են համարում նրա կորուստը։ Մանրամասն քննելով բուրժուական հասարակությունը՝ մենք նկատում ենք, վոր բոլոր յերեվույթներն այստեղ զարգանում են հակասությունների միջոցով։ Որինակ, բուրժուական հասարակակարգի հիմքը, սեփականությունը, զարգանում ե այն ձեվով, վոր բազմաթիվ մանր սեփականատերեր զրկվում են սեփականությունից, վորը կենտրոնանում ե սակավաթիվ ձեռքերում. ուրիշ խոսքով ասած՝ այն հասարակակարգը, վոր հիմնված ե սեփականության վրա, իր զարգացման մեջ ի վերջո ժխտում ե սեփականությունը։

Մարկսը Հեգելից փոխ առավ պատմության դիալեկտիքական զարգացման վերաբերյալ ուսմունքը, բայց Ֆեյերբախի ուսմունքի

համաձայն՝ նա պատմական զարգացման ծանրության կենտրոնը համաշխարհային վոգուց փոխադրեց մարդկային հասարակության շրջանը, ընդունելով այդ զարգացման համար հիմք՝ ֆրանսիական մատերիալիստների ուսմունքի համաձայն հոգեվոր ու խելացի սկըզբունքի փոխարեն նյութական և տարերային սկզբունքը։ Այդ սկզբունքն, ինչպես ուսուցանում է Մարկսը (նույնպես Էնգելսը), — և հենց դրանում է այդ ուսմունքի ուժն ու ինքնուրույնությունը, — հասարակության տնտեսական կյանքն է և վերջին հաշվով արտադրական ուժերի զարգացումը։ Այդպիսով համաշխարհային բանականությամբ չէ, վոր չափվում է տվյալ հասարակության պատմական կյանքի ընթացքը, նրա պետական ու քաղաքական հասարակակարգը, նրա փիլիսոփայությունը, նրա գրականությունը, ինչպես այդ կարծում էյին հեգելյանները, և վոչ էլ մարդկային բանականությամբ, ինչպես մտածում էյին մանր-բուրժուական սոցիալիստները, այլ նյութական ու տնտեսական հարաբերություններով, կամ ինչպես այլ կերպ արտահայտում են նույն միտքը, խոհականությունը չէ, վոր վորոշում է գոյությունը, այլ գոյությունն է վորոշում խոհականությունը։ Պատմական զարգացման գոյությունն ու հիմքը, նրա պատվանդանը տնտեսական ձևերի զարգացումն է, հասարակական կյանքի մնացյալ բոլոր կողմերն այդ պատվանդանի վրայի կառուցվածքն են։ Յեթե դուք ուզում եք բանալ մարդկային պատմությունը շարժման մեջ դնող վերջին զսպանակները, նախ և առաջ ուսումնասիրեցեք հասարակության տնտեսագիտական (եկոնոմիական) ու տնտեսական զարգացումը։

Ուսումնասիրելով այդ եկոնոմիական զարգացումը՝ դուք կըտեսնեք, վոր նա հիմք է ծառայում մարդկային հասարակությունները դասակարգերի բաժանելու համար, վորոնցից վոմանք գերիշխողներ են ու շահագործողներ, մյուսներն ստորադրյալներ ու շահագործվողներ։ Շահագործվողները թշնամություն և ատելություն են տածում դեպի շահագործողները և բացարձակ կամ գաղտնի կռիվ են մղում նրանց դեմ։ Ահա թե ինչու, ինչպես Կոմմունիստական մանիֆեստն է ասում, «հասարակության ամբողջ պատմությունը մինչև այժմ դասակարգերի կռվի պատմությունն եր»։ Ահա թե ինչու մի վորևէ դարաշրջանի քաղաքական պատմությունն ուսումնասիրելու ժամանակ հարկավոր է նկատի ունենալ տվյալ եկոնոմիական-տնտեսական պատվանդանի վրա առաջացող դասակարգա-

յին հակադրությունները։ Այդ դասակարգային հակադրությունները կոգնեն մեզ ըմբռնելու շատ բան այնպիսի քաղաքական յերեվույթներից, վորոնք մեզ թվում են անբացատրելի ու պատահական։

Այդպես էլ Մարքսի պատմա-փիլիսոփայական ուսմունքը։ Մարքսն այդ տեսակետով է քննել 48 թվականի հեղափոխությունը Ֆրանսիայում և Գերմանիայում («Դասակարգային կռիվը Ֆրանսիայում 1848—1850 թ.», «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Գերմանիայում»), Լուի-Նապոլեոնի կատարած պետական հեղաշրջումը Ֆրանսիայում («Լուի-Նապոլեոնի բրյումերի 18-ը»), Պարիզյան Կոմմունայի ապստամբությունը («Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում»)։

Կարլ Մարքսի **տնտեսագիտական** ուսմունքը, վորը նա զարգացրել է «Քաղաքատնտեսության քննադատության մասին» աշխատության մեջ, «Կապիտալի» 3 հատորում և այլ գրվածքներում («Փիլիսոփայության աղքատությունը», «Կոմմունիստական մանիֆեստ»), վոչ այլ ինչ է, բայց յեթե ժամանակակից կապիտալիստական արտադրական յեղանակների էության զարմանալի հմտությամբ արած լուսաբանությունը։

Մարքսի տնտեսագիտության հիմքն է կազմում **աշխատային արժեքի թեորիան յեվ հավելյալ արժեքի թեորիան**։

Առաջին թեորիայի համաձայն՝ ամեն մի ապրանք առարկայացրված աշխատանք է, և նրա արժեքը վորոշվում է հասարակության համար անհրաժեշտ միջին աշխատանքի քանակությամբ, այսինքն բանվորական ժամանակի այնպիսի քանակությամբ, վորն անհրաժեշտ է գործադրել այդ ապրանքը պատրաստելու համար տվյալ մոմենտում գերիշխող արտադրական պայմաններում։ Որինակ, յեթե 10 արշին կտավն իր արժեքով հավասարվում է մի զույգ կոշկի, դա նշանակում է, վոր 10 արշին կտավ պատրաստելու համար անհրաժեշտ է գործադրել նույնքան բանվորական ժամանակ (այնպիսի արտադրական պայմաններում, վորոնք գերիշխող են հանդիսանում ներկա մոմենտում), վորքան վոր մի զույգ կոշիկ պատրաստելու համար։

Պարզաբանելով՝ թե ինչ բան է աշխատային արժեքը, Մարքսն ապացուցում է, վոր արտադրության կապիտալիստական ձևի ժամանակ կապիտալիստը ձրի կերպով յուրացնում է բանվորների

պատրաստած մթերքների մի մասը, այսինքն ստանում է հավելյալ արժեք այն գումարների դիմաց, որ նա տալիս է բանվորին իրբեվ աշխատավարձ։ Խնդիրն այն է, որ բանվորի աշխատանքը նույնպես մի ապրանք է, ինչպես բոլոր ապրանքներն են, և վաճառվում է այն շուկայում, ուր բանվորն է գալիս վարձվելու։ Կապիտալիստը գնում է բանվորի աշխատանքն այնպես, ինչպես ուրիշ ապրանքներ, այսինքն համաձայն այն բանվորական ժամակի, որն անհրաժեշտ է բանվորի ուժը վերականգնելու համար, իսկ դա հավասարվում է բանվորի բանվորական ուժերը պահպանելու և շարունակ վերականգնելու համար անհրաժեշտ միջոցների ընդհանուր գումարին։ Բայց բանվորական ուժերը վերականգնելու համար պահանջվում է շատ ավելի պակաս ժամանակ, քան թե իրապես բանվորն է աշխատում կապիտալիստի մոտ։ Օրինակ, յեթե բանվորն աշխատում է օրական 12 ժամ, նա իր ստացած վարձը վաստակում է 6 ժամվա ընթացքում, աշխատանքի մնացյալ վեց ժամերի մթերքները կապիտալիստը յուրացնում է նրանից անվճար, ձրի, իբրեվ հավելյալ արժեք։

Հավելյալ արժեքը կազմելում, այլ ոչ թե Լասսալի աշխատավարձի յերկաթե օրենքում է Մարկսը տեսնում բանվորի կեղեքումն արտադրության ժամանակակից կապիտալիստական յեղանակում։ Հավելյալ արժեքի նորմայով ու մեծությամբ է որոշվում աշխատավարձի չափը։ Այդ նորման կարող է լինել ավելի կամ պակաս, և կախված է մի շարք հանգամանքներից, օրինակ կանանց և մանկահասակների աշխատանքների կիրառումից, պահեստի բանվորական բանակի մեծությունից, այն դիմադրությունից, որը ցույց է տալիս բանվոր դասակարգը շահագործումին։ Ընդհանուր առմամբ աշխատավարձի ընդհանուր տատանումները կարգավորվում են բանվորական պահեստային բանակով։ Բանն այն է, որ աշխատանք ունեցող բանվորների թիվը ամեն ժամանակ միատեսակ չէ և բանվորական ձեռքերի պահանջի ազդեցության ներքո կարող է կամ ավելանալ, կամ պակասել։ Իսկ բանվորական ձեռքերի պահանջը կարող է ավելանալ՝ նայելով այս կամ այն ապրանքի պահանջի պայմաններին համաշխարհային շուկայում, կամ պակասել գործերը կանգ առնելու կամ արտադրության մի խոշոր ճյուղում կատարելագործված մեքենա մտցնելու շնորհիվ։ Այդպիսի տատանումների շնորհիվ միշտ էլ լինում են բավականաչափ բանվորական անգործ

խմբեր, վորոնք փափագում են գործ ստանալ. այդ խմբերը կազմում են աշխատանքի պահեստային բանակը, տարբեր իսկական բանակից, վորը տվյալ մոմենտում աշխատանք ունի։ Նայելով թե կապիտալիստին վորքան է աջողվում օգտվել այդ պահեստի բանակից, աշխատավարձն էլ դրա համաձայն տարուբերվում է այս կամ այն կողմը։

Սոցիալիստական հասարակարգի անհրաժեշտությունը Մարկսի համար ճշմարտության կամ արդարության նկատառումներից չէ, վոր բղխում է (ինչպես մանր-բուրժուական սոցիալիստների մեջ)· այդ հասարակակարգը, համաձայն նրա ուսմունքի, չի հաստատվել մի վորևէ ուտոպիստ-մտածողի (ինչպես Ֆուրյեն) ծրագրով և վոչ էլ քարոզների ու համոզումների միջոցով (ինչպես անում էր Օուենը)։ Սոցիալիստական հասարակակարգը բուրժուական հասարակության զարգացման անհրաժեշտ հետևանքն է և ստեղծվում է այդ հասարակության խորքերում աստիճանաբար։

Արդ՝ ո՞ր են այն տվյալները, վորոնք մեզ համոզում են, թե ժամանակակից բուրժուական հասարակությունն աստիճանական զարգացման միջոցով տանում է դեպի իր սեփական անկումը։

Այդ բանում մեզ համոզում են կապիտալի օրըստօրե կենտրոնացումը, բանվոր դասակարգի գոյության անապահովությունը, արդյունաբերական ճգնաժամերը։

Կապիտալի կենտրոնացումը։ Խոշոր արտադրությունների մանըր և միջին տեսակների հանդեպ ունեցած տեխնիքական և առևտրական առավելությունների շնորհիվ (շնորհիվ կատարելագործված մեքենաների գործածության, աշխատանքի մանրակրկիտ բաժանման, հում նյութերի մեծաքանակ գնումների, շուկայի լավ ծանոթության ևայլն) խոշոր արտադրությունները հետզհետե դուրս են մղում հրապարակից մանրերն ու միջակները՝ կլանելով նրանց և այդպիսով օրեցօր ավելի ընդարձակվելով։ Հետևապես վորոշ ժամանակից հետո մանրերն ու միջակները կանհետանան, կմնան միայն սակավաթիվ կապիտալիստների ձեռքում կենտրոնացած խոշոր արտադրությունները։ Այդպես, հասարակությունը կբաժանվի յերկու անհավասար բանակների. մի կողմում կլինի կապիտալի մագնատների*) (ավազանու) մի աննշան խմբակ, մյուս

*) Յեթե կապիտալի կենտրոնացումը տեղի չունեցավ այնչափ արագ, ինչպես Մարկսն էր յենթադրում, դա ունի իր բացատրությունը։ Տես Երֆուրտյան ծրագրի 5-երորդ գերմ. հրատարակության նախաբանը։

կողմում՝ համարյա ամբողջ ազգը, կապիտալագուրկ, պրոլետարացած։

Գոյության անապահովություն։ Ինչպես վերև մատնանշեցինք, ժամանակակից արտադրության պայմաններն ստեղծում են բանվորների արդյունաբերական պահեստի բանակ, վորից կապիտալիստը վերցնում է այնքան բանվորական ուժեր, ինչքան հարկավոր է իրան բանվորական գործող բանակի դեմ կռիվ մղելու համար։ Շուկայի աննախատեսնված տատանումները, տեխնիքական կատարելագործությունները և այլն, հենց նույնիսկ պրոլետարիատի պայքարը, այդ ամենն ստեղծում են այնպիսի պայմաններ, վորոնց ժամանակ այսօր գործ ունեցող բանվորը չգիտե, թե վաղն էլ գործ կունենա, թե՞ վոչ։

«Վոմանց չափից դուրս աշխատանքը,—ասում է Երֆուրտի ծրագրում,—ուրիշների գործազրկության պատճառ է դառնում, իսկ այդ անգործությունը ծառայում է իբրև մի միջոց առաջինների չափից դուրս աշխատանքը պահպանելու և ավելացնելու... Բայց ինչ է նշանակում անգործությունը բանվորի համար։ Վոչ միայն կարիք ու թշվառություն նրանց համար, ովքեր գործ չունեն, վոչ միայն ստրկացում և շահագործում աշխատավորների համար, այլև դա նշանակում է գոյության անապահովություն ամբողջ բանվոր դասակարգի համար»...

Վորքան էլ վոր ծանր եր աշխատավորների վիճակը նախկին ժամանակներում, նա նրանց տալիս եր մի բան—գոյության ապահովություն։ «Ստրուկների և ճորտերի կյանքը պահպանելու միջոցներն ապահովված եյին գոնե մինչև այն ժամանակ, քանի ապահովված եր իրանց տերերի գոյությունը... Մանր արտադրության տիրապետության ժամանակ բանվորի ստացած յեկամուտն իր սեփական տնտեսությունից այնքան ավելի եր լինում, վորքան վոր բանվորն ավելի լեր ջանասեր... բայց ներկայումս ինչպես սեփականատիրությունը, այնպես էլ բանվորական ուժին տիրանալը դեռ յեվս չի վերացնում կարիքն ու թշվառությունը։ Ինչպես վոր մանր գյուղացու և արհեստավորի առջև միշտ ցցված է **սնանկության ուրվականը**, այնպես էլ բանվորի առջև կանգնած է **անգործության** ուրվականը։ Արտադրության ժամանակակից ձևի բոլոր չարիքներից գոյության մշտնջենական անապահովությունն ամենաչարաբաստիկն է, բայց միևնույն ժամանակ նա ավելի է խորը

վրդովում մարդկանց՝ ստիպելով նրանց փափագել մի այլ հասարակակարգ, որն աշխատավորի գոյությունն ապահով դարձնի։

Ճգնաժամեր։ «Որքան էլ մեծ է դրության ընդհանուր անապահովությունն իրերի սովորական ընթացքում,— ասված է Էրֆուրտյան ծրագրի մեջ,— նա էլ ավելի է սաստկանում ճգնաժամերի ժամանակ, որոնք պարբերաբար տեղի յեն ունենում զարգացման որոշ աստիճանի հասած ապրանքային արտադրության հետեվանքով... Ժամանակակից խոշոր ճգնաժամերը, որ ցնցում են համաշխարհային շուկան, հետեվանք են գերարտադրության, որն իր հերթին առաջ է գալիս նրանից, որ արտադրության ժամանակ համաչափությունը բացակայում է»։

Մի կողմից այն հանգամանքը, որ անկարելի յե միանգամից նայել համաշխարհային շուկային և ըստ այնմ իմանալ, թե որտեղ ինչ է պահանջվում, մյուս կողմից՝ շարունակ հարստանալու հետամուտ լինելը և արդյունաբերողների մեջ տիրող մրցակցությունը հասցնում են այն դրության, որ արդյունաբերության շատ ճյուղերում պարբերաբար կուտակվում են բազմաքանակ արտադրություններ՝ չգտնելով սպառողներ։ Դրա հետեվանքը լինում է արդյունաբերական ճգնաժամը, որ տանում է դեպի սնանկություն և բազմաթիվ ձեռնարկությունների ոչնչացում, բանվորների շրջանում յերկարատեվ անգործություն, կարիք ու սով։ Մինչդեռ արդյունաբերողների և առեվտրականների պահեստները լիքն են ապրանքներով։ Այդպիսով բանվորները սովամահ են լինում նրանից, որ չափից ավելի յեն ապրանք պատրաստել։

Այդպես ժամանակ առ ժամանակ ցնցվում է կապիտալիստական հասարակությունը սեփական հակասությունների ջղաձգությունների մեջ, ճգնաժամերը դառնում են ավելի ու ավելի ահեղ և հաճախակի, մինչեվ անգամ վերածվում են համաշխարհային ճգնաժամի։

«Որքան ավելի յե պակասում կապիտալիստ մագնատների թիվը, որոնք հափշտակում են ու մենաշնորհ դարձնում այդ վերանորոգչական պրոցեսի բոլոր շահերը (այսինքն կապիտալիստական զարգացման հավաքական պրոցեսը),— կարդում ենք Մարքսի «Կապիտալ»-ի I հատորում,— այնքան ավելանում է մասսայական աղքատությունը, կեղեքումներն, ստրկությունն, այլասերումը, շահագործությունը. սակայն մյուս կողմից՝ ավելանում է նույնպես

հենց արտադրության կապիտալիստական յեղանակի սեփական մեխանիզմով վարժեցրված, միացրված ու կազմակերպված հարաճուն բանվոր դասակարգի դիմադրականությունը։ Կապիտալի մենաշնորհը դառնում է կապանք արտադրության այն յեղանակի հետագա զարգացման համար, վորը զարգացել է նրա հետ միասին ու նրա տիրապետության տակ։ Արտադրության միջոցների կենտրոնացումը և աշխատանքի համայնացումը հասնում է այնպիսի կետի, վորի վրա նրանք ավելնորդ են դառնում իրանց կապիտալիստական թաղանթով։ Թաղանթը պատռվում է։ Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը։ Եկսպրոպրիատորներն եկսպրոպրիացիայի յեն յենթարկվում»։

Բուրժուազիայի և պրոլետարիատի մեջ տեղի ունեցող դասակարգային կռիվը նախ և առաջ քաղաքական կռիվ է, վորովհետև մինչև անգամ արհեստակցական կռիվը բանվորների ու կապիտալիստների միջև (աշխատավարձը բարձրացնելու, բանվորական որը պակասեցնելու համար) հարկադրում է բանվոր դասակարգին վերջիվերջո դիմել պետական իշխանության աջակցությանը, այսինքն ստիպում է բանվորներին անցնել տնտեսականության շրջանից քաղաքականության շրջանը։

Այդ պատճառով, ինչպես երֆուրտյան ծրագիրն է ուսուցանում, բանվորները պետք է կազմակերպվեն ու դառնան դասակարգային քաղաքական կուսակցություն, վորն առաջադրում է մի շարք քաղաքական ու սոցիալական բնույթ ունեցող պահանջներ։ Այդ նվազագույն պահանջների մեջ են գտնվում ընդհանուր ընտրողական իրավունքը, պետական կազմի լիակատար ռամկավարացումը, 8-ժամյա բանվորական որը, մշտական բանակի վերացումը և նրա փոխարինումը ժողովրդական միլիցիայով։ Այդ պահանջները միասին առած կազմում են մինիմում-ծրագիր (նվազագույն ծրագիր)։ Կուսակցության վերջնական նպատակը, նրա մաքսիմում-ծրագիրը (առավելագույն ծրագիրը) սոցիալիստական հասարակակարգ հաստատելն է։ Այն կուսակցությունը, վորն առաջադրում է այդ պահանջները և պաշտպանում բանվոր դասակարգի շահերը, պրոլետարիատի իսկական կուսակցությունը—սոց.-դեմ. բանվորական կուսակցությունն է։

Վայելելով ընդհանուր ընտրողական իրավունք պարլամենտի և տեղական ինքնավարական մարմինների ընտրություններում՝ բան-

վորները հետզհետե տիրապետում են պետական մեքենային, սահմանվում է պրոլետարիատի դիկտատուրա, Նախապատրաստություններ են տեսնվում անցնելու սոցիալիստական հասարակակարգին։ Այդ իշխանության տիրապետումը և սոցիալիզմին անցնելն արդյոք խաղաղ ճանապարհով կկատարվի, թե հեղափոխության հետեվանքով, դա կախված կլինի հանգամանքների դասավորումից։

Բայց վորչափ վոր բոլոր յերկրներն իրանց տնտեսական կյանքում սերտ կերպով կապված են միմիանց հետ, այնչափ ել մի յերկրի պրոլետարիատի դասակարգային կռիվը սերտ կերպով կապված է մյուս բոլոր յերկրների պրոլետարիատի դասակարգային կռվի հետ, ուստի սոցիալիզմի համար մղած կռիվը կարող է հաջող լինել, յեթե բոլոր յերկրների պրոլետարիատը կմիանա համաշխարհային կապիտալի դեմ վարած իր կռվում։

Ահա թե ինչու Մարկսն ու Ենգելսը վերջացնում են դեռեվս 1848 թվին հրատարակած Կոմմունիստական մանիֆեստը հետեվյալ նշանաբանով, վորի ամբողջ ուժն ու նշանակությունը մենք խորապես զգում ենք մանավանդ ներկա մոմենտում. «Բոլոր յերկրների պրոլետարներ, միացեք»։

Մարկսի և Ենգելսի ուսմունքը, վոր մատնանշում եր, թե ինչպես և ուր է գնում հասարակական զարգացումը, վոր հաստատում եր, թե այդ զարգացման անհրաժեշտ հետեվանքը լինելու յե սոցիալիզմը, գերմանական սոց.-դեմ. կուսակցության ծրագրի ու տակտիկայի հիմքը դարձավ։ Վերջնականապես վորդեգրելով այդ ուսմունքը Երֆուրտում կայացած համագումարում, վորտեղ դուրս վանվեցին Լասսալի ուսմունքի մնացորդները (աշխատավարձի յերկաթե որենքը, արտադրողական ասսոցիացիաները պետական վարկավորումով), գերմանական սոցիալ դեմոկրատիան այն ժամանակից սկսած իր համագումարներում, մամուլի մեջ, պարլամենտական գործունեյության մեջ սկսեց վճռել ծագող հարցերն այդ ուսմունքի եյության և վոգու համաձայն*)։

*) Վորովհետև հեղինակը չի տալիս Մարկսի հայացքներն արհշարժման մասին, իսկ դա հայ ընթերցողին կարեվոր է, մենք դնում ենք այս ծանոթությունը։

Ռեֆորմիստներն աղավաղում են Մարկսի տեսակետը և հայտարարում, թե «հակասություն» կա Մարկսի դեպի արհեստակցական շարժումն ունեցած հայացքների մեջ։ Ըստ ռեֆորմիստների՝ յեթե Մարկսն իր աշխատությունների մեջ պնդում է, վոր պրոլետարիատն իր հեղափոխական միսիան

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ինչպես Յեվրոպայի բոլոր յերկրներում, Գերմանիայում յեվս արհեստակցական միությունները ծագում են փոխադարձ օգնության գանձարկղներից, վորոնք իրանց հերթին սկիզբն են առել հին համքարություններից ու քարգահների միություններից։ Այդ գանձարկղների նպատակն էր լինում ճանապարհածախս տալ շրջագայող քարգահներին, նպաստ՝ հիվանդության, թաղման ու աշխատանքի անընդունակության դեպքերում։

1849 թվից սկսած փոխադարձ օգնության գանձարկղների զարգացումը շնորհիվ կառավարության միջամտության ընդունում է նոր ուղղություն. քաղաքներում աճող թշվառությունների դեմ կռիվ մղելու պատրվակով, իսկ իրապես սոցիալիզմի դեմ կռվելու նպատակով, նա սկսում է հիմնել հարկադրական գանձարկղներ, վորոնց պարտավոր եյին մասնակցել տվյալ վայրի բանվորներն ու տերերը։ Բանվորներին թույլատրվում էր անդամագրվել կամ արքունական գանձարկղներին կամ սեփական ազատ գանձարկղներին, վորոնք այս դեպքում պետք է տոմարագրվեյին և դրա համար էլ յենթարկվում եյին վոստիկանական հսկողության։

Այսպիսով, արհեստակցական միությունների սկզբնավորությունը փոխադարձ օգնության գանձարկղներից՝ կանգ առավ կա-

---

պիտի կատարի,—կործանի բուրժուական հասարակակարգը և մյուս կողմից էլ, յեթե նա ընդունում է, վոր պրոլետարիատը բուրժուական հասարակակարգում պիտի ունենա իր արհեստակցական կազմակերպությունները և կապիտալիստական հասարակարգի սահմաններում բարելավե իր տնտեսական դրությունն ու պաշտպանե իր դասակարգային շահերը, անշուշտ հակասական է։ Ռեֆորմիստները մատնանշելով այդ «տրամաբանական հակասությունը»՝ այն գաղափարն են տարածում, թե արհեստակցական միությունները պրոլետարիատի տնտեսական կազմակերպություններն են, նրանք պիտի «չեզոք» մնան քաղաքական պայքարից (իհարկե, գործնականում դա նշանակում է արհեստակցական միություններում կազմակերպված պրոլետարիատին հեռու պահել ըմբոստացումից և քաղաքական կռվից,—դարձնել ապոլիտիկ), նրանց նպատակը պիտի լինի ձգտել բարեփոխել, բարելավումներ մտցնել պրոլետարիատի տնտեսական դրության մեջ։ Պարզ է, վոր այս տեսակետից յելնելով՝ սոցիալ-դավաճանները պետք է դեմ լինեն, վոր պրոլետարիատի քաղաքական կուսակցությունները ղեկավարեն արհշարժումը. իսկ քաղաքական կռվից հեռու պահելով արհշարժումը, նրանք արհշարժման մեջ մտցնում են ռեֆորմիստական վոգի, մթագնում արհմիությունների մեջ կազմակերպված պրոլետարիատի դասակարգային-

ռավարության միջամտության շնորհիվ։ Բայց, փոխադարձ օգնության նպատակներից բացի, քարգահական գանձարկղները հետապնդում էին ուրիշ նպատակներ էլ, կռիվ էին մղում անցանկալի վարպետների դեմ բոյկոտի միջոցով։ Կապիտալիստական փոխհարաբերություններն արհեստի մեջ մուտք գործելուց հետո կամ այդ միջոցին միանում է գործադուլային կռիվը՝ վարձի պայմանագիրը բարեփոխելու նպատակով, ուրիշ խոսքով ասած՝ այդ ընկերություններն սկսում են ընդունել արհեստակցական միությունների բնույթ։ Ըստ վորում տեղական միությունները դառնում են ազգային, վորին քիչ չե նպաստում քարգահների շրջագայելու սովորությունը։

50-ական թվականների վերջերում և 60-ականի սկզբներում գործադուլային շարժման ազդեցության տակ արտադրության բազմաթիվ ճյուղերում սկսվում է արհեստակցական շինարարություն. ըստ վորում միություններից միքանիսն ընկնում են լիբերալների ազդեցության տակ, մյուսները՝ հոգեվորականության ազդեցության, յերրորդները՝ սոցիալ-դեմոկրատների ազդեցության տակ։

Լիբերալ կամ Հիրշ-Դունկերյան միություններ։ 1848 թ. հեղափոխությունից հետո բանվորները, գլխավորապես արհեստավորներն, ընկան լիբերալ կուսակցության՝ և բանվորական շարժման

գիտակցությունն ու հեղափոխական վոգին և պրոլետարիատին «չեզոքացընելով» նրան հեռու յեն պահում կապիտալիստական լուծը տապալելու հեղափոխական կռվից։

Պարզեցինք ռեֆորմիստների հետեվողական, տրամաբանական տեսակետն արհմիությունների մասին. հիմա համառոտակի պարզենք Կ. Մարկսի տեսակետը, և ընթերցողն ինքը կհամոզվի, վոր սոցիալ-դավաճաններն աղավաղում են Կ. Մարկսի աշխարհահայացքը։

Ամենից առաջ ասենք, վոր Մարկսն առաջին սոցիալիստն եր, վոր ընդունում եր, թե արհեստակցական շարժումը պրոլետարիատի ազատագրական կռվում մեծ դեր և անելիքներ ունի։ Բոլոր սոցիալիստ-ուտոպիստները վոչ մի նշանակություն չեն տվել արհեստակցական շարժմանը, նրանք չեն ըմբռնել արհշարժման դերը։

Ինչ դեր ունեն արհմիություններն ըստ Մարկսի։ Մարկսն իր «Աշխատավարձ, արժեք և վաստակ» գրքում գրում է. «Արհեստակցական միություններն օգտակար են իբրև կապիտալի ոտնահարման ճնշման հակազդելու կենտրոններ»։ Առաջին ինտերնացիոնալի 1866 թ. Ժնեվի կոնգրեսին ուղղած իր նամակում Մարկսը գրում է. «Յեթե արհեստակցական միությունները իբրև միջոց բանվորների փոխադարձ մրցումը վոչնչացնելու

մեջ այդ ուղղության գործիչների ազդեցության տակ, վորի ներկայացուցիչն եր Շուլցե-Դելիչը։

60-ական թվականների սկիզբներին սկսվեց Լասսալյան շարժումը, և առաջադիմականները, վորպեսզի բանվորներին դուրս կորզեն սոց.-դեմոկրատների ձեռքերից, սկսում են հիմնել բանվորների շրջանում արհեստակցական միություններ։ Սկզբում անաջող փորձեր է անում Շուլցե-Դելիչը։ Գործն ավելի աջող ընթացք է ստանում, հենց վոր միություններ կազմելու գործն իր վրա յե առնում Մ. Հիրշը (1868 թ.) և նրա համախոհ Դունկերը։ Իրանց հիմնադիրների անունով էլ այդ միությունները կոչվում են հիրշ-դունկերյան։

Առաջադիմականները, իսկ նրանց հետևից էլ Հիրշն ու Դունկերն ուսուցանում եյին, վոր ձեռնարկուների և բանվորների շահերի միջև հակասություններ չկան, ընդհակառակը՝ կա ներդաշնակություն, կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, ձեռնարկուներն ու բանվորները միացած են «շահերի ներդաշնակությամբ», ուստի բոլոր ընդհարումներն աշխատանքի և կապիտալի միջև կարելի յե ու պետք է վերջացնել խաղաղասիրաբար։ Միյեվնույն պատճառով էլ այդ միություններն իրանց անդամների թվում ընդունում եյին բանվորների շարքում նույնիսկ տերերին. Նրանք չունեյին կռիվ մղելու նպատակով հիմնված գանձարկղներ, նրանց

համար անհրաժեշտ են, ապա ավելի կարեվոր է նրանց յերկրորդ հատկությունը, այն, վոր նրանք հանդիսանում են կազմակերպված ուժ, վոր կարող է վոչնչացնել հենց վարձու աշխատանքի սիստեմը և կապիտալի տիրապետությունը»։ Մի յերրորդ ցիտատ յեվս. Մարքսն իր նամակներից մեկում (գրած 1869 թ.) գրում է. «Արհեստակցական միությունները բանվոր դասակարգի համար հանդիսանում են վորպես սոցիալիզմի դպրոցներ»։ Այս ցիտատները բավական են ընթերցողին պարզելու, վոր Կ. Մարկսը մեծ դեր և նշանակություն եր տալիս արհեստակցական միություններին։

Հիմա պարզենք արհմիությունների անելիքներն ըստ մարկսիզմի։ Այսպես է ձեվակերպում Ն. Աուերբախն իր „Маркс и профессиональные союзы“ գրքում. «Բանվորական ուժը միայն այն ժամանակ կարող է իսկապես ապրանք դառնալ, յեթե նրա վաճառողն ստիպված չի լինիլ վաճառել ամեն ժամանակ և բոլոր պայմաններում. աշխատանքի առաջարկության կարգավորումն արհմիությունների գործունեյության նախապայմանն է»։ Դա նշանակում է, վոր արհմիությունները միջնորդ են ձեռնարկուների և բանվորների միջև և հակում, պաշտպանում ու կարգավորում են աշխատանքի «պահանջն» ու «առաջարկությունը», փոխզնություն են կազմակերպում

նդաստակները սահմանափակվում էին փոխադարձ օգնությամբ, կրթությամբ, վարձու գրասենյակներ բանալով, իրավաբանական խորհուրդներ տալով։

Վերոհիշյալ պատճառներով այդ միությունները կապիտալիզմի զարգացման և աշխատանքի ու կապիտալի փոխհարաբերությունների լարման համընթաց սկսեցին կազմալուծվել, իսկ բանվորներն անցնել սոցիալ-դեմոկրատական միությունները։ Բայց հիրշ-դունկերյան միություններին օգնության հասավ սոցիալիստների դեմ ընդունված օրենքը, որը քայքայեց սոց.-դեմ. բոլոր կազմակերպությունները։ Հիրշ-դունկերյան միություններն աշխուժացան և ընդարձակվեցին։ Սոցիալիստների մասին հրատարակված օրենքը փոխելուց հետո, երբ սկսվեց սոց.-դեմ. կուսակցության, իսկ դրանից հետո էլ սոց.-դեմ. արհեստակցական միությունների բարգավաճումը, հիրշ-դունկերյանների միություններն այնուամենայնիվ չկազմալուծվեցին և նույնիսկ, թեյև շատ դանդաղորեն, ընդարձակում էին իրանց շարքերը։ Դա բացատրվում է նրանով, որ նրանք հրաժարվեցին իրանց նախկին հայացքներից և հարմարվելով կյանքի պահանջներին՝ դարձան նույնանման ռազմական արհեստակցական կազմակերպություններ, ինչպիսին էին սոց.-դեմոկրատների ազդեցության տակ յեղած միությունները։

Քրիստոնեյական միություններ։ Սոցիալիզմի «ախտի» դեմ

անգործների համար, չեն թույլատրում, որ անգործները դասակարգային ատելություն տածեն դեպի գործ ունեցողները։

Արհմիությունների յերկրորդ դերն է—պայքարել բանվորական ուժի արժեքի բարձրացման համար։

Ջանալ բարձրացնել բանվորական ուժի արժեքը։

Սահմանափակել բանվորական օրվա ժամերը։

Կրիզիսների ժամանակ թույլ չտալ աշխատավարձն իջեցնել և պաշտպանողական քաղաքականություն վարել։

Բայց բացի տնտեսական աշխատանքներից, որ կատարվելու յեն իբրև բանվորության տնտեսական շահերը կապիտալիստներից պաշտպանելու աշխատանքներ, մարքսիզմը արհմիությունների առաջ դնում է և՛ հեղափոխական աշխատանքներ։

Կաուտսկին դեռ շատ վաղուց գրել է, որ արհմիությունների աշխատանքները վերջին հաշվով կապիտալիստական հասարակակարգում դառնում են սիզիֆյան աշխատանք։

Պարզ է. քանի իշխանությունը կապիտալիստների ձեռքին է, արհմիություններն ինչ էլ անեն՝ չեն կարող բարելավ վիճակ ստեղծել պրոլե-

կռվելու նպատակով կաթոլիկ, իսկ հետո և բողոքական, հոգևորականությունը 50-ական թվականների սկզբում սկսեց կազմակերպել քարգանների շրջանում լուրջ բարոյակրթական ընկերություններ, ուր բանվորներին ներշնչում էին, որպեսզի նրանք լինեն «իրանց վիճակից գոհ և աշխատանքներում համբերատար», իսկ, որ ամենագլխավորն է, որպեսզի նրանք հեռու մնան քաղաքականությունից ու սոցիալիզմից։ Քարգաններին գրավելու համար այդ ընկերությունները բացի խրատներից տալիս էին իրանց անդամներին զանազան նպաստներ ու կենսաթոշակներ։

Սակայն կապիտալիստական փոխհարաբերությունների զարգացման հետ համընթաց այդ ընկերությունները որպեսզի չկորցնեն իրանց անդամներին, հարկադրված էին բռնել արհեստակցական պայքարի ուղին, նախ խաղաղասիրական, իսկ հետո և բավականին ռազմական։

Փաստերը ցույց են տալիս, որ վերջին ժամանակներս քրիստոնեյական միությունները արհեստակցական շարժման մեջ վարում են ոչ պակաս ռազմական քաղաքականություն, քան սոց.-դեմ. արհեստակցական միությունները։ Նրանք պայքարում են միայն ներկա մոմենտի կարիքների համար, քիչ հետաքրքրվելով բանվորական շարժման վախճանական նպատակներով, մնալով հավատարիմ իրանց կրոնական-կուսակցական սկզբունքներին և ընտրությունների ժա-
տարիատի համար, կա դասակարգային շահերի հակասություն, կմնա և բանվորության սովալլուկ վիճակը։

Ցեվ հեղափոխական մարքսիզմի այս տեսակետից յենելով՝ արհմիությունների դերն ու գլխավոր նպատակն է համարում՝ կազմակերպված պրոլետարիատին նախապատրաստել հարձակողական կռվի կապիտալիզմը կործանելու և սոցիալիստական հասարակակարգ հիմնելու համար, պաշտպանողական տնտեսական հողի վրա մղվող կռվից անցնել հարձակողականի. պրոլետարիատը միայն իշխանությունը գրավելուց հետո յէ, որ վերջ կարող է դնել իր քաղցամահ վիճակին։

Արհմիությունները ըմբռնելով, որ կապիտալիզմի ժամանակ անհնարին է բանվոր դասակարգի տնտեսական վիճակի վերջնական բարելավում, , պարզ է, որ իրանց պայքարն ուղղելու են կապիտալիստների տիրապետության դեմ, ուրեմն կռիվը փոխվում է քաղաքական իշխանությունը գրավելու կողմը, նա դառնում է քաղաքական կռիվ. պարզ է, որ արհմիությունները սերտ կապ պիտի ունենան պրոլետարիատի քաղաքական կուսակցությունների հետ։

Ահա այս խնդրում նույնպես ռեֆորմիստները դավաճանում են պրո-

մանակ տալով քվեներ—կաթոլիկները՝ կաթոլիկական կենտրոնին, իսկ բողոքականները բողոքականին։

Սոցիալ-դեմոկրատական միությունները։ Արհեստակցական միությունների կազմակերպումը լասսալյանների կողմից սկսվեց 1868 թվին, ըստ վորում այդ միությունների մեջ մտնելու համար պայման եր դրվում, վոր պետք ե ընդունել լասսալյան սոց.-դեմ. կուսակցության ծրագիրը։ Փոխադարձ ոգնությանը յերկրորդական տեղ եր տրվում, միությունները պետք ե զուտ ռազմական կազմակերպություններ լինեյին։ Կեսսելի համաժողովում 1869 թվին մասնակցում եր 50,000 միացյալ բանվորների ներկայացուցչություն. հետեվյալ համաժողովում անդամների թիվը իջավ մինչեվ 20,764 հոգու։ Այդ միևնույն համաժողովում վճռվեց բոլոր արհեստակցական միությունները ձուլել մի դասակարգային կազմակերպության մեջ՝ անվանելով «Փոխադարձ ոգնության ընդհանուր միություն», վորը պառակտում առաջ բերավ և հետագայում անդամների թիվը ավելի յեվս պակասեցրեց։ 1874 թվին «Ընդհանուր միության» մեջ 6,000-ից միքիչ ավելի անդամ կար։ Այդ ժամանակաշրջանի վարչական հալածանքները պատճառ յեղան «Ընդհանուր միության» փակմանը։

Այզենախյան միություններն ել սկսեցին կազմակերպվել 1868 թվից։ Այզենախյանները հակառակ լասսալյանների խոշոր տեղ եյին հատկացնում փոխադարձ ոգնությանը։ 1872 թվի համաժողովում նրանք վորոշում կայացրին, վոր միությունները չպետք ե զբաղվեն քաղաքականությամբ։ Այզենախյաններն ունեյին մոտ 10,000 միացյալ բանվորներ։

1875 թվին, լասսալյանների և այզենախյանների միանալու ժամանակ, արհեստակցական միությունների խորհրդաժողովը հաստատեց այզենախյանների այն սկզբունքը, թե միությունները

լետարիատին՝ աշխատելով շատ յերկրներում արհմիությունները հեռու պահել քաղաքական կռվից։

Գերմանական սոցիալ-դավաճանները Մարքսի խոսքերը, վոր «արհմիությունները սոցիալիզմի դպրոցներ են», փոխել են այսպես—«արհմիությունները նախապատրաստական դպրոցներ են սոցիալիզմի». Նրանց այդ աղավաղումը նպատակ ունի արհմիությունները հեռու պահել քաղաքական կռվից։ Ահա թե ինչ ե ասում Մարքսն արհմիությունների մասին և ինչպես են նրա գաղափարներն աղավաղում սոցիալ-դավաճանները։ Հ. Գ.

չպետք է գրավեն քաղաքականությամբ։ Այդ ժամանակաշրջանի արհեստակցական միությունները կազմված էին արհեստավորների, մասամբ հանքային բանվորների խմբավորումներից, նրանց մեջ ֆաբրիկային բանվորներ համարյա թե չկային։

Սոց.-դեմ. արհեստակցական միությունների զարգացումը հետագայում ընդհատվեց սոցիալիստների վերաբերյալ օրենքը հրատարակելուց հետո։ Այդ օրենքը փոխելուց (1890 թ.) հետո սոց.-դեմ. արհեստակցական միությունների զարգացման մասին կխոսենք հաջորդ գլխում։

III

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

(90-ական թվ. սկսած մինչեվ մեր որերը)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԵԼԸ՝ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԵՆՔԸ ՓՈԽԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Սոցիալիստների վերաբերյալ որենքը փոխելուց հետո սկսվում է գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծաղկման դարագլուխը։ Տարեցտարի աճում է նրա համախոհների թիվը։ Դա յերևում է ձայների ավելացման հետևյալ աղյուսակից, վորը տրված է յեղել այդ կուսակցության ռայխստագի ընտրությունների ժամանակ. 1890 թվին՝ 1,427,298 ձայն և 36 պատգամավոր, 1893 թ.՝ 1,786,738 ձայն և 44 պատգամավոր, 1898 թ. 2,107,076 ձայն և 56 պատգամավոր, 1903 թ.՝ 3,010,871 ձ. և 73 պատգամավոր, 1912 թ.՝ 4,250,000 ձայն և 110 պատգամավոր։

Նրան գլուխ են անցնում մի շարք ականավոր քաղաքական գործիչներ, վորոնք մեծ մասամբ դուրս եյին յեկել ինտելիգենտական շրջաններից, և սակավ թվով բանվորների միջից, որինակ. սոց.-դեմոկրատական կուսակցության հին պարագլուխ—ռայխստագի ամենափայլուն ճառախոս—Բեբելը, Մարկսի գաղափարների լավագույն տեսաբան և հանրաճանաչելի դարձնող Կաուտսկին, գերմանական սոց.-դեմոկր. պատմաբան Մերինգը, ապա Զինգերը, Աուերը, Բերնշտայնը, Ֆոլլմարը, Շիպպելը, Ինտերնացիոնալի գաղափարներին հավատարիմ անհաշտելի մարտիկ Կ. Լիբկնեխտը, վոր սոց.-դեմոկր. կուսակցության նշանավոր հիմնադրի վորդին եր (1918 թ. գերմանական իմպերիալիզմի դեմ խիզախորեն հանդես գալու համար նա սկզբում կրում եր սահմանված խիստ պատիժը, բայց հետո դավաճանորեն սպանեցին նրան իր համախոհ Ռոզա Լյուքսեմբուրգի հետ միասին), Կլարա Ցետկինը և շատ ուրիշները։

Կուսակցության գործունեությունն ուղղվում է հետևյալ

խնդիրներին. ընդարձակել անդամների թիվը բանվոր դասակարգի մեջ (բանավոր ու գրավոր ագիտացիայի միջոցով), կազմակերպել պրոլետարիատին (քաղաքական, արհեստակցական, կոոպերատիվային) և գործնական աշխատանք կատարել ռայխստագում: Մինչ սոց.-դեմոկրատիան անլեգալ կուսակցություն էր և աննշան թվով պատգամավորներ ունեին ռայխստագում, նա պարլամենտական գործունեության վրա նայում էր իբրև պրոպագանդայի վրա, վորը պատգամավորների գլուխների վրայով ուղղվում էր յերկրին: Բայց այն որից, յերբ նա պարլամենտում դարձավ խոշոր կուսակցություն, նա կամա-ակամա պետք է մասնակցեր պարլամենտական աշխատանքին: Ինչպես այդ մասին արտահայտվում է Մերինգը—«մի այնպիսի հզոր ժողովրդական շարժում, ինչպիսին դարձավ սոց.-դեմ. շարժումը, չէր կարող այլևս սահմանափակվել սոցիալիստական վերջնական նպատակների պրոպագանդայով. նա պետք է գործնական մասնակցություն ունենար որվա քաղաքական ու սոցիալական հարցերում, իհարկե՝ առանց դավաճանելու իր սկզբունքներին»:

ԵԴՎԱՐԴ ԲԵՐՆՇՏԱՅՆԻ «ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԸ»

Սոց.-դեմ. կուսակցության ծագման սկզբնական որից նրա մեջ նկատվում էր յերկու ուղղություն—չափավոր և ռադիկալ (արմատական): 90-ական թվականների վերջում չափավոր ուղղությունն ավելի վորոշ ձև ստացավ, ամփոփվելով ռեվիզիոնիզմի քարոզչության մեջ:

Այդ ուղղության գլուխ կանգնեց նրա տեսաբանը, կուսակցության հայտնի գործիչ Եդ. Բերնշտայնը. նա իր հայացքներն արտահայտել է միքանի աշխատություններում. ամենից ավելի լրիվ է «Սոցիալիզմի առաջադրությունները և սոցիալ-դեմոկրատիայի անելիքները» աշխատությունը: Իր հեղինակությունների մեջ Բերնշտայնն ապացուցում է, վոր Մարկսի հայացքները մասամբ հնացել են և ժամանակակից իրականության փաստերին զուգադիպում են վոչ բոլորովին: Նմանապես կարոտ են ուղղումների և՛ այն փիլիսոփայական տեսակետները, վորոնց վրա կառուցված է գիտական սոցիալիզմը: Դրա համար էլ Մարկսի հայացքները պետք է յենթարկել վերաքննության (կամ «ռեվիզիայի». այստեղից էլ առաջացել է «ռեվիզիոնիզմ» անունը):

Մարքսի ուսմունքի այն գլխավոր կետը, որի վրա հարձակվում է Բեռնշտայնը, կապիտալի կենտրոնացման թեորիան է։ Նա ապացուցում է, որ մանր և միջակ ձեռնարկությունները բնավ ձգտում չունեն անհայտանալու այնպիսի արագությամբ, ինչպես նախագուշակում էր Մարքսը։ Ավելի կասենք. արտադրության շատ ճյուղերում այդ ձեռնարկությունների թիվը որոշ ժամանակից հետո ավելանում է։ Բոլորովին չի կարելի կիրառել կապիտալի կենտրոնացման թեորիան գյուղական տնտեսության վերաբերմամբ, այս մանր գյուղացիական ստացվածքները զարմանալի կայունություն և ընդունակություն են ցույց տալիս մրցելու խոշոր գյուղատնտեսական արտադրությունների հետ։ Բեռնշտայնի կարծիքով ուղիղ չէ աշխատավոր դասակարգերի աղքատանալու և գոյության անապահովության վերաբերյալ ուսմունքը։ Տնտեսական անհավասարությունը ժամանակի ընթացքում ոչ միայն չի ավելանում, այլ ընդհակառակն՝ ձգտում է հարթվելու։ Վերոհիշյալ հանգամանքների շնորհիվ կապիտալիստական հասարակակարգի փոխվելը սոցիալիստականի պետք է լինի աստիճանաբար մտցրած բարեփոխությունների միջոցով, այլ ոչ թե հեղափոխական հեղաշրջման հետևանքով։ Սոցիալիզմը կիրականացվի աստիճանաբար համաճելով կապիտալիստական հասարակակարգի հետ։ Ուստի և Բեռնշտայնը հանձնարարում է կուսակցության գլխավոր ջանքերն ուղղել գործնական աշխատանքների վրա, ձգտել մասնակի բարելավումներ մտցնել բանվոր դասակարգի դրության մեջ և խորհուրդ է տալիս աշխատակցել բուրժուական կուսակցությունների հետ, որպեսզի նրանց աջակցությամբ կարելի լինի հասնել այն բարեփոխումներին, որոնք շահավետ են աշխատավոր դասակարգերի համար։ Խորասուզվելով տեսական հարցերի մեջ՝ Բեռնշտայնը հանձնարարում է հրաժարվել փիլիսոփայական մատերիալիզմից ու վերադառնալ Կանտի կրիտիցիզմին (քննադատությանը)։

Մենք հնարավորություն չունենք այստեղ կանգ առնելու Բեռնշտայնի ուսմունքի քննադատության վրա և ապացուցելու նրա սխալ լինելը։ Թե մեկը և թե մյուսը ընթերցողը կարող է գտնել Կաուտսկու «Հակաբեռնշտայն» աշխատության մեջ։ Միայն մատնանշենք այն, որ Բեռնշտայնը և իր համախոհները չապացուցեցին, թե ինչպես է կատարվելու սոցիալիստական հասարակակարգի համաճեցումը ժամանակակից բուրժուական հասարակակարգի մեջ և

թե վերջինս ինչպես պետք է քայքայվի աստիճանական բարեփոխումների միջոցով։ Նմանապես և Բեռնշտայնի ուսմունքի գործնական կողմը հենց միայն այն պատճառով է հակասում իրականությանը, որ Գերմանիայի քաղաքական հետամնացությունը (նրա համարյա թե միապետական հասարակակարգը) դարձնում է գերմանական սոց.-դեմոկրատական ահագին կուսակցությունը մի կուսակցություն, որն անկարող է ռայխստագի միջոցով անցկացնել աշխատավոր դասակարգի համար փոքրիշատե կարևորություն ունեցող բարեփոխություններ։ Թերևս դրանով է բացատրվում հենց այն բանը՝ թե ինչու ռևիզիոնիզմը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում դեռ յեվս առաջ չբերավ այն պառակտումը, որ մենք նկատում ենք ֆրանսիական սոցիալիստների մեջ։

Բեռնշտայնի ուսմունքը դիմադրության հանդիպեց կուսակցության հին պարագլուխների կողմից, մանավանդ Բեբելի, Կաուտսկու, Լիբկնեխտի և Մերինգի կողմից։ Նրանք, ովքեր հավատարիմ մնացին Մարքսի հայացքներին, հակառակ ռևիզիոնիստների՝ ստացան «օրթոդոքսներ» (ուղղափառներ) անունը։

ՊԱՐՏԱՅՏԱԳՆԵՐԸ (1899—1913)

Կուսակցության տարեկան համագումարներում, պարտայտագներում, քննվում և խորհրդակցության նյութ են դառնում տակտիկայի վերաբերյալ այն հարցերը, որ առաջադրվում են կուսակցության մեջ ռայխստագում ամենօրյա աշխատանքները։ Այդ հարցերը, որ յերբեմն շատ չնչին են լինում, հաճախ սկզբունքային նշանակություն են ունենում, և նրանց ճիշտ լուծումը շատ կարևոր է, որպեսզի կուսակցությունը չշեղվի ուղիղ ճանապարհից։ Սկսած 20-րդ դարի սկզբից պարտայտագներում ընդունված բանաձևերի քննությունը ցույց է տալիս, որ կուսակցական քաղաքականությունը հաճախակի յենթարկվում է տատանումների, յերբեմն դեպի աջ, յերբեմն դեպի ձախ, և կուսակցության մեջ չկա հայացքների միօրինակություն։

Հաննովերյան պարտայտագում (1899 թ.), ուր օրակարգի գլխավոր հարցն եր ռևիզիոնիզմը, ընդունվեց մի բանաձև, այնքան առաձգական, որ նրա տակ ստորագրել կարող եյին թե օրթոդոքսները և թե ռևիզիոնիստները։ Բայց ռևիզիոնիզմի ախտով վարակված և յերբեմն շատ սուր ու անբարեմիտ կերպարանք բա-

տացած վեճերը շարունակվում էին դեռ շատ երկար ժամանակ։

Դրեզդենյան պարտայտագում (1903 թ.), Բեբելի ասելով, «կուսակցությունն ամբողջ աշխարհի առջև լվանում էր իր կեղտոտ լվացքը»։ Հակաճառությունների, հայհոյանքների և նույնիսկ անձնական բնույթ ունեցող վարմունքների առիթ էր ծառայում երկու հարց. ս.-դեմ. ֆրակցիան ռայխստագում պետք է արդյոք ունենա իր փոխնախագահությունը, թե ոչ, քանի որ նա իր թվական քանակով իրավունք ուներ ունենալու, և այդպիսով անուղղակի կերպով կրե նաև պատասխանատվություն ռայխստագի գործունեության համար, և թույլատրելի՞ չէ արդյոք, որ սոց.-դեմ. գրականագետներն աշխատակցեն բուրժուական մամուլում։ Ռեվիզիոնիստները թույլատրում էին թե՛ մեկը և թե՛ մյուսը, օրթոդոքսները հակառակ էին։ Համագումարի ընդունած բանաձևը վճռականապես դատապարտում էր ռեվիզիոնիստների ձգտումները՝ փոխելու կուսակցության տակտիկան և նպատակները*)։

Բրեմենյան պարտայտագում (1904 թ.) մարքսիստները համաձայնության չեկան ռեվիզիոնիստների հետ՝ նորակոչ զինվորների մեջ հակամիլիտարիստական ագիտացիա մղելու անթույլատրելիության մասին, ըստ որում Բեբելը կրկնեց այն, ինչ որ ասում էր առաջ, թե ս.-դ. պարտավոր են պաշտպանել հայրենիքը թշնամիների հարձակման դեպքում։

Հետեվյալ պարտայտագը Յենայում (1605 թ.), հավանորեն 1905 թվի ռուսական հեղափոխության ազդեցության ներքո, ավելի ձախ բնույթ ուներ։ Այստեղ ընդհանուր գործադուլն ընդունվեց որպես կռվի իրական միջոցներից մեկը, ինչպես բանվորների ունեցած իրավունքները խլելու փորձերի դեպքում (օրինակ ընդհանուր ընտրողական իրավունքի), այնպես և նոր իրավունքներ ձեռք բերելու համար։

Բայց այդ բանաձևը հակասում էր այն բանաձևին, որն ընդունված էր չեզոք արհեստակցական միությունների քյոլնյան համաժողովում, որտեղ ընդհանուր գործադուլը ճանաչվել էր վնասակար բանվոր դասակարգի շահերի համար։ Դրա համար էլ Ման-

*) Այդ չխանգարեց ս.-դեմ. կուսակցությանն ունենալու վերջին ռայխստագում իր նախագահի օգնականը—սոց.-դեմ. Շայդեմանին, որը հռչակ ստացավ իր ստրկական վերաբերմունքով դեպի Վիլհելմը և իմպերիալիզմի հանձնառությամբ։

հայմյան պարտայտագը (1906 թ.), վորը նպատակ ուներ կարեվվույն չափ ամուր կերպով շաղկապելու կուսակցության հետ արհեստակցական միությունները, ընդունեց մի բանաձեվ, վորտեղ ասվում եր, թե Յենայի բանաձեվը չի հակասում Քյոլնին։ Բայց իհարկե, ամենքն ել հասկանում եյին, վոր դա կուսակցության նահանջն եր արհեստակցական միություններում գերիշխող չափավոր հայացքների առաջ։ Միյեվնույն պարտայտագն ընդունեց, վոր բանվոր դասակարգի ազատագրության համար արհեստակցական միությունները վոչ պակաս արժեքավոր են, քան ս.-դ. կուսակցությունը։

Նյուրենբերգյան և լայպցիգյան պարտայտագում (1908 և 1909 թ.թ.) դարձյալ նկատվում ե թեքումն դեպի աջ, դեպի ռեվիզիոնիզմի կողմը (ժառանգության վրա հարկ դնելու որինագծի համար ազատամիտ բուրժուազիայի հետ միասին ընդդեմ պահպանողականների ձայն տալու հարցում)։ Մագդեբուրգյան պարտայտագում (1910 թ.) ընդհակառակն ահագին մեծամասնությամբ վորոշվեց կուսակցությունից հեռացնել այն պատգամավորներին, վորոնք ձայն կտան բյուջետի ընդունելության համար։

Պատերազմի նախընթաց տարիները, գերմանական ս.-դ., ինչպես և ուրիշ յերկիրների սոցիալիստներն, առիթ ունեցան զբաղվելու միջազգային քաղաքականության, սպառազինման և պատերազմի հավանականության հարցերով։ Այդ հարցերը քննվեցին Խեմնիցյան պարտայտագում 1912 թ., և ընդունվեցին անորոշ բանաձեվեր։ Յենայի պարտայտագում (1913 թ.) ի միջի այլոց քննության առնվեց այն հարցը, թե ս.-դ. պետք ե արդյոք մասնակցեն սպառազինումների ավելացման ծախսերը ծածկելու նպատակով առաջարկվող նոր տուրքերի քվեյարկությանը։ Մարքսիստները հանձնարարում եյին որինագծի քննությունը խանգարել (ոբստրուկցիա անել), վորպեսզի ձգձգեն նրա անցնելն ռայխստագի միջոցով։ Ռեվիզիոնիստներն ասում եյին, թե քանի վոր որենքը միյեվնույնն ե պետք ե անցնի, հարկավոր ե մասնակցել նրա քննությանը, վորպեսզի տուրքերը ծանրանան գլխավորապես հարուստների վրա։ Ռեվիզիոնիստների կարծիքը գերակշռեց։

Ֆրանսիական հակամիլիտարիստ Երվեյի հակապատերազմական քարոզը, ինչպես հիշեցինք վերը, ակզբից արդեն վոչ մի համակրություն չգտավ գերմանական ս.-դ. մեջ։ Վերջինները ժառանգչում

եյին, որ զինվորական գործադուլը յերկու կողմից էլ անհավանական բան է, իսկ յեթե մի կողմում էլ գործադուլ անեյին, դա ձեռնտու կլիներ մյուս կողմի համար միայն։ Շտուտգարտյան միջազգային սոցիալիստական համաժողովում Բեբելը դուրս յեկավ խոսելու հատկապես Էրվեյի ուսմունքի դեմ։ Կոպենհագենի միջազգային համաժողովում (1910 թ.) քննվում եր այն հարցը, թե ինչպիսի գործնական միջոցներ պետք է ձեռք առնել բոլոր ազգերի զինաթափման գաղափարն իրականացնելու համար և ինչպես անել, որպեսզի միջազգային վեճերը հարթվեն հատուկ արբիտրաժի միջոցով։ Գերմանացիները մերժեցին Քեր-Հարդիի (անգլիական բանվորական կուսակցության լիդերի) և Վայանի (ֆրանս. սոց.-բլանկիստների պարագլխի) առաջարկը, որոնք առաջարկում եյին զենք և ռազմամթերք պատրաստող բանվորների գործադուլ։

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արհեստակցական շարժումն առանձին թափով վերսկսվում է սոցիալիստների վերաբերյալ որենքը վերացնելուց հետո։

Արհեստակցական կազմակերպությունները սկզբում կրկնակի բնույթ ունեյին։ Մի կողմից սկսեցին կազմվել անգլիական տրեյդ-յունիոնների տիպի միություններ, մյուս կողմից զուտ գործադուլային կազմակերպություններ, այսպես կոչված փխրուն կազմակերպություններ, որոնք կազմվում եյին միայն տվյալ գործադուլը վարելու համար։ Փորձը ցույց է տալիս, որ այդպիսի «փխրուն» կազմակերպությունները հող են պատրաստում անցնելու դեպի մշտական արհեստակցական կազմակերպությունները։ «Փխրուն» կազմակերպությունները գերակշռում եյին այնպիսի ֆաբրիկային արտադրությունների մեջ, ուր արհեստակցական շարժումը դեռ յեվս մուտք չէր գործել։ Միևնույն ժամանակ այդ զուտ գործադուլային ռազմական կազմակերպությունները շարունակում են գոյություն ունենալ Գերմանիայում լոկալ (տեղական) միություններ անունով։

Արհեստակցական միությունների աճմանը բավականաչափ նպաստեց անգործներին լայն չափով ոգնություն ցույց տալը։ «Այսոր մտնել միության մեջ, իսկ վաղն սկսել գործադուլ,—ինչպես այդ նկատում է Նյուրենբերգի բանվոր-քարտուղար Զեգիցը,—այդպես են հասկանում շատ բանվորներ արհեստակցական շարժ-

ման նշանակությունը»: Գործադուլից հետո բանվորներն աշխատում են հեռանալ միությունից: Բայց յերբ միությունը խոստանում է օգնություն ցույց տալ անգործներին, այդ դեպքում միությունից հեռանալն սպառնում է նրանց նյութական վնասով: Այդպիսով, անգործներին նպաստ տալը սերտ կերպով շաղկապում է նրանց միությունների հետ: Քիչ չեն նպաստում արհեստակցական միավորումների հիմնավորմանն այն տարիֆային (կոլլեկտիվ) պայմանագրերը, վոր կապում է միությունը ձեռնարկուների հետ. այդ տեսակ պայմանագրերը պաշտպանում են բանվորին ձեռնարկվի կամայականությունից և ստիպում են բանվորներին պաշտպանություն վորոնել արհեստակցական միության հարկի տակ:

Ս.-դ. արհեստակցական միությունները, վորոնք 90-ական թվականներին իրանց թվով վերջին տեղն եյին բռնում, ներկա դարի 15 տարիների ընթացքում խոշոր չափերի հասան՝ գերազանցելով բոլոր մյուս միություններից: Դա բացատրվում է նախ և առաջ արդյունաբերության զարգացմամբ և հետեվապես բանվոր դասակարգի մեջ մանր բուրժուականի հանդեպ պրոլետարական տարրերի գերակշռությամբ, նույնպես արհեստակցական շարժման նկատմամբ սոց.-դեմ. հայացքների մեջ առաջացած փոփոխությամբ: Դեռ յեվս քյոլնյան պարտայտագում 1893 թվին կասկածներ եյին հայտնվում այն մասին, թե արհեստակցական միությունները կարող են արդյոք շատ բան տալ բանվորական շարժմանը*): Ամբողջ 90-ական թվականների ընթացքում սոց.-դեմ.նայում եյին արհեստակցական միությունների վրա իբրև «ռեզերվուարների» (պահեստների) վրա, վորտեղից կուսակցությունը կարող է վերցնել նոր անդամներ ու համախոհներ: Բեբելը նրանց անվանում եր սոցիալիզմի դպրոցներ: Քաղաքական ընկերություններին միմիանց հետ հարաբերության մեջ մտնելու իրավունքն արգելող (1854 թվի) օրենքի վերացումը 1899 թվին հեշտացրեց արհեստակցական միությունների և կուսակցության մերձեցումը: Մանհեյմյան պարտայտագում (1906 թ.) կուսակցությունը և ար-

*) Լիբկնեխտն ասել է. «Յես և իմ բարեկամները չենք կարծում, վոր արհեստակցական միությունները յերբեվիցե հասել են Գերմանիայում զարգացման այն աստիճանին, ինչպես Անգլիայում է: Յես համոզված եմ, վոր նախ քան հասնեն զարգացման այդ աստիճանին, կապիտալիզմի բաստիոնի և գերմանական բուրժուազիայի ամրոցների վրա կծածանի հաղթական սոց.-դեմոկրատիայի կարմիր դրոշակը:

հեստակցական միությունները ճանաչված են ս.-դ. բանվորական շարժման համար հավասարապես անհրաժեշտ մասեր*)։ Արհեստակցական շարժումը չեզոքացնելու, այսինքն քաղաքականից նրան բոլորովին առանձնացնելու ձգտումը նպատակին չի հասնում. փաստերը ցույց են տալիս, որ միայն սակավաթիվ միություններ կարող են մնալ չեզոք, իսկ միությունների ճնշող մեծամասնությունը հարում է այս կամ այն քաղաքական կուսակցությանը։

1914 թ. արհեստակցորեն-կազմակերպված 3 միլիոն բանվորներից սոցիալ-դեմոկրատականներին (որոնք միաժամանակ կոչվում էին կենտրոնացվածներ, ազատներ) պատկանում էր 2 միլ. 500,000-ից ավելի, քրիստոնեյական միություններին՝ 300,000-ից ավելի, հիրշ-դունկերյաններին՝ մոտ 150,000։ Բացի դրանից՝ կան մի շարք անկախ արհեստակցական միություններ, որոնց մեջ կան մոտ 800,000 բանվորներ։ Անկախ միությունների մեջ առանձին ուշադրության արժանի չեն մի քանի «լոկալ» (տեղական) միություններ, որոնք հետզհետե կանգնում են ֆրանսիական անիշխանա-սինդիկալիզմի տեսակետի վրա։ Այդ «տեղական» միությունների գաղափարախոսն է դոկտոր Ֆրիդբերգը, որ 1907 թ. արտաքսված է կուսակցությունից անիշխանա-սինդիկալիստական քարոզչության համար։

Թե որքան արագորեն է տեղի ունենում գերմանական ս.-դ. արհեստակցական միությունների և նրանց դրամական միջոցների աճումը, այդ յերևում է հետևյալ աղյուսակից.

Տարի	Անդամների թիվը (հազարներով)	Յեկամուտը (հազարական ռուբլիներով)	Ծախսերը
1895	259,2	1,456,7	1,194,2
1899	580,5	3,688,9	3,096,5
1902	733,2	5,326,8	4,902,9
1905	1,344,8	13,329,7	12,011,9
1907	1,865,5	24,670,5	20,698,0
1910	2,017,3	30,898,6	26,804,9
1912	2,530,4	38,512,3	29,330,9

Այդպիսով մենք տեսնում ենք, որ առնվազն 20 տարվա ըն-

*) Բանաձևն ու Զինգերի ասածները տես Պրոկոպովիչի «Բանվորական շարժումը Գերմանիայում», հրատ. 2, յեր. 307 և շարունակությունը։

թացքում ս.-դ. արհեստակցական միությունները ավելացրել են իրանց անդամների թիվը համարյա 10 անգամ, իսկ իրանց յեկամուտներն ու ծախսերը 25 անգամ։

Դրամական միջոցների արագորեն աճելը բացատրվում է վոչ միայն անդամների թվի բազմանալով, այլեվ անդամավճարների անընդհատ ավելացումով, վորոնք շաբաթական 6—8 կոպեկից 90-ական թվականների սկզբում հասան (1912 թ.) մինչեվ 25 կոպեկի ուել ավելի, իսկ մի քանի լավ վարձատրվող բանվորական միությունների մեջ նույնիսկ շաբաթական 50—60 կոպեկի։ Ընդ սմին հարկավոր է նկատել, վոր բացի «հիմնական» վճարումներից՝ կան նույնպես լրացուցիչ տեղական վճարումներ, վորոնք գործադրվում են զանազան տեղական ծախսերի վրա։ Նյութական այդպիսի դրությունը հնարավորություն է տալիս գերմանական արհեստակցական միություններին դիմանալու կապիտալիստների հետ ունեցած ամենածանր ընդհարումներին և չքայքայվելու ճգնաժամային տարիները։ Նյութական տեսակետից գերմանական արհեստակցական միությունները վոչնչով հետ չեն մնում հին անգլիական տրեյդ-յունիոններից։

Միյեվնույն ժամանակ նրանք գերազանցում են անգլիական տրեյդ-յունիոններից կազմակերպչական տեսակետով։ Ինչպես հիշված էր վերեվում, անգլիական տրեյդ-յունիոնիստներն աչքի են ընկնում խիստ բաժանվածությամբ, մինչդեռ գերմանականները զարմացնում են իրանց համախմբությամբ և համակենտրոնացմամբ։ Յեթե Անգլիայում մեկ միությանը միջին հաշվով ընկնում է 3,500 անդամ, Գերմանիայում միջին հաշվով մեկ «ազատ» (ս.-դ.) միությանն ընկնում էր (1913 թ.) 54,000 անդամ, այսինքն 15 անգամ ավելի։ Գերմանիայում վերջին տարիներն ավելի ու ավելի յե նկատվում ձգտում համախմբվելու վոչ միայն առանձին գրադմունքի բանվորներին, այլեվ արտադրության ամբողջ մի ճյուղի բոլոր բանվորներին ընդգրկող միություններում։ Այդպիսի արտադրական միության (industrieverband) որինակ կարող է ծառայել որինակ գերմանական մետաղագործների միությունը, վոր միացնում է իր մեջ 31 արհեստների բանվորներին, վորոնք զբաղված են մետաղագործության արտադրության մեջ (փականագործներ, խառատներ, դարբիններ, մեքենայագործներ յեվայլն)։ Այդպիսին է փայտեղենի բանվորների միությունը, վորը միացնում է իր մեջ 18 տեսակի

արհեստներ, ֆաբրիկային հասարակ բանվորներին, վորը միացնում է 58 զբաղմունքներ, մանվածային (տեկստիլ) բանվորներին, փոխադրական գործի բանվորներին, լեռնա-հանքային բանվորներին։ Այդ 6 ինդուստրիալ միությունները միացնում են իրանց շարքերում մոտ 1,400,000 (1912 թ. տվյալները) անդամներ, այսինքն Գերմանիայի սոցիալիստական արհեստակցական միությունների անդամների ամբողջ քանակի 56%-ը։

Այդ տեսակ միացման օգուտներն ահագին են։ Նախյեվառաջ այդպիսի միացումը (բոլոր բանվորների, օրինակ՝ սկսած էլեկտրոտեխնիկից մինչև մետաղագործական արտադրության սովորական հասարակ բանվորը) նպաստում է կաստայական վոգու հեռացմանը, մի վորյեվե համքարության վոգու դերազանցությանը մի ուրիշից, սովորեցրած բանվորներին անսովորների դեմ։ Յեվ երկրորդ՝ նպաստում է պրոլետարիատի շահերի լավագույն պաշտպանությանը, հնարավորություն տալով միանգամից շարժման մեջ դնելու արտադրության ամբողջ մի ճյուղի բանվորներին։

Մի քանի խոսք ել ասենք այն պաշտոնավարական մարմինների մասին, վորոնց ստեղծել են ս.-դ. արհեստակցական (և նրանց նմանողությամբ ել քրիստոնեյական ու լիբերալ) միությունները։

Բոլոր ս.-դ. արհեստակցական միությունները միացնող մարմինն է ընդհանուր հանձնաժողովը։ Սկզբում ընդհանուր հանձնաժողովը վարում եր գործադուլների ժամանակ դրամական նպաստ տալու գործը, նմանապես արհեստակցական միացումների ագիտացիա և պրոպագանդա մղելով անկազմակերպ բանվորների շրջանում, այժմ—միայն արհեստակցական շարժման ագիտացիայով, պրոպագանդայով և վիճակագրությամբ։ Նրա տպագրական օրգանն եր „Correspondenzblatt“։

Տվյալ վայրի արհեստակցական միությունները միացնող մարմիններն են կարտելները։ Նրանք այդ կողմից նմանում են ֆրանսիական աշխատանքի բորսաներին, վորոնց հետ ունեն և ուրիշ ընդհանուր ֆունկցիաներ. հիմնել հյուրանոցներ անցվոր բանվորների համար, վարձու գրասենյակներ, բանվորական ձեռքերի պահանջի և առաջարկի վիճակագրական հետազոտություն, և առհասարակ արհեստակցական շարժման վերաբերյալ տեղական հարցերի և արհեստակցական դատարաններ հիմնելու խնդիրը։

Վերջապես այդ մարմինների թվին են պատկանում բանվորական քարտուղարությունները, վորոնց գլխավոր ֆունկցիան է տալ իրավաբանական խորհուրդներ, մանավանդ պետական ապահովագրության, գործարանական որենսդրության և վարձու պայմանագրի մասին։ Թե բանվորական կյանքի ինչ կարեվոր պահանջներին են բավարարում քարտուղարությունները, յերևում է նրանից, վոր նրանք իրանց գոյությամբը խոշոր չափով նպաստել են արհեստակցական միությունների աճմանը։

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արհեստակցական միությունները ձգտում են հետ պահել բանվորներին աննպատակ ու անաջողության դատապարտված գործադուլներից։ Այնուամենայնիվ գործադուլային շարժումը Գերմանիայում հետ չե մնում Ֆրանսիայից ու Անգլիայից։

1905 թվից մինչեվ 1912 թվականը Գերմանիայում արձանագրըված են 21,625 ընդհարումներ 2,537,016 հոգու մասնակցությամբ. այդ ընդհարումները, վորոնց կեսից ավելին վերջացել է աջող, և միայն հարյուրից 21-ը փոխադարձ համաձայնությամբ, իսկ 21,7-ն անաջող, 44,646,500 ռուբլի նստեցին։

Վերջին տասնհինգամյակի գործադուլների մեջ մի քանիսն աչքի եյին ընկնում իրանց հսկայական ծավալով և պայքարի սաստկությամբ։

1903 թվին գործադուլ արին Կրիմիչաուի ջուլհակները Սաքսոնիայում, վորն ռայխստագ է ուղարկում գլխավորապես սոց.-դեմոկրատներին։ Կես տարի շարունակ գործադուլարարները պայքարում եյին տասժամյա բանվորական որվա համար վոչ միայն ֆաբրիկանտների դեմ, այլև ամբողջ գերմանական բուրժուազիայի*)։ Պրոլետարիատը Գերմանիայի բոլոր ծայրերից նվիրաբերություններ եր ուղարկում գործադուլարարներին, վորպիսի հանգամանքը դարձնում եր այդ գործադուլը համապրոլետարական գործ։ Բայց ֆաբրիկանտներն արտասովոր համառություն ցույց տվին, և գործադուլարարները վերջիվերջո ստիպված յեղան զիջել։

1905 թվին տեղի ունեցավ Ռուրի հանքափորների հսկայա-

---

*) Անգլիայում, ինչպես այդ տեսնում ենք մեքենայագործների (1852 թ.) և հյուսների (1858 թ.) գործադուլների որինակից, «հասարակությունը» քիչ չեր պատահում վոր դրամական օգնություն եր ցույց տալիս գործադուլարարներին ընդդեմ կապիտալիստների։

կան գործադուլը, վոր դիտավորյալ կերպով առաջ էին բերել ձեռնարկուները՝ մի ուժեղ միություն (կամ սինդիկատ) կազմելով։ Բանը նրանումն է, վոր սինդիկատի կողմից ածուխի չափազանց բարձր նշանակած գները հանկարծ սկսեցին ընկնել։ Գների այդ անկումը կանգնեցնելու նպատակով անհրաժեշտ էր ժամանակավորապես կանգնեցնել արտադրությունը, վորպեսզի «ածուխի սով» առեղծվի։ Իսկ դրա համար հարկավոր էր գործադուլ առաջ բերել։ «Ածխային բարոնները» դիմեցին պրովոկացիայի ոգնության. սկսեցին գրգռել բանվորներին՝ յերկարացնելով աշխատանքի որը և անճիշտ գնահատումներ անելով։ Բանվորների պարագլուխներն ամեն կերպ հանգստացնում էին բանվորներին, գտնելով վոր գործադուլն անշահավետ է ներկա մոմենտում։ Նրանք համոզեցին բանվորներին պահանջել միջնորդ դատարան, բայց ձեռնարկուներն այդ բանում էլ մերժեցին։ Այն ժամանակ 200,000 բանվորներ գործադուլ արին։ Չքացան սոց.-դեմոկրատական, քրիստոնեյական և լիբերալ միությունների միջեվ յեղած տարաձայնությունները։ Բանվորական այդ ընդհանուր գործում բոլորն էլ միաբանեցին։ Գործադուլը տեվեց 4 շաբաթ և վերջացավ այն ժամանակ միայն, յերբ գործին միջամտեց կառավարությունը, խոստանալով բավարարել բանվորներին՝ հրատարակելով նոր օրենք, վորը պետք է չափավորեր ձեռնարկուների ախորժակները։ Բանվորներին այդ գործադուլն արժեց 20 միլլիոն մարկ, ձեռնարկուների սինդիկատին՝ 70 միլլիոն մարկ, բայց վերջիններս իրանց կրած վնասներից ավելին ստացան, ինչպես հարկն է ավելացնելով քարածուխի գները։

Նույն տարին տեղի ունեցավ ծխախոտագործարանների բանվորների գործադուլը Դրեզդենում, մետաղագործ բանվորներինը Մյունխենում յեվայլն։

1906թվին բռնկվեց Թյուրինգենյան ածխահանների գործադուլը, վոր տեվեց 2 ամիս և վերջացավ իրանց հաղթանակով, սահմանվեց 9-ժամյա բանվորական որ և ավելացրվեց աշխատավարձը։ Միեվնույն տարին տեղի ունեցավ մետաղագործ բանվորների ընդհանուր գործադուլն իբրեվ պատասխան ձեռնարկուներին, վորոնք մերժել էին սահմանել նվազագույն աշխատավարձ և վերացնել արտաժամյա աշխատանքները։ Տերերը պատասխանեցին լոկաուտով։ Ընդհարումը, վոր տեվեց 2 ամսից ավելի, վերջացավ փոխադարձ համաձայնությամբ. բանվորները հրաժարվեցին նվազա-

գույն աշխատավարձի պահանջից, տերերը զիջեցին արտաժամյա աշխատանքների հարցում՝ պարտավորվելով վճարել դրանց համար 25% ավելի։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՅԵՎ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կապիտալիստական պետության սոցիալական և ֆաբրիկային որենսդրության բոլոր տեսակները հարկավոր է նկատել իբրև բանվոր դասակարգի ուղղակի կամ անուղղակի նվաճումներ, վորովհետև տիրապետող դասակարգերը, ինչպես փորձը ցույց է տալիս, անընդունակ են անելու հոգուտ բանվոր դասակարգի վորևէ բան, յեթե նրանց չեն հարկադրում այդ անելու կամ բանվորների կռիվը կամ սեփական շահերը։

Այդպես որինակ՝ փոխադարձ ոգնության պարտադիր գանձարկղները, վոր ստեղծված եյին 1849 և 1854 թվականների պրուսական որենքներով, կյանքի եյին կոչված նրա համար, ինչպես այդ ցույց է տալիս հենց որենքի պատճառաբանությունը, վոր բանվորների անապահով դրությունը «նպաստում է սոցիալիզմի կործանարար յերազանքների զարգացմանը»։

Միյեվնույն պատճառների ազդեցությամբ 1883 թ. հիմք դըրվեց այսպես կոչված բանվորների բիսմարկյան ապահովագրությանը։ Կռիվ մղելով սոցիալիզմի անորինակ արագությամբ ծավալվելու դեմ Բիսմարկը մի կողմից հրատարակեց սոցիալիստների վերաբերյալ որենքը (1878 թ.), քայքայեց այն ժամանակվա ս.-դ. կազմակերպությունը, մյուս կողմից ցանկանալով իր կողմը գրավել բանվորներին՝ նա առաջ քաշեց պետական ապահովագրությունը։ Բայց, ինչպես ցույց տվին փաստերը, այդ ձեռնարկը ցանկալի նպատակին չհասցրեց, թեպետ բանվորները չհրաժարվեցին ոգուտ քաղել այդ «սոցիալական պարգևի» նիհարիկ բարիքներից։

Պետական ապահովագրությունը հիվանդության դեպքի համար (1883 և 1889 թվականների որենքներով, լրացրած մի շարք ուրիշ որենքներով), վոր տարածում եր բանվորների պարտադիր փոխադարձ ոգնությունն ամբողջ կայսրության մեջ, ներկայումս վարում են յոթը զանազան տեսակի գանձարկղներ։ «Ազատ տոմարագրված» գանձարկղների վարչությունն ամբողջապես գտնվում է բանվորնե-

րի ձեռքում։ Տեղական հիվանդանոցային գանձարկղներում կառավարելու ծանրության կենտրոնը գտնվում է բանվորների կողմը, «ֆաբրիկային» գանձարկղներում գերակշռում է խառը ներկայացուցչությունը, «համայնական» գանձարկղները կառավարվում են բյուրոկրատորեն։ Ամենից ավելի զարգացած են տեղական հիվանդանոցային գանձարկղները։ 1908 թվին բոլոր գանձարկղներում ապահովագրված էյին 12,300,000 բանվորներ, բացի դրանից՝ հատուկ հանքային գործարանային գանձարկղներում 800,000 բանվորներ։ Հիվանդների համար արված ծախսերը, վոր 1900 թվին կազմում էյին 157,800,000 մարկ, 1908 թվին հասան 297,400,000 մարկի։

Գանձարկղի պարտականությունները կայանում են նրանում, վոր ձրի բժշկական ոգնություն են ցույց տալիս 26 շաբաթվա ընթացքում, տալիս են հիվանդացման դրամական ոգնություն յուրաքանչյուրի ստացած աշխատավարձի կեսի չափ, ոգնություն են հասցնում ծննդկաններին 6 շաբաթ շարունակ և թաղման գումարներ են տալիս։ **Գանձարկղների միջոցները** գոյանում են այն վճարումներից, վոր անում են բանվորները $^{2}/_{3}$-ականի չափով, իսկ ձեռնարկուները $^{1}/_{3}$-ականի։

Դժբախտության դեպքերի համար ապահովագրությունն ըստ էության ձեռնարկուների ապահովագրումն է իրանց մոտ վարձված բանվորների հանդեպ պատասխանատվության յենթարկվելու համար։ Ձեռնարկուները (լրիվն իրանց հաշվով) ապահովագրում են բանվորներին հատուկ արհեստակցական ընկերությունների մեջ, վորոնց կառավարությունը գտնվում է ձեռնարկուների կողմից ընտրված անձերի ձեռքում։ Բանվորներն ունեն միայն ներկայացուցիչներ նրանց հանձնաժողովներում և միջնորդ դատարաններում։ Տրվելիք նպաստի չափը կախված է բանվորի ստացած տարեկան յեկամուտից։ Աշխատունակությունը լրիվն կորցնելու դեպքում այդ նպաստը (ռենտան) կազմում է տարեկան վաստակի $^{2}/_{3}$-ը։ Վիճակագրական տվյալների համաձայն՝ ապահովագրված բանվորի տարեկան միջին վաստակը հավասարվում էր 1900 թ. 896 մարկի, 1908 թ. 1,074 մարկի, այսինքն 8 տարվա ընթացքում աճում է համարյա $20^{0}/_{0}$-ով։ 1908 թվին ապահովագրված էյին դժբախտ դեպքերից 23,600 հազար հոգի, դրանցից 8,9 միլիոնն արդյունաբերության մեջ աշխատողներն էյին, 14,2 միլիոնը գյուղատնտեսական ձեռնարկներում աշխատողները, և մոտավորապես մի միլիոնը՝ պետական ու

հասարակական հիմնարկություններում աշխատողները։ Ընդհանուր առմամբ 1908 թվին ապահովագրական հասույթ էյին ստանում 1,008,677 հաշմանդամներ (կամ նրանց ազգականները)։

Ապահովագրումը ծերության և հաշմանդամության դեպքերում տարածվում է այն բոլոր անձանց վրա, վորոնց տարիքը 16-ից պակաս չէ և դրամական վարձատրություն են ստանում իրենց զբաղմունքի համար, ըստ վորում անկախ իրենց ստացած վարձատրության չափից՝ բանվորները, գործակատարները, քարգանները, աշակերտները, ծառաները և նավերում ծառայողներն ու այնպիսիները, վորոնց վաստակն ավելի չէ 2000 մարկից, վարպետները, տեխնիկները, գրասենյակային պաշտոնյաները, մասնավոր ուսուցիչները յեվայլն։ Հոժարակամ կարող են ապահովագրվել այն անձինք, վորոնց տարիքը բարձր չէ 40-ից և ստանում են ռոճիկ 2 հազար մարկից վոչ պակաս և վոչ ել 3000 մարկից ավելի։

Հաշմանդամներն ստանում են հաշմանդամային նպաստ, յեթե նրանք 200 շաբաթվա ընթացքում մուծել են վճարումներ։ Ծերության կենսաթոշակ ստանում են համապատասխան անձինք 70 տարեկան դառնալուց հետո, յեթե նրանք համապատասխան վճարումները մուծել են 1,200 շաբաթվա ընթացքում։

Նպաստները վճարելու միջոցները գոյանում են գործատուների ու բանվորների հավասար չափավորած մուծումներից և այն գումարից, վորն ավելացնում է կառավարությունն՝ ամեն մի անձի վրա հաշվելով 50 մարկ։ Վճարումների չափը տարբեր է, նայած թե տվյալ անձն իր աշխատավարձով վոր կարգին է դասված. այդպիսի կարգերի թիվը հինգ է։

Նպաստն աննշան է, թեյեվ նրա միջին չափը տարեցտարի ավելանում է համապատասխան աշխատավարձի բարձրացման։ Հաշմանդամային միջին նպաստը կազմում եր 1891 թ. 113 միլիոն, 1895 թ.՝ 124 միլ., 1900 թ.՝ 142 միլ., 1904 թ.՝ 155 միլիոն։ Ծերության միջին նպաստը կազմում եր 1891 թ.՝ 123 $^{1}/_{2}$ միլ., 1895 թ.՝ 132 միլ., 1900 թ.՝ 145 $^{1}/_{2}$ միլիոն և 1904 թ.՝ 157 միլիոն։

ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՈՐԵՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես և մյուս յերկրներում, նա նախ և առաջ ուղղված եր մանկահասակների ու կանանց աշխատանքների սահմանափակմանը։ 1839 թվին հրատարակված է (Պրուսիայում) օրենք, վորով

արգելվում է 9 տարեկանից փոքր յերեխաներին աշխատել ֆաբրիկաներում և լեռնահանքերում. 9—16 տարեկան անչափահասների համար բանվորական որը սահմանափակվում է 10 ժամով՝ ճաշելու նպատակով $1^1/_2$ ժամ ընդմիջումն էլ հաշվելով հետը։ Անչափահասների գիշերային աշխատանքն արգելված է։

1853 թվին հրատարակված է մի որենք, վորով ֆաբրիկաներում աշխատելու արգելված մանկահասակների տարիքները բարձրացվում են հետզհետե 12 տարեկանի, անչափահասներինը մինչև 14 տարեկանի, բանվորական որը սահմանափակվում է 6 ժամով։ 1854 թվին արգելվում է մինչև 16 տարեկան անչափահասների աշխատանքը հանքերում գետնի տակ։ Հիմնված է գործարանական (ֆաբրիկային) տեսչությունը։ 1869—1873 թվականների ընթացքում այդ որենքները տարածվում են ամբողջ Գերմանիայում։ 1891 թ. աշխատելն արգելվում է 13 տարեկանից փոքր հասակ ունեցողներին, նայեվ այն 13—14 տարեկաններին, վորոնք պարտավոր են դպրոց հաճախել։ 1900 թվին թույլատրվում է անչափահասներին աշխատել որեկան 8 ժամ, 1 ժամ ընդմիջումով։

Վերոհիշյալ բոլոր որենքները չեյին վերաբերում գյուղական և տնային արդյունաբերություններին, ուր մանկական աշխատանքը կիրառվում եր ընդարձակ չափերով, սկսած յերեխաների 5-ամյա հասակից։ 1903 թվին արգելվում է այդ մասերում յեվս ոտար յերեխաների աշխատանքը մինչեվ 12 տարեկանը և սեփական յերեխաներինը մինչև 10 տարեկանը։ 12 տարեկանից վեր յերեխաները չեն կարող զբաղվել աշխատանքով յերեկոյան ժամը 8-ից մինչեվ առավոտյան ժամը 8-ը։ Նրանց բանվորական որը չի կարող ավելի լինել 3 ժամից, իսկ արձակուրդների ժամանակ՝ 4 ժամից։

Կանանց ֆաբրիկային աշխատանքի կանոնավորումն սկսվում է 1878 թվից, յերբ կանանց արգելվում է աշխատել գետնի տակ լեռնահանքերում։ 1891 թվին արգելվում է կանանց գիշերային աշխատանքը ֆաբրիկաներում (սկսած յերեկ. $8^1/_2$ ժամից մինչեվ առավոտ. $5^1/_2$ ժամը), նույնպես աշխատելը կիրակի և տոն որերը։ Կանանց բանվորական որվա տեվողությունը չպետք է ավելի լինի 11 ժամից, իսկ տոների նախորյակին՝ 10 ժամից, ընդմիջում ճաշելու համար 1 ժամ։ Ծննդկանները չպետք է զբաղվեն աշխատանքով ծննդաբերությունից հետո 4 շաբաթ, իսկ 5-րդ և 6-րդ շաբաթներում աշխատում են բժշկի թույլտվությամբ։ 1902 թվի

օրենքով՝ պանդոկներում և գարեջրատներում աշխատող կանայք պետք է ունենան ամենօրյա հանգիստ 8 ժամ։ 1909 թվի օրենքով կանանց աշխատանքի օրն այն ձեռնարկությունների մեջ, ուր աշխատում են 10 ժամից ավելի, կրճատված հասցրված է մինչև 10 ժամի։

Տղամարդկանց համար չկան ընդհանուր օրենսդրություններ, բացի տոնական հանգստի օրենքից։ 1896 թվին հացագործարաններում ու կոնդիտերաններում գիշերային աշխատանքը սահմանափակված է քարգաների համար 12 ժամով։ 1902 թվի օրենքով 8-ժամյա հանգստյան պահանջը պանդոկներում և գարեջրատներում ծառայողների համար տարածվում է նաև տղամարդկանց վրա։ 1900 թվի օրենքով առևտրական ձեռնարկությունները պետք է փակվեն յերեկոյան ժամը 9-ից վոչ ուշ։ Այդ է ընդհանուր առմամբ հօգուտ չափահաս բանվորների սահմանված օրենսդրությունը։

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄ

Կոոպերատիվ շարժումը Գերմանիայում սկսվեց զարգանալ 50-ական թվականներին։ Սկզբում հիմնվեցին վարկային ընկերություններ՝ քաղաքներում Շուլցե-Դելիչի միջոցով, իսկ գյուղերում Ռայֆեյզենի։

Պրոլետարական սպառողական կոոպերացիան հնարավորություն ստացավ ազատորեն զարգանալու սոցիալիստների վերաբերյալ օրենքը խափանելուց հետո։ Առաջվա շրջանում պրոլետարական կոոպերացիան հարում եր ընդհանուր մանր-բուրժուական միությանը, վոր ստեղծել եյին Շուլցեյի հետևվողները։ Բայց կարճ ժամանակից հետո սպառողական ընկերություններն իրանց սեղմված են զգում մանր բուրժուական տարրերի այդ միության մեջ։ Իսկ յերբ գլխավորապես սակսոնական պրոլետարական սպառողական ընկերությունների շնորհիվ 1894 թվին հիմնվեց մեծաքանակ գնումների ընկերություն, այն ժամանակ խզումը պրոլետարական սպառողական ընկերությունների և միության մնացյալ մասի միջև դարձավ անխուսափելի։ Բայց և այնպես այդ խզումը տեղի ունեցավ 8 տարուց հետո միայն Կրեյցնախի կոոպերատիվ համաժողովում 1902 թվին, յերբ։ Ընդհանուր միությունից դուրս քցվեցին բանվորական սպառողական ընկերությունները։ Հեռացված սպառողական ընկերությունները կազմեցին նոր կենտրոնական կազմակերպու-

թյուն **Գերմանական սպառողական ընկերությունների կենտրոնական միություն անունով**, որին ներկայումս պատկանում է բոլոր սպառողական ընկերությունների $^3/_4$-ը։

Ս.-դ. կուսակցության վերաբերմունքը դեպի կոոպերատիվ շարժումը *) մոտավորապես նույնն էր, ինչ որ դեպի արհեստակցական շարժումը. սկզբում անտարբեր և նույնիսկ անբարեյացակամ, բայց երբ սպառողական ընկերությունների պրոլետարական բնույթը պարզվեց, ս.-դ. կուսակցության վերաբերմունքը փոխվեց՝ պրոլետարական սպառողական շարժումն ընդհանուր բանվորական շարժման մի բաղադրյալ մասը ճանաչելու իմաստով։

Կենտրոնական միությանը պատկանող կոոպերատիվներն ունեյին 1908 թ. 73 միլլիոն մարկ շրջանառության դրամագլուխ։ Նրանց շրջանառությունը հավասարվում էր 236,6 միլլիոնի. 158 կառուցողական ընկերությունները 49,000 անդամներով ունեյին 110 մլ. դրամագլուխ և 4,914 պատրաստի տուն 14,868 բնակարաններով։

*) Արտադրական ասոցիացիաների բացառությամբ, որոնք մտնում էին լասսալյանների ծրագրի մեջ և հանձնարարվում Ինտերնացիոնալի կողմից. Էրֆուրտյան ծրագրից արտադրական կոոպերատիվները դուրս են հանված։

IV

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանվորական շարժման գլխավոր առանձնահատկությունը պիտի համարել նրա չափավորությունը, անհեղափոխական լինելը, վորը յեվս ավելի պետք ե ընդգծել նրա համար, վոր գերմանական բանվորական շարժումն սկզբից զարգանում եր գլխավորապես իբրեվ մի քաղաքական շարժում։ Մի քանի բուրժուական տեսաբաններ (ինչպես օրինակ Զոմբարտը) աշխատում են բացատրել այդ անհեղափոխականությունը նրանով, վոր իբր «խաղաղասիրությունը» հենց կա գերմանական արյան մեջ։ Բայց դա սոցիալ-քաղաքական փաստերի համար բացատրություն չե։

Այստեղ նախ և առաջ հարկավոր ե ուշադրության առնել գերմանական արդյունաբերության զարգացումը։ Դեռ յեվս մինչև 70-ական թվականների սկիզբը Գերմանիան առավելապես մանր-արհեստավորական մի յերկիր եր և խոշոր արդյունաբերության զարգացման կողմից հետ եր Անգլիայից և Ֆրանսիայից։ Յեվ ահա իր միացումից և 1871 թվին Ֆրանսիայի պարտությունից հետո Գերմանիան սկսում ե զարգացնել իր արդյունաբերությունն առասպելական քայլերով և շատ շուտով վոչ միայն առաջ ե անցնում Ֆրանսիայից, այլ և սկսում ե, և այն ել մեծ աջողությամբ, մրցել Անգլիայի հետ։ Արդյունաբերության այդպիսի լարված զարգացման շնորհիվ բանվորական ձեռքերի պահանջն անշեղ կերպով ավելանում եր, աշխատավարձը կանգնած եր պատկառելի բարձրության վրա։ Միյեվնույն ժամանակ աչքի առաջ ունենալով այն եվս, վոր դեռ 50-ական թվականներից պետությունն սկսել եր «միջամտել» աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությունների մեջ (նմանելով արեվմուտքին և հետեվանք կուսակցությունների մղած պայքարի), բանվորները բոլորովին անպաշտպան չեյին կապիտալի շահագործության հանդեպ, ինչպես դա Անգլիայում եր 19-րդ դարի առաջին կեսում։ Հետեվյալ պատճառների շնորհիվ գերմանական բանվոր դասակարգը վորոշ չափով խուսափեց այն թշվառու-

թյուններից, վորոնց յենթակա չեր անգլիական բանվոր դասակարգն արդյունաբերության զարգացման առաջին շրջաններում Անգլիայում։ Մյուս կողմից վոչ միջակ և վոչ ել մանր բուրժուազիան 50-ական ու 60-ական թվականների բաժան-բաժան մասերից բաղկացած հետամնաց Գերմանիայում չեր խաղում այն քաղաքական-հեղափոխական դերը, վորպիսին խաղում եր որինակ Ֆրանսիայում։ Յեվ յերբ հասավ այն ժամանակը, վոր նա պետք ե խաղա այդ դերը, հանդես յեկավ արդեն բավականաչափ ուժեղ պրոլետարիատը։ Ուստի գերմանական բանվորները չունեյին հեղափոխական առաջնորդներ մանր բուրժուական դասակարգից, ինչպես վոր դա Ֆրանսիայումն եր, վոչ ել հուզվելու այնպիսի խիստ պատճառներ, ինչպես Անգլիայումն եր արդյունաբերության զարգացման նախնական շրջանում։

Միևնույն ժամանակ գերմանական բանվորական շարժմանն ուղղություն տալու գործում հսկայական դեր խաղացին Մարքսի ուսմունքից քաղած թեորիայի բնաշրջական տարրերը, այսինքն ուսմունքը սոցիալիզմի նախադրությունների աստիճանական զարգացման պրոլետարիատի քաղաքական ուժերի աստիճանական ավելացման մասին յերկրի մեջ և պարլամենտում։ Ընդգրկված թեորիան շուտով գերակշռեց քաղաքական գործնականից և տեսաբանելը բռնեց գործողության տեղը։ «Դուք,—ասում եր Ժորեսը՝ դիմելով ամստերդամյան համաժողովին մասնակցող գերմանացիներին,—ծածկում եք ձեր անզորությունը թեորետիկական ֆորմուլաներով, վոր ձեզ մատուցանելու յե ձեր յերեվելի ընկեր Կաուտսկին մինչեվ իր կյանքի վախճանը»։ Այդ մշտնջենական տեսականացումն ի վնաս գործողության չխանգարեց, այլ գուցե նույն իսկ նպաստեց, վոր գերմանական բանվորական կուսակցությունը գնար տատանումների, զիջումների և համաձայնությունների թեք ուղիով, մինչեվ վոր գլորվելով հասավ վերջին պատերազմի խայտառակությանը։ Վորովհետև գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ամենակույր պարագլուխների համար անգամ վաղուց ի վեր պետք ե պարզ դարձած լիներ, վոր նրա հսկայական զարգացումը շատ տարիներ ե ինչ դարձել ե անհաշտելի գերմանական միահեծանության, ավատականության ու միլիտարիզմի հետ։

Մինչդեռ կուսակցությունն իր համագումարներում թեյեվ յերդվում ե անողորմ կռիվ մղել ռեվիզիոնիզմի դեմ, բայց իրապես

գիջումներ է անում նրան ամեն մի քայլափոխում և հեղափոխական կուսակցությունից, ինչպիսին նա համարում է իրան, վաղուց դարձել է սոցիալական բարենորոգումների կուսակցություն։ Թեորիայի գերակշռումը գործողության հանդեպ նկատելի յե դառնում այն բնորոշ գծով, վոր գերմանական բանվորական շարժման մեջ ուղղությունները կրում են տեսաբանների անունները—լասսալականություն, մարկսիստականություն, բերնշտայնականություն, մինչդեռ Ֆրանսիայում ուղղությունները կրում են քաղաքական ղեկավարների անունները—բլանկիզմ, բրուսսիզմ, գեդիզմ, ժորեսիզմ յեվայլն։

Վերջապես գերմանական բանվորական շարժման յերրորդ և դրական գիծը նրա ներդաշնակությունն է յեվ նրա հաղթական տարրերի շաղկապված լինելը տնտեսականի հետ, այսինքն կանոնավոր փոխհարաբերությունները սոց.-դեմ. կուսակցության ու արհեստակցական (և կոոպերատիվ) շարժման միջեվ։ Այդ փոխհարաբերությունների ներդաշնակությունն արտահայտվում է նրանով, վոր արհեստակցական (նայեվ կոոպերատիվ) կազմակերպությունները հանդես են գալիս միաբան և համերաշխորեն ս.-դ. կուսակցության հետ կողք-կողքի և միյեվնույն ժամանակ յենթարկվելով նրա ազդեցությանը, իբրեվ մի ընդհանուր ամբողջության ղեկավարի, բանվորական շարժման վերջնական իդեալը մարմնացնողի, այն սոցիալիստական իդեալը, վորը նա կոչված է իրականացնելու։

Այդ կողմից գերմանական բանվորական շարժումը գտնվում է այնպիսի պայմաններում, վորպիսին մենք չենք նկատում վոչ մի խոշոր-արդյունաբերական յերկրում։ Այստեղ յեվս արտահայտվեցին Գերմանիայի քաղաքական ու արդյունաբերական զարգացման առանձնահատկությունները, բայց վոչ պակաս չափով նայեվ ընդգրկած տեսաբանների (Լասսալի ու Մարկսի) ազդեցությունը։

1863 թվին, յերբ Գերմանիան դեռ նոր եր դարթնում արդյունաբերական կյանքի համար, նրա մեջ ծնունդ առավ ինքնուրույն բանվորական կուսակցությունը։ Սոցիալիստների մասին հրատարակված որենքը փոխելուց հետո այդ կուսակցության զարգացումն առաջ գնաց հսկայական քայլերով։ Այդ ժամանակ պրոլետարական արհեստակցական (և կոոպերատիվային) շարժումը նոր-նոր սկսում եր զարգանալ ու ամրապնդվել։ Միանգամայն հասկանալի յե, վոր բանվոր դասակարգի էկոնոմիական կազմակերպու-

թյունները պետք է յենթարկված լինեյին քաղաքական, արդեն ամրապնդված կազմակերպություններին, յեվս առավել վոր եկոնոմիական կազմակերպությունների գործիչներն ու ղեկավարները մեծ մասամբ այնպիսի մարդիկ եյին, վորոնք անցել եյին կուսակցական դպրոց։

Հակառակ յերեվույթ ենք մենք տեսնում Անգլիայում, ուր արհեստակցական շարժումը մինչեվ վերջին ժամանակներս գերազանցում եր առանց ինքնուրույն բանվորական կուսակցության գոյության։ Ինչ վերաբերում ե Ֆրանսիային, թեյեվ այնտեղ եվ քաղաքականությունը գերակշռում եր եկոնոմիկայի հանդեպ, բայց այնտեղ յերբեք չի յեղել միասնական, ապա ուրեմն ուժեղ ու հեղինակավոր, բանվորական կուսակցություն, վորը կարողանար իր ազդեցությանը յենթարկել արհեստակցական շարժումը։

Այդ տեսակետից Գերմանիայում պակաս դեր չե խաղացել այն թեորիան, վորը Լասսալի ժամանակից սկսած արհամարհանքով եր վերաբերվում դեպի արհեստակցական ու կոոպերատիվ շարժումը (դեպի սպառողական կոոպերացիան), այդ պատճառով եվ բանվորական շարժման այդ ճյուղի ղեկավարների ջանքերն ուղղված եյին վոչ թե տիրապետելու բանվորական ամբողջ շարժումը, այլ միայն մի նպատակի, վորպեսզի կուսակցությունը ճանաչեր գոնե նրանց հավասար արժեքը քաղաքական շարժման կողքին։

Յեթե առհասարակ կարելի յե խոսել առանձին յերկրների բանվորական շարժման մատուցած ծառայությունների մասին, վոր արել ե ընդհանուր համաշխարհային բանվորական շարժմանը, կասենք Մարկսի խոսքերով, վոր այդ միացյալ բանվորական շարժման մեջ անգլիականը ներկայանում ե իբրեվ եկոնոմիստ, ֆրանսիականը՝ քաղաքագետ, գերմանականը՝ տեսաբան, վոր՝ վհետեվ անգլիական բանվորական շարժումն ստեղծեց արհեստակցական միության օրինակը, ֆրանսիականը մեզ տվավ հեղափոխության ձեվերը, գերմանականը՝ թեորիայի ճաճանչափայլ լույսը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Տալիս ենք համառոտ տեղեկություններ գերմանական արհշարժման՝ պատերազմի տարիների և հետպատերազմյան ընթացքի մասին։

— 1914-16 թվականներին պատերազմի ավերիչ հետեվանքների, սա-

վի, չքավորության և ղեկավարների դավաճան քաղաքականության պատճառներով Գերմանիայի արհշարժումը թուլանում է. միությունները կորցնում են իրանց անդամների կեսից ավելին։

—Այսպես 1914 թ. «Ազատ միություններն» ունեյին 2,525,042 անդամ, իսկ 1916 թ. նրանց անդամների թիվը հասնում է 966,705-ի։ «Քրիստոնեյական միությունները 1914 թվին ունեյին 341,735 անդամ, իսկ 1916 թվին նրանց անդամների թիվը կիսով չափ նվազում է, հասնում 174,300-ի։

—1917 թ. անբերրիությունը, սովի սաստկացումը (սովից մեռել է 700.000 մարդ) էլ ավելի են քայքայում Գերմանիայի պրոլետարական կազմակերպությունները. իսկ սոցիալ-դավաճաններն ու արհմիությունների ղեկավարները շարունակում են քարոզել համերաշխություն բուրժուազիայի հետ, «Ազատության և հայրենիքի պաշտպանության» ընկերություններ են կազմում և շարունակում են արհմիությունները ծառայեցնել կապիտալի շահերին։

—1918 թվին Գերմանիան իրբև ռազմական ուժ ջախջախվում է, տեղի յե ունենում հեղափոխություն. կազմակերպվում են բանվորների պատգամավորական խորհուրդներ, բայց իշխանությունը գրավում են սոցիալ-համաձայնողականները. սկսվում է ռեակցիա և հալածանք հեղափոխական տարրերի և կոմմունիստների դեմ։ Այդ շրջանում է, վոր յերևան է գալիս արհմիությունների ղեկավարների հակահեղափոխականությունը։ Նրանք ամեն կերպ խոչընդոտ են հանդիսանում խորհուրդներին, ոգնում բուրժուազիային, քայքայում, թուլացնում են պրոլետարիատի դասակարգային կռիվը։

—1919 թ. հունվարին կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ հեղափոխական պրոլետարիատն ապստամբվում է «սոցիալիստ» Նոսկեյի կառավարության դեմ, վորպեսզի խորհրդային իշխանություն հաստատի յերկրում, բայց շարժումն արյան մեջ է խեղդվում —Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգն սպանվում են։ 1919 թ. մարտ, ապրիլ և մայիս ամիսների ընթացքում հեղափոխական պայքարն ու գործադուլները թափ են առնում, բայց ամբողջապես բուրժուազիայի ձեռքն անցած կառավարությունը ճնշում է մի շարք վայրերի ապստամբությունները ու Բավարիայի խորհրդային իշխանությունը։

Նույն թվականի հուլիս ամսին Նյուրենբերգում գումարված արհմիությունների համագումարը համաձայնողականների ազդեցության տակ վորոշումներ է հանում այն իմաստով, վոր արհմիությունները քաղաքական պայքարում «չեզոք» պիտի լինեն և միայն զբաղվեն յերկրի տնտեսական դրության բարձրացման խնդիրներով, վոր հնարավոր է «աստիճանաբար սոցիալիզացիա» մտցնել յերկրի տնտեսության մեջ՝ «առանց խախտելու տնտեսական պրինցիպը»։

—1920 թ. Գերմանիայի տնտեսական փլուզումը շարունակվում է, պետական պարտքը հասնում է ազգային յեկամուտի 86%-ին. բանվորական մասսաների անբավականությունը խորանում, կոմմունիստական շարժումը

գնալով ուժեղանում է։ Միջին Գերմանիայում մի շարք խոշոր ապստամբություններ են կատարվում, վորոնք յենթարկվում են կառավարության կողմից ուղարկված զինվորական ուժերի ճնշմանը։

—1921 թ. գերմանական արհմիությունները փորձում են յերկրի տնտեսությունը սոցիալիզացիայի յենթարկել (վոսկու պահեստը կենտրոնացնել պետական բանկում, պարտքերի վճարումը քցել բուրժուազիայի վրա, բանվորական կոնտրոլ հիմնել յեվայլն), բայց նորից սոցիալ-դավաճանները խուսափում են կռվից, և շարժումն անաջողության է մատնվում։

—Սոցիալ-դեմոկրատները վոտնակոխ անելով բանվորության դասակարգային շահերը՝ սերտ համերաշխությամբ գործում են բուրժուազիայի հետ, և տեսնում ենք, վոր 1922 թ. հաստատվում է Ստիննեսի դիկտատուրան, յերկրում թագավորում է սանձարձակ ռեակցիան։

Քանի գնում, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և դեղին արհմիությունների մասսաները յերես են դարձնում իրանց դավաճան ղեկավարներից։ Որը-որին կոմմունիստական կուսակցության ազդեցությունը ծավալվում է, ընդգրկում հեղափոխական պրոլետարական տարրերին։

Գերմանական արհմիությունների ընդհանուր միավորման կազմակերպություններից 2 ու ½ միլիոնից ավել բանվորություն հեռանում է և միանում Պրոֆինտերնին։ Շարժումն էլ ավելի յե խորանում, յերբ կոմմունիստները միասնական պրոլետարական ճակատի լոզունգն են առաջադրում և մասսայականացնում։

Կոմմունիստների ազդեցությունը թուլացնելու նպատակով դեղին արհմիություններն սկսում են կոմմունիստներին հեռացնել արհմիությունների շարքերից և ուժեղացնում են հալածանքը նրանց դեմ։ Չնայած այդ բոլոր հալածանքներին ու ճնշումներին՝ 1922 թ. գնալով ուժեղանում և ծավալվում է գործարկոմների հեղափոխական աշխատանքը։

1922 թ. նոյեմբերին տեղի յե ունենում գործարկոմների համագերմանական համագումարը։

Այդ համագումարը հեղափոխական հիմնական վորոշումներ է կայացնում՝ պարտահատուցումները բուրժուազիայի վրա քցելու, բանվորական կառավարություն կազմելու, ֆաշիզմի դեմ կռվելու և արտադրության վրա իրական հսկողություն հաստատելու պահանջներով։

—1923 թվին կոմմունիստական կուսակցության ղեկավարության տակ ավելի ուժեղանում է Պրոֆինտերնին հարող արհեստակցական կազմակերպությունների գործունեյությունը։

Հ. Պ.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ*)

Պատերազմի առաջին տարիներում արհշարժումն Անգլիայում դեպի թուլացումն է գնում։ Արհեստակցական միությունները, վոր մինչև պատերազմը յերկրի տնտեսական կյանքի վրա վորոշ ազդեցություն եյին ձեռք բերել, բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական շահերի պաշտպանության օրգաններ եյին հանդիսանում, 1914—15 թվականներին կորցնում են իրանց դասակարգային գույնը։

Ինչպես Անգլիայի բանվորական կուսակցության, նույնպես և արհմիությունների դեղին ղեկավարները, բուրժուազիայի հետ միանգամայն համերաշխ, հարձակվում են «կայզերիզմի» վրա, ամեն կերպ աջակցում կառավարության զինվորական քաղաքականությանը և պաշտպանում հայրենի բուրժուազիայի «պատերազմ մինչև հաղթական վախճան» նշանաբանը։

Տրեյդ-յունիոնների հին ղեկավարներից՝ Ուիլլի Կրուկսը, Ուորդը, Ուիլլ Տոռնը և այլ շատերն այնքան են տարվում անգլիական բուրժուազիայի համաշխարհային հակառակորդ Գերմանիային ջախջախելու «հայրենասիրությամբ», վոր նույնիսկ կամավորներ են հավաքում, բատալիոններ կազմակերպում և ֆրոնտ մեկնում։

Բուրժուազիան իր թիկունքն ամրացնելու համար «քաղաքացիական խաղաղության» լոզունգն է նետում. արհեստակցական կազմակերպությունները ու Անգլիայի բանվորական կուսակցությունն ընդառաջում են բուրժուազիային, և 1914 թ. օգոստոսի 24-ին Անգլիայի բոլոր քաղաքական կուսակցությունների և արհեստակցական կազմակերպությունների միջև համաձայնություն է կնքվում՝ պատերազմի ընթացքում թե տնտեսական և թե քաղաքական նպատակով գործադուլներ չանել, ընտրական պայքար չմղել—«քաղաքացիական խաղաղություն» պահպանել։ Հայրենասիրական վոգևորության այդ շրջանը յերկար չի տևում։ Տրեյդ-յունիոնիստական բյուրոկրատիայի և բանվորական կուսակցության համաձայնողական քաղաքականությունն ու բանվորության տնտեսական դրության վատթարացումը ցրում են մասսաներին կուրացնող հայրենասիրության մշուշը։ Հետագա պատմական դեպքերն արթնացնում են բերում մասսաներին։

1915 թ. ամառը, յերբ Ասկվիտի (անգլիական մինիստր-նախագահ) կաբինետի ազդեցությունը թուլանում է և նա դիմում է բանվորական կուսակցության, վոր մասնակցեն՝ կոալիցիոն կառավարության մեջ, սրանք

---

*) Կարդալ «Անգլիական բանվորական շարժման առանձնահատուկ գծերը» (65-երորդ եջ) գլխից հետո։

համաձայնվում են և յերեք մինիստրական պորտֆել ստանում։ Ահա այդ խառը (կոալիցիոն) կառավարության ժամանակ է, վոր ամեն կերպ կրճատվում են արհմիությունների իրավունքները, ամրացվում է պարտադիր զինվորական ծառայություն, յերկրի ամբողջ արդյունաբերությունը հարմարեցվում է ռազմական պահանջներին, անողոք կերպով ճնշվում է իռլանդական սոցիալիստների և սին-ֆեյներների ապստամբությունը և գլխատվում են նրա ղեկավարները, յերկրում ռեակցիան է տիրում, հեղափոխականները հալածվում են, ճնշիչ կապանքներ են դրվում ազատ խոսքի ու մամուլի վրա։

Մի կողմից կոալիցիոն կառավարության այս արարքները, մյուս կողմից բանվորական կուսակցության և արհմիությունների համաձայնողական ղեկավարների դավաճանությունները, նույնպես և պատերազմի օրավուր սաստկացող լուծն ու աճող թանկությունը և հալածանքներն առաջացնում են 1915—16 թվականների շարժումները, յերբ մասսաները հակառակ իրանց կուսակցական և միությունական մարմինների արգելքներին՝ գործադուլներ են հայտարարում և շատ տեղերում գործադուլներին քաղաքական բնույթ են տալիս, ուղղում կառավարության դեմ։ Այդ գործադուլներին վոչ մի ղեկավարություն չեն ցույց տալիս տրեյդ-յունիոնիստական մարմինները, բանվորներն իրանք են ընտրում իրանց միջից ղեկավարներ։ Այդ գործադուլների ժամանակ հեղափոխական բանվորությունն ըմբռնում է, վոր տրեյդ-յունյոնիստական կազմակերպությունները իրանց համքարային կառուցվածքով շատ թերություններ ունեն, և համոզվում է արտադրական միություններ կազմակերպելու անհրաժեշտության մեջ։ Այդ ժամանակ է, վոր գործարաններում ընտրվում են «արհեստանոցների պատգամավորներ» (делегаты от мастерских), բոլոր արհեստանոցներից ընտրված պատգամավորները ժողովներ են անում (բանվորական կոմիտեներ) և տրեյդ-յունյոնների ապարատներին հակառակ՝ ղեկավարում են ամբողջ գործը։ Բայց պիտի ասել, վոր դեպի արտադրական միությունների կազմակերպումը տանող կազմակերպչական այս նոր ձևերը կառավարության քաղաքականության ու այլ պատճառներով պահանջված չափով չեն ծավալվում։ Այս գործադուլները մյուս կողմից արթնացնում են բերում բանվորությանը և տապալում են «քաղաքացիական խաղաղության» հիմքերը։ Բանվորական կուսակցության «ձախ» լիդերները և մի շարք տրեյդ-յունիոնիստներ, մասսաների անբավականության հետևանքով, կազմակերպում են «Դեմոկրատական կոնտրոլի ընկերություն», վորը կառավարությանը մի շարք պահանջներ է առաջադրում և պահանջում է հրաժարվել գաղտնի դիպլոմատիայից։ Իբրև պատասխան՝ կառավարությունն սկսում է սեղմել տրեյդ-յունյոններին, պահանջելով պատերազմի համար աշխատող արդյունաբերական ճյուղերում վերացնել տրեյդ-յունիոնիստական կանոնները, յոթնօրյա բանվորական շաբաթ մտցնել, աշխատանքի օրվա ժամերը յերկարացնել յևայլն։ Կառա-

վորության այս քաղաքականությունը և 1917 թվի ռուսական հեղափոխությունը նոր թափ են տալիս օպպոզիցիոն տրամադրություններին։

Անգլիայի բանվորական շարժման մեջ այդ ժամանակ պայքար է սկսվում հետևյալ յերկու հոսանքների միջև։ Բանվորական կուսակցության չափավոր ինտերնացիոնալիստական հոսանքի ներկայացուցիչները (Սմայլ, Սնոուդեն, Մակդոնալդ) պրոպագանդա են մղում խաղաղության օգտին և այդ նպատակին հասնելու համար առաջարկում են ամբողջ աշխարհի կազմակերպված բանվորության ուժին դիմել և նրա ցույցերի ու յեռանդուն պայքարի միջոցով վերջ դնել պատերազմին։

Այդ հոսանքի ներկայացուցիչ Մակդոնալդը 1918 թ. փետրվարի 18-ին Ֆրանսիական սոցիալիստական կոնգրեսում հետևյալ ճառն է ասում, վորը բնորոշիչ է մեզ հետաքրքրող ինտերնացիոնալիստական հոսանքի էությունը հասկանալու համար։ «...Բայց մեզ պետք չե այնպիսի խաղաղություն, վոր պարտված կողմերի համար նոր ռևանշի (վրեժ) պատրաստության ժամանակամիջոց ծառայի։ Միայն կազմակերպված բանվորության միջազգայնորեն դուրս գալն է, վոր նման խաղաղությունն անհնարին կդարձնի և կտանի դեպի դեմոկրատիայի հաստատում ամբողջ աշխարհում։ Մտածենք, թե վորն է մեր ընդհանուրը, նոր սրբազան միություն հաստատենք—ժողովուրդների միություն, վորը միայն է, վոր վերջ կդնի պատերազմին...»։

Այս խաղաղասիրական-ինտերնացիոնալիստական հոսանքն արտաքին քաղաքականության խնդրում խաղաղության ձգտելով Անգլիայի ներքին քաղաքական կյանքի վերաբերյալ նույնպես դեմ է դուրս գալիս կառավարության, քննադատում է նրա գործունեությունը։

Այս չափավոր ինտերնացիոնալիստական հոսանքին հակառակ է գործում «պաշտպանողականների» («оборонцы») հոսանքը ղեկավարությամբ հին տրեյդ-յունիոնիստներ Արթ. Հենդերսոնի, Թոմասի և Բարնեսի։ «Պաշտպանողականները» այն տեսակետն են քարոզում, վոր կառավարության գործունեությունը պետք է քննադատել, բայց պատերազմին հաշտ են վերաբերվում իբրև իրական փաստի և բանվորության միջազգայնորեն պատերազմին դեմ դուրս գալուն դեմ են։

Անգլիայում այս յերկու հոսանքներն են, վոր աչքի յեն ընկնում պատերազմի շուրջը վարած իրանց պայքարով։

Յեղել են նույնպես այլ հոսանքներ, բայց լայն ազդեցություն չեն ունեցել։ Այսպես կար ծայրահեղ աջ հոսանք, վոր միանգամայն շովինիստական գործունեություն ուներ, կար նույնպես «բոլշևիկյան», «ձախ» ինտերնացիոնալիստական հոսանք, վոր առաջադրում եր «կորչի պատերազմը» լոզունգը և մեծ յեռանդ ցուցահանեց 1916 թ. գործադուլներին։

Պետք ասել, վոր հիշված չափավոր ինտերնացիոնալիստական և «պաշտպանողական» հոսանքների պայքարի ամբողջ ընթացքում տրեյդ-յունիոնիստական կազմակերպությունները միշտ վերջինի կողմն են յեղել։

1918 թ. հունիսին գումարված բանվորական կուսակցության կոն-

դրեսում այդ փաստը միանգամայն հաստատվեց։ Ձախավոր ինտերնացիոնալիստները դեմ եյին «քաղաքացիական խաղաղությանը», «պատերազմ մինչև հաղթական վախճան» լոզունգի տակ գործելուն, բանվորական կուսակցության ներկայացուցիչներին կառավարության կազմի մեջ մտնելուն, իսկ «պաշտպանողականները» մեծամասնություն եյին կազմում, վորի հետևանքով էլ կառավարության մեջ մասնակցելուն ձայն տվին 901.000 դեմ և 1.704.000 կողմ, և վորոշվեց մասնակցել։

Չնայած պատերազմի ընթացքում տրեյդ-յունիոնները յերկրի ռազմական ու տնտեսական հզորության գործում կարևոր ազդեցություն ունեյին, կարող եյին բուրժուազիայից խոշոր նվաճումներ կորզել, բայց իրանց ղեկավարների ռեֆորմիստական, համաձայնողական գործելակերպի պատճառով «կենդանի դիակ» են դառնում, արհշարժումն արյունաքամ է լինում։

Այս դրությունը յերկար չի տևում։ 1919 թվականի ընթացքում անգլիական բանվորական մասսաներում արթնացման նշաններ են յերևում։ 1919—20 թվականներում, չնայած անգլիական իմպերիալիզմը շարունակում է իր արյունոտ քաղաքականությունը, զինում է սպիտակ բանդաներ և ուղղում խորհրդային իշխանության դեմ ու ավերածություններ կատարում խորհրդային տերրիտորիայի զանազան մասերում, Մոսուլի նավթին տիրանալու համար՝ Հունաստանին կռվի յե հանում Տաճկաստանի դեմ, չնայած Անգլիայի այս արտաքին քաղաքականությանը՝ 1919—20 թվականներին դեմոբիլիզացիայի և մասսաների հեղափոխական շարժումների պատճառով յերկրում տիրող կրիզիսը քանի գնում խորանում է։

Տրեյդ-յունիոնիստական մասսաներն սկսում են գիտակցել իրանց կարևոր դերն ու կոչումն Անգլիայի տնտեսական և քաղաքական կյանքում։ Տիրող կրիզիսը, մասսաների չքավորությունն ու զրկանքները պատռում են առաջնորդների խաբեբայության շղարշը։ Տրեյդ-յունիոնիստական կազմակերպություններն սկսում են տնտեսական պահանջներ առաջադրել։

Ամբողջ 1919 թ. ընթացքում յերկաթուղայինների և ածխահանների տրեյդ յունյիոններն ագիտացիոն լայն կամպանիա յեն տանում հիշված ճյուղերի արդյունաբերության պետականացման համար։ Հետևողական լինելով՝ նրանք առաջադրում են և՛ բանվորական կոնտրոլի պահանջը։ Նրանք լայն մասսաներին բացատրում են, վոր չի կարելի բավականանալ միայն արդյունաբերության վորոշ ճյուղերը կապիտալիստներից և ակցիոներական ընկերություններից խլելով ու կառավարության չինովնիկներին հանձնելով, այլ տվյալ ճյուղի բանվորները պիտի մասնակցեն արդյունաբերության կյանքին, սկսած գործարանների արհեստակցական բջիջներից մինչև տրեյդ-յունիոնիստական ամենաբարձր մարմինները՝ մասնակցություն և հսկողություն պիտի ունենան պետականացրած արդյունաբերության վրա։

Յերկաթուղայինների ազգային միությունն իր ներկայացրած ծրագրում պահանջում է յերկաթուղիների, ավտոմոբիլային բոլոր փոխադրա-

կան միջոցները և ոդային տորմիղը պետականացնել, Անգլիայի փոխադրական մինիստրությանը փաստական ու իրավական տեր ճանաչել բոլոր տեսակի փոխադրական միջոցների, այդ մինիստրության կից կազմակերպել մի կոլլեգիա, որի մեջ պիտի մտնեն յերկաթուղայինների համապետական միության ներկայացուցիչները։ Ըստ ծրագրի, յեթե հիշված կոլլեգիայի և փոխադրության մինիստրության միջև անհամաձայնություն է առաջանում, հարցի վերջնական վճիռը պատկանում է պարլամենտին։ Ըստ ծրագրի՝ տեղերում ընտրվում են նահանգային և շրջանային խորհուրդներ, որոնց մեջ մտնում են հավասար թվով՝ կառավարության, միության, տեղական ինքնավարության և «սպառողների» ներկայացուցիչները. ցածր արտադրական ճյուղերում (կայարան, դեպո, գարաժ) գործը պետական պաշտոնյաներն են կառավարելու, իսկ բանվորների շահերի պաշտպանության համար ընտրվելու յեն բանվորական կոմիտեներ։

Այս ծրագիրը, հետո ածխահատների միության՝ արդյունաբերությունը պետականացնելու վերաբերյալ առաջադրած պահանջները, նույնպես և այլ տրեյդ-յունիոնների մասսայական շարժումները համաձայնողական առաջնորդների դավաճանական գործելակերպի պատճառով նվաճումներ չեն կատարում։ Արդյունաբերության պետականացման հարցը տեղափոխվում է պարլամենտ, որտեղ և՛ թաղվում է։

Անգլիական բուրժուազիան լավ գիտակցելով արթնացող բանվորական շարժման վտանգները՝ հավաքում է իր ուժերը և հարձակման դիմում։ Նա ամենից առաջ կառավարությունից պահանջում է վերացնել պատերազմի ընթացքում արդյունաբերության վրա դրված վերահսկողությունը, նախապատերազմյան կարգին անցնել, նույնպես վերացնել այն բոլոր սահմանափակումները, որ մտցրված են պատերազմի ընթացքում։

Այդ ժամանակաշրջանում, Անգլիայի արդյունաբերական կրիզիսը քանի գնում՝ խորանում էր։ Բերենք մի քանի թվեր։ Ածուխի արտադրությունը, որ 1913 թվին շաբաթական 5,527,000 տոննի յեր հավասար, 1921 թ. իջնում է 4,518,000 տոննի։ Ճիշտ անկում է ապրում նույնպես մետաղի և յերկաթի արդյունաբերությունը, ընկնում է նույնպես չուգունի ձուլման չափը։ Մեծ կրիզիս է ապրում նայև նավաշինարարական արդյունաբերությունը—1913 թ. կառուցվել են 5 միլլիոն տոնն տարողությամբ, իսկ 1921 թվին՝ 1,918,319 տոնն տարողությամբ։

Ահա այս հսկայական կրիզիսի հետևանքով բուրժուազիան սաստկացնում է իր հարձակումը բանվոր դասակարգի վրա։

1921 թ. հսկայական չափերի է հասնում լոկաուտների հետևանքով անգործության մատնված բանվորների թիվը, արդյունաբերության շատ ճյուղերում ամեն որ գործ չեն տալիս բանվորներին։

Բուրժուազիայի հարազատ զավակ, անգլիական «դեմոկրատիկ» պարլամենտը չի հաստատում Վաշինգտոնի կոնֆերանսի վորոշումն ութժամյա բանվորական որվա մասին՝ համարելով այն «անգլիական տրադիցիաներին չհամապատասխանող»։ Շատ տեղերում նույնիսկ 10-ժամյա բան-

վորական որ է մացնվում, արդյունաբերության շատ ճյուղերում հսկայական չափերով իջեցվում է աշխատավարձը։ Ամեն կերպ վոչնչացնվում են՝ պատերազմի ընթացքում բանվորների ձեռք բերած նվաճումները։

Վիճակագրությունը ցույց է տալիս, վոր 1921 թ. շատ արհմիությունների անդամների 50%-ն անգործության եր մատնված։ Անգործների թիվը հասնում եր 2½ միլիոնի։

1921 թ. ապրիլին է, վոր տեղի յե ունենում հանքագործների ֆեդերացիայի և հանքատերերի համաշխարհային նշանակություն ունեցող պայքարը։ Հանքատերերն առաջարկում են աշխատավարձն իջեցնել և կոլեկտիվ պայմանագրերը փոխարինել ռայոնական սիստեմի պայմանագրերով։ Կառավարությունն ըստ ամենայնի աջակցում է հանքատերերին։ Հանքագործները գործադուլ են հայտարարում, վորը տեվում է 3½ ամիս։

«Յեռյակ համաձայնությունը» (կազմակերպվել է 1914 թ., նրա մեջ եյին մտնում Հանքագործների Մեծբրիտանական Ֆեդերացիան, Յերկաթուղայինների Ազգային Միությունը և Փոխադրական Բանվորների Միությունը), վոր միշտ իր միաբանությամբ իբրեվ մարտական ուժ եր յերեվան յեկել և կարող եր հանքագործների գործադուլը պաշտպանել՝ կանգնեցնելով յերկաթուղիներն ու վողջ տրանսպորտը, ռեֆորմիստ առաջնորդների դավաճանության պատճառով, ընդհանուր գործադուլ չհայտարարեց և տրեյդ-յունիոնիզմի պատմության մեջ դասակարգային դավաճանության «սեվ կիրակին» ստեղծեց։

Արհշարժման ղեկավարների այդ դավաճանությունները, յերկրի արդյունաբերական ճգնաժամի ծավալումը և նրա հետեվանքով առաջացած 1921 թ. հսկայական չափերի հասնող անգործությունը նախապատրաստեցին 1922 թ. սկսվող կապիտալի հարձակումը։

Չնայած՝ այդ թվականից սկսած Անգլիայի արդյունաբերության վորոշ ճյուղերում նկատվում է բարձրացում, բայց դա վոչինչ չի նշանակում. Անգլիան իր տնտեսական հզորությունից հեռու յե, անգործությունն որավուր աճում է, բուրժուազիայի համար դառնում կոշմար։

Պատճառը. պատճառն այն է, վոր անգլիական իմպերիալիզմը հոնքը շտկելու փոխարեն աչքն էլ հանեց։ Բացատրենք։ Անգլիական իմպերիալիզմը համաշխարհային պատերազմ սկսեց, վոր իր հակառակորդ տնտեսական ուժերին վոչնչացնի թե՛ Յեվրոպայում և թե՛ գաղութներում, ինքը լինի հզոր ու տիրական։ Բայց պատերազմը կործանեց բոլոր ժողովուրդներին. Յեվրոպայի աղքատացումը և Խորհրդային Ռուսաստանի մեկուսացումն առաջին հերթին հենց Անգլիայի համար տնտեսական ծանր դրություն ստեղծեցին։ Մինչեվ Գերմանիան, Ավստրիան և Յեվրոպայի այլ պետությունները, նույնպես և՛ Խորհրդային Ռուսաստանը չվերականգնեն, մինչեվ նրանց շուկաները չբացվեն Անգլիայի առաջ, Անգլիայի գործազրկությունը չի վերանալ և չեն վերականգնել նրա նախկին արտադրական կարողությունները։ Բայց քանի վոր այս դրությունը չի ստեղծվել, անգլիական բուրժուազիան իր դրությունն ուզում է փրկել բանվորության

վրա արշավելով։ Անգլիական բուրժուազիան օգտագործում է միլիոնավոր անգործների դրությունը, որոնք սպառնալիք են գործավորների համար, անվերջ իջեցնում է աշխատավարձը, հարվածում արհեստակցական միություններին։

Համառոտակի պարզենք կապիտալի արշավանքի հետևանքներն ու բնույթը։

Կապիտալի հարձակումը կատարվում է ամենից առաջ բանվորության աշխատավարձի պակասեցման և 8-ժամյա բանվորական օրվա երկարացման ուղղությամբ։ Այսպես՝ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձի մինիմումը, որ պատերազմից առաջ 22 շիլլինգ էր շաբաթական (շիլլինգը հավասար է 40 կոպեկի), ներկայումս իջեցված է շաբաթական 14 շիլլինգի։ Խիստ կերպով իջեցված են նաև հանքագործ և մեքենայագործ բանվորների ռոճիկները։ Բազմաթիվ լոկաուտների և այլ միջոցներով արդյունաբերական շատ ճյուղերում մեծ չափերով իջեցված է աշխատավարձը. հարյուր հազարավոր բանվորներ այնքան նվազ աշխատավարձ են ստանում, որ չեն կարողանում ապրել և մի կերպ գոյությունն են պահպանում աղքատախնամ ընկերությունների նպաստներով։ Կապիտալի հարձակումն ուժեղ թափով առաջ է տարվում նաև հավաքական պայմանագրերի վոչնչացման ֆրոնտում։ Պատերազմի ընթացքում անգլիական բոլոր խոշոր տրեյդ-յունիոնները համապետական հավաքական պայմանագրեր էին կնքել, որոնց առավելությունն այն էր, որ ամբողջ պետության մեջ տվյալ ճյուղի բոլոր բանվորները միևնույն մինիմումն էին ստանում։ Պարզ է, որ դա խոշոր նվաճում էր և համապատասխանում էր բանվորության դասակարգային շահերին։ Կապիտալը հարձակման անցնելով՝ ուժեղ արշավանք է սկսում այդ համապետական հավաքական պայմանագրերի դեմ։ Նրան աջողվում է շատ տրեյդ-յունիոններում վերացնել այդ սիստեմը՝ փոխարինելով տեղական և նույնիսկ անհատական պայմանագրերով։

Պարզ է, որ կապիտալն իր արշավանքը պիտի ուղղեր նաև 8-ժամյա բանվորական օրվա դեմ։ Եվ տեսնում ենք, որ առաջին հերթին տուժում են գյուղատնտեսական բանվորները, որոնց համար սահմանվում է 60-ժամյա բանվորական շաբաթ (ձմեռը 48 ժ.), հանքային բանվորության դեմ մեծ պայքար է սկսվում 7-ժամյա բանվորական օր մտցնելու համար։

Հիմա տեսնենք, թե անգլիական կազմակերպված բանվորությունը կապիտալի հարձակման դեմ ինչպես է պաշտպանվում։ Ընթերցողին հիշեցնենք, որ 1915—19 թվականներին, երբ աշխատանքն էր արշավում կապիտալի վրա, բանվորությունն իր ղեկավարների դավաճանության պատճառով գործարանների բոլոր արհեստանոցներում ընտրում էր արհեստանոցների ներկայացուցիչներ (chop-stewards), որոնցից է կազմակերպվում էր գործարանային կոմիտե, որը և ղեկավարում էր բանվորության դասակարգային պայքարը։ Բացի այդ՝ կային նաև շրջանային գործարկոմներ, որոնք ղեկավարում էին տեղական գործարանային կոմիտեների աշխատանքները։

Բայց ժամանակի հեղափոխական շրջանի անկման հետ, տեսնենք, որ այդ միութենական հեղափոխական օրգաններն էլ քայքայվեցին։ Ճիշտ այս շարժումն է, որ կենդանանում է 1922 թ., բայց ուրիշ բնույթով. —1922 թ. տրեյդ-յունիոնների հեղափոխական տարրերի պայքարը պահպանողական-ռեֆորմիստական տարրերի դեմ նորից վերակենդանանում է։

1922 թ. ուժեղ տրեյդ-յունիոններից մեքենավարների միության հեղափոխական բանվորները լոզունգ ընտրելով «մեկ ձեռնարկություն—մեկ միություն» նշանաբանը՝ մեծ ագիտացիա են մղում արտադրական միություններ կազմակերպելու օգտին։ Նրանք իրանց ծրագրի մեջ ասում են. «Բանվորությանը հարկավոր են նոր առաջնորդներ»։ Նրանք մեծ աշխատանքներ են թափում նորից գործարանային կոմիտեներ կազմակերպելու համար։

Այս հոսանքը քանի գնում ուժեղանում է և իր մեջ է ընդգրկում արտադրական զանազան ճյուղերում առաջ յեկած հեղափոխական տարրերին։

Յեվ հունիսի 27-ին տրեյդ-յունիոնների կոնֆերանսում հեղափոխական փոքրամասնության մի խմբակ, որ կանգնած է դասակարգային հեղափոխական արտադրական միությունների կազմակերպման տեսակետի վրա, իր վերջնական նպատակն այսպես է ձևակերպում. «Մեր նպատակն է ներկայիս վարձու աշխատանքի սիստեմը կործանել և ստեղծել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, որտեղ մի դասակարգի շահագործումը մյուսի կողմից կփոխվի համաքաղաքացիական պարտականությունների կատարման»։

Նման հեղափոխական հոսանքներ առաջանում են նաև յերկաթուղայինների և հանքագործների արհմիություններում։

Յերկաթուղայինների արհմիության մեջ հեղափոխական տարրերն այնպիսի ուժեղ շարժում են առաջացնում, որ նույնիսկ օգտագործում են իրանց միության թերթը։ Նրանք նույնպես առաջադրում են արտադրական միություններ կազմակերպելու գաղափարը։ Նրանք այսպես են ձևակերպում իրանց նպատակը. «Միութենական ապարատը նախապատրաստել տիրապետելու ամբողջ յերկաթուղային ցանցին այն ժամանակ, յերբ հնարավորություն կստեղծվի»։ Նման հեղափոխական հոսանքներ են առաջանում նաև անգլիական յերրորդ ամենամեծ արհեստակցական կազմակերպության՝ հանքագործ բանվորների զանազան միավորումների մեջ։

Բանվորական մասսաները հեղափոխականանում են։ Տրեյդ-յունիոնների շատ կոնֆերանսներում, լայն մասսաների ճնշման տակ որոշումներ են հանվում՝ արհմիություններն արտադրական հիմունքներով վերակազմելու և Պրոֆինտերնին միանալու և բանվորական միասնական ճակատ ստեղծելու համար։

Արդեն կազմակերպվել և օր ավուր հզորանում են Անգլիայի կարմիր արհեստակցական միությունները. 1922 և 23 թվականների ընթացքում նրանք մի քանի կոնֆերանսներ և համագումարներ են ունեցել։ 1923 թվի

սեպտեմբերին կայացած կարմիր տրեյդ-յունիյոնների կոնգրեսին ներկա եյին 300.000 անդամների ներկայացուցիչներ։

Մյուս կողմից՝ միլլիոնավոր անգործների թիվը օր-ավուր ավելանում ե. քաղցածան անգործները համոզվում են, վոր «անգործության միակ պատճառը կապիտալիզմն ե», համախմբվում են անգլիական կոմմունիստական կուսակցության և կարմիր տրեյդ-յունիյոնների շուրջը և ահավոր վտանգ են սպառնում անգլիական «դեմոկրատիզմին»։

Այդ դեմոկրատիզմի յերկրպագու՝ անգլիական բանվորական կուսակցությունն այսոր կառավարության գլուխն ե անցել։ Համոզված ենք, վոր նրա ռեֆորմիստ ղեկավարները շարունակելու են դավաճանել Անգլիայի բանվորության դասակարգային շահերին, մասսաների հիասթափությունը խորանալու յե, հեղափոխական լայն մասսաները հոծ զանգվածներով հոսելու են դեպի Պրոֆինտերնի շարքերը։

Հ. Գ.

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ինչպես հայտնի յե, մեր գրականությունը չափազանց աղքատ ե բանվորական և արհեստակցական շարժման վերաբերյալ գրքերով: Հայաստանի Արհեստակցական Միությունների Խորհրդի հրատարակությունները աստիճանաբար լրացնում են այդ բացը: Այս թարգմանությունն առաջին գիրքն ե, որ հայ բանվորության ու աշխատավորության ծանոթացնելու յե բանվորական և արհեստակցական շարժման ամենահիմնական ճյուղերի հետ:

Ի նկատի ունենալով, որ հեղինակն Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի բանվորական շարժման պատմությունը հասցնում ե մինչև համաշխարհային պատերազմը, իսկ պատերազմի և հետպատերազմյան շրջանը շատ կարևոր ե, ավելի շուտ՝ մի եպոխա յե, որի հետ անհրաժեշտ ե ծանոթացնել հայ ընթերցողին մենք դրել ենք հատուկ ծանոթություններ: Պետք ե ասել, որ գրքի կեսից ավելին տպվել եր, որ (աղբյուրներ չլինելու պատճառով) անհրաժեշտ համարեցինք հավելումների փոխարեն բավականանալ ծանոթություններով: Այդ ե պատճառը, որ անգլիական բանվորական շարժման վերաբերյալ ծանոթությունն ընկավ գրքի վերջը: Արհեստակցական շարժման զարգացման պատկերն ավելի ցայտուն դարձնելու համար կցվում են նույնպես վիճակագրական աղյուսակներ:

Հ. Գեսրույան

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա Ն Գ Լ Ի Ա

Տարիներ	Տրեյդյունիոնների անդամների ընդհանուր թիվը	Նրանցից 100 ամենախոշոր տրեդ-յունիոններում
1892	1.509.532	902.763
1893	1.488.457	909.222
1894	1.447.571	924.100
1895	1.414.800	910.320
1896	1.502.714	958.658
1897	1.623.016	1.058.659
1898	1.660.038	1.034.377
1899	1.820.546	1.111.329
1900	1.927.361	1.115.995
1901	1.939.022	1.153.744
1902	1.924.829	1.148.582
1903	1.902.308	1.133.640
1913	4.192.000	—
1914	4.199.000	—
1915	4.417.000	—
1916	4.077.000	—
1917	5.545.000	—
1918	6.624.000	—
1921	8.024.000	
1922	—	(Սրանցից Կարդիֆի կոնգրեսում—6.398.943) ,, Սաուսպորտի ,, —5.060.170

Արդյունաբերություն	Միությունների անդամների թիվը (հազարներով)					
	1913	1914	1915	1916	1917	1918
Կառուցողական	248	236	233	229	257	331
Լեռնային (հանքային) . .	916	867	856	887	947	996
Մետաղագործական . . .	544	537	641	699	848	954
Մանվածային	520	500	513	531	630	694
Երկաթուղային	327	337	385	425	499	530
Փոխադրական	336	350	340	363	391	451
Զգեստագործական . .	107	103	114	123	159	211
Զանազան	591	618	624	654	782	1.019
Զավորած բանվորներ .	353	385	472	521	732	1.102
Պետական ծառայողներ .	230	240	239	244	301	344
	4.192	4.199	4.417	4.077	5.545	6.624

ՖՐԱՆՍԻԱ

1893 թ.—1926 սինդիկատ—402.125 բանվորով։
1899 ,,—2685 ,, —492.647 ,,
1903 ,,—3934 ,, —643.757 ,,
1904 ,,—4227 ,, —751.876 ,,
1905 ,,—4665 ,, —781.344 ,,

	1905 թիվ	
	Սինդիկատների թիվը	Կազմակերպ. %-ը
Երկրագործություն	45.000	1,3
Հանքատեղեր	79.000	51
Քարահանքեր	8.000	14
Սննդատու մթերքներ	41.000	6,7
Քիմիական նյութեր	28.000	25,5
Թղթի արդյուն. և տպագ. գործ	24.000	19,7
Կաշվի արտադրություն . . .	27.000	16
Մանվածային արտադրութ. .	79.000	12,5
Բրդեղենի արտադրություն . .	21.500	5
Անտառաբուծություն	24.000	11
Մետաղաբուծություն	90.000	15,5
Բրուտագործական արտադր. .	14.000	10
Կառուցողական գործ	52.500	10
Առևտրական և փոխադրական.	222.000	14
Տնային ծառայություններ . .	11.000	1,3
Ազատ պրոֆեսիաներ	13.500	8

1911 թ.—1.029.238 բանվ. սինդիկատն. կազմակերպված. Աշխատանքի Ընդհանուր Կոնֆեդերացիայում—600.000 մարդ և 2837 սինդիկատ։

1919 թ.—2.000.000 մարդ։

1922 ,,— 600.000 ,,

ԳԵՐՄԱՆԻԱ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԶԱՏ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1913—1921 Թ.Թ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

№	ՄԻՈՒԹՅՈՒՆ	Անդամների թիվը 1913 թ.	Անդամների թիվը 1921 թ.	№	ՄԻՈՒԹՅՈՒՆ	Անդամների թիվը 1913 թ.	Անդամների թիվը 1921 թ.
1	Երկաթուղայիններ	—	4,128,174	32	Մատագործներ	6,557	23,883
2	Մետաղագործներ	544,937	1,647,916	33	Վիմագիրներ	16,533	18,741
3	Գյուղատնտեսական բանվորներ	20,267	695,695	34	Գլխարկ կարողներ	11,927	21,747
4	Գործարանային բանվորներ	207,300	643,800	35	Տակառագործներ	8,633	12,579
5	Փոխադրող բանվորներ	229,427	568,080	36	Վարսավիրներ	2,491	11,140
6	Մանողներ	138,079	491,480	37	Որմնադիրներ	11,161	11,508
7	Կառուցող բանվորներ	310,444	470,749	38	Բրուտներ	10,166	11,497
8	Քանդակագործներ	3,716	450,320	39	Շվեյցարներ	—	10,661
9	Փայտագործներ	193,075	379,381	40	Հղկիչներ	—	10,351
10	Ծառայողներ			41	Թիթեղագործներ	8,505	10,050
	ա) միասնական միություն		376,400	42	Մորթեգործներ	3,952	9,630
	բ) գրասենյակային ծառայողներ	8,414	—	43	Պղնձագործներ	5,337	6,934
	գ) գործակատարներ	24,809	—	44	Նավային հյուսներ	3,555	4,963
11	Կոմմունալ բանվորներ	53,925	288,274	45	Կինոյի բանվորներ	—	6,616
12	Հանքագործներ	101,986	143,590	46	Քառաձայն խմբի յերգիչներ	—	4,618
13	Ծխախոտագործներ	31,713	98,451	47	Ծխնելույզ մաքրողներ	—	2,996
14	Կոշկակարներ	44,363	94,960	48	Ասֆալտողներ	—	2,011

15	Հյուսներ	59,831	85,173
16	Կազմարարներ	33,377	81,487
17	Մեքենավարներ	26,267	81,274
18	Գարեջրի գործարանների և ջրաղացների բանվորներ	51,317	72,815
19	Տպագրիչներ	68,915	72,440
20	Ճաշարանային ծառայողներ	16,025	65,667
21	Հացթուխներ և կոնդիտերներ	28,754	61,699
22	Ներկարարներ	44,842	52,992
23	Հաղճապակեգործներ	46,972	50,156
24	Քարտաշներ	30,516	46,522
25	Ապակու արտադրութ. բանվորներ	18,251	52,191
26	Ցերամիչներ	2,086	42,713
27	Թամբագործներ և թղթապանակագործներ	14,855	39,938
28	Տպագրական գործի օժանդակ բանվորներ	15,934	39,571
29	Կաշեգործներ	16,481	34,650
30	Պարտիզպաններ	7,224	25,279
31	Տնային ծառայողներ	5,816	24,541

49	Ապակեգործներ	4,280	4,243
50	Խոհարարներ	տեղե-	կություն-
51	Դերասաններ	ներ	չկան
52	Հյուրանոցային ծառայողներ		
53	Դերձակներ	48,712	—
54	Պաստառագործներ	10,164	—
55	Ծաղկավաճառներ	1,014	—
56	Նոտա պատրաստողներ	441	—
	Ընդամենը . . .	2,525,042	7,890,162

Ընդամենը 1913 թվին 48 «ազատ» միությունները—2,525,042 անդամով, իսկ 1921 թ.—52 միությունները—7,890,102 անդամով։

ԳԵՐՄԱՆԻԱ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Տարե-թիվ	*Ազատ միություն-ներ*	*Քրիստո-նեյական*	*Հիրշ-դուն-կերյան*
1900	680,427	159,770	91,661
1901	677,510	160,772	96,765
1902	733,206	179,799	102,851
1903	887,698	192,617	110,215
1904	1,052,108	207,484	111,889
1905	1,344,803	265,032	117,097
1906	1,689,905	320,248	118,508
1907	1,865,506	355,760	108,889
1908	1,831,731	264,519	105,633
1909	1,832,667	270,751	108,028
1910	2,017,298	295,129	122,571
1911	2,339,785	340,957	107,743
1912	2,533,162	344,687	109,225
1913	2,573,718	342,785	106,618
1914	2,075,759	282,744	117,749
1915	1,159,497	176,137	61,806
1916	966,705	174,300	57,766
1917	1,106,657	243,865	79,113
1918	1,664,991	392,914	113,782
1919	5,470,073	858,283	189,831
1920 (*սկզբում*)	7,819,185	1,076,792	225,998
1920 (*վերջին*)	8,025,682		
1922 (*հուլիս*)	7,566,650	—	—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԱՆԳԼԻԱ

I. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆ 7

Արդյունաբերական հեղաշրջում և պրոլետարիատի ծագումը։ — Պայքար մեքենաների դեմ և ձգտում վերադառնալու դեպի հինը։ — «Քաղցած» գործադուլներ։ — Կիսաօրինական միություններ և պայքար միությունների ազատության համար։ — Ռոբերտ Օուենը և կոոպերատիվ շարժման սկիզբը։ — Չարտիզմ։

II. ՋՈՒՏ ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆԻԶՄԻ ՇՐՋԱՆ (ՀԻՆ ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆԻԶՄ) 30

Տրեյդ-յունիյոնիզմի ծագելուն նպաստող հանգամանքները։ — Յերեք աստիճան՝ բանվորական միությունների զարգացման մեջ։ — Մեքենայագործների և ատաղձագործների միաձուլված միությունների ծագելը։ Այդ ժամանակաշրջանի բանվորական դասակարգի առաջնորդները (Ջընտա)։ — Քրիստոնյա սոցիալիստներ։ — Միությունների և գործադուլների ազատության համար մղվող պայքարի շարունակությունը։ — Տրեյդ-յունիյոնների հետագա զարգացումը։ — Տրեյդ-յունիյոնների կոնգրեսները և պարլամենտական կոմիտեն։

III. ՆՈՐ ՏՐԵՅԴ-ՅՈՒՆԻՅՈՆԻԶՄԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆ 48

Սոցիալիստական պրոպագանդա և չսովորած բանվորների կազմակերպում։ — Տաֆֆ-Վա՛լիի գործը։ — Բանվորական կուսակցություն։ — Օսբորնի գործը։ — Տրեյդ-յունիյոնների քաղաքականությունը վերջին տարիներում։ — Միությունների բաժանվածությունը։ — Սոցիալական օրենսդրություն։ — Կոոպերացիա։

IV. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԸ 63

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՖՐԱՆՍԻԱ

I. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ . 66

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և 1830 թ. հեղափոխությունը։ — Արդյունաբերության զարգացումը և պրոլետարիա-

տի ծագումը։—Բանվորական առաջին կազմակերպությունները և առաջին հեղափոխությունը։—Բաբո՛ֆ, Սեն-Սիմոն, Ֆուրյե։—Բանվորներին և նրանց կազմակերպություններին հալածելը։—Լուի Բլան, Պրուդոն։—Գաղափարային շարժումը բանվորների մեջ։—48 թ. հեղափոխությունը (փետրվարյան հեղափոխությունը)։—Բուշեն և արտադրական ասոցիացիաները։ Բանվորական շարժումը 2-րորդ կայսրության շրջանում։—Ինտերնացիոնալը և ֆրանսիական բանվորական շարժումը։—1870 թ. հեղափոխությունը։—Կոմմունայի ապստամբությունը։

II. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄԸ. 98

ա) Սոցիալիստական կուսակցությունները

Բանվորական շարժումը Կոմմունայի տապալումից հետո։—Սոցիալիստական բանվորական կուսակցության կազմակերպումը։—Կուսակցության պառակտումը։—Գեդիստները, պոսսիբիլիստները, ալեմանականները։—Սոցիալիստական կուսակցությունների հետագա զարգացումը։ Միլլերանյան միջնադեպը։

բ) Սինդիկալիզմ

Կուսակցությունն ու սինդիկատները մինչև 90-ական թ. սկիզբը։—Աշխատանքի բորսաները։—Սինդիկալիզմը հիմնական սկզբունքները։—Գործադուլային շարժումը։—Հակամիլիտարիզմ և հակապատրիոտիզմ։

III. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 120

Հեղափոխությունը, բաժան-բաժան լինելը, սինդիկալիզմը։—Այդ առանձնահատկությունների պատճառը։—Սինդիկալիզմի իսկական էությունը։

Ծանոթություն.—Բանվորական շարժումը 1914 թ. մինչև մեր օրերը 126

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԵՐՄԱՆԻԱ

I. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ 129

Գերմանիայի քաղաքական և տնտեսական հասարակակարգը 19-երորդ դարի առաջին կեսում։—Արտասահմանյան գաղթի ընկերությունները և արհեստավորական սոցիալիզմը։—Վիլհելմ Վայտլինգն ու նրա ուսմունքը։—Արդյունաբերության զարգացումը և քաղցի հետևանք ընդվզումները։—48 թվականի հեղափոխությունը և այդ շրջանի բանվորական շարժումը։ Շուլցե - Դելիչը, նրա ուսմունքը և գործունեությունը։

II. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ 148

Առաջադիմականների կուսակցությունը և բանվորները։—Լայպցիգում բանվորների համագումար հրավիրելու նախագիծը։—Ֆերդինանդ Լասսալը, նրա ուսմունքը և գործունեությունը։—Լասսալյաններն ու այզենախյանները։—Ս.-դ. կուսակցությունը սոցիալիստներին վերաբերյալ օրենքի միջոցին։—Կարլ Մարկսը և նրա ուսմունքը։—Արհեստակցական միությունների ծագումը։

Ծանոթություն.—*Մարկսի հայացքներն արհշարժման մասին* . . 175

III. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ 183

Կուսակցության ծաղկելը՝ սոցիալիստների վերաբերյալ օրենքը փոխելուց հետո։—Էդվարդ Բեռնշտայնի «ռեվիզիոնիզմը»։—Պարտայտագները (1899—1913)։—Գործադուլային շարժումը։—Սոցիալական և ֆաբրիկային օրենսդրություն։—Կոոպերատիվ շարժում։

IV. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 202

Ծանոթություն.—*Գերմանական արհշարժումը 1914 թ. մինչև մեր օրերը* 205

Ծանոթություն.—*Անգլիական արհշարժումը 1914 թ. մինչև մեր օրերը* 208

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ 216

Արհեստակցական շարժման վիճակագրություն.—

ԱՆԳԼԻԱ 217
ՖՐԱՆՍԻԱ 218
ԳԵՐՄԱՆԻԱ (*միությունների աճումը*) 219
Գերմանիայի «ազատ» արհմիությունները 1913—1914 թ.թ. ժամանակաշրջանում . . . . 220—221

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԳԼԻԱ

Вебб, С. и *Б.* История рабочего движения в Англии, изд. Ф. Павленкова. 1904 г.

Вебб, С. и *Б.* Теория и практика английского трэд-юнионизма, изд. О. Поповой, 1906 г., 2 тома.

Вебб, С. Социализм в Англии, изд. «Общ. Польза», 1907 г.

Метен. Социализм в Англии. изд. Пантелеева, 1898 г.

Седой, Д. Промышл. жизнь Англии в 18 и 19 ст., изд. «Библиотеки для всех», Спб. 1905 г.

Вебб, С. Положение труда в Англии за последние 60 лет, изд. 1889 г.

Роджерс, Т. История труда и заработной платы в Англии с XIII по XIX ст., изд. «Издатель», 1899 г.

Гиббинс, Г. Промышленная история в Англии. Изд. Поповой, Спб. 1898 г.

Тойнби, Арн. Промышленный переворот в Англии в VXIII стол., изд. Научно-образ. библ. М.

Энгельс, Фр. Положение рабочего класса в Англии. изд. Н. Глаголева и «Общ. Польза», 1905 г.

Ностиц, Г. Рабочий класс в Англии в XIX стол., изд. 1903 г.

Гаммедж, Р. История чартизма, изд. «Дело», 1907 г.

Чайковский, Н. Чартизм. Изд. Распопова, Спб. 1906 г.

Боркгайм. Чартистское движение. Изд. Мягкова, М. 1905 г.

Пименова, Э. Первое рабочее движение в Англии. Чартизм, изд. «Ват. Тов.», 1906 г.

Кричинский, Н. Чартистское движение. Изд. Львовича, Спб. 1906 г.

Кувшинская, С. Борьба рабочих за политическую свободу в Англии, издание 1907 г.

Кларк, А. Фабричная жизнь в Англии, изд. 1904 г.

Бутс. В трущобах Англии, изд. Павленкова, изд. 1891 г.

Моррисон, А. Рассказы о жалких улицах (очерки из жизни рабочего Лондона), изд. 1898 г.

Рабочая кабала в Англии, изд. Звонарева, 1900 г.

Уэбб, О. Кооперативное движение в Англии, изд. 1906 г.

Вебб, Е. Мирный переворот в экономической жизни (кооперация в Великобритании), изд. Горбунова, 1910 г.

Кувшинская, Е. Борьба рабочих за 8-мичасовой рабочий день в Англии, изд. 1907 г.

Фаньо, Ф. Рабочее профессиональное движение в Англии, изд. «Знание», изд. 1906 г.

Мижуев, П. Английские рабочие союзы, 1906 г.

Кувшинская, Е. История фабричного законодательства в Англии, изд. 1912 г.

Маркс, Элеонора. Классовое рабочее движение в Англии, изд. Мягкова, 1906 г.

Зотов Соглашение и третейский суд между предпринимателями и рабочими в Английской промышленности, изд. 1902 г.

Ширард, Р. Белые рабы Англии, изд. «Посредник», 1905 г.

Либкнехт. Роберт Оуэн, его жизнь и общественно-политическая деятельность.

Пименова, Э. Джон-Бернс, вождь рабочей партии в Англии, изд. Дмитриева, 1908 г.

Туган-Барановская, Л. Иосиф Арч. англ. крестьянин-депутат. Рабочие клубы в Англии, изд. Малых, 1906 г.

Кэйр Гарди. Различие между английским и континентальным рабочим движением, изд. «Набат».

Брагинский, М. Кэйр-Гарди, журн. «Северные Записки» 1915 г., кн. IX.

Рабинович, А. Английское социальное законодательство, журн. „Русское Богатство“, 1914 г., кн. V.

Дионео. Синдикализм в Англии, журн. „Русское Богатство“, 1911 г., кн. X.

ՖՐԱՆՍԻԱ

Вейл, Ж. История социального движения во Франции, изд. «Общ. Польза», 1906 г.

Луи Поль. История социализма во Франции изд. Гранат, 2-ое.

М. М. Буржуазия и пролетариат в революциях 30 и 48 г.г. во Франции, М. 1906 г.

Ю. Стеклов. Революция *1848* г. во Франци. Пгр. *1918* г.

Гед и *Лафарг.* Программа французской рабочей партии.

Блюм, Л. Конгрессы французских рабочих и социалистов, изд. „Логос“, *1906* г.

Прокопович, С. Проблемы социализма (Развитие социалистической мысли во Франции), *1911* г.

Галеви. Очерки по истории рабочего движения во Франции, изд. бр. Гранат, *1906* г.

А. Тюменев. Революция и рабочий класс во Франции *(1789—1848—1871* г.г.). Изд. „Книга“. *1919* г.

Лафарг, И. Из истории социализма во Франци, изд. „Общ. Польза».

Луи Поль. История синдикального движения во Франции, изд. 1908 г.

Бороздин, И. Очерки по истории социального движения во Франции, изд. Мягова. *1906* г.

Лагардель. Революционный синдикализм, изд. Шиповник. *1906* г.

Социальное движение в соврем. Франции. Сборн. статей под ред. Л. Козловского, М. *1908* г.

Козловский, Л. Очерки синдикализма во Франции, изд. «Свободная Мысль», *1906* г.

Критская и *Лебедев.* История синдикального движения во Франции, издание *1908* г.

Пелутье, Ф. История биржи труда, изд. «Свободный Труд», *1906* г., 2-ое изд. „Голос Труда“, *1919* г.

Лабриола. Реформизм и синдикализм, изд. Шиповник, 1907 г.

Пелутье, Ф. Жизнь рабочих во Франции, изд. *1901* г.

Луи Поль. Женский труд во Франции, изд. «Набат».

Профессиональные союзы во Франции, сборник под ред. Л. Козловского.

Торгашев. Профессиональные союзы во Франции, изд. „Колокол", 1906 г.

Каген, Ж. Союзы чиновников во Франции изд. 1906 г.

Леруа. Эволюция государственной власти (синдикаты чиновников), изд. «Общ. Польза», 1907 г.

Лиссагарэ. История Парижской Коммуны. изд. «Знание» и Мягова, 1906 г.

Арну Артур. Народная история Парижской Коммуны 1907 г.

Мишель Луиза. Коммуна, изд. Чарушникова и Доров.

Дюбрейл, Л. Коммуна 1871 г. Спб. 1908 г., и 2-ое изд. Госиздата.

Бакс, Б. Парижская Коммуна 1870—71 г. 1905 г.

Быстрянский, В. Очерк Парижской Коммуны. Пгр. Госиздат, 1920 г.

Парижская Коммуна. Сборник статей. Изд. Коминтерна. Пгр. 1921 г.

Парижская Коммуна. Акты и документы. Ред. Г. Зиновьева. Пгр., 1921 г.

Каутский, К. Республика и социал-демократия во Франции, 1906 г.

Маркс, К. Классовая борьба во Франции от 1848 до 1850 г.

Его же. 18-ое Брюмера Луи-Бонапарта.

Его же. Гражданская война во франции.

Русанов, А. (*Кудран, Н*.) Галлерея современных французских знаменитостей. Изд. «Русск. Богатство».

Бебел, А. Шарль Фурье, его жизнь и учение, изд. «Знание» 1907 г.

Тома, Альб. Бабеф, учение равных, изд. «Своб. Труд».

История „Заговора равных" по Девиллю, изд. Мягкова. 1905 г.

Луи Поль. Французские мыслители и деятели XIX в., изд. «Молот», 1905 г.

Чернов, И. Луи Блан, изд. «Молод. Россия», 1906 г.

Луи Поль. Бланк и бланкизм, изд. Малых.

Жеффруа, I. Бланки, его жизнь и революционая деятельность, изд. Доров. и Чарушникова, 1907 г.

А. Мирской. Вечный инсургент. М. 1906 г.

Русова. Луиза Мишель—защитница прав французских рабочих, изд. «Д. Р.».

Раппопорт, Х. Жюль Гед и французкая рабочая партия зд. Поповой, 1 906 г.

Гед, Ж. Речи, произнесенные в палате. Изд. «Образование», 1908 г.

Жорес, Ж. Избранные речи и статьи, изд. «Луч».

Его же. Социализм и мир.

Ге, Р. Камеры соглашения во Франции, изд. «Труд и Воля», 1906 г.

Жорес, Ж. и *Гед, Ж.* Две тактики, изд. «Литерат. Дело», 1906 г.

Л. Троцкий, Жан Жорес, изд. «Книга», 1917 г.

М. Павлович. Смерть Жореса. Пгр., 1916 г.

Его же. Франция накануне мировой войны. М. 1918 г.

Круглов, И. Биржа труда, журн. «Наша Заря», 1910 г. кн. VIII и IX.

Петрович, Гр. Муниципальные биржи труда, журнал «Русские Записки» 1915 г., кн. IV.

Русанов, Н. Французкий синдикализм, журн. «Русское Богатство», 1906 г. кн. XII.

Сталинский, Е. Эволюция французского синдикализма, журн. «Русское Богатство», 1909 г. кн. VI, VII, VIII.

П. Стрельский. Новая секта в рядах социалистов, «Образование», 1907 г. кн. I и II.

Плеханов, Г. Критика теории и практики синдикализма, журн. «Современный Мир» 1907 г., кн. XI, XII, 1908 г., II и IV.

Сталинский. Е. Борьба направлений во французском социализме, журн. «Русское Богатство», 1908 г., кн. V и. VI

Мартов. Л. Забастовка чиновников, журн. «Современный Мир», 1910 г., кн. V.

Сталинскай, Е. Чиновничье, движение и почтовая забастовка

во Франций, журн. «Русское Богатство», 1909 г., кн. V.

Его же. Учительское движение во Франций, журн. «Русское Богатство» *1913* г., книга II.

Его же. Социализм и крестьянство во Франции. Изд. «Задруга» Пгр.. *1917* г.

Борисович, Л. Движение чиновничьего пролетариата во Франции, журн. «Образование» *1908* г., кн. I.

Русанов, Н. Милитаризм и социализм, журн. «Русское Богатство», *1907* г, книга XI.

Буржуазия (отрывок из книги Жореса «Новая Армия», «Северные Записки» *1916* г., кн. I.

ԳԵՐՄԱՆԻԱ

Зомбарт, В. История экономического развития Германии в XIX в. 1 и 2 т. Изд. Бр-Ефрон. СПБ., *1913* г.

К. Гельфферих. Развитие народного хозяйства Германии *(1883—1913 г.г.),* М. *1920* г.

Меринг. Фр. История германской социал-демократии. 4 тома, изд. ср. Гранат, *1906* г.

Начало немецкой социал-демократии. Юбилейный сборник лейпцигских рабочих, изд. «Знание», *1907* г.

Кампфмейер. Очерк развития социал-демократии, изд. Львовича, *1907* г.

Парвус. В радах германской социал-демократии, изд. Глаголева. *1907* г.

Браун. Положение рабочего класса в Германии, изд. *1906* г.

Жизнь современного фабричного рабочего в Германии, под. ред. и с предисл. П. Гере, *1908* г.

Бернштейн, Э. История рабочего движения в Берлине, изд. *1908* г.

Прокопович, С. Рабочее движение в Германии. изд. *2, 1908* г.

Гере, П. Три месяца фабричным рабочим, изд. Сытина, *1907* г.

Иоллос, Г. Письма из Берлина.

Вейтлинг, В. Человечество, каково оно ест и каким оно должно быть, изд. Просвещение *1906* г.

Его же. Евангелие бедного грешника, изд. «Молот», *1907* г.

Вейтлинг, В. Биографический очерк, изд. «Молот», 1906 г.

Бернштейн, Э. Лассаль и его значение, изд. Львовича, 1906 г.

Лассаль, Ф. Собрание сочинений, изд. Глаголева, 3 тома.

Его же. Гласный ответ центральному комитету.

Его же. Наука и рабочие.

Его же. О программе работников.

Его же. Принцип труда в современном обществе.

Его же. Капитал и труд, Г. Бастиа-Шульце-Делич.

Его же. О сущности конституции.

Его же. Письма к Марксу и Энгельсу, изд. 1905 г.

Его же. Мои воспоминание о Карле Марксе.

Плеханов, Г. Лассаль, изд. «Пролетарий», 1906 г.

Маркс, К. Революция и контр-революция в Германии.

Либкнехт, В. Из истории Германии в XIX в., изд. Мягкова, 1906 г.

Его же. К юбилею мартовской революции. изд. Пгр. Совдепа, 1918 г.

Его же. Р. Блюм и револ. 48 г. в Германии. Изд. «Просвещение», Спб., 1906 г.

Его же. Наши цели. Изд «Молот», 1905 г.

Эйснер, К. Либкнехт, его жизнь и деятельность.

Россель, Ъ. Очерки из истории Германской с.-д. рабочей партии, изд. Скирмунта, 1906 г.

Шмеле. Социал-демократические профессиональные союзы в Германии, изд. 1904 г.

Тома и Лафарг. Профессиональное движение в Германии, изд. Сомова, 1905 г.

Легин. Профессиональное движение и Германии, 1905 г.

В. Майский. В мире германского профессионального движения, изд. «Социалист», 1917 г.

Гере, П. Как священник стал социал-демократом.

Озеров, И. Страхование трудящихся в Германии, изд. Карцева.

Герценштейн, Д. Государстеное страхование рабочих в Германии, изд. 1905. г.

Гольденвейзер, А. Социальное страхование в германской империи, изд. 1890 г.

Гаген, В. Безработица в Германии и меры борьбы с нею, изд. 1904 г.

Мюллер, А. Рабочие секретариаты и государственное страхование рабочих в Германии, изд. Скирмунта, 1907 г.

Мангеймский партейтаг германской социал-демократии. Доклады и прения о массовой стачке, изд. «Интернац.», 1906 г.

Бернштейн, Э. Массовая политическая стачка и политическое положение германской социал-демократии.

Каутский, К. Обнищание и крушение. Новая фаза ревизионизма, изд. 1908 г.

В. Г. Седьмой (чрезвычайный) конгресс немецких профессиональных союзов, журн. «Наша Заря», 1910 г., кн. IV.

Надев, К. Стачки и локауты в Германии 1904—1905 г.г. журн. «Русское Богатство», 1907 г., кн. VII.

Майский, В. Из хроники соц. борьбы в Германии. Локаут в строительной промышленности, журн. «Русское Богатство», 1910 г., VII.

Его же. Трагедия германских углекопов, журн. «Русское Богатство», 1912 г., кн. IV.

Его же. Политическая Германия М. 1917 г.

Его же. По рабочей Германии. Пгр. 1918 г.

Гроссман, Г. Процесс ревизионистов, журн. «Образование», 1903 г., кн. XI.

Берлин, П. О бернштейнианстве, журн. «Жизнь». 1901 г., кн. I.

Надев, К. Иенский с'езд германских с.-д., журн. «Мир Божий», 1905 г., кн. XI.

Коллонтай, А. Итоги мангеймского с'езда герм. с.-д. партии и профессиональные союзы, журн. «Современный Мир», 1906 г., кн. XI.

Бернштейн, Э. Две тенденции в германской социал-демократии на нюренбергском партейтаге, журн. «Образование», 1908 г., кн. XI.

Парвус. Нюренбергский партейтаг и германская социал-демократия, журн. «Современный Мир», 1908 г., кн. X.

М. Н. Магдебургский партейтат, журн. «Наша Заря», 1910 г., кн. VIII, IX.—

Водовозов, В. Карл Либкнехт, журн. «Северные Записки», 1916 г., кн. VI.

Майский, В. Магдебургский партейтаг, журн. «Современные Мир», 1910 г., кн. X.

Русанов, Н. Социал-демократический конгресс в Иене, журн. «Русское Богатство», *1911* г., кн. XI.

Спектатор. Хемницкий партейтаг германской социал-демократии, журн. «Современный Мир», *1912* г., кн. X.

Мартов, Л. Пауль Зингер, журн. «Наша Заря», *1911* г., кн. II.

Плеханов, Г. Август Бебель, журн. «Современный Мир», *1913* г., кн. VIII.

Лурье, М. Германская социал-демократия и мир. Пгр. *1917* г.

Ленин, Н. Пролетарская революция и ренегат Каутский. Изд. «Коммунист»., *1918* г.

Зиновьев, Г. и Ленин, Н. Против течения. 2-ое изд. *1918* г. Пгр. Совдепа.

Зиновьев, Г. Война и кризис социализма 2-ое изд. Пгр. *1920* г.

ԳԻՐՔԸ ԿԱՐԴԱԼՈՒՑ ԱՌԱՋ, ՈՒՂՂԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԽԱԼՆԵՐԸ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Վերևից	Ներքևից		Տպված է	Պետք է լինի
Էջ. 165	—	5	տող	Քաղաքականություն	Քաղաքատնտեսություն
» »	—	2	»	ձեռնագրերի	ձեռագրերի
» 166	—	7	»	պաշտպանողական	պահպանողական
» 167	16	—	»	(տրամաբանական զարգացում)։	(դիալեկտիկական զարգացում)։
» »	21	—	»	(տրամաբանական)—	դուրս գցել բոլորովին
» 168	16,17,18	—	»	խոհականությունը չէ, որ որոշում է գոյությունը, այլ գոյությունն է որոշում խոհականությունը—	մտածողությունը չէ, որ որոշում է կենցաղը, այլ կենցաղն է որոշում մտածողությունը։
» »	21	—	»	վրայի կառուցվածքն է	—վերնաշենքն են.
» »	25	—	»	էկոնոմիական	տնտեսական.
» »	—	4,5	»	«Հասարակության ամբողջ պատմությունը մինչև այժմ դասակարգերի կռվի պատմություն է»	«բոլոր մինչայժմյան հասարակությունների պատմությունը դասակարգերի կռվի պատմություն է։
» 169	5	—	»	Այդպես էլ	Այդ է
» »	13	—	»	տնտեսագիտական	տնտեսական
» »	20	—	»	տնտեսագիտության	տնտեսական ուսմունքի
» »	»	—	»	աշխատային	աշխատանքային
» »	23	—	»	հասարակության	հասարակականորեն
» »	24	—	»	համար	հանել։
» »	»	—	»	միջին աշխատանքի քանակությամբ,	աշխատանքի միջին քանակով,
» »	—	3	»	աշխատային	աշխատանքային
» 171	2	—	»	պահեստային	պահեստի
» »	»	—	»	իսկական	գործող
» »	--	9	»	ընդգրկվելով	ընդգրկվում են
» 174	—	16	»	ու դառնան	դուրս հանել գրքից
» 175	6	—	»	հանդգամանքների	բոլոր հանգամանքների

[Ln 504.]
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068765

ЦЕНА